Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Վճեճուրկ
1868

22
Ա-76

5624

ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆ

22
Ա-76

ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

17184-58

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1868

33938_u.1

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի
2 որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրահամու: Ա-
բրահամ ծնաւ զԻսահակ, Իսահակ ծնաւ
զՅակոբ, Յակոբ ծնաւ զՅուդա եւ զեղ-
3 բարս նորա: Յուդա ծնաւ զՓարէս եւ
զԶարա ի Թամարայ. Փարէս ծնաւ զԵզ-
4 րոմն, Եզրոմն ծնաւ զԱրամ, Արամ ծնաւ
զԱմինադաբ, Ամինադաբ ծնաւ զՆաա-
5 սոն, Նաասոն ծնաւ զՍաղմոն, Սաղ-
մոն ծնաւ զԲոոս ի Հռաքաբայ. Բոոս
ծնաւ զՈվբէդ ի Հռութայ, Ովբէդ ծնաւ
զՅեսսէ, Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքայ:
6 Դաւիթ ծնաւ զՍողոմոն ի կնոջէն Ու-
7 րիայ. Սողոմոն ծնաւ զՌոբովամ, Ռոբո-
վամ ծնաւ զԱբիա, Աբիա ծնաւ զԱսափ,
8 Ասափ ծնաւ զՅովսափատ, Յովսափատ
ծնաւ զՅովրամ, Յովրամ ծնաւ զՈզիա,
9 Ոզիա ծնաւ զՅովաթամ, Յովաթամ ծնաւ

զԱքազ, Աքազ ծնաւ զԵզեկիա, Եզեկիա 10
ծնաւ զՄանասէ, Մանասէ ծնաւ զԱմովս,
Ամովս ծնաւ զՅովսիա, Յովսիա ծնաւ զՅե- 11
քոնիա եւ զեղբարս նորա առ գերու-
թեամբն բաբելացւոց: Յետ գերութեանն 12
բաբելացւոց ծնաւ Յեքոնիա զՍաղաթիէլ,
Սաղաթիէլ ծնաւ զԶօրոբաբէլ, Զօրոբա- 13
բէլ ծնաւ զԱբիուդ, Աբիուդ ծնաւ զԵ-
ղիակիմ, Եղիակիմ ծնաւ զԱզովր, Ազովր 14
ծնաւ զՍադովկ, Սադովկ ծնաւ զԱքին,
Աքին ծնաւ զԵղիուդ, Եղիուդ ծնաւ զԵ- 15
ղիազար, Եղիազար ծնաւ զՄատթան,
Մատթան ծնաւ զՅակովբ, Յակովբ ծնաւ 16
զՅովսէփ զայրն Մարեմայ՝ որում խօսե-
ցեալ զՄարիամ կոյս, յորմէ ծնաւն Յի-
սուս, որ անուանեցաւ ՔՐԻՍՏՈՍ:

Արդ ամենայն ազգք յԱբրահամէ մին- 17
չեւ ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք, եւ ի
Դաւթէ մինչեւ ի գերութիւնն բաբելա-
ցւոց՝ ազգք չորեքտասանք, եւ ի գերու-
թենէն բաբելացւոց մինչեւ ի Քրիստոս՝
ազգք չորեքտասանք:

Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր 18
այսպէս: Խօսեցեալ զմայր նորա Մարիամ՝
Յովսեփու, մինչչեւ եկեալ առ միմեանս՝
գտաւ յղացեալ ի Հոգւոյն սրբոյ: Եւ Յով- 19
սէփ այրն նորա, քանզի արդար էր եւ ոչ
կամէր առակել զնա, խորհեցաւ լռելեայն
արձակել զնա: Եւ մինչ դեռ նա զայս 20

ածէր զմտաւ, ահա հրեշտակ Տեառն ի
տեսլեան երեւեցաւ նմա՝ եւ ասէ. Յով-
սէփ՝ որդի Դաւթի, մի՛ երկնչիր առնուլ
առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ի
21 նմայն ծնեալ է՝ ի Հոգւոյն սրբոյ է. ծնցի
որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս.
զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց
22 իւրեանց: Այլ այս ամենայն եղեւ, զի
լցցի որ ասացաւն ի Տեառնէ ի ձեռն Եսա-
23 յայ մարգարէի. Ահա կոյս յղասցի եւ
ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա
Էմմանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ Աս-
24 տուած: Եւ զարթուցեալ Յովսէփ ի քնոյ
անտի՝ արար որպէս հրամայեաց նմա
հրեշտակն Տեառն, եւ առ յինքն զկին
25 իւր. եւ ոչ գիտէր զնա, մինչեւ ծնաւ
զորդին իւր զանդրանիկ, եւ կոչեաց զա-
նուն նորա ՅԻՍՈՒՍ:

ԳԼՈՒԽ Բ

1 Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ
Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի,
ահա մոգք յարեւելից եկին յԵրուսաղէմ,
2 եւ ասեն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից.
զի տեսաք զաստղն նորա յարեւելս, եւ
3 եկաք երկիր պագանել նմա: Եւ իբրեւ
լուաւ արքայ Հերովդէս՝ խռովեցաւ, եւ
4 ամենայն Երուսաղէմ ընդ նմա. եւ ժողո-

ժողովեալ զամենայն զքահանայապետսն եւ
զդպիրս ժողովրդեանն, հարցանէր ի նո-
ցանէ՝ թէ ուր ծնանիցի Քրիստոսն: Եւ 5
նոքա ասեն ցնա. ի Բեթղեհէմ Հրէաստա-
նի. զի այսպէս գրեալ է ի ձեռն մարգա-
րէին. Եւ դու Բեթղեհէմ երկիր Յուդայ՝ 6
ոչ ինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ. ի քէն
ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողո-
վուրդ իմ զԻսրայէլ: Յայնժամ Հերովդէս 7
գաղտ կոչեաց զմոգսն, եւ ստուգեաց ի
նոցանէ զժամանակն աստեղն երեւելոյ.
եւ արձակեաց զնոսա ի Բեթղեհէմ, ասէ. 8
գնացէք ստուգեցէք վասն մանկանն, եւ
յորժամ գտանիցէք՝ աղդ արասջիք ինձ,
զի եւ ես եկեալ երկիր պագից նմա: Եւ 9
նոքա իբրեւ լուան ի թագաւորէն՝ գնա-
ցին. եւ ահա աստղն զոր տեսին յարեւելս՝
առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ ե-
կաց ի վերայ՝ ուր էր մանուկն: Իբրեւ 10
տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրա-
խութիւն մեծ: Եւ իբրեւ մտին ի տուն, 11
տեսին զմանուկն հանդերձ մարբն իւրով,
եւ անկեալ երկիր պագանէին նմա. եւ
բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա
պատարագս, ոսկի եւ կնդրուկ եւ զմ-
ուռս: Եւ հրաման առեալ ի տեսլեան, 12
չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ
ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց:
Եւ իբրեւ գնացին նոքա անտի, ահա 13

հրեշտակ Տեառն երեւէր ի տեսլեան Յով-
սեփու եւ ասէր. Արի, ա՛ռ զմանուկդ եւ
զմայր իւր՝ եւ փախիր յԵգիպտոս, եւ
անդ լինիջիր յորժամ ասացից քեզ. քան-
զի ի խնդիր է Հերովդէս կորուսանել
14 զմանուկդ: Եւ նա յարուցեալ ա՛ռ զմա-
նուկն եւ զմայր իւր գիշերի՝ եւ գնաց յԵ-
գիպտոս, եւ անդ էր մինչեւ ցվախճան
15 Հերովդի: Զի լցցի ասացեալն ի Տեառնէ
ի ձեռն մարգարէին որ ասէ. յԵգիպտոսէ
կոչեցից զորդի իմ:
16 Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս թէ
խաբեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ
յոյժ. եւ առաքեաց կոտորեաց զամե-
նայն մանկունս որ էին ի Բեթղեհէմ եւ յա-
մենայն սահմանս նորա, յերկեմենից եւ
ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստու-
17 գեաց ի մոգուցն: Յայնժամ կատարեցաւ
ասացեալն ի ձեռն Երեմիայ մարգարէի
18 որ ասէ. Ձայն գուժեաց ի Հռամա, ող-
բումն եւ լալումն եւ աշխարումն յոյժ.
Հռաքէլ լայր զորդիս իւր, եւ ոչ կամէր
մխիթարել՝ զի ոչ էին:
19 Եւ ի վախճանել Հերովդի, ահա հրեշ-
տակ Տեառն ի տեսլեան երեւէր Յովսե-
20 փայ յԵգիպտոս եւ ասէր. Արի, ա՛ռ զմա-
նուկդ եւ զմայր իւր, եւ գնա յերկիրն
Իսրայէլի. զի մեռան որ խնդրէին զանձն
21 մանկանդ: Եւ նա յարուցեալ ա՛ռ զմա-

նուկն եւ զմայր նորա, եւ եկն յերկիրն
Իսրայէլի: Եւ իբրեւ լուաւ եթէ Արքե- 22
ղաոս թագաւորեաց Հրէաստանի փոխա-
նակ Հերովդի հօրն իւրոյ, երկեաւ եր-
թալ անդր. եւ հրաման առեալ ի տես-
լեան՝ գնաց ի կողմանս Գալիլեացւոց. եւ 23
եկեալ բնակեցաւ ի քաղաքին՝ որ կոչէր
Նազարեթ. զի լցցի բան մարգարէիցն,
թէ Նազովրեցի կոչեսցի:

ԳԼՈՒԽ Գ.

Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս 1
Մկրտիչ քարոզել յանապատին Հրէաս-
տանի, եւ ասել. Ապաշխարեցէք՝ զի մեր- 2
ձեալ է արքայութիւն երկնից. զի սա է՝ 3
վասն որոյ ասացաւ ի ձեռն Եսայեայ մար-
գարէի, որ ասէ. Ձայն բարբառոյ յանա-
պատի, պատրաստ արարէք զճանապարհ
Տեառն, եւ ուղիղ արարէք զշաւիղս
նորա:

Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ 4
ի ստեւոյ ուղտու, եւ գօտի մաշկեղէն ընդ
մէջ իւր, եւ կերակուր նորա էր մարախ
եւ մեղր վայրենի: Յայնժամ ելանէին առ 5
նա ամենայն Երուսաղեմացիք եւ ամե-
նայն Հրէաստան եւ ամենայն կողմն Յոր-
դանանու, մկրտէին ի նմանէ ի Յորդանան 6
գետ, եւ խոստովան լինէին զմեղս իւ-

7 րեանց: Իբրեւ տեսեալ զբազումս ի սադու-
կեցւոցն եւ ի փարիսեցւոց եկեալս ի մկր-
տութիւն նորա՝ ասէ ցնոսա. Ծնունդք
իժից, ո՞ ցոյց ձեզ փախչել ի բարկութե-
8 նէն որ գալոցն է: Արարէք այսուհետեւ
9 պտուղ արժանի ապաշխարութեան, եւ
մի՛ համարիցիք ասել յանձինս՝ թէ ու-
նիմք մեք հայր զԱբրահամ. ասեմ ձեզ,
զի կարօղ է Աստուած ի քարանցս յայս-
ցանէ յարուցանել որդիս Աբրահամու:
10 Զի աւասիկ տապար առ արմին ծառոց
դնի. ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպ-
տուղ բարի, հատանի եւ ի հուր արկա-
11 նի: Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխա-
րութիւն, բայց որ զկնի իմ գայ՝ հզօրա-
գոյն է քան զիս, եւ ես չեմ բաւական
բառնալ զկօշիկս նորա. նա մկրտեսցէ
12 զձեզ ի Հոգին սուրբ եւ ի հուր: Որոյ հե-
ծանոցն ի ձեռին իւրում, եւ սրբեսցէ
զկալ իւր եւ ժողովեսցէ զցորեանն ի շտե-
մարանս իւր, եւ զյարդն այրեսցէ անշէջ
հրով:
13 Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլեէ ի Յոր-
դանան առ Յովհաննէս՝ մկրտել ի նմա-
14 նէ: Եւ Յովհաննէս արգելու զնա եւ ա-
սէ. Ինձ պիտոյ է ի քէն մկրտել՝ եւ դու
15 առ իս գաս: Պատասխանի ետ Յիսուս
եւ ասէ ցնա. Թոյլ տուր այժմ, զի այս-
պէս վայել է մեզ լնուլ զամենայն ար-

դարութիւն: Եւ ապա թոյլ ետ նմա:
Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվա- 16
ղակի ի ջրոյ անտի. եւ ահա բացան նմա
երկինք, եւ ետես զՀոգին Աստուծոյ՝ զի
իջանէր իբրեւ զաղաւնի եւ գայր ի վերայ
նորա: Եւ ահա ձայն յերկնից որ ասէր. 17
Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճե-
ցայ:

ԳԼՈՒԽ Դ.

Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ 1
ի Հոգւոյն՝ փորձել ի սատանայէ: Եւ պա- 2
հեալ զքառասուն տիւ եւ զքառասուն
գիշեր՝ ապա քաղցեաւ: Եւ մատուցեալ 3
փորձիչն ասէ ցնա. Եթէ որդի ես Աստու-
ծոյ՝ ասա զի քարինքս այսոքիկ հաց լինի-
ցին: Նա պատասխանի ետ եւ ասէ. 4
Գրեալ է՝ թէ ոչ հացիւ միայն կեցցէ
մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ի
բերանոյ Աստուծոյ:
Յայնժամ առեալ ածէ զնա սատանայ 5
ի քաղաքն սուրբ, եւ կացուցանէ զնա ի
վերայ աշտարակի տաճարին, եւ ասէ
ցնա. Եթէ որդի ես Աստուծոյ՝ արկ զքեզ 6
աստի ի վայր. զի գրեալ է՝ թէ հրեշտա-
կաց իւրոց պատուիրեալ է վասն քո՝ եւ
ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի մի
երբեք հարցես զքարի զոտն քո: Ասէ ցնա 7

դարձեալ Յիսուս. Գրեալ է՝ թէ ոչ փոր-
ձեսցես զտէր Աստուած քո:
8 Դարձեալ առնու ածէ զնա սատա-
նայ ի լեառն մի բարձր յոյժ, եւ ցուցա-
նէ նմա զամենայն թագաւորութիւնս աշ-
9 խարհի եւ զփառս նոցա, եւ ասէ ցնա.
Զայս ամենայն քեզ տաց՝ եթէ անկեալ
10 երկիր պագանիցես ինձ: Յայնժամ ասէ
ցնա Յիսուս. Երթ յետս իմ, սատանայ.
զի գրեալ է, Տեառն Աստուծոյ քում եր-
կիր պագցես, եւ զնա միայն պաշտեսցես:
11 Ապա եթող զնա սատանայ, եւ ահա
հրեշտակք մատեան եւ պաշտէին զնա:
12 ԲԲ. Եւ իբրեւ լուաւ Յիսուս՝ եթէ
Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ գնաց
13 ի Գալիլեա. եւ թողեալ զՆազարեթ, եկն
բնակեցաւ ի Կափառնայում ի ծովեզե-
րին, ի սահմանս Զաբուղոնի եւ Նեփթա-
14 ղիմայ. զի լցցի բանն՝ որ ասացաւ ի ձեռն
15 Եսայայ մարգարէի. Երկիր Զաբուղոնի
եւ երկիր Նեփթաղիմայ՝ ճանապարհ ծո-
վու՝ յայնկոյս Յորդանանու, Գալիլեա հե-
16 թանոսաց. Ժողովուրդ որ նստէր ի խա-
ւարի՝ ետես լոյս մեծ. եւ որոց նստէին
յաշխարհին եւ ի ստուերս մահու՝ լոյս
ծագեաց նոցա:
17 Յայնմ հետէ սկսաւ քարոզել Յիսուս
եւ ասել. Ապաշխարեցէք՝ զի մերձեալ
է արքայութիւն երկնից:

Մինչ դեռ գնայր Յիսուս ընդ եզր ծո֊ 18
վուն Գալիլեացւոց, ետես երկուս եղ֊
բարս, զՍիմովն զկոչեցեալն Պետրոս եւ
զԱնդրէաս եղբայր նորա, արկեալ ուռ֊
կան ի ծով. քանզի ձկնորսք էին: Եւ ասէ 19
ցնոսա. Եկայք զկնի իմ, եւ արարից զձեզ
որսորդս մարդկան: Եւ նոցա թողեալ 20
վաղվաղակի զգործիսն՝ գնացին զհետ նո֊
րա:

Եւ մատուցեալ անտի յառաջ՝ ետես 21
այլ երկուս եղբարս, զՅակովբոս զԶե֊
բեդեայ եւ զՅովհաննէս զեղբայր նորա ի
նաւի՝ Զեբեդեաւ հանդերձ հարբն իւ֊
րեանց, մինչ դեռ կազմէին զուռկանս իւ֊
րեանց. եւ կոչեաց զնոսա: Նոցա թո֊ 22
ղեալ վաղվաղակի զնաւն եւ զհայր իւ֊
րեանց, գնացին զհետ նորա:

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն 23
Գալիլեացւոց, ուսուցանէր ի ժողովուրդս
նոցա եւ քարոզէր զաւետարանն արքա֊
յութեան, եւ բժշկէր զամենայն հիւան֊
դութիւնս եւ զամենայն ախտս ի ժողո֊
վրդեանն: Եւ ել լուր նորա ընդ ամե֊ 24
նայն երկիրն Ասորւոց, եւ մատուցին առ
նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ էին ի
պէսպէս ցաւս եւ ի տանջանս, եւ զդի֊
ւահարս եւ զլուսնոտս եւ զանդամա֊
լոյծս. եւ բժշկեաց զնոսա: Եւ երթա֊ 25
յին զհետ նորա ժողովուրդք բազումք ի

Գալիլեէ եւ ի Դեկապոլեայ եւ յԵրուսա֊
ղեմէ եւ ի Հրէաստանէ, եւ յայնկոյս Յոր֊
դանանու, եւ բժշկեաց զնոսա:

ԳԼՈՒԽ Ե

1 ԲԳ. Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի
լեառն. եւ իբրեւ նստաւ անդ՝ մատեան
2 առ նա աշակերտքն նորա. եւ բացեալ
զբերան իւր ուսուցանէր զնոսա, եւ ա֊
սէր.

3 Երանի աղքատաց հոգւով, զի նոցա
4 է արքայութիւն երկնից: Երանի սգա֊
5 ւորաց, զի նոքա մխիթարեսցին: Ե֊
րանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն
6 զերկիր: Երանի որ քաղցեալ եւ ծարաւի
իցեն արդարութեան, զի նոքա յագե֊
7 ցին: Երանի ողորմածաց, զի նոքա ողոր֊
8 մութիւն գտցեն: Երանի այնոցիկ՝ որ
սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած
9 տեսցեն: Երանի խաղաղարարաց, զի նո֊
10 քա որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի
որ հալածեալ իցեն վասն արդարութեան,
11 զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի
է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ եւ
հալածեսցեն, եւ ասիցեն զամենայն բան
12 չար զձէնջ սուտ՝ վասն իմ. ցնծացէք եւ
ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում
են յերկինս. զի այսպէս հալածեցին

զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին:
Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն ան- 13
համի՝ ի՞ւ յաղիցի. ոչ իմիք ազդիցէ այնու-
հետեւ, բայց եթէ ընկենուլ արտաքս՝
եւ կոխան լինել ի մարդկանէ:
Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ 14
քաղաք թաքչել՝ որ ի վերայ լերին կայցէ.
եւ ոչ լուցանեն ճրագ՝ եւ դնեն ընդ 15
գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի. եւ
լոյս տայ ամենեցուն՝ որ ի տանն իցեն:
Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի 16
մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր
բարիս, եւ փառաւորեսցեն զհայր ձեր
որ յերկինս է:
ԲԴ. Մի՛ համարիք եթէ եկի լուծանել 17
զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծա-
նել՝ այլ լնուլ: Ամէն ասեմ ձեզ՝ մինչեւ 18
անցցեն երկինք եւ երկիր, յովտ մի՝ որ
նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն եւ ի
մարգարէից՝ մինչեւ ամենայն եղիցի: Որ 19
ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայս-
ցանէ ի փոքունց, եւ ուսուսցէ այնպէս
զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան
երկնից. իսկ որ արասցէ եւ ուսուսցէ,
նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից:
Բայց ասեմ ձեզ, զի եթէ ոչ առաւելու- 20
ցու արդարութիւն ձեր աւելի քան զդպ-
րացն եւ զփարիսեցւոց, ոչ մտանիցէք
յարքայութիւն երկնից:

21 Լուարուք զի ասացաւ առաջնոցն, թէ
մի՛ սպանաներ. զի որ սպանանիցէ՝ պար-
տական լիցի դատաստանի. այլ ես ասեմ
22 ձեզ, եթէ ամենայն որ բարկանայ եղբօր
իւրում տարապարտուց, պարտաւոր լի-
ցի դատաստանի. եւ որ ասիցէ ցեղբայր
իւր յիմար՝ պարտաւոր լիցի ատենի. եւ
որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտա-
ւոր լիցի ի գեհեն հրոյն:
23 Եթէ մատուցանիցես զպատարագ քո
ի վերայ սեղանոյ, եւ անդ յիշեսցես՝ ե-
թէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն,
24 թող զպատարագն քո առաջի սեղանոյն,
եւ երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում,
եւ ապա եկեալ մատուսջիր զպատա-
րագն քո:
25 Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վա-
ղագոյն, մինչ դեռ իցես ընդ նմա ի ճա-
նապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն
դատաւորի, եւ դատաւորն դահճի. եւ
26 արկանիցիս ի բանտ: Ամէն ասեմ քեզ,
ոչ ելանիցես անտի՝ մինչեւ հատուցանի-
ցես զյետին նաքարակիտն:
27 Լուարուք զի ասացաւ. Մի՛ շնար. բայց
28 ես ասեմ ձեզ, թէ ամենայն որ հայի ի
կին մարդ առ ի ցանկանալոյ նմա, ան-
դէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում:
29 Եթէ ակն քո աջ գայթագղեցուցանէ
զքեզ, խլեա զնա եւ ընկեա ի քէն. զի

1784-58
(1008 / 37926)

լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կո-
րիցէ, եւ մի ամենայն մարմինդ քո ան-
կանիցի ի գեհեն։ Եւ եթէ աջ ձեռն քո 30
գայթագղեցուցանէ զքեզ, հատ զնա եւ
ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յան-
դամոց քոց կորիցէ, եւ մի ամենայն մար-
մինդ քո արկանիցի ի գեհեն։

Ապաքէն ասացաւ, թէ որ արձակիցէ 31
զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն։ Բայց 32
ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ արձակէ
զկին իւր առանց բանի պոռնկութեան,
նա տայ նմա շնալ, եւ որ զարձակեալն
առնէ՝ շնայ։

Դարձեալ լուարուք զի ասացաւ ա- 33
ռաջնոցն. Մի երդնուցուս սուտ, բայց
հատուսցես Տեառն զերդմունս քո։ Այլ 34
ես ասեմ ձեզ՝ ամենեւին մի երդնուլ,
մի յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ, եւ 35
մի յերկիր՝ զի պատուանդան է ոտից
նորա, եւ մի յԵրուսաղէմ՝ զի քաղաք
է մեծի արքայի. եւ մի ի գլուխ քո 36
երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպի-
տակ առնել կամ թուխ։ Այլ եղիցի ձեր 37
բան, այոն՝ այո, եւ ոչն՝ ոչ. զի աւելին
քան զայն ի չարէն է։

Լուարուք զի ասացաւ. Ակն ընդ ա- 38
կան, եւ ատամն ընդ ատաման. այլ ես
ասեմ ձեզ. Մի կալ հակառակ չարի։ 39
Այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ

40 քո՝ դարձո նմա եւ զմիւսն։ Եւ որ կա-
միցի ոք դատել եւ առնուլ զշապիկս քո,
41 թող նմա եւ զբաճկոն քո։ Եւ որ տա-
րապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ
ընդ նմա եւ երկուս։ Որում խնդրէ ի քէն՝
42 տուր, եւ որ կամի փոխ առնուլ ի քէն՝
մի դարձուցանիր զերեսս։

43 Լուարուք ապաքէն զի ասացաւ. Սի-
րեսցես զընկեր քո, եւ ատեսցես զթշնա-
44 մին քո։ Այլ ես ասեմ ձեզ. Սիրեցէք
զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր,
բարի արարէք ատելեաց ձերոց, եւ ա-
ղօթս ի վերայ այնոցիկ՝ որ լլկեն զձեզ
45 եւ հալածեն. զի եղիջիք որդիք հօր ձերոյ
որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ
ի վերայ չարաց եւ բարեաց, եւ ածէ
անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւո-
46 րաց։ Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ սի-
րեն զձեզ՝ զի՞նչ վարձք լիցեն. ո՞չ ապա-
47 քէն եւ մաքսաւորք զնոյն գործեն. եւ ե-
թէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց
ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք. ո՞չ ապաքէն
մաքսաւորք եւ մեղաւորք զնոյն գործեն։

48 Արդ եղերուք դուք կատարեալք, որ-
պէս եւ հայրն ձեր երկնաւոր կատա-
րեալ է։

ԳԼՈՒԽ Զ

ԲԵ․ Զգոյշ լերուք ողորմութեան ձե- 1
րում՝ մի՛ առնել առաջի մարդկան, որ-
պէս թէ ի ցոյց ինչ նոցա․ գուցէ եւ
վարձս ոչ ընդունիցիք ի հօրէն ձերմէ՝ որ
յերկինսն է։ Այլ յորժամ առնիցես 2
ողորմութիւն, մի՛ հարկանէր փող առա-
ջի քո, որպէս կեղծաւորքն առնեն ի ժո-
ղովուրդս եւ ի հրապարակս, որպէս զի
փառաւորեսցին ի մարդկանէ։ Ամէն ա-
սեմ ձեզ՝ այն իսկ էն վարձք նոցա։ Այլ 3
դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛
գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո․
որպէս զի եղիցի ողորմութիւնն քո ի ծա- 4
ծուկ, եւ հայրն քո որ տեսանէ ի ծա-
ծուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։

Եւ յորժամ յաղօթս կայցես, մի՛ լինի- 5
ցիս որպէս կեղծաւորքն․ զի սիրեն ի ժո-
ղովուրդս եւ յանկիւնս հրապարակաց
կալ յաղօթս, որպէս զի երեւեսցին մարդ-
կան․ ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ էն վարձք 6
նոցա։ Այլ դու յորժամ կայցես յա-
ղօթս, մուտ ի սենեակ քո՝ եւ փակեա
զդուրս քո, եւ կաց յաղօթս առ հայր
քո ի ծածուկ․ եւ հայրն քո որ տեսանէ
ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնա-
պէս։ Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ 7

շատախօսք լինիք իբրեւ զհեթանոսսն․ զի
համարին եթէ ի բազում խօսից իւրեանց
8 լսելի լինիցին․ արդ մի՛ նմանիցէք նոցա․
զի գիտէ հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ,
մինչչեւ ձեր խնդրեալ ինչ իցէ ի նմանէ։
9 Եւ արդ այսպէս կացէք դուք յաղօթս․
10 Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի ա-
նուն քո․ եկեսցէ արքայութիւն քո․ եղի-
ցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի․
11 զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այ-
12 սօր, եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս
եւ մեք թողումք մերոց պարտապանաց,
13 եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ
փրկեա զմեզ ի չարէն, զի քո է արքայու-
թիւն եւ զօրութիւն եւ փառք յաւի-
տեանս․ ամէն։

14 Զի եթէ թողուցուք մարդկան զյան-
ցանս նոցա, թողցէ եւ ձեզ հայրն ձեր
15 երկնաւոր․ ապա թէ ոչ թողուցուք
մարդկան զյանցանս նոցա, եւ ոչ հայրն
ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր։

16 Եւ յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իբ-
րեւ զկեղծաւորսն տրտմեալք, որ ա-
պականեն զերեսս իւրեանց, որպէս զի
երեւեսցին մարդկան թէ պահիցեն։ Ա-
մէն ասեմ ձեզ, այն իսկ էն վարձք նոցա։
17 Այլ դու՝ յորժամ պահիցես, օծ զգլուխ
18 քո եւ լուա զերեսս քո, զի մի՛ երեւե-
ցիս մարդկան իբրեւ զպահօղ, այլ հօրն

քում ի ծածուկ, եւ հայրն քո որ տե-
սանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ:
Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր 19
ցեց եւ ուտիճ ապականեն, եւ ուր գողք
ական հատանեն եւ գողանան: Այլ գան- 20
ձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց
եւ ոչ ուտիճ ապականեն, եւ ոչ գողք
ական հատանեն եւ գողանան. զի ուր 21
գանձք ձեր են, անդ եւ սիրտք ձեր եղի-
ցին:

ԲԶ. Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն 22
քո առատ է, ամենայն մարմինդ լուսա-
ւոր եղիցի. ապա թէ ակն քո չար է՝ 23
ամենայն մարմինդ խաւարին եղիցի: Իսկ
արդ՝ եթէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար
է, խաւարն ո՜րչափ եւս:

Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել, 24
կամ զմին ատիցէ եւ զմիւսն սիրիցէ, կամ
զմին մեծարիցէ եւ զմիւսն արհամարհիցէ,
ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ Մամո-
նայի: Վասն այդորիկ ասեմ ձեզ. մի՛ հո- 25
գայք վասն ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք
կամ զինչ ըմպիցէք, եւ մի՛ վասն մարմնոց
ձերոց՝ թէ զինչ ագանիցիք. ո՞չ ապաքէն
ոգի առաւել է քան զկերակուր՝ եւ մար-
մին քան զհանդերձ: Հայեցարուք ի թռ- 26
չունս երկնից՝ զի ոչ վարեն եւ ոչ հնձեն,
եւ ոչ ժողովեն ի շտեմարանս, եւ հայրն
ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ո՞չ ա-

պաքէն դուք առաւել էք քան զնոսա:
27 Իսկ արդ ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում՝
յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն
28 մի: Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք. հա-
յեցարուք ի շուշանն վայրենի՝ որպէս ա-
29 ճէ. ոչ ջանայ եւ ոչ նիւթէ. ասեմ ձեզ՝
զի եւ ոչ Սողոմոն յամենայն ի փառսն
30 իւրում զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ: Իսկ
եթէ զխոտն ի վայրի, որ այսօր է եւ վա-
ղիւ ի հնոց արկանի, Աստուած այնպէս
զգեցուցանէ, ո՜րչափ եւս առաւել զձեզ,
31 թերահաւատք: Մի՛ այսուհետեւ հոգայ-
ցէք եւ ասիցէք. զինչ կերիցուք կամ զինչ
32 արբցուք կամ զինչ զգեցցուք. զի զայդ
ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի
գիտէ հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է
33 ձեզ այդ ամենայն: Խնդրեցէք նախ զար-
քայութիւն Աստուծոյ եւ զարդարու-
թիւն նորա, եւ այդ ամենայն յաւելցի
34 ձեզ: Մի՛ այսուհետեւ հոգայցէք վասն
վաղուի, զի վաղիւն վասն իւր հոգասցի.
շատ է աւուրն չար իւր:

ԳԼՈՒԽ Է

1 ԲԷ. Մի՛ դատիք՝ զի մի՛ դատիցիք. զի ո-
րով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք.
2 եւ որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ:
3 Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր

քոյ, եւ ի քում ականդ զգերանդ ոչ տե-
սանես. կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո. 4
Թող հանից զշիւղդ յականէ քումմէ. եւ
ահաւադիկ ի քում ականդ գերան կայ:
Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ 5
քումմէ, եւ ապա հայեսցիս հանել զշիւղն
յականէ եղբօր քոյ:

Մի՛ տայք զսրբութիւն՝ շանց, եւ մի՛ 6
արկանէք զմարգարիտ ձեր առաջի խո-
զաց, զի մի՛ առ ոտն կոխիցեն զնոսա, եւ
դարձեալ երդիծուցանիցեն զձեզ:

Խնդրեցէք՝ եւ տացի ձեզ, հայցեցէք՝ 7
եւ գտջիք, բախեցէք՝ եւ բացցի ձեզ. զի 8
ամենայն որ խնդրէ՝ առնու, եւ որ հայցէ՝
գտանէ, եւ որ բախէ՝ բացցի նմա: Ո՞ 9
իցէ ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր
հաց, միթէ քա՞ր տայցէ նմա. եւ կամ 10
խնդրիցէ ձուկն, միթէ օձ տայցէ նմա:
Արդ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք 11
պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞ր-
չափ եւս առաւել հայրն ձեր որ յերկինս
է՝ տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա:

Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ 12
թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս եւ
դուք արարէք նոցա. զի այս իսկ են օ-
րէնքն եւ մարգարէք:

Մտէք ընդ նեղ դուռն. քանզի ընդար- 13
ձակ է դուռնն եւ համարձակ ճանա-
պարհն՝ որ տանի ի կորուստ, եւ բազումք

14 են որ մտանեն ընդ նա. քանզի անձուկ է
դուռնն եւ նեղ ճանապարհն՝ որ տանի
ի կեանս, եւ սակաւք են որ գտանեն զնա:
15 Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն որ
գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, եւ
16 ի ներքոյ են գայլք յափշտակօղք. ի պտո-
ղոյ նոցա ծանիջիք զնոսա: Միթէ քա-
ղիցե՞ն ի փշոց խաղող կամ ի տատասկէ
17 թուզ: Այսպէս ամենայն ծառ բարի՝
պտուղ բարի առնէ, եւ ծառ չար՝ պտուղ
18 չար առնէ: Ոչ կարէ ծառ բարի պտուղ
չար առնել, եւ ոչ ծառ չար՝ պտուղ բա-
19 րի առնել: Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ
պտուղ բարի, հատանի եւ ի հուր արկա-
20 նի: Ապա ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա:
21 Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր, Տէր,
մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ
առնէ զկամս հօր իմոյ որ յերկինսն է:
22 Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ.
Տէր, Տէր, ոչ յանուն քո մարգարէացաք,
եւ յանուն քո դեւս հանաք, եւ յանուն
23 քո զօրութիւնս բազումս արարաք. եւ
յայնժամ ասացից ցնոսա, եթէ ոչ երբէք
գիտէի զձեզ. ի բաց կացէք յինէն ամե-
նեքեան՝ որք գործէիք զանօրէնութիւն:
24 Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ եւ
առնէ զնոսա, նմանեսցէ առն իմաստնոյ՝
25 որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի. իջին
անձրեւք՝ եւ խաղացին գետք, շնչեցին

հողմք՝ եւ բախեցին զտունն, եւ ոչ կոր֊
ծանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստա֊
տեալ էր։ Եւ ամենայն որ լսէ զբանս 26
իմ զայսոսիկ՝ եւ ոչ առնէ զսոսա, նմանես֊
ցէ առն յիմարի, որ շինեաց զտուն իւր ի
վերայ աւազոյ. իջին անձրեւք, յարեան 27
գետք, շնչեցին հողմք՝ հարին զտունն եւ
անկաւ, եւ էր կործանումն նորա մեծ
յոյժ։

Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս 28
զամենայն զբանս զայսոսիկ, զարմանային
ժողովուրդքն ընդ վարդապետութիւն
նորա. զի իբրեւ իշխանութեամբ ուսու֊ 29
ցանէր, եւ ոչ որպէս դպիրքն։

ԳԼՈՒԽ Ը

Այլ իբրեւ էջ ի լեռնէ անտի՝ գնացին 1
զկնի նորա ժողովուրդք բազումք։ Եւ ա֊ 2
հա մատուցեալ բորոտ մի, երկիր պագա֊
նէր նմա, եւ ասէր. Տէր, եթէ կամիս՝ կա֊
րող ես զիս սրբել։ Ձգեաց զձեռն իւր եւ 3
հասոյց ի նա Յիսուս եւ ասէ. Կամիմ,
սրբեաց։ Եւ վաղվաղակի սրբեցաւ ի
նմանէ բորոտութիւնն։ Եւ ասէ ցնա Յի֊ 4
սուս. Զգոյշ լեր, մի՛ ումեք ասիցես. այլ
երթ ցոյց զանձն քո քահանային, եւ
մատո զպատարագն՝ զոր հրամայեաց
Մովսէս ի վկայութիւն նոցա։

5 Եւ մտեալ ի Կափառնաում, մատեաւ
առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա
6 եւ ասէր. Տէր, մանուկ իմ անկեալ կայ
ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ։
7 Ասէ ցնա Յիսուս. Ես եկից եւ բժշկեցից
8 զնա։ Պատասխանի ետ հարիւրապետն եւ
ասէ. Տէր, չեմ բաւական եթէ ընդ յարկաւ
իմով մտցես. այլ ասա բանիւ, եւ բժըշ֊
9 կեսցի մանուկն իմ. քանզի եւ ես այր մի
եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինեւ
զինուորս. ասեմ սմա երթ՝ եւ երթայ,
եւ այլում թէ եկ՝ եւ գայ, եւ ծառայի
10 իմում թէ արա զայս՝ եւ առնէ։ Իբրեւ
լուաւ Յիսուս՝ զարմացաւ, եւ ասէ ցայ֊
նոսիկ՝ որ զհետն երթային. Ամէն ասեմ
ձեզ. Եւ ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս
11 գտի երբեք։ Բայց ասեմ ձեզ, զի բա֊
զումք յարեւելից եւ յարեւմտից եկես֊
ցեն՝ եւ բազմեսցին ընդ Աբրահամու եւ
ընդ Իսահակայ եւ ընդ Յակովբու յարքա֊
12 յութեան երկնից, եւ որդիքն արքայու֊
թեան ելցեն ի խաւարն արտաքին. անդ
13 եղիցի լալ եւ կրճել ատամանց։ Եւ ասէ
Յիսուս ցհարիւրապետն. Երթ, եւ որ֊
պէս հաւատացերդ եղիցի քեզ։ Եւ ող֊
ջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ։
14 Եւ եկեալ Յիսուս ի տուն Պետրոսի,
ետես զի զոքանչն նորա անկեալ դնէր
15 տապացեալ. կալաւ զձեռանէ նորա՝ եւ

եթող զնա ջերմն. յոտն եկաց եւ պաշ-
տէր զնոսա:

Իբրեւ եղեւ երեկոյ՝ մատուցին առ նա 16
դիւահարս բազումս, եւ եհան զայսսն
բանիւ, եւ զամենայն հիւանդսն բժշ-
կեաց: Զի լցցի բանն՝ որ ասացաւ ի ձեռն 17
Եսայեայ մարգարէի. Նա զհիւանդութիւնս
մեր վերացոյց, եւ զցաւս մեր եբարձ:

Գկ. Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բա- 18
զումս զիւրեւ, հրամայեաց երթալ յայն-
կոյս: Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա. 19
Վարդապետ, եկից եւ ես զկնի քո յոր
վայր եւ երթիցես: Ասէ ցնա Յիսուս. 20
Աղուեսուց որջք գոն, եւ թռչնոց երկնից
բոյնք. այլ որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր
դիցէ զգլուխ իւր:

Եւ մի ոմն յաշակերտաց նորա ասէ 21
ցնա. Տէր, տուր ինձ հրաման՝ զի երթայց
նախ թաղեցից զհայր իմ: Ասէ ցնա Յի- 22
սուս. Եկ զկնի իմ, եւ թոյլ տուր մեռե-
լոցն թաղել զմեռեալս իւրեանց:

Եւ իբրեւ եմուտ ի նաւն, գնացին զկնի 23
նորա աշակերտքն նորա. եւ ահա շար- 24
ժումն մեծ եղեւ ի ծովուն, մինչ նաւին
ծածկել յալեաց անտի՝ եւ ինքն ննջէր:
Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին 25
զնա եւ ասեն. Տէր, փրկեա զմեզ՝ զի
կորնչիմք: Եւ ասէ ցնոսա. Ընդէ՞ր վա- 26
տասիրտք էք, թերահաւատք: Յայն-

ժամ յարուցեալ սաստեաց հողմոցն եւ
ծովուն, եւ եղեւ խաղաղութիւն մեծ:
27 Եւ մարդիկն զարմացան եւ ասէին. Որ-
պիսի՞ ոք իցէ սա, զի եւ հողմք եւ ծով
հնազանդին սմա:
28 Եւ իբրեւ անցին յայնկոյս յերկիրն
Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւա-
հարք երկու՝ ելեալք ի գերեզմանացն՝
չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար
29 անցանել ումեք ընդ այն ճանապարհ. եւ
ահա աղաղակեցին եւ ասեն. Զի՞ կայ մեր
եւ քո, Յիսուս որդի Աստուծոյ, եկիր
30 տարաժամ տանջել զմեզ: Եւ էր հե-
ռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից ա-
31 րօտական: Եւ դեւքն աղաչէին զնա եւ
ասէին. Եթէ հանես զմեզ աստի, հրա-
ման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն:
32 Եւ ասէ ցնոսա. Երթայք: Եւ նոքա ե-
լեալ գնացին յերամակն խոզից. եւ դի-
մեաց ամենայն երամակն ի դարէ անտի
33 ի ծով, եւ մեռան ի ջուրսն: Եւ խոզա-
րածքն փախեան, եւ երթեալ ի քաղաքն
պատմեցին զամենայն, եւ զիրս դիւա-
34 հարացն: Եւ ահա ամենայն քաղաքն ել
ընդ առաջ Յիսուսի. իբրեւ տեսին զնա՝
աղաչէին զի գնասցէ ի սահմանաց նոցա:

ԳԼՈՒԽ Թ

Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս, եւ 1
եկն ի քաղաք իւր։ Եւ ահա մատուցին 2
առ նա անդամալոյծ մի որ դնէր ի մա-
հիճս։ Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս
նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին
քեզ մեղք քո։ Եւ ահա ոմանք ի դպ- 3
րացն ասեն ընդ միտս. հայհոյէ դա։ Եւ 4
ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝
ասէ ցնոսա. ընդէ՞ր խորհիք դուք չարիս
ի սիրտս ձեր. զի՞նչ դիւրին է. ասել՝ Թո- 5
ղեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել՝ ա-
րի եւ շրջեաց։ Այլ զի գիտասջիք՝ եթէ 6
իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի
թողուլ զմեղս,— յայնժամ ասէ ցան-
դամալոյծն,— արի՛ առ զմահիճս քո՝ եւ
երթ ի տուն քո։ Եւ յարուցեալ գնաց ի 7
տուն իւր։ Իբրեւ տեսին ժողովուրդքն 8
զարմացան. եւ փառաւոր առնէին զԱս-
տուած զտուողն այնպիսի իշխանութեան՝
մարդկան։

ԳԲ. Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ ե- 9
տես այր մի զի նստէր ի մաքսաւորու-
թեան, Մատթէոս անուն. եւ ասէ ցնա.
Եկ զկնի իմ։ Եւ յարուցեալ գնաց զկնի
նորա։

Եւ եղեւ իբրեւ բազմեալ էր նա ի 10

տանն, եւ ահա բազում մաքսաւորք եւ
մեղաւորք եկեալ էին ընդ Յիսուսի եւ
11 ընդ աշակերտս նորա։ Իբրեւ տեսին
փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա.
Ընդէ՞ր ընդ մաքսաւորս եւ ընդ մեղա-
12 ւորս ուտէ վարդապետն ձեր։ Իսկ Յի-
սուս իբրեւ լուաւ՝ ասէ ցնոսա. Ոչ պի-
տոյ է բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց։
13 Երթայք ուսարուք՝ զինչ է՝ Զողորմու-
թիւն կամիմ, եւ ոչ զոհս.— զի ոչ եկի
կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։
14 Յայնժամ մատեան առ նա աշակերտքն
Յովհաննու եւ ասեն. ընդէ՞ր մեք եւ փա-
րիսեցիքն պահեմք յաճախ, եւ քո աշա-
15 կերտքդ ոչ պահեն։ Ասէ ցնոսա Յիսուս.
Միթէ մա՞րթ ինչ իցէ մանկանց առագա-
ստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա
իցէ. այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձ-
ցի ի նոցանէ փեսայն, եւ ապա պահես-
16 ցեն։ Ոչ ոք արկանէ կապերտ անթափ ի
վերայ հնացեալ ձորձոյ. զի առնու ելա-
նէ զլրութիւն նորա ի հանդերձէն, եւ
17 եւս չար պատառումն լինի։ Եւ ոչ ար-
կանեն գինի նոր ի տիկս հինս. ապա թէ
ոչ՝ տիկքն պատառին, եւ գինին հեղու
եւ տիկքն կորնչին. այլ արկանեն գինի
նոր ի տիկս նորս, եւ երկոքին պահին։
18 ԳԳ. Մինչ դեռ նա զայս խօսէր ընդ նո-
սա, ահա իշխան մի մատուցեալ երկիր

պագանէր նմա եւ ասէր. Դուստր իմ
արդ եւս վախճանեցաւ. այլ եկեալ դի-
ցես զձեռն քո ի վերայ նորա եւ կեցցէ:
Յարեաւ Յիսուս եւ գնաց զհետ նորա ա- 19
շակերտօքն հանդերձ:
Եւ ահա կին մի տեռատես երկոտա- 20
սանամեայ, մատուցեալ յետոյ մերձե-
ցաւ ի գրօշակ հանդերձի նորա. քանզի 21
ասէր ի միտս իւրում, թէ միայն մերձե-
նամ ի հանդերձս նորա՝ փրկիմ: Իսկ Յի- 22
սուս իբրեւ դարձաւ եւ ետես զնա, ասէ.
Քաջալերեաց, դուստր, հաւատք քո կե-
ցուցին զքեզ: Եւ փրկեցաւ կինն ի ժա-
մէն յայնմանէ:
Իբրեւ եկն Յիսուս ի տուն իշխանին, 23
եւ ետես զփողարսն եւ ամբոխ յոյժ, ա-
սէ ցնոսա. Ի բաց գնացէք. զի ոչ եթէ 24
մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ: Եւ ծաղր 25
առնէին զնա: Եւ իբրեւ ել ամբոխն ի
բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա, եւ
յարեաւ աղջիկն: Եւ ել համբաւս այս 26
ընդ ամենայն երկիրն ընդ այն:
ԳԳ. Եւ մինչ դեռ անցանէր ընդ այն 27
Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու,
աղաղակէին եւ ասէին. Ողորմեաց մեզ,
որդի Դաւթի: Եւ իբրեւ եկն ի տուն, 28
մատեան առ նա կոյրքն: Եւ ասէ ցնոսա
Յիսուս. Հաւատա՞յք՝ եթէ կարող եմ առ-
նել ձեզ զայդ: Ասեն ցնա. Այո Տէր:

29 Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա եւ ասէ.
30 Ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ: Եւ բա-
ցան աչք նոցա. եւ սաստեաց նոցա Յի-
սուս եւ ասէ. Զգոյշ կացէք՝ մի՛ ոք գի-
31 տասցէ: Եւ նոքա ելեալ համբաւեցին
զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն:
32 Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մա-
տուցին առ նա այր մի համր դիւահար.
33 եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն: Եւ
զարմացան ժողովուրդքն եւ ասեն, թէ
եւ ոչ երբէք երեւեցաւ այսպիսի ինչ
34 յԻսրայէլի: Իսկ փարիսեցիքն ասէին,
թէ իշխանաւ դիւաց հանէ դա զդեւս:
35 ԳԵ. Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն
քաղաքս եւ ընդ գեօղս, ուսուցանէր ի
ժողովուրդս նոցա, եւ քարոզէր զաւե-
տարանն արքայութեան, եւ բժշկէր զա-
մենայն ախտս եւ զամենայն հիւանդու-
36 թիւնս ի ժողովրդեանն: Եւ տեսեալ զժո-
ղովուրդսն՝ գթացաւ ի նոսա, զի էին աշ-
խատեալք եւ ցրուեալք իբրեւ զոչ-
37 խարս՝ որոց ոչ իցէ հովիւ: Յայնժամ
ասէ ցաշակերտս իւր. Հունձք բազում
38 են՝ եւ մշակք սակաւ. արդ աղաչեցէք
զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս ի հունձս
իւր:

ԳԼՈՒԽ Ժ

Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասա- 1
նեսին աշակերտսն իւր, ետ նոցա իշխա-
նութիւն այսոց պղծոց հանել զնոսա, եւ
բժշկել զամենայն ցաւս եւ զամենայն հի-
ւանդութիւնս։ Եւ Առաքելոցն երկոտա- 2
սանից էին անուանք այսոքիկ. առաջին,
Սիմոն՝ անուանեալն Պետրոս, եւ Ան-
դրէաս եղբայր նորա, Յակոբոս Զեբե- 3
դեայ եւ Յովհաննէս եղբայր նորա, Փի-
լիպպոս եւ Բարթողոմէոս, Թովմաս եւ
Մատթէոս մաքսաւոր, Յակոբոս Ալփեայ
եւ Ղեբէոս՝ որ անուանեցաւն Թադէոս,
Սիմոն կանանացի, եւ Յուդա Սկարիով- 4
տացի՝ որ եւ մատնեացն զնա։

Զնոսա երկոտասանեսին առաքեաց Յի- 5
սուս. պատուիրեաց նոցա եւ ասէ. Ի ճա-
նապարհս հեթանոսաց մի՛ երթայցէք, եւ
ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք.
այլ երթայք առաւել առ ոչխարսն կո- 6
րուսեալս տան Իսրայէլի։ Եւ իբրեւ եր- 7
թայցէք՝ քարոզեցէք եւ ասացէք, թէ
մերձեալ է արքայութիւն երկնից։ Զհի- 8
ւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք,
զդեւս հանէք. ձրի առէք՝ եւ ձրի տուք։
Մի՛ ստանայք ոսկի եւ մի՛ արծաթ եւ մի՛ 9
պղինձ ի գօտիս ձեր, մի՛ պարկ ի ճանա- 10

պարհ, եւ մի՛ երկուս հանդերձս, մի՛ կօ-
շիկս, մի՛ գաւազան. զի արժանի է մշակն կե-
11 րակրոյ իւրում։ Յոր քաղաք մտանիցէք
կամ ի գեօղ, հարցանիցէք թէ ո՞ է ի նմա
արժանի. եւ անդ լինիջիք մինչեւ ելա-
12 նիցէք անտի։ Եւ իբրեւ մտանիցէք ի
տունն, ողջոյն տայջիք նմա՝ եւ ասասջիք.
13 ողջոյն տանս այսմիկ. եթէ իցէ տունն
արժանի, եկեսցէ ողջոյնն ձեր ի վերայ
նորա. ապա թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն
14 ձեր առ ձեզ դարձցի։ Եւ որ ոչ ընկալցի
զձեզ եւ ոչ լուիցէ բանից ձերոց, իբրեւ
ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ, թօ-
15 թափեսջիք զփոշին յոտից ձերոց։ Ամէն
ասեմ ձեզ՝ դիւրագոյն լիցի երկրին Սո-
դոմացւոց եւ Գոմորացւոց յաւուրն դա-
տաստանի, քան քաղաքին այնմիկ։
16 ԳԶ. Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբ-
րեւ զոչխարս ի մէջ գայլոց. եղերուք այ-
սուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, եւ
17 միամիտք իբրեւ զաղաւնիս։ Զգոյշ լինի-
ջիք ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ
յատեանս, եւ ի ժողովուրդս իւրեանց
18 տանջեսցեն զձեզ, եւ առաջի դատաւո-
րաց եւ թագաւորաց տանիցին զձեզ
վասն իմ, ի վկայութիւն նոցա եւ հե-
19 թանոսաց։ Այլ յորժամ մատնիցեն ըզ-
ձեզ, մի՛ հոգայցէք՝ թէ ո՛րպէս կամ
զի՛նչ խօսիցիք. զի տացի ձեզ ի ժամուն

յայնմիկ զինչ խօսիցիք․ զի ոչ եթէ դուք 20
իցէք որ խօսիցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ
որ խօսիցի ի ձեզ։
Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, 21
եւ հայր՝ զորդի․ եւ յարիցեն որդիք ի
վերայ հարց եւ սպանանիցեն զնոսա, եւ 22
եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն ա֊
նուան իմոյ․ իսկ որ համբերեսցէ ի սպառ՝
նա կեցցէ։
Եւ յորժամ հալածիցեն զձեզ ի քա֊ 23
ղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ, եւ եթէ
յայնմանէ հալածիցեն զձեզ՝ փախիջիք ի
միւսն․ ամէն ասեմ ձեզ, ոչ սպառեսջիք
զքաղաքս Իսրայէլի՝ մինչեւ եկեսցէ որդի
մարդոյ։
Ոչ է աշակերտ առաւել քան զվարդա֊ 24
պետ, եւ ոչ ծառայ քան զտէր իւր․
շատ իցէ աշակերտին՝ եթէ եղիցի իբրեւ 25
զվարդապետ իւր, եւ ծառային՝ իբրեւ
զտէր իւր։ Եթէ զտանուտէրն բէեղզե֊
բուղ կոչեցին, ո՛րչափ եւս առաւել զըն֊
տանիս նորա։ Մի այսուհետեւ երկնչիցիք 26
ի նոցանէ․ զի ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ
յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի։
Զոր ասեմ ձեզ ի խաւարի՝ ասացէք ի 27
լոյս, եւ զոր լսէք յունկանէ՝ քարոզե֊
ցէք ի վերայ տանեաց։ Եւ մի երկնչիք 28
յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ
զոգի ոչ կարեն սպանանել։ Այլ երկե֊

րուք դուք առաւել յայնմանէ՝ որ կա֊
րօղն է զոգի եւ զմարմին կորուսանել ի
գեհենի։
29 Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանգի
միոջ վաճառին, եւ մի ի նոցանէ յերկիր
30 ոչ անկցի առանց հօր ձերոյ։ Այլ ձեր
31 եւ ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է․ եւ
արդ մի երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբա֊
զում ճնճղուկս։
32 Ամենայն որ խոստովանեսցի յիս առա֊
ջի մարդկան, խոստովանեցից եւ ես զնը֊
մանէ առաջի հօր իմոյ որ յերկինսն է։
33 Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան,
ուրացայց եւ ես զնա առաջի հօր իմոյ որ
յերկինսն է։
34 Մի համարիք եթէ եկի արկանել խա֊
ղաղութիւն յերկիր, ոչ եկի արկանել
35 խաղաղութիւն, այլ սուր․ քանզի եկի
քակել զայր ի հօրէ իւրմէ եւ զդուստր
ի մօրէ իւրմէ եւ զհարսն ի սկեսրէ իւրմէ․
36 եւ թշնամիք առն՝ ընտանիք իւր։
37 Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել
քան զիս, ոչ է ինձ արժանի։ Եւ որ սիրէ
զուստր կամ զդուստր առաւել քան զիս,
38 չէ ինձ արժանի։ Եւ որ ոչ առնու զխաչ
իւր եւ գայ զկնի իմ, չէ ինձ արժանի։
39 Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա,
եւ որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ
40 զնա։ Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի,

եւ որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն
իմ։ Որ ընդունի զմարգարէ յանուն մար- 41
գարէի՝ զվարձս մարգարէի առցէ, եւ որ
ընդունի զարդար յանուն արդարոյ՝ ըզ-
վարձս արդարոյ առցէ։ Եւ որ արբուսցէ 42
միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ
մի ջուր ցուրտ միայն՝ յանուն աշակեր-
տի, ամէն ասեմ ձեզ՝ ոչ կորուսցէ զվարձս
իւր։

ԳԼՈՒԽ ԺԱ

Գէ․ Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յի- 1
սուս զպատուէր երկոտասանից աշա-
կերտացն իւրոց, գնաց անտի քարոզել
եւ ուսուցանել ի քաղաքս նոցա։

Իսկ Յովհաննէս իբրեւ լուաւ ի բանտին 2
զգործսն Քրիստոսի, առաքեաց ի ձեռն
աշակերտաց իւրոց, եւ ասէ ցնա․ Դու՞ 3
ես որ գալոցն ես, եթէ այլում ակն
կալցուք։ Պատասխանի ետ Յիսուս եւ 4
ասէ ցնոսա․ Գնացէք պատմեցէք Յովհան-
նու՝ զոր լսէք եւ տեսանէք․ կոյրք տեսա- 5
նեն, կաղք գնան, բորոտք սրբին՝ եւ
խուլք լսեն, եւ մեռեալք յառնեն, եւ
աղքատք աւետարանին․ եւ երանի է՝ 6
որ ոչ գայթագղեսցի յիս։

Եւ իբրեւ նոքա գնացին, սկսաւ Յի- 7
սուս ասել ցժողովուրդսն զՅովհաննէ․

Զի՞նչ ելէք տեսանել յանապատին, ե-
8 ղէգն շարժուն ի հողմոյ․ այլ զի՞նչ ելէք
տեսանել, մա՞րդ ի հանդերձս փափկու-
թեան զարդարեալ։ Ահաւանիկ որ զփա-
փուկսն զգեցեալ են՝ ի տունս թագաւո-
9 րաց են։ Այլ զի՞նչ ելէք տեսանել․ մար-
գարէ՞․ այո՛ ասեմ ձեզ, եւ առաւել եւս
10 քան զմարգարէ։ Զի նա է վասն որոյ
գրեալն է․ Ահա ես առաքեցից զհրեշտակ
իմ առաջի երեսաց քոց, որ պատրաս-
տեսցէ զճանապարհս քո առաջի քո։
11 Ամէն ասեմ ձեզ, չէ յարուցեալ ի
ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս
Մկրտիչ․ բայց փոքրիկն յարքայութեան
12 երկնից մեծ է քան զնա։ Բայց յա-
ւուրցն Յովհաննու Մկրտչի մինչեւ ցայ-
ժըմ՝ արքայութիւն երկնից բռնադատի,
13 եւ բռունք յափշտակեն զնա։ Քանզի
ամենայն օրէնք եւ մարգարէք մինչեւ
14 ցՅովհաննէս մարգարէացան։ Եւ եթէ
կամիք ընդունել՝ նա է Եղիա՝ որ գալոցն
15 է։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։
16 Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս․ նման
է մանկտւոյ՝ որ նստիցին ի հրապարակս,
կարդայցեն զընկերս իւրեանց, եւ ասի-
17 ցեն․ Փողս հարաք ձեզ՝ եւ ոչ կաքաւե-
ցէք, ողբացաք ձեզ՝ եւ ոչ կոծեցարուք։
18 Եկն Յովհաննէս, ոչ ուտէր եւ ոչ ըմպէր,
19 եւ ասեն, դեւ գոյ ի նմա։ Եկն որդի

մարդոյ՝ ուտէ եւ ըմպէ, եւ ասեն. ահա
այր կերող եւ արբեցող, բարեկամ մաք֊
սաւորաց եւ մեղաւորաց. եւ արդարա֊
ցաւ իմաստութիւն յորդւոց իւրոց։
Յայնժամ սկսաւ նախատել զքաղաք֊ 20
սն՝ յորս եղեն բազում զօրութիւնք
նորա, եւ ոչ ապաշխարեցին։ Վա՜յ քեզ՝ 21
Քորազին, վա՜յ քեզ՝ Բեթսայիդա. զի ե֊
թէ ի Տիւրոս եւ ի Սիդոնի եղեալ էին
զօրութիւնքն՝ որ ի ձեզ եղեն, վաղու եւս
արդեօք խորգով եւ մոխրով ապաշխա֊
րեալ էր։ Բայց ասեմ ձեզ. դիւրագոյն 22
լիցի երկրին Տիւրոսի եւ Սիդոնի յա֊
ւուրն դատաստանի՝ քան ձեզ։ Եւ դու, 23
Կափառնաում, մի՞ մինչեւ յերկինս բարձ֊
րասցիս, այլ մինչեւ ի դժոխս իջցես։ Զի
եթէ ի Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն՝
որ եղեն ի քեզ, ապաքէն կային եւս մին֊
չեւ ցայսօր։ Բայց ասեմ ձեզ՝ եթէ երկ֊ 24
րին Սոդոմացւոց դիւրագոյն լիցի յա֊
ւուրն դատաստանի՝ քան քեզ։
ԴԿ. Յայնմ ժամանակի պատասխանի 25
ետ Յիսուս եւ ասէ. Գոհանամ զքէն,
Հայր, Տէր երկնի եւ երկրի. զի ծածկեցեր
զայս յիմաստնոց եւ ի գիտնոց եւ յայտ֊
նեցեր տղայոց. այո, Հայր, զի այս֊ 26
պէս հաճոյ եղեւ առաջի քո։ Ամենայն 27
ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ։ Եւ ոչ ոք 28
ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, եւ ոչ

զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի եւ ում
29 Որդին կամիցի յայտնել։ Եկայք առ իս
ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք,
եւ ես հանգուցից զձեզ. առէք զլուծ
իմ ի ձեզ, եւ ուսարուք յինէն՝ զի հեզ
եմ եւ խոնարհ սրտիւ, եւ գտջիք հան֊
30 գիստ անձանց ձերոց. զի լուծ իմ
քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի։

ԳԼՈՒԽ ԺԲ

1 ԴԲ. Յայնժամ գնայր Յիսուս ընդ ար֊
տորայսն նոցա ի շաբաթու. եւ աշակերտա֊
քըն նորա քաղցեան, եւ սկսան հասկ
2 կորզել եւ ուտել։ Փարիսեցիքն իբրեւ
տեսին՝ ասեն ցնա. Ահաւասիկ աշակերտա֊
քըն քո գործեն, զոր ոչ է արժան գոր֊
3 ծել ի շաբաթու։ Եւ նա ասէ ցնոսա. Ո՞չ
իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արար Դաւիթ,
յորժամ քաղցեաւն, եւ որ ընդ նմայն
4 էին. զիա՞րդ եմուտ ի տունն Աստուծոյ՝
եւ եկեր զհաց զառաջաւորութեանն.
զոր ոչ էր օրէն նմա ուտել, եւ ոչ՝ որոց
ընդ նմայն էին, բայց միայն քահանայից։
5 Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ յօրէնս՝ զի ի
շաբաթս քահանայքն ի տաճարին պղծեն
6 զշաբաթն, եւ անմեղք են. բայց ասեմ
7 ձեզ՝ զի մեծ քան զտաճարն է աստ։ Եւ
եթէ գիտէիք զինչ է՝ Զողորմութիւն կա֊

միմ՝ եւ ոչ զզոհ, ապա ոչ դատապար-
տէիք զուք զանպարտսն։ Զի տէր է շա- 8
բաթու որդին մարդոյ։

Եւ գնացեալ անտի Յիսուս՝ եկն ի ժո- 9
ղովուրդն նոցա։ Եւ անդ էր այր մի՝ ո- 10
րոյ ձեռն իւր գօսացեալ էր. հարցին ցնա՝
եւ ասեն, եթէ պարտ իցէ ի շաբաթու
բժշկել. զի չարախօսեսցեն զնմանէ։ Եւ 11
նա ասէ ցնոսա. Ո՞վ իցէ ի ձէնջ մարդ՝ ո-
րոյ իցէ ոչխար մի եւ անկանիցի այն ի
խորխորատ ի շաբաթու. միթէ ո՞չ ունիցի
եւ յարուցանիցէ զնա. իսկ արդ ո՞րչափ 12
եւս առաւել է մարդ քան զոչխար. ա-
պա ուրեմն պարտ է ի շաբաթու բարիս
գործել։ Յայնժամ ասէ ցայրն. Ձգեա ըզ- 13
ձեռն քո, եւ նա ձգեաց, եւ եղեւ ողջ
իբրեւ զմիւսն։ Իսկ փարիսեցիքն ելեալ 14
արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ ո՛ր-
պէս կորուսցեն զնա։ Եւ Յիսուս իբրեւ 15
գիտաց, մեկնեցաւ անտի։

Եւ գնացին զհետ նորա ժողովուրդք
բազումք, եւ բժշկեաց զամենեսեան։
Եւ սաստեաց նոցա՝ զի մի՛ յայտնեսցեն 16
զնմանէ ումեք. զի լցցի որ ասացաւն ի 17
ձեռն Եսայեայ մարգարէի. Ահա մանուկ 18
իմ՝ զոր ընտրեցի, եւ սիրելի իմ՝ ընդ որ
հաճեցաւ անձն իմ. եդից զոգի իմ ի վե-
րայ նորա, եւ իրաւունս հեթանոսաց
պատմեսցէ. ոչ հակառակեսցի եւ ոչ ա- 19

ղաղակեսցէ, եւ ոչ ոք լուիցէ ի հրապա-
20 րակս զբարբառ նորա։ Զեղէգն ջախջա-
խեալ ոչ փշրեսցէ, եւ զպատրոյգն առ-
կայծեալ ոչ շիջուսցէ, մինչեւ հանցէ ի
21 յաղթութիւն զդատաստանն. եւ յա-
նուն նորա հեթանոսք յուսասցին։

22 ԴԳ. Յայնժամ մատուցաւ առ նա դի-
ւահար մի կոյր եւ համր, եւ բժշկեաց
զնա. որպէս զի համրն եւ կոյրն խօսիցի
23 եւ տեսանիցէ։ Զարմացան ամենայն ժո-
ղովուրդքն եւ ասէին. Միթէ սա իցէ Քրիս-
24 տոսն որդի Դաւթի։ Բայց փարիսեցիքն
իբրեւ լուան՝ ասեն. Ոչ իւիք հանէ դա
զդեւս՝ եթէ ոչ Բէեղզեբուղաւ իշխա-
25 նաւն դիւաց։ Իբրեւ գիտաց Յիսուս ըզ-
խորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ամենայն
թագաւորութիւն բաժանեալ յանձն
իւր՝ աւերի, եւ ամենայն քաղաք կամ
տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ.
26 եւ եթէ սատանայ զսատանայ հանէ,
յանձն իւր բաժանեցաւ. արդ զիա՞րդ
27 կացցէ թագաւորութիւն նորա։ Եւ եթէ
ես Բէեղզեբուղաւ հանեմ զդեւս՝ որդիքն
ձեր ի՞ւ հանիցեն. վասն այնորիկ նոքա
28 եղիցին ձեր դատաւորք։ Ապա եթէ հո-
գւով Աստուծոյ հանեմ ես զդեւս, ու-
րեմն հասեալ է ի վերայ ձեր արքայու-
29 թիւն Աստուծոյ։ Կամ զիա՞րդ կարէ ոք
մտանել ի տուն հզօրի՝ եւ զգործիսն նո-

րա յափշտակել. եթէ ոչ նախ կապիցէ
զհզօրն, եւ ապա զտունն նորա յափըշ-
տակիցէ: Որ ոչ ընդ իս է՝ հակառակ իմ 30
է, եւ որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ:
Վասն այդորիկ ասեմ ձեզ. ամենայն 31
մեղք եւ հայհոյութիւն թողցին մարդ-
կան, բայց զհոգւոյն հայհոյութիւն մի
թողցի: Եւ որ ոք ասիցէ բան զորդւոյ 32
մարդոյ՝ թողցի նմա, բայց որ զհոգւոյն
սրբոյ ասիցէ՝ մի թողցի նմա, մի յայսմ
աշխարհի եւ մի ի հանդերձելումն: Կամ 33
արարէք զծառն բարի՝ եւ զպտուղ նորա
բարի, կամ արարէք զծառն չար՝ եւ ըզ-
պտուղ նորա չար. քանզի ի պտղոյ ան-
տի ծառն ճանաչի: Ծնունդք իժից, զի- 34
արդ կարիցէք բարիս խօսել՝ որ չարքդ
էք. քանզի ի յաւելուածոյ սրտի խօսի
բերան: Մարդ բարի՝ ի բարի գանձուց 35
սրտի իւրոյ հանէ զբարիս, եւ մարդ չար՝
ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս:
Բայց ասեմ ձեզ, թէ ընդ ամենայն դա- 36
տարկ բանի զոր խօսիցին մարդիկ՝ տա-
ցեն համար յաւուրն դատաստանի: Զի 37
ի բանից քոց արդարասցիս, եւ ի բանից
քոց պարտաւորեսցիս:

ԴԴ. Յայնժամ պատասխանի ետուն 38
նմա ոմանք ի դպրացն եւ ի փարիսեցւոց՝
եւ ասեն. Վարդապետ, կամիմք նշան
ինչ տեսանել ի քէն: Նա պատասխանի 39

ետ եւ ասէ ցնոսա. Ազգ չար եւ շնացող՝
նշան խնդրէ, եւ նշան մի տացի նմա,
40 բայց նշանն Յովնանու մարգարէի: Զի
որպէս էր Յովնան ի փոր կիտին զերիս
տիւս եւ զերիս գիշերս, նոյնպէս եղիցի
եւ որդի մարդոյ ի սիրտ երկրի զերիս
41 տիւս եւ զերիս գիշերս: Արք նինուէա-
ցիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս
ընդ այսմիկ՝ եւ դատապարտեսցեն զսա.
զի զղջացան ի քարոզութեանն Յովնա-
նու: Եւ արդ աւասիկ մեծ քան զՅովնան
42 է աստ: Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դա-
տաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ եւ դա-
տապարտեսցէ զսա. զի եկն ի ծագաց
երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի:
Եւ ահա մեծ քան զՍողոմոն է աստ:

43 Այլ յորժամ այսն պիղծ ելանիցէ ի
մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ
44 հանգիստ՝ եւ ոչ գտանէ. յայնժամ ասէ.
դարձայց ի տուն իմ՝ ուստի ելին. եւ ե-
կեալ գտանէ պարապորդ մաքրեալ եւ
45 յարդարեալ: Յայնժամ երթայ եւ առ-
նու ընդ իւր եօթն այլ այսս չարագոյնս
քան զինքն, եւ մտեալ բնակէ անդ. եւ
լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան
զառաջինն: Այնպէս եղիցի եւ ազգիս
այսմիկ չարի:

46 Մինչ դեռ նա ընդ ժողովուրդսն խօ-
սէր, ահա մայր նորա եւ եղբարք նորա

կային արտաքոյ՝ եւ խնդրէին խօսել ընդ
նմա: Եւ ասէ ոմն ցնա. Ահա մայր քո եւ 47
եղբարք քո կան արտաքոյ, եւ խնդրեն
խօսել ընդ քեզ: Նա պատասխանի ետ 48
այնմիկ որ ասացն ցնա, եւ ասէ. Ո՞վ է
իմ մայր, կամ ո՞վ են իմ եղբարք: Եւ 49
ձգեալ զձեռն իւր յաշակերտսն ասէ.
Ահաւասիկ մայր իմ եւ եղբարք իմ. զի 50
որ առնիցէ զկամս հօր իմոյ որ յերկինսն
է, նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր:

ԳԼՈՒԽ ԺԳ

ԴԵ. Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս 1
ի տանէն՝ նստէր առ ծովեզերն. եւ ժո- 2
ղովեցան առ նա ժողովուրդք բազումք,
մինչեւ մտանել նմա ի նաւն եւ նստել.
եւ ամենայն ժողովուրդն կայր առ ծովե-
զերբն: Եւ խօսէր ընդ նոսա բազում ա- 3
ռակօք եւ ասէր. Ահա ել սերմանահան 4
սերմանել. եւ ի սերմանելն իւրում՝ էր
որ անկաւ առ ճանապարհաւ, եւ եկն
թռչուն երկնից եւ եկեր զնա: Եւ այլն 5
անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող
բազում, եւ վաղվաղակի բուսաւ. առ ի
չգոյէ հիւթոյ երկրին՝ ի ծագել արեւուն 6
տապացաւ, եւ զի ոչ գոյին արմատք՝ չո-
րացաւ: Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, եւ 7
ելին փուշքն եւ հեղձուցին զնա: Եւ այլն 8

անկաւ յերկիր բարի, եւ տայր պտուղ.
էր որ հարիւրաւոր, եւ էր որ վաթսնա-
9 ւոր, եւ էր որ երեսնաւոր: Որ ունիցի
ականջս լսելոյ՝ լուիցէ:
10 Եւ մատուցեալ աշակերտքն ասեն
ցնա. Ընդէ՞ր առակօք խօսիս ընդ նոսա:
11 Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա.
Քանզի ձեզ տուեալ է գիտել զխոր-
հուրդս արքայութեանն երկնից, եւ նո-
12 ցա չէ տուեալ: Զի ոյր գուցէ՝ տացի նմա
եւ յաւելցի. եւ ոյր ոչն գուցէ՝ եւ զոր
13 ունիցին՝ բարձցի ի նմանէ: Վասն այ-
նորիկ առակօք խօսիմ ընդ նոսա. զի տե-
սանեն՝ եւ ոչ տեսանեն, եւ լսեն՝ եւ ոչ
14 լսեն, եւ ոչ առնուն ի միտ: Եւ կատարի
առ նոսա մարգարէութիւնն Եսայեայ՝ որ
ասէ. Լսելով լուիջիք՝ եւ մի՛ իմասջիք,
եւ տեսանելով տեսջիք՝ եւ մի՛ տեսջիք.
15 զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այ-
սորիկ, եւ ականջօք իւրեանց ծանունս
լուան. եւ զաչս իւրեանց կափուցին, զի
մի՛ երբեք տեսցեն աչօք՝ եւ ականջօք
լուիցեն՝ եւ սրտիւք իմասցին, եւ դարձ-
16 ցին՝ եւ բժշկեցից զնոսա: Բայց ձեր ե-
րանի է աչացդ՝ զի տեսանեն, եւ ական-
17 ջաց ձերոց՝ զի լսեն: Ամէն ասեմ ձեզ, զի
բազում մարգարէք եւ արդարք ցանկա-
ցան տեսանել զոր տեսանէքդ՝ եւ ոչ
տեսին, եւ լսել զոր լսէքդ՝ եւ ոչ լուան:

Եւ արդ լուարուք դուք զառակ սեր֊ 18
մանացանին. յամենայնէ՝ որ լսէ զբանն 19
արքայութեան եւ ոչ ածնու ի միտ, գայ
չարն եւ յափշտակէ զսերմանեալն ի սիրտ
նորա. այն է որ առ ճանապարհաւն սեր֊
մանեցաւ: Եւ որ յապառաժին սերմա֊ 20
նեցաւ այն է, որ իբրեւ լսէ զբանն, եւ
վաղվաղակի խնդութեամբ ընդունի զնա.
բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան, 21
այլ առ ժամանակ մի է, ի լինել նեղու֊
թեան եւ հալածանաց վասն բանին՝ վաղ֊
վաղակի գայթագղի: Իսկ որ ի մէջ փշոցն 22
սերմանեցաւ, այն է՝ որ իբրեւ լսէ զբանն,
եւ հոգք աշխարհիս եւ պատրանք մեծու֊
թեան հեղձուցանեն զբանն, եւ լինի՛ ան֊
պտուղ: Իսկ որ յերկիրն բարի սերմա֊ 23
նեցաւ, այն է՝ որ իբրեւ լսէ զբանն եւ
ի միտ ածնու, եւ տայ զպտուղ. է որ հա֊
րիւր, եւ է որ վաթսուն, եւ է որ երե֊
սուն:

ԴՋ. Այլ առակ արկ առ նոսա եւ ա֊ 24
սէ. Նմանեցաւ արքայութիւն երկնից
առն՝ որ սերմանիցէ սերմն բարի յագա֊
րակի իւրում. եւ ի քուն լինել մարդկան՝ 25
եկն թշնամի նորա, եւ ցանեաց ի վերայ
որոմն ի մէջ ցորենոյն եւ գնաց. եւ իբրեւ 26
բուսաւ խոտն եւ արար պտուղ, ապա
երեւեցաւ եւ որոմնն: Մատուցեալ ծա֊ 27
ռայք տանուտեառնն ասեն ցնա. Տէր,

ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին
28 քում, արդ ուստի՞ ունիցի զորոմնն: Եւ
նա ասէ ցնոսա. Այր թշնամի արար զայն:
Ասեն ցնա ծառայքն. Կամի՞ս զի երթի֊
29 ցուք քաղեսցուք զայն ի բաց: Եւ նա ասէ
ցնոսա. Մի՛ գուցէ մինչ քաղիցէք զորոմնն,
եւ զցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք.
30 Թոյլ տուք երկոցունց աճել ի միասին
մինչեւ ի հունձս, եւ ի ժամանակի հնձոց
ասացից հնձօղացն. քաղեցէք նախ զո֊
րոմնդ, եւ կապեցէք զայդ խրձունս առ
ի այրել, եւ զցորեանն ժողովեցէք ի
շտեմարանս իմ:
31 Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ.
Նման է արքայութիւն երկնից հատոյ
մանանխոյ, զոր առեալ մարդոյ սերմա֊
32 նեաց յագարակի իւրում. որ փոքր է
քան զամենայն սերմանիս, եւ յորժամ
աճիցէ՝ մեծ է քան զամենայն բանջարս,
եւ լինի ծառ՝ մինչեւ գալ թռչնոց երկնից
եւ հանգչել յոստս նորա:
33 Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա եւ ա֊
սէ. Նման է արքայութիւն երկնից խմո֊
րոյ, զոր առեալ կնոջ թաքոյց ի գրիւս
երիս ալեր՝ մինչեւ ամենայն խմորեցաւ:
34 Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս ա֊
ռակօք ընդ ժողովուրդսն, եւ առանց ա֊
35 ռակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա. զի լցցի
ասացեալն ի մարգարէէն. Բացից առա֊

կօք զբերան իմ, բղխեցից զծածկեալսն
ի սկզբանէ աշխարհի:
ԴԷ. Յայնժամ թողեալ Յիսուսի զժո- 36
ղովուրդսն՝ եկն ի տուն. մատեան առ նա
աշակերտքն եւ ասեն. Մեկնեա մեզ զա-
ռակ որոմանցն ագարակի: Նա պատաս- 37
խանի ետ եւ ասէ ցնոսա. Որ սերմանէ
սերմն բարի՝ է որդի մարդոյ, եւ ագա- 38
րակն աշխարհս է. սերմն բարի նոքա
են, որ որդիքն արքայութեան են. իսկ
որոմնն որդիք չարին են. եւ թշնամին որ 39
վարեաց զայն՝ սատանայ է, եւ հունձքն
կատարած աշխարհիս է, եւ հնձօղքն՝
հրեշտակք են: Որպէս ժողովի որոմնն եւ 40
ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատարա-
ծի աշխարհիս. առաքեսցէ որդի մարդոյ 41
զհրեշտակս իւր, եւ ժողովեսցեն յար-
քայութենէ նորա զամենայն գայթագղու-
թիւնս՝ եւ զայնոսիկ որք գործեն զանօ-
րէնութիւն, եւ արկցեն զնոսա ի հնոց 42
հրոյ. անդ եղիցի լալ եւ կրճել ատա-
մանց: Յայնժամ արդարքն ծագեսցեն 43
իբրեւ զարեգակն յարքայութեան երկ-
նից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:
Դարձեալ՝ նման է արքայութիւն երկ- 44
նից գանձի ծածկելոյ յագարակի, զոր
գտեալ մարդոյ՝ թաքոյց. եւ ի խնդութե-
նէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ
զոր ունի, եւ գնէ զագարակն զայն:

45 Դարձեալ՝ նման է արքայութիւն երկ-
նից առն վաճառականի, որ խնդրիցէ
46 մարգարիտս գեղեցիկս: Եւ գտեալ մի
պատուական մարգարիտ՝ երթեալ վա-
ճառեաց զամենայն զոր ինչ ունէր, եւ
գնեաց զայն մարգարիտ:
47 Դարձեալ՝ նման է արքայութիւն երկ-
նից ուռկանի արկելոյ ի ծով եւ յամե-
48 նայն ազգաց ժողովելոյ. զոր՝ իբրեւ լցաւ՝
հանեալ ի ցամաք, եւ նստեալ ժողովե-
ցին զբարի բարին յամանս, եւ զխոտանն
49 ի բաց ընկեցին: Այնպէս եղիցի ի կատա-
րածի աշխարհիս. ելցեն հրեշտակք՝ եւ
50 մեկնեսցեն զչարս ի միջոյ արդարոց, եւ
արկցեն զնոսա ի հնոց հրոյն. անդ եղիցի
51 լալ եւ կրճել ատամանց: Ասէ ցնոսա Յի-
սուս. Իմացարո՞ւք զայս ամենայն: Ասեն
52 ցնա. Այո Տէր: Եւ նա ասէ ցնոսա. Վասն
այսորիկ ամենայն դպիր աշակերտեալ
արքայութեան երկնից՝ նման է առն տա-
նուտեառն՝ որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր
եւ զհին:
53 ԵԿ. Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յի-
սուս զառակս զայսոսիկ՝ փոխեցաւ ան-
54 տի: Եւ եկեալ ի գաւառ իւր ուսուցանէր
զնոսա ի ժողովրդեանն նոցա, մինչեւ
զարմանալ նոցա եւ ասել. Ուստի՞
իցէ այս իմաստութիւն եւ զօրութիւնք:
55 Ո՞չ սա է հիւսանն որդի. ո՞չ մայր սորա

կոչի Մարիամ, եւ եղբարք սորա Յակով-
բոս եւ Յովհաննէս եւ Սիմոն եւ Յուդա.
եւ քորք սորա ո՞չ ամենեքեան առ մեզ 56
են. եւ արդ ուստի՞ է սմա այս ամենայն:
Եւ գայթագղէին ի նա: Եւ Յիսուս ասէ 57
ցնոսա. Ոչ է մարգարէ անարգ՝ եթէ ոչ
յիւրում գաւառի եւ յիւրում տան: Եւ 58
ոչ արար անդ զօրութիւնս բազումս
վասն անհաւատութեան նոցա:

ԳԼՈՒԽ ԺԴ

ԵԲ. Յայնմ ժամանակի լուաւ Հերով- 1
դէս չորրորդապետ զլուր Յիսուսի, եւ 2
ասէ ցծառայս իւր. Նա է Յովհաննէս
Մկրտիչ, նա յարեաւ ի մեռելոց, եւ վասն
այնորիկ զօրութիւնք լինին նովաւ: Քան- 3
զի Հերովդէս կալեալ զՅովհաննէս՝ կա-
պեաց զնա եւ եդ ի բանտի վասն Հերով-
դիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա. զի 4
ասէր ցնա Յովհաննէս. Չէ արժան քեզ
ունել զդա: Եւ կամէր զնա սպանանել, 5
բայց երկնչէր ի ժողովրդենէ անտի.
քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա:
Եւ իբրեւ եղեն ծնունդք Հերովդի, կա- 6
քաւեաց դուստրն Հերովդիայ ի մէջ բազ-
մականին. եւ հաճոյ թուեցաւ Հերովդի,
ուստի եւ երդմամբ խոստացաւ տալ նմա 7
զինչ եւ խնդրեսցէ: Եւ նա յառաջագոյն 8

խրատեալ ի մօրէ իւրմէ, Տուր ինձ, ա-
սէ, այսր ի վերայ սկտեղ զգլուխն Յով-
9 հաննու Մկրտչի: Եւ տրտմեցաւ թագա-
ւորն. բայց վասն երդմանցն եւ բարձա-
10 կցացն՝ հրամայեաց տալ նմա: Եւ առա-
քեաց գլխատեաց զՅովհաննէս ի բանտի,
11 եւ բերաւ գլուխ նորա սկտեղբ եւ
տուաւ աղջկանն, եւ տարաւ առ մայր
12 իւր: Եւ մատուցեալ աշակերտքն նորա
բարձին զմարմինն եւ թաղեցին, եւ ե-
կեալ պատմեցին Յիսուսի:
13 ԵԳ. Եւ իբրեւ լուաւ Յիսուս, գնաց
անտի նաւու յանապատ տեղի առան-
ձինն: Իբրեւ լուան ժողովուրդքն՝ գնա-
ցին զհետ նորա հետի ի քաղաքաց անտի:
14 Եւ իբրեւ ել՝ ետես ժողովուրդ բազում,
գթացաւ ի նոսա, եւ բժշկեաց զհի-
15 ւանդս նոցա: Իբրեւ ընդ երեկս եղեւ,
մատեան առ նա աշակերտքն՝ եւ ասեն.
Տեղիս անապատ է, եւ օրս տարաժա-
մեալ. արձակեա զժողովուրդսն՝ զի եր-
թիցեն շուրջ ի շէնսն, գնեսցեն իւրեանց
16 կերակուրս: Եւ ասէ Յիսուս. Ոչ ինչ
պիտոյ է դոցա երթալ. դուք տուք դոցա
17 ուտել: Եւ նոքա ասեն ցնա. Ոչ ինչ ու-
նիմք աստ, բայց հինգ նկանակ եւ եր-
18 կուս ձկունս: Եւ ասէ ցնոսա. Բերէք
19 այսր զայն: Եւ հրամայեաց բազմեցու-
ցանել զժողովուրդն ի վերայ խոտոյ. եւ

առեալ զհինգ նկանակն եւ զերկուս
ձկունս՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց եւ
եբեկ, եւ ետ ցաշակերտսն զնկանակսն,
եւ աշակերտքն ժողովրդեանն: Կերան ա- 20
մենեքեան եւ յագեցան, եւ բարձին զնշ-
խարս կոտորացն երկոտասան սակառի լի:
Եւ որք կերանն՝ էին արք իբրեւ հինգ 21
հազար, թող զկանայս եւ զմանկտի:

ԵԴ. Եւ ստիպեաց վաղվաղակի զաշա- 22
կերտսն մտանել ի նաւ եւ յառաջել յայն-
կոյս, մինչ նա զժողովուրդսն արձակի-
ցէ: Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդսն՝ 23
ել ի լեառն առանձինն կալ յաղօթս: Եւ
իբրեւ ընդ երեկս եղեւ, անդ էր միայն:
Եւ նաւն մեկնեալ էր ի ցամաքէն բա- 24
զում ասպարիսօք՝ ծփեալ յալեացն.
քանզի ընդդէմ էր հողմն: Եւ ի չորրոր- 25
դում պահու գիշերոյն եկն առ նոսա Յի-
սուս գնալով ի վերայ ծովուն: Իբրեւ 26
տեսին զնա աշակերտքն զի գնայր ի վե-
րայ ծովուն՝ խռովեցան, եւ ասեն՝ թէ
առաչօք ինչ իցէ. եւ առ ահին աղաղա-
կեցին: Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նո- 27
սա Յիսուս եւ ասէ. Քաջալերեցարուք,
ես եմ, մի երկնչիք: Պատասխանի ետ 28
նմա Պետրոս եւ ասէ. Տէր, եթէ դու ես,
հրամայեա ինձ գալ առ քեզ ի վերայ ջը-
րոցս: Եւ նա ասէ. Եկ: Եւ իջեալ ի նա- 29
ւէն Պետրոս՝ գնայր ի վերայ ջուրցն, եւ

30 եկն առ Յիսուս: Եւ տեսեալ զհողմն
սաստիկ՝ երկեաւ. եւ իբրեւ սկսաւ
ընկղմել՝ աղաղակեաց եւ ասէ. Տէր, փրր-
31 կեա զիս: Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց
զձեռն իւր կալաւ զնա եւ ասէ. Թերա-
32 հաւատ, ընդէր երկմտեցեր: Եւ իբրեւ
33 ելին ի նաւն՝ հանդարտեաց հողմն: Եւ
որ ի նաւին էին՝ մատեան երկիր պագին
նմա եւ ասեն. Արդարեւ որդի Աստու-
34 ծոյ ես դու: Եւ անցեալ եկին ի ցամաք
35 ի Գեննեսարէթ. եւ իբրեւ ծանեան զնա
արք տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ
ամենայն գաւառն՝ եւ ածին առ նա զա-
36 մենայն հիւանդս: Եւ աղաչէին զնա, զի
գոնէ միայն ի քղանցս հանդերձի նորա
մերձեսցին. եւ որ միանգամ մերձե-
ցանն՝ փրկեցան:

ԳԼՈՒԽ ԺԵ

1 Յայնժամ մատեան առ Յիսուս որ յե-
րուսաղեմէ փարիսեցիքն եւ դպիրք եւ
2 ասեն. Ընդէր աշակերտքն քո անցանեն
զաւանդութեամբ ծերոցն. զի ոչ լուա-
3 նան զձեռս յորժամ հաց ուտեն: Նա
պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. Իսկ
դուք ընդէր անցանէք զպատուիրանաւն
Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն:
4 Զի Աստուած ասաց. Պատուեա զհայր

քո եւ զմայր, եւ որ բամբասէ զհայր 5
կամ զմայր՝ մահու վախճանեսցի. Եւ 6
դուք ասէք. որ ասիցէ ցհայր իւր կամ
ցմայր իւր, թէ պատարագ է՝ զոր յինէն
օգտիցիս, եւ ոչ պատուիցէ զհայր իւր եւ
զմայր իւր. եւ խոտէք զբանն Աստուծոյ
վասն ձերոյ աւանդութեանն: Կեղծա- 7
ւորք, բարւոք մարգարէացաւ ի վերայ
ձեր Եսայի եւ ասէ. Ժողովուրդս այս շըր- 8
թամբք պատուէ զիս, եւ սիրտք իւրեանց
հեռացեալ մեկուսի է յինէն. զուր պաշ- 9
տեն զիս. ուսուցանեն վարդապետու-
թիւնս՝ զմարդկան պատուիրեալս:

Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն 10
ասէ ցնոսա. Լուարուք եւ ի միտ առէք.
ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ 11
զմարդ, այլ որ ինչ ելանէ ի բերանոյ՝ այն
պղծէ զմարդ: Յայնժամ մատուցեալ ա- 12
շակերտացն նորա ասեն ցնա. Գիտես՝ զի
փարիսեցիքն իբրեւ լուան զբանն՝ գայ-
թագղեցին: Նա պատասխանի ետ նոցա 13
եւ ասէ. Ամենայն տունկ՝ զոր ոչ տնկեաց
հայր իմ երկնաւոր, խլեսցի: Թոյլ տուք 14
զնոսա. կոյրք են՝ կուրաց առաջնորդք.
կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխա-
լէ, եւ երկոքին ի խորխորատ անկանին:
Պատասխանի ետ նմա Պետրոս եւ ասէ. 15
Մեկնեա մեզ զառակս զայս: Ասէ Յիսուս. 16
Տակաւին եւ դուք անմիտք էք, եւ ոչ 17

իմանայք եթէ ամենայն որ մտանէ ի բե-
րան, յորովայն երթայ եւ արտաքս ելանէ.
18 իսկ որ ելանէ ի բերանոյ՝ ի սրտէ անտի
19 գայ, եւ այն պղծէ զմարդ: Զի ի սըր-
տէ ելանեն խորհուրդք չարք, սպանու-
թիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գո-
ղութիւնք, սուտ վկայութիւնք, հայհո-
20 յութիւնք. այս ամենայն է որ պղծէ
զմարդ, այլ անլուայ ձեռօք ուտել՝ ոչ
պղծէ զմարդ:

21 ԵԶ. Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց ի
22 կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի: Եւ ահա
կին մի քանանացի ի սահմանաց անտի
նոցա ելեալ, աղաղակէր եւ ասէր. Ո-
ղորմեաց ինձ, Տէր, որդի Դաւթի, դուս-
23 տըր իմ չարաչար այսահարի: Եւ նա ոչ
ետ նմա պատասխանի: Եւ մատուցեալ
աշակերտքն նորա՝ աղաչէին զնա եւ ա-
սէին. Արձակեա զնա՝ զի աղաղակէ զհետ
24 մեր: Նա պատասխանի ետ եւ ասէ. Ոչ
ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս
25 կորուսեալս տանն Իսրայէլի: Եւ նա մա-
տուցեալ երկիր պագանէր նմա եւ ասէր.
26 Տէր, օգնեա ինձ: Պատասխանի ետ նմա
եւ ասէ. Ոչ է բարւոք առնուլ զհաց
27 մանկանց՝ եւ արկանել շանց: Եւ նա ա-
սէ. Այո, Տէր, քանզի եւ շունք կերա-
կրեն ի փշրանաց անկելոց ի սեղանոյ
28 տեառն իւրեանց: Յայնժամ պատասխա-

նի ետ նմա Յիսուս, եւ ասէ. Ո՛վ կին
դու, մեծ են հաւատք քո, եղիցի քեզ
որպէս եւ կամիս: Եւ բժշկեցաւ դուս-
տրն նորա ի նմին ժամու:
ԵԷ. Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն 29
ի ծովեզրն Գալիլեացւոց, եւ ելեալ ի
լեառն նստէր անդ: Մատեան առ նա 30
ժողովուրդք բազումք՝ որ ունէին ընդ ի-
րեանս կաղս, կոյրս, համերս, միակող-
մանիս, եւ այլս բազումս. եւ ընկեցին
զնոսա առ ոտս նորա՝ եւ բժշկեաց զնո-
սա: Մինչեւ զարմանալ ժողովրդոյն՝ որ 31
տեսանէին, զի համերքն խօսէին, կաղք
գնային, միակողմանիք բժշկէին, կոյրք
տեսանէին, եւ փառաւոր առնէին զԱս-
տուած Իսրայէլի: Եւ կոչեցեալ առ ինքն 32
Յիսուսի զաշակերտսն՝ ասէ. Գթամ ի
ժողովուրդս, զի արդ երեք աւուրք են՝
զի կան առ իս, եւ ոչ ունին զինչ ուտի-
ցեն. եւ արձակել զդոսա նօթիս չկամիմ,
գուցէ նքթիցեն զճանապարհայն: Ասեն 33
ցնա աշակերտքն. Իսկ արդ մեզ յանա-
պատի աստ ուստի՞ իցէ այնչափ հաց՝ մին-
չեւ յագեցուցանել զայսչափ ժողովուրդ:
Եւ ասէ ցնոսա Յիսուս. Քանի՞ նկանակ 34
ունիք: Եւ նոքա ասեն. Եօթն, եւ սակաւ
ձկունս: Եւ հրամայեաց ժողովրդեանն 35
բազմել ի վերայ գետնոյ. եւ առեալ 36
զեօթն նկանակն եւ զձկունսն՝ գոհացաւ

եւ եբեկ, եւ ետ ցաշակերտսն, եւ նոքա
37 ժողովրդեանն: Կերան ամենեքեան եւ
յագեցան. եւ բարձին զնշխարս կոտո-
38 րոցն՝ եօթն զամբիղ լի: Եւ որք կերանն՝
էին իբրեւ արք չորք հազարք, թող ըղ-
39 կանայս եւ զմանկտի: Իբրեւ արձակեաց
զժողովուրդսն՝ ել ի նաւ եւ եկն ի սահ-
մանս Մագդաղեայ:

ԳԼՈՒԽ ԺԶ

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն եւ սա-
դուկեցիք փորձելով խնդրէին ի նմանէ՝
2 նշան յերկնից ցուցանել նոցա: Նա պա-
տասխանի ետ եւ ասէ ցնոսա. յորժամ
երեկոյ լինի՝ ասէք, պարզ լինիցի՝ զի
3 կարմրացեալ է երկին: Եւ առաւօտու՝
այսօր մրրիկ, զի շառագունի տրտմու-
թեամբ երկին. արդ զերեսս երկնի կարէք
քննել, իսկ զնշան ժամանակիս ո՞չ կարէք
4 գիտել: Ազգ չար եւ շնացող՝ նշան խնդրէ,
եւ նշան մի՛ տացի նմա, բայց նշանն Յով-
նանու մարգարէի:
5 Եւ եթող զնոսա եւ գնաց: Գնացին եւ
աշակերտքն յայնկոյս, եւ մոռացան առ-
6 նուլ հաց: Ասէ ցնոսա Յիսուս. Տեսէք եւ
զգոյշ լերուք ի խմորոյ սադուկեցւոցն
7 եւ փարիսեցւոց: Նոքա խորհէին ընդ մի-
մեանս եւ ասէին՝ թէ հաց ոչ բարձաք:

Գիտաց Յիսուս եւ ասէ. Զի՞ խորհիք ի 8
միտս ձեր, թերահաւատք, եթէ հաց ոչ
ունիք. տակաւին չիմանայք եւ ոչ յիշէք 9
զհինգ նկանակն ի հինգ հազարսն, եւ
քանի՞ սակառի բարձէք. եւ ոչ զեօթն 10
նկանակն ի չորս հազարսն, եւ քանի՞
զամբիղս բարձէք. արդ զիա՞րդ ոչ իմա- 11
նայք՝ եթէ ոչ վասն հացի ասացի ձեզ ըզ-
գոյշ լինել ի խմորոյ փարիսեցւոցն եւ սա-
դուկեցւոց: Յայնժամ ի միտ առին, եթէ 12
ոչ ասաց զգուշանալ ի խմորոյ, այլ յա-
ղանդոյ փարիսեցւոցն եւ սադուկեցւոց:
ԺԿ. Եւ եկեալ Յիսուս ի կողմանս Փի- 13
լիպպեայ Կեսարեայն՝ հարցանէր զաշա-
կերտսն եւ ասէր. Զո՞ ոք ասեն զինէն
մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ: Եւ նո- 14
քա ասեն. Ոմն զՅովհաննէս Մկրտիչ, եւ
այլք զԵղիա, եւ կէսք զԵրեմիա, կամ զմի
ոք ի մարգարէիցն: Ասէ ցնոսա Յիսուս. 15
Իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն թէ իցեմ:
Պատասխանի ետ Սիմոն Պետրոս եւ ա- 16
սէ. Դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ
կենդանւոյ: Պատասխանի ետ Յիսուս եւ 17
ասէ ցնա. Երանի քեզ Սիմոն՝ որդի
Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայ-
տնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս
է: Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, եւ 18
ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ,
եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահա-

19 րեսցեն: Եւ տաց քեզ զփականս արքա-
յութեան երկնից. եւ զոր միանգամ կա-
պեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յեր-
կինս, եւ զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի
20 արձակեալ յերկինս: Յայնժամ սաստեաց
աշակերտացն, զի մի՛ ումեք ասասցեն՝
թէ նա է Քրիստոսն:
21 Յայնմ հետէ սկսաւ Յիսուս ցուցանել
աշակերտացն, թէ պարտ է նմա երթալ
յԵրուսաղէմ, եւ բազում չարչարանս
չարչարել եւ անարգել ի քահանայապե-
տից եւ ի դպրաց եւ ի ծերոց ժողովր-
դեանն, եւ սպանանել, եւ յերիր աւուր
22 յառնել: Եւ առեալ զնա մեկուսի Պե-
տրոսի, սկսաւ կագել ընդ նմա եւ ասել.
Քաւ լիցի քեզ Տէր, մի՛ եղիցի քեզ այդ:
23 Եւ նա դարձեալ ի Պետրոս ասէ. Երթ
յետս իմ, սատանայ, գայթագղութիւն
իմ ես. զի ոչ խորհիս զաստուծոյսն, այլ
զմարդկան:
24 Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն
իւր. Եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ու-
րացի զանձն եւ առցէ զխաչ իւր եւ ե-
25 կեսցէ զկնի իմ: Զի որ կամիցի զանձն
իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, եւ որ
կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ
26 զնա: Զի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշ-
խարհս ամենայն շահեսցի, եւ զանձն
իւր տուժեսցի. կամ զի՞նչ տացէ մարդ

փրկանս ընդ անձին իւրում։ Զի գալոց է 27
է որդի մարդոյ փառօք հօր իւրոյ՝ հան֊
դերձ հրեշտակօք իւրովք, եւ յայնժամ
հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր։
Ամէն ասեմ ձեզ, զի իցեն ոմանք ի 28
սոցանէ որ աստ կան, որք ոչ ճաշակես֊
ցեն զմահ՝ մինչեւ տեսանիցեն զորդի մար֊
դոյ եկեալ արքայութեամբ իւրով։

ԳԼՈՒԽ ԺԷ

Եւ յետ վեց աւուր առնու Յիսուս 1
զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս
զեղբայր նորա, եւ հանէ զնոսա ի լեառն
մի բարձր առանձինն· եւ այլակերպեցաւ 2
առաջի նոցա, եւ լուսաւորեցան երեսք
նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձք
նորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս։ Եւ 3
ահա երեւեցան նոցա Մովսէս եւ Եղիա՝
որ խօսէին ընդ նմա։ Պատասխանի ետ 4
Պետրոս եւ ասէ ցՅիսուս· Տէր, բարւոք
է մեզ աստ լինել· եթէ կամիս՝ արասցուք
երիս տաղաւարս· մի քեզ, եւ մի Մովսի֊
սի, եւ մի Եղիայի։ Եւ մինչ դեռ նա խօ֊ 5
սէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղեւ
ի վերայ նոցա· ձայն եղեւ յամպոյն եւ
ասէ· Դա է որդի իմ սիրելի ընդ որ հա֊
ճեցայ, դմա լուարուք։ Իբրեւ լուան ա֊ 6
շակերտքն, անկան ի վերայ երեսաց իւ֊

7 րեանց եւ երկեան յոյժ։ Եւ մատուցեալ
Յիսուս բուռն եհար զնոցանէ եւ ասէ·
8 Յոտն կացէք եւ մի՛ երկնչիք։ Ամբարձին
զաչս իւրեանց, եւ ոչ զոք տեսին՝ բայց
9 միայն զՅիսուս։ Եւ մինչ դեռ իջանէին ի
լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս
եւ ասէ· մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ, մին֊
չեւ որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ։
10 Հարցին ցնա աշակերտքն եւ ասեն·
Զի՞րդ դպիրքն ասեն, եթէ Եղիայի նախ
11 պարտ է գալ։ Պատասխանի ետ Յիսուս
եւ ասէ ցնոսա· Եղիա գայ եւ հաստա֊
12 տեսցէ զամենայն· այլ ասեմ ձեզ՝ զի Ե֊
ղիա եկեալ իսկ է, եւ ոչ ծանեան զնա,
այլ արարին ընդ նա զոր ինչ կամեցան·
նոյնպէս եւ որդի մարդոյ չարչարելոց է
13 ի նոցանէ։ Յայնժամ ի միտ առին աշա֊
կերտքն, թէ վասն Յովհաննու Մկրտչի
ասաց ցնոսա։
14 ԶԲ· Եւ իբրեւ եկին ի ժողովուրդն,
մատեաւ այր մի, ի ծունր իջանէր եւ ա֊
սէր· Տէր, ողորմեաց որդւոյ իմում, զի
լուսնոտի եւ չարաչար հիւանդանայ·
բազում անգամ անկանի ի հուր, եւ եր֊
15 բեմն ի ջուր· եւ մատուցի զնա աշակեր֊
16 տացն քոց՝ եւ ոչ կարացին բժշկել։ Պա֊
տասխանի ետ Յիսուս եւ ասէ· Ո՛վ ազգ
անհաւատ եւ թիւր, մինչեւ ցե՞րբ իցեմ
ընդ ձեզ· մինչեւ յե՞րբ անսայցեմ ձեզ·

ած զնա առ իս։ Եւ սաստեաց ի նա Յի- 17
սուս, եւ ել ի նմանէ դեւն, եւ բժշկե-
ցաւ մանուկն ի ժամէն յայնմանէ։
Յայնժամ մատեան աշակերտքն առան- 18
ձինն եւ ասեն ցՅիսուս. Մեք ընդէ՞ր ոչ կա-
րացաք հանել զնա։ Եւ նա ասէ ցնոսա. 19
Վասն թերահաւատութեան ձերոյ. ա-
մէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս
քան զհատ մանանխոյ, ասասջիք լերինս
այսմիկ, փոխեա՛ց աստի անդր, եւ փոխես-
ցի. եւ ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ։
Բայց այս ազգ ոչ ելանէ, եթէ ոչ աղօ- 20
թիւք եւ պահովք։
ԶԳ. Եւ մինչ դեռ շրջէին նոքա ի Գա- 21
լիլեա, ասէ ցնոսա Յիսուս։ Մատնելոց է
որդի մարդոյ ի ձեռս մարդկան, եւ 22
սպանցեն զնա, եւ յերիր աւուր յարիցէ։
Եւ տրտմեցան յոյժ։
Իբրեւ եկին նոքա ի Կափառնաում, 23
մատեան որք զերկդրամեանն պահան-
ջէին, առ Պետրոս, եւ ասեն. Վարդա-
պետն ձեր ո՞չ տայ զերկդրամեանն։ Եւ
ասէ. Այո։ Եւ իբրեւ եմուտ ի տունն՝ յա- 24
ռաջեաց քան զնա Յիսուս եւ ասէ.
Զի՞րդ թուի քեզ, Սիմովն. թագաւորք
աշխարհի յումմէ՞ առնուն զհարկս կամ ըզ-
հաս, յորդւո՞ց իւրեանց՝ թէ յօտարաց։
Եւ իբրեւ ասաց թէ յօտարաց, ասէ ցնա 25
Յիսուս. Ապա ուրեմն ազատ են որդիքն։

26 Բայց զի մի՛ գայթագղեցուսցուք զնոսա,
երթ ի ծով՝ եւ ընկեա կարթ, եւ զառա-
ջին ձուկնն որ ելանիցէ՝ ա՛ռ, եւ բաց զբե-
րան նորա, եւ գտանիցես սատեր. եւ
զայն առեալ տացես նոցա ընդ իմ եւ
ընդ քո։

ԳԼՈՒԽ ԺԸ

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն
առ Յիսուս եւ ասեն. Ո՞վ իցէ ի մէնջ
2 մեծ յարքայութեան երկնից։ Եւ կոչեաց
առ ինքն Յիսուս մանուկ մի, կացոյց զնա
3 ի մէջ նոցա, եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ,
եթէ ոչ դարձջիք եւ լինիջիք իբրեւ ըզ-
մանկտի, ոչ մտանիցէք յարքայութիւն
4 երկնից։ Արդ որ խոնարհեցուցանէ զան-
ձըն իբրեւ զմանուկս զայս, նա է մեծ յար-
5 քայութեան երկնից։ Եւ որ ոք ընկալցի
մանուկ մի այսպիսի յանուն իմ, զիս
6 ընդունի։ Եւ որ ոք գայթագղեցուսցէ
զմի ի փոքրկանցս յայսցանէ յիս հաւա-
տացելոց, լաւ է նմա՝ եթէ կախիցի եր-
կան իշոյ ընդ պարանոց նորա՝ եւ ըն-
7 կղմիցի ի խորս ծովու։ Վա՜յ աշխար-
հի ի գայթագղութեանց. հարկ է գալ
գայթագղութեանց, բայց վա՜յ մարդոյն
այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ գայթագղու-
8 թիւն։ Եթէ ձեռն քո կամ ոտն գայ-
թագղեցուցանէ զքեզ, հատ զնա եւ ըն-

կեա ի քէն. լաւ լիցի քեզ միաձեռանի
կամ կաղ մտանել ի կեանս, քան երկոսւ
ձեռս եւ երկոսւ ոտս ունել, եւ անկա-
նել ի հուրն յաւիտենական: Եւ եթէ 9
ակն քո գայթագղեցուցանէ զքեզ, խլեա
զնա եւ ընկեա ի քէն. լաւ լիցի քեզ միա-
կանի մտանել ի կեանս, քան երկոսւ աչս
ունել եւ անկանել ի գեհեն հրոյն:
ԶԴ. Զգոյշ լերուք՝ մի՛ արհամարհի- 10
ցէք զմի ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ
ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս՝ հանա-
պազ տեսանեն զերեսս հօր իմոյ որ յեր-
կինս է: Զի եկն որդի մարդոյ կեցուցա- 11
նել զկորուսեալն: Զիա՞րդ թուի ձեզ, 12
եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչխար, եւ
մոլորիցի մի ի նոցանէ, ո՞չ թողուցու
զիննսուն եւ զինն ոչխարն ի լերինս, եւ
երթայցէ խնդրիցէ զմոլորեալն. եւ եթէ 13
լինիցի գտանել զնա, ամէն ասեմ ձեզ՝
զի ուրախ լինի ի վերայ նորա, առաւել
քան ի վերայ իննսուն եւ յիննունցն որ
չիցեն մոլորեալ: Այսպէս ոչ են կամք 14
առաջի հօր իմոյ որ յերկինս է, եթէ կո-
րիցէ մի ի փոքրկանցս յայսցանէ:
Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ 15
յանդիմանեա զնա՝ յորժամ դու եւ նա
միայն իցէք. եթէ լուիցէ քեզ, շահեցար
զեղբայրն քո. ապա թէ ոչ լուիցէ 16
քեզ, առ ընդ քեզ մի եւս կամ երկոսւ.

զի ի բերանոյ երկուց եւ երից վկայից
17 հաստատեսցի ամենայն բան: Իսկ եթէ
եւ նոցա ոչ լուիցէ, ասասջիր յեկեղե-
ցւոջ. ապա թէ եւ եկեղեցւոյն ոչ լու-
իցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն եւ
18 զմաքսաւոր: Ամէն ասեմ ձեզ. զոր կա-
պիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս,
եւ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի ար-
19 ձակեալ յերկինս: Դարձեալ ասեմ ձեզ.
եթէ երկու ի ձէնջ միաբանիցեն յերկրի
վասն ամենայն իրաց, զինչ եւ խնդրես-
ցեն՝ եղիցի նոցա ի հօրէ իմմէ որ յեր-
20 կինսն է: Զի ուր իցեն երկու կամ երեք
ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ
նոցա:
21 Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս
եւ ասէ. Տէր, քանի՞ցս անգամ թէ մե-
ղիցէ ինձ եղբայր իմ, եւ թողից նմա.
22 մինչեւ յեօթն անգամ: Ասէ ցնա Յիսուս.
Ոչ ասեմ քեզ՝ թէ մինչեւ յեօթն ան-
գամ, այլ մինչեւ յեօթանասնեկին եօթն:
23 Վասն այսորիկ նմանեցաւ արքայու-
թիւն երկնից առն թագաւորի, որ կա-
մեցաւ համար առնել ի մէջ ծառայից
24 իւրոց: Եւ իբրեւ սկսաւ առնուլ, մա-
տուցաւ առ նա պարտապան մի բիւր
25 քանքարոյ: Իբրեւ ոչ ունէր հատուցա-
նել, հրամայեաց զնա վաճառել տէրն
նորա՝ եւ զկին նորա եւ զորդիս եւ զա-

մենայն որ զինչ եւ ունիցի՝ եւ հատու-
ցանել: Եւ անկեալ ծառայն երկիր պա- 26
գանէր նմա եւ ասէր. երկայնամիտ լեր
առ իս, եւ զամենայն հատուցից քեզ:
Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ ար- 27
ձակեաց զնա, եւ զփոխն եթող նմա:
Եւ ելեալ ծառայն այն՝ եգիտ զմի ի ծա- 28
ռայակցաց իւրոց, որ պարտէր նմա հա-
րիւր դահեկան, եւ կալեալ զնա՝ խեղդէր
եւ ասէր. հատո ինձ զոր պարտիս: Արդ 29
անկեալ ծառայակիցն առ ոտս նորա՝ ա-
ղաչէր զնա եւ ասէր. երկայնամիտ լեր
առ իս՝ եւ հատուցից քեզ: Եւ նա ոչ կա- 30
մէր, այլ չոգաւ արկ զնա ի բանտ՝ մին-
չեւ հատուսցէ զպարտսն: Իբրեւ տեսին 31
ծառայակիցքն նորա որ ինչ եղեւն՝ տրտմե-
ցան յոյժ, եւ եկեալ ցուցին տեառն
իւրեանց զամենայն որ ինչ եղեւն: Յայն- 32
ժամ կոչեաց զնա տէրն իւր եւ ասէ.
ծառայ չար, զամենայն զպարտսն թողի
քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս. իսկ արդ 33
ո՞չ էր պարտ եւ քեզ ողորմել ծառա-
յակցին քում, որպէս եւ ես քեզ ողոր-
մեցայ: Եւ բարկացեալ տէրն նորա մա- 34
տնեաց զնա դահճաց՝ մինչեւ հատուսցէ
զամենայն զպարտսն: Նոյնպէս եւ Հայր 35
իմ որ յերկինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ
թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում
ի սրտից ձերոց զյանցանս նոցա:

ԳԼՈՒԽ ԺԹ

1 ՁԸ. Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յի-
սուս զբանս զայսոսիկ՝ փոխեցաւ ի Գա-
լիլեէ եւ եկն ի սահմանս Հրէաստանի
2 յայնկոյս Յորդանանու: Եւ գնացին զհետ
նորա ժողովուրդք բազումք, եւ բժշ-
կեաց զնոսա անդ:
3 Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն,
փորձէին զնա եւ ասէին. Եթէ արժա՞ն
իցէ ումեք արձակել զկին իւր, ըստ ա-
4 մենայն վնասու: Պատասխանի ետ նոցա
եւ ասէ. Ոչ իցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ
հաստատեացն ի սկզբանէ՝ արու եւ էգ
5 արար զնոսա եւ ասէ. վասն այսորիկ
թողցէ այր զհայր եւ զմայր՝ եւ երթիցէ
զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան
6 ի մարմին մի: Ապա ուրեմն ոչ են երկու՝
այլ մի մարմին: Արդ զոր Աստուած
7 զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ: Ասեն
ցնա. իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց
մեզ տալ թուղթ մեկնելոյ՝ եւ արձակել:
8 Ասէ ցնոսա. Մովսէս վասն խստասրտու-
թեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել
զկանայս ձեր, այլ ի սկզբանէ ոչ եղեւ
9 այնպէս: Բայց ասեմ ձեզ, զի ամենայն
որ արձակէ զկին իւր՝ եւ ոչ վասն պոռն-
կութեան, եւ առնիցէ այլ՝ շնայ, եւ որ

զարձակեալն առնէ՝ շնայ։ Ասեն ցնա ա- 10
շակերտքն իւր. Եթէ այդպէս ինչ վնաս
իցէ ընդ այր եւ ընդ կին, լաւ է չամուս-
նանալ։ Եւ նա ասէ ցնոսա. Ոչ ամենե- 11
քեան բաւական են այդմ բանի, այլ ո-
րոց տուեալ է։ Զի են ներքինիք՝ որ յո- 12
րովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս, եւ
են ներքինիք՝ որ ի մարդկանէ եղեն ներ-
քինիք, եւ են ներքինիք՝ որ զանձինս
իւրեանց արարին ներքինիս վասն ար-
քայութեան երկնից. որ կարօղն է տա-
նել՝ տարցի։

Յայնժամ մատուցան առ նա մանկտի, 13
զի ձեռն դիցէ ի վերայ նոցա եւ աղօթս
արասցէ. եւ աշակերտքն նորա սաստէին
նոցա։ Ասէ Յիսուս. Թոյլ տուք մանկը- 14
տւոյդ՝ եւ մի արգելուք զդոսա գալ առ
իս, զի այդպիսեացդ է արքայութիւն
երկնից։ Եւ եդեալ ձեռս ի վերայ նոցա՝ 15
գնաց անտի։

ՁՁ. Եւ ահա մատուցեալ ոմն առ նա 16
ասէ. Վարդապետ բարի, զի՞նչ բարի
գործեցից՝ զի ընդունիցիմ զկեանսն յա-
ւիտենականս։ Եւ նա ասէ ցնա. Զի՞ հար- 17
ցանես զիս զբարւոյ, մի է բարի. եթէ
կամիս ի կեանսն յաւիտենականս մտա-
նել, պահեա զպատուիրանսն։ Ասէ ցնա. 18
Զո՞րս։ Ասէ ցնա Յիսուս. Զմի՛ սպանաներ,
եւ մի՛ շնար, եւ մի՛ գողանար, եւ մի՛ սուտ

19 վկայեր, պատուեա զհայր քո եւ զմայր,
եւ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն
20 քո։ Ասէ ցնա պատանին. Զայդ ամենայն
պահեցի ի մանկութենէ իմմէ. արդ ի՞ւ
21 իւիք պակաս իցեմ։ Ասէ ցնա Յիսուս. Եթէ
կամիս կատարեալ լինել, երթ վաճա-
ռեա զինչս քո եւ տուր աղքատաց. եւ
ունիցիս գանձս յերկինս, եւ եկ զկնի իմ։
22 Իբրեւ լուաւ պատանին զբանն՝ գնաց
տրտմեալ, զի ունէր ստացուածս բա-
23 զումս։ Ասէ Յիսուս ցաշակերտսն. Ամէն
ասեմ ձեզ, զի դժուարաւ մտցէ մեծա-
24 տունն յարքայութիւն երկնից։ Դար-
ձեալ ասեմ ձեզ, դիւրին է մալխոյ մը-
տանել ընդ ծակ ասղան, քան մեծա-
տան յարքայութիւն Աստուծոյ մտանել։
25 Իբրեւ լուան աշակերտքն՝ զարմացան
յոյժ, եւ ասեն. Իսկ ո՞ կարիցէ ապրել։
26 Հայեցաւ ի նոսա Յիսուս եւ ասէ. Առ ի
մարդկանէ այդ անկար է, այլ առ յԱս-
27 տուծոյ ամենայն ինչ զօրաւոր։ Յայնժամ
պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցնա.
Ահաւասիկ մեք թողաք զամենայն եւ եկաք
28 զկնի քո, արդ զի՞նչ լինիցի մեզ։ Ասէ ցնո-
սա Յիսուս. Ամէն ասեմ ձեզ. զի դուք որ
եկիք զկնի իմ, ի միւսանգամ գալստեան՝
յորժամ նստցի որդի մարդոյ յաթոռ
փառաց իւրոց, նստջիք եւ դուք յերկո-
տասան աթոռ՝ դատել զերկոտասան

ազգն Իսրայէլի: Եւ ամենայն որ ոք ե- 29
թող զտուն կամ զեղբարս կամ զքորս
կամ զհայր կամ զմայր կամ զկին կամ
զորդիս կամ զագարակս վասն անուան ի-
մոյ, հարիւրապատիկ առցէ՝ եւ զկեանսն
յաւիտենականս ժառանգեսցէ: Բազումք 30
եղիցին առաջինք յետինք, եւ յետինք ա-
ռաջինք:

ԳԼՈՒԽ Ի

Քանզի նման է արքայութիւն երկնից 1
առն տանուտեառն, որ ել ընդ առաւօտս
ի վարձու ունել մշակս յայգի իւր. եւ 2
արկ վարձս մշակացն աւուրն դահեկան,
եւ առաքեաց զնոսա յայգի իւր: Եւ ե- 3
լեալ զերրորդ ժամու՝ ետես այլս զի կային
դատարկք ի հրապարակս. ասէ եւ ցնո- 4
սա. Երթայք եւ դուք յայգի իմ, եւ որ
ինչ արժան իցէ՝ տաց ձեզ. գնացին եւ 5
նոքա: Եւ դարձեալ ելեալ զվեց ժամու,
եւ զինն ժամու՝ արար նոյնպէս: Եւ զմե- 6
տասներորդ ժամու ելեալ, եգիտ այլս՝
զի կային դատարկք. ասէ ցնոսա. Ընդէ՞ր
կայք աստ զօրս ցերեկ դատարկք: Ասեն 7
ցնա. զի ոչ ոք կալաւ զմեզ ի վարձու.
ասէ ցնոսա. Երթայք եւ դուք յայգին,
եւ որ ինչ արժան է՝ առնուցուք: Եւ 8
իբրեւ երեկոյ եղեւ՝ ասէ տէր այգւոյն

ցգաւառապետ իւր. Կոչեա զմշակսն՝ եւ
տուր նոցա վարձս, սկսեալ ի յետնոցն
9 մինչեւ ցառաջինսն: Իբրեւ եկին որք
զմետասաներորդ ժամուն, առին մէն մի
10 դահեկան. եկեալ եւ առաջինքն՝ համա-
րէին թէ աւելի առնուցուն. եւ առին
11 մէն մի դահեկան եւ նոքա: Իբրեւ առին՝
տրտնջէին զտանուտեառնէն եւ ասէին,
12 թէ դոքա յետինքդ մի ժամ գործեցին,
եւ հաւասարակորդս մեզ արարեր զդոսա,
որ զծանրութիւն աւուրն բարձաք եւ
13 զտօթ: Նա պատասխանի ետ միում ի
նոցանէ եւ ասէ. Ընկեր, չզրկեմ զքեզ.
ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս.
14 առ զքոյդ եւ երթ. եթէ կամիմ յետնոցս
15 տալ որպէս եւ քեզ, եթէ չիցէ՞ ինձ իշ-
խանութիւն յիմս առնել զինչ եւ կա-
միմ, կամ թէ ակն քո չա՞ր է՝ զի ես ա-
16 ռատ եմ: Այսպէս եղիցին յետինք ա-
ռաջինք, եւ առաջինք յետինք. զի բա-
զումք են կոչեցեալք՝ եւ սակաւք են ըն-
տրեալք:

17 Ձէ. Իբրեւ ելանէր Յիսուս յԵրուսա-
ղէմ, առ զերկոտասանսն առանձինն, եւ
18 ի ճանապարհին ասէ ցնոսա. Ահաւասիկ
ելանեմք յԵրուսաղէմ, եւ որդի մարդոյ
մատնեսցի քահանայապետից եւ դպ-
րաց, եւ դատապարտեսցեն զնա ի մահ.
19 եւ մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպա-

նել եւ հարկանել եւ ի խաչ հանել, եւ
յերիր աւուր յարիցէ:
Յայնժամ մատեաւ առ նա մայր որ- 20
դւոցն Զեբեդեայ որդւովք իւրովք հան-
դերձ, երկիր պագանէր եւ խնդրէր ինչ
ի նմանէ: Եւ նա ասէ ցնա. Զի՞նչ կա- 21
միս: Ասէ ցնա. Ասա՛ զի նստցին սոքա
երկու որդիքս իմ՝ մի ընդ աջմէ քումմէ
եւ մի ընդ ահեկէ յարքայութեան քում:
Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ոչ գի- 22
տէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբա-
ժակն զոր ես ըմպելոց եմ, կամ զմկըր-
տութիւնն զոր ես մկրտելոց եմ: Ասեն
ցնա. Կարող եմք: Ասէ ցնոսա Յիսուս. 23
Զբաժակն իմ ըմպիցէք, եւ զմկրտութիւնն
զոր ես մկրտիմ՝ մկրտիցէք. բայց նստու-
ցանել ընդ աջմէ եւ ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է
իմ տալ, այլ որոց տուեալ է ի Հօրէ իմմէ:
Եւ լուեալ տասանցն, բարկացան ի 24
վերայ երկուցն եղբարց: Յիսուս կոչեաց 25
զնոսա առ ինքն, եւ ասէ. Գիտէք՝ զի իշ-
խանք ազգաց տիրեն նոցա, եւ մեծա-
մեծքն իշխեն նոցա: Ոչ այնպէս իցէ եւ 26
ի ձերում միջի. այլ որ կամիցի ի ձէնջ մեծ
լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. եւ որ կա- 27
միցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծա-
ռայ: Որպէս որդի մարդոյ ոչ եկն պաշ- 28
տօն առնուլ, այլ պաշտել. եւ տալ զանձն
իւր փրկանս փոխանակ բազմաց:

29 ԷԿ. Եւ յելանելն նոցա յԵրիքովէ՝ գնա-
ցին զհետ նորա ժողովուրդք բազումք:
30 Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճա-
նապարհաւն. իբրեւ լուան թէ Յիսուս
անցանէ՝ աղաղակեցին եւ ասեն. Ողոր-
31 մեաց մեզ, Յիսուս որդի Դաւթի: Եւ
ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն. եւ
նոքա եւս առաւել աղաղակէին եւ ասէին.
32 Տէր, ողորմեաց մեզ, որդի Դաւթի: Զտե-
ղի առ Յիսուս, կոչեաց զնոսա եւ ասէ.
33 Զի՞նչ կամիք զի արարից ձեզ: Ասեն ցնա.
34 Տէր, զի բացցին աչք մեր: Եւ գթացեալ
Յիսուս մերձեցաւ յաչս նոցա, եւ վաղ-
վաղակի տեսին եւ գնացին զհետ նորա:

ԳԼՈՒԽ ԻԱ

1 Իբրեւ մօտ եղեն յԵրուսաղէմ, եւ եկին
ի Բեթփագէ մերձ ի լեառն Ձիթենեաց,
յայնժամ Յիսուս արձակեաց երկուս յա-
2 շակերտացն իւրոց, եւ ասէ ցնոսա. Եր-
թայք ի գեօղդ՝ որ առաջի ձեր է, եւ ան-
դէն գտանիցէք էշ կապեալ եւ յաւանակ
3 ընդ նմին, լուծէք ածէք ինձ: Եւ եթէ
ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջիք, եթէ տեա-
ռըն իւրեանց պիտոյ են. եւ վաղվաղակի
4 առաքեսցէ զնոսա: Բայց այս ամենայն
եղեւ, զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ.
5 Ասացէք դստեր Սիովնի. ահա թագաւոր

քո գայ քեզ հեզ եւ հեծեալ յէշ եւ ի
յաւանակի իշոյ։ Գնացին աշակերտքն, 6
եւ արարին որպէս հրամայեաց նոցա
Յիսուս. եւ ածին զէշն եւ զյաւանակն, 7
եւ արկին զնոքօք ձորձս, եւ նստաւ ի
վերայ նոցա։ Եւ բազում ժողովուրդք 8
տարածեցին զհանդերձս իւրեանց ի ճա-
նապարհին, եւ այլք հատանէին ոստս ի
ծառոց եւ տարածանէին ի ճանապար-
հին։ Եւ ժողովուրդքն որ առաջին եւ զկնի 9
երթային՝ աղաղակէին եւ ասէին. Օրհ-
նութիւն որդւոյ Դաւթի, օրհնեալ որ
գայ յանուն Տեառն. օրհնութիւն ի բար-
ձունս։ Եւ ի մտանելն նորա յԵրուսաղէմ՝ 10
դղրդեցաւ քաղաքն ամենայն, եւ ասէ.
Ո՞վ իցէ սա։ Եւ ժողովուրդքն ասէին. Սա 11
է մարգարէն Յիսուս՝ որ ի Նազարեթէ
Գալիլեացւոց։ Եւ եմուտ Յիսուս ի տա- 12
ճարն, եւ եհան արտաքս զամենեսին,
որ վաճառէին եւ գնէին ի տաճարի անդ.
եւ զսեղանս հատավաճառացն կործա-
նեաց եւ զաթոռս աղաւնեվաճառացն։
Եւ ասէ ցնոսա. Գրեալ է, տուն իմ տուն 13
աղօթից կոչեսցի. եւ դուք արարէք զդա
այրս աւազակաց։ Եւ մատեան առ նա 14
կոյրք եւ կաղք ի տաճարին, եւ բժշկեաց
զնոսա։ Իբրեւ տեսին քահանայապետք 15
եւ դպիրք զսքանչելիսն զոր արար, եւ ըզ-
մանկտին որ աղաղակէին ի տաճարին եւ

ասէին՝ օրհնութիւն որդւոյ Դաւթի, բար-
16 կացան եւ ասեն ցնա. Լսե՞ս զինչ ասեն դո-
քա։ Ասէ ցնոսա Յիսուս. Այո. չիցէ՞ ըն-
թերցեալ ձեր՝ եթէ ի բերանոյ տղայոց
եւ ստնդիեաց կատարեցեր զօրհնու-
17 թիւն։ Եւ թողեալ զնոսա՝ ել արտաքոյ
քաղաքին ի Բեթանիա, եւ անդ ագաւ։
18 ԻԲ. Եւ այգուցն իբրեւ դարձաւ ան-
19 դրէն ի քաղաքն՝ քաղցեաւ. եւ տեսեալ
թզենի մի ի վերայ ճանապարհին, եկն ի
նա, եւ ոչ ինչ եգիտ ի նմա՝ բայց միայն
տերեւ։ Եւ ասէ ցնա. Մի այսուհետեւ
ի քէն պտուղ եղիցի յաւիտեան։ Եւ առ
20 ժամայն չորացաւ թզենին։ Իբրեւ տեսին
աշակերտքն՝ զարմացան եւ ասեն, թէ
զիա՞րդ վաղվաղակի ցամաքեցաւ թզենին։
21 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա.
Ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս
եւ ոչ երկմտիցէք, ոչ միայն զթզենւոյդ
առնիցէք, այլ թէպէտ եւ լերինդ ասի-
ցէք՝ բարձիր եւ անկիր ի ծով, եղիցի։
22 Եւ զամենայն ինչ զոր եւ խնդրիցէք յա-
ղօթս հաւատովք՝ առնուցուք։
23 Եւ իբրեւ եկն ի տաճարն, մատեան
առ նա՝ մինչ դեռ ուսուցանէր՝ քահա-
նայապետք եւ ծերք ժողովրդեանն եւ ա-
սեն. Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ,
եւ ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ։
24 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա.

Հարցից եւ ես զձեզ բան մի. զոր թէ ասի-
ցէք ինձ, եւ ես ձեզ ասացից՝ որով իշխա-
նութեամբ առնեմ զայս: Մկրտութիւնն 25
Յովհաննու ուստի՞ էր, յերկնի՞ց թէ ի
մարդկանէ: Եւ նոքա խորհէին ընդ մի- 26
մեանս եւ ասէին. եթէ ասեմք՝ յերկնից,
ասէ ցմեզ. իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք
նմա. եւ եթէ ասեմք ի մարդկանէ, երկն-
չիմք ի ժողովրդենէն. զի ամենեքին զՅով-
հաննէս իբրեւ զմարգարէ ունէին: Պա- 27
տասխանի ետուն Յիսուսի եւ ասեն. Ոչ
գիտեմք: Ասէ ցնոսա եւ նա. Եւ ոչ ես
ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ
զայս:

Բայց զի՞նչ թուի ձեզ. այր միոջ էին 28
երկու որդիք, եւ մատուցեալ առ առա-
ջինն՝ ասէ. Որդեակ, երթ այսօր գործեա
յայգւոջ: Նա պատասխանի ետ եւ ա- 29
սէ. Երթամ, Տէր, եւ ոչ չոգաւ: Մա- 30
տեաւ եւ առ միւսն, եւ ասէ նոյնպէս:
Նա պատասխանի ետ եւ ասէ. Ոչ կա-
միմ. բայց յետոյ զղջացաւ եւ չոգաւ
յայգին: Արդ ո՞ յերկոցունց արար զկամս 31
հօրն: Ասեն. Յետինն: Ասէ ցնոսա Յիսուս.
Ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք եւ պոռ-
նիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայու-
թիւն երկնից: Զի եկն Յովհաննէս ճանա- 32
պարհաւ արդարութեան, եւ ոչ հաւա-
տացէք նմա. եւ մաքսաւորք եւ պոռնիկք

հաւատացին նմա, եւ դուք տեսէք՝ եւ
ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա:
33 ԷԳ. Այլ առակ լուարուք. այր մի էր
տանուտէր՝ որ տնկեաց այգի, եւ ցան-
գով պատեաց զնա, եւ փորեաց ի նմա
հնձան, եւ շինեաց աշտարակ. եւ ետ
զնա ցմշակս, եւ գնաց ի տար աշխարհ:
34 Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ, առա-
քեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ
35 զպտուղս նորա. եւ կալեալ մշակացն զծա-
ռայս նորա, զոմն տանջեցին, զոմն սպանին,
36 զոմն քարկոծեցին: Դարձեալ առաքեաց
այլ ծառայս բազում քան զառաջինսն, եւ
37 արարին նոցա նոյնպէս: Յետոյ առաքեաց
առ նոսա զորդի իւր, եւ ասէ. Թերեւս
38 ամաչեսցեն յորդւոյ ատտի իմմէ: Իսկ
մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն ընդ
միտս. սա է ժառանգն. եկայք սպանցուք
զսա, եւ կալցուք զժառանգութիւն սո-
39 րա: Եւ առեալ հանին զնա արտաքոյ
40 քան զայգին, եւ սպանին: Արդ յորժամ
եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ
41 մշակացն այնոցիկ: Ասեն ցնա. Զչարսն
չարաւ կորուսցէ, եւ զայգին տացէ այ-
լոց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս
42 ի ժամու իւրեանց: Ասէ ցնոսա Յիսուս.
Ոչ՞ երբէք ընթերցեալ ձեր ի գիրս.
Զվէմն՝ զոր անարգեցին շինօղք, նա եղեւ
գլուխ անկեան. ի Տեառնէ եղեւ այս, եւ

է սքանչելի յաչս մեր։ Վասն այսորիկ 43
ասեմ ձեզ, զի բարձցի ի ձէնջ արքայու-
թիւն Աստուծոյ, եւ տացի ազգի որ առ-
նիցէ զպտուղս նորա։ Եւ որ անկցի ի 44
վերայ վիմիս այսորիկ՝ փշրեսցի, եւ յոյր
վերայ անկցի՝ հոսեսցէ զնա։ Իբրեւ 45
լուան քահանայապետքն եւ դպիրք եւ
փարիսեցիք զառակս նորա, գիտացին թէ
վասն նոցա ասաց։ Եւ խնդրէին զնա ու- 46
նել, բայց երկեան ի ժողովրդոցն. քանզի
իբրեւ զմարգարէ ունէին զնա։

ԳԼՈՒԽ ԻԲ

ԻԴ. Դարձեալ պատասխանի ետ Յի- 1
սուս, եւ ասէ ցնոսա առակօք. Նմանեցաւ 2
արքայութիւն երկնից առն թագաւորի,
որ արար հարսանիս որդւոյ իւրում։ Եւ 3
առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւի-
րեալսն ի հարսանիսն, եւ ոչ կամէին
գալ։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս 4
եւ ասէ. Ասացէք հրաւիրելոցն՝ ահա-
ւասիկ զճաշ իմ պատրաստեցի. զուա-
րակք իմ եւ պարարակք զենեալ են, եւ
ամենայն ինչ պատրաստ է. եկայք ի
հարսանիսս։ Եւ նոքա յուլացեալ՝ գնա- 5
ցին ոմն յագարակ իւր, եւ ոմն ի վաճառ
իւր, եւ այլք կալան զծառայս նորա՝ 6
թշնամանեցին եւ սպանին։ Իսկ թագա- 7

ւորն իբրեւ լուաւ՝ բարկացաւ, եւ ա-
ռաքեաց զզօրս իւր եւ սատակեաց զսպա-
նողսն զայնոսիկ, եւ զքաղաքն նոցա այ-
8 րեաց։ Յայնժամ ասէ ցծառայս իւր.
հարսանիքս պատրաստ են եւ հրաւի-
9 րեալքն չէին արժանի։ Արդ երթայք
յանցս ճանապարհաց, եւ զորս միան-
գամ գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիսս։
10 Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհս՝ ժո-
ղովեցին զամենեսեան զոր եւ գտին, ըզ-
չարս եւ զբարիս. եւ լցան հարսանիքն
11 բազմականօք։ Եւ մտեալ թագաւորն
հայել զբազմականօքն՝ ետես անդ այր
մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսա-
12 նեաց։ Եւ ասէ ցնա. ընկեր, զիա՞րդ մտեր
այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսա-
13 նեաց. եւ նա պապանձեցաւ։ Յայնժամ
ասէ թագաւորն ցսպասաւորսն. կապե-
ցէք զոտս նորա եւ զձեռս՝ եւ հանէք
զդա ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ
14 եւ կրճել ատամանց։ Զի բազումք են
կոչեցեալք՝ եւ սակաւք ընտրեալք։
15 ԻԵ. Յայնժամ գնացեալ փարիսեցիքն՝
առին խորհուրդ զնմանէ, թէ որպէս զնի-
16 ցեն նմա որոգայթ բանիւք։ Եւ առաքեն
առ նա զաշակերտս իւրեանց հերովդի-
անոսօքն հանդերձ՝ եւ ասեն. Վարդա-
պետ, գիտեմք զի ճշմարիտ ես, եւ զճա-
նապարհն Աստուծոյ ճշմարտութեամբ

ուսուցանես, եւ ոչ է քեզ փոյթ զումե֊
քէ, եւ ոչ հայիս յերեսս մարդոյ. արդ 17
ասա մեզ, զինչ թուի քեզ, պարտ է
հարկս տալ կայսեր՝ թէ ոչ: Գիտաց Յի֊ 18
սուս զխորամանգութիւնն նոցա, եւ
ասէ. Զի՞ փորձէք զիս, կեղծաւորք. ցու֊ 19
ցէք ինձ զդահեկան հարկին: Եւ նոքա
մատուցին նմա դահեկան մի. եւ ասէ ցնո֊ 20
սա. Ո՞յր է պատկերս այս կամ գիր:
Ասեն. Կայսեր: Յայնժամ ասէ ցնոսա. 21
Երթայք տուք զկայսեր՝ կայսեր, եւ զԱս֊
տուծոյ՝ Աստուծոյ: Իբրեւ լուան՝ զար֊ 22
մացան, եւ թողին զնա եւ գնացին:

Յայնմ աւուր մատեան առ նա սադու֊ 23
կեցիքն, որ ասէին՝ թէ չիք յարութիւն.
հարցին ցնա եւ ասեն. Վարդապետ, Մով֊ 24
սէս ասաց. Եթէ ոք մեռցի անորդի, ա֊
ռասցէ զկին նորա եղբայր իւր, եւ յա֊
րուսցէ զաւակ եղբօր իւրում: Էին առ 25
մեզ եղբարք եօթն. առաջինն առար կին՝
եւ մեռաւ. եւ զի ոչ ունէր զաւակ, ե֊
թող զկինն իւր եղբօր իւրում: Նոյնպէս 26
եւ երկրորդն եւ երրորդն, մինչեւ ցեօթ֊
ներորդն. յետ ամենեցուն մեռաւ եւ 27
կինն: Արդ ի յարութեանն ո՞յր յեօթանցն 28
եղիցի նա կին, զի ամենեքին կալան զնա
կին: Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ա֊ 29
սէ. Մոլորեալ էք, ոչ գիտէք զգիրս եւ ոչ ըզ֊
զօրութիւն Աստուծոյ. զի ի յարութեանն 30

ոչ կանայս առնեն եւ ոչ արանց լինին, այլ
31 են իբրեւ զհրեշտակս յերկինս: Բայց վասն
յարութեան մեռելոց չիցէ՞ ընթերցեալ
32 զասացեալն ձեզ յԱստուծոյ. Ես եմ Աս֊
տուած Աբրահամու, Աստուած Իսահա֊
կայ եւ Աստուած Յակովբայ. եւ չէ Աս֊
33 տուած մեռելոց, այլ կենդանեաց: Իբրեւ
լուան ժողովուրդքն, զարմանային ընդ
վարդապետութիւն նորա:

34 Իսկ փարիսեցիքն իբրեւ լուան՝ եթէ
պապանձեցոյց զսադուկեցիսն, ժողովե֊
35 ցան ի միասին: Եւ եհարց մի ոմն ի նոցա֊
36 նէ զնա՝ փորձելով, եւ ասէ. Վարդապետ,
37 ո՞ր պատուիրան մեծ է յօրէնս: Եւ Յի֊
սուս ասէ ցնա. Սիրեսցես զտէր Աստուած
քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամե֊
նայն անձնէ քումմէ, եւ յամենայն մտաց
38 քոց. այս է մեծն եւ առաջին պատուի֊
39 րան. եւ երկրորդն՝ նման սմին, սիրեսցես
40 զընկեր քո իբրեւ զանձն քո: Յայս եր֊
կուս պատուիրանս ամենայն օրէնք եւ
մարգարէք կախեալ կան:

41 Եւ ի ժողովել փարիսեցւոցն, եհարց
42 ցնոսա Յիսուս եւ ասէ. Զի՞նչ թուի
ձեզ վասն Քրիստոսի, ո՞յր որդի է: Ասեն
43 ցնա. Դաւթի: Ասէ ցնոսա Յիսուս. Իսկ
զիա՞րդ Դաւիթ հոգւով կոչէ զնա Տէր, եւ
44 ասէ. Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ
իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պա֊

տուանդան ոտից քոց. Իսկ եթէ Դաւիթ 45
զնա Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ:
Եւ ոչ ոք կարէր տալ նմա պատասխանի 46
բան մի, եւ ոչ իշխէր ոք յայնմ օրէ հար-
ցանել զնա եւս ոչ ինչ:

ԳԼՈՒԽ ԻԳ

ԻԶ. Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ 1
ժողովուրդսն եւ ընդ աշակերտս իւր եւ
ասէ. Յաթոռն Մովսիսի նստան դպիրքն 2
եւ փարիսեցիք. զամենայն ինչ որ ասիցեն 3
ձեզ՝ արարէք եւ պահեցէք, բայց ըստ
գործոցն նոցա մի՛ առնէք, զի ասեն եւ ոչ
առնեն: Կապեն բեռինս ծանունս եւ դը- 4
ժուարակիրս, եւ դնեն ի վերայ ուսոց
մարդկան, եւ մատամբ իւրեանց ոչ կա-
մին շարժել զնոսա: Եւ զամենայն գործս 5
իւրեանց առնեն ի ցոյց մարդկան. լայ-
նեն զգրապանակս իւրեանց, եւ երկայ-
նեն զքղանցս հանդերձից իւրեանց. սի- 6
րեն զյառաջագահս յընթրիս եւ զնախա-
թոռս ի ժողովուրդս եւ զողջոյնս ի հրա-
պարակս, եւ կոչել ի մարդկանէ՝ ռաբբի 7
ռաբբի: Բայց դուք մի՛ զոք կոչէք վարդա- 8
պետ, զի մի է ձեր ուսուցիչ, եւ ամենե-
քին դուք եղբարք էք: Եւ հայր մի՛ կո- 9
չէք ձեզ յերկրի, զի ձեր մի է հայր՝ որ

10 յերկինս է: Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք,
11 զի ուսուցիչ ձեր Քրիստոս է: Եւ մեծն
ի ձէնջ՝ եղիցի ձեր սպասաւոր:
12 Որ բարձրացուցանէ զանձն խոնար-
հեսցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝
բարձրասցի:
13 Վա՜յ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղ-
ծաւորաց. զի փակէք զարքայութիւն երկ-
նից առաջի մարդկան, դուք ոչ մտանէք,
եւ որոց մտանեն՝ չտայք թողուլ մտանել:
14 Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծա-
ւորաց. զի ուտէք զտունս այրեաց. պատ-
ճառանօք երկարէք զաղօթս, վասն զի ա-
15 ւելի դատաստան ընդունիցիք: Վա՜յ ձեզ
դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց.
զի յածիք ընդ ծով եւ ընդ ցամաք՝ առ-
նել եկամուտ մի, եւ յորժամ լինիցի՝
առնէք զնա որդի գեհենի կրկին եւս քան
16 զձեզ: Վա՜յ ձեզ, առաջնորդք կոյրք, զի
ասէք՝ որ երդնու ի տաճարն՝ չէ ինչ,
բայց որ երդնու յոսկին որ ի տաճարին
17 է՝ արժան է: Մորոսք եւ կոյրք. զի՞նչ
մեծ է, ոսկի՞ն՝ եթէ տաճարն որ սըր-
18 բէ զոսկին: Եւ որ երդնու ի սեղանն՝ չէ
ինչ, բայց որ երդնու ի պատարագն որ ի
19 վերայ նորա է՝ արժան է: Յիմարք եւ
կոյրք, զի՞նչ մեծ է. պատարա՞գն, եթէ
20 սեղանն՝ որ սրբէ զպատարագն: Իսկ արդ
որ երդուաւ ի սեղանն, երդնու ի նա եւ

յամենայն որ ի վերայ նորա է. եւ որ եր- 21
դնու ի տաճարն, երդնու ի նա եւ ի բը-
նակիչն նորա. եւ որ երդուաւ յերկինս, 22
երդնու յաթոռն Աստուծոյ եւ յայն որ
նստին ի վերայ նորա: Վա՜յ ձեզ դպրաց 23
եւ փարիսեցւոց կեղծաւորաց. զի տասա-
նորդէք զանանուխ եւ զսամիթ եւ զչա-
ման. եւ թողէք զծանր ծանր օրինացն՝
զդատաստան եւ զողորմութիւն եւ զհա-
ւատս. զայս արժան էր առնել՝ եւ զայն
չթողուլ: Առաջնորդք կոյրք, որ զմժղու- 24
կըս քամէք եւ զուղտս կլանէք: Վա՜յ ձեզ 25
դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց. զի
սրբէք զարտաքին զբաժակին եւ զսկա-
ւառակի, եւ ի ներքոյ լի են յափշտակու-
թեամբ եւ անիրաւութեամբ: Փարիսե- 26
ցի կոյր, սրբեա նախ զներքին բաժակին
եւ զսկաւառակին, զի լինիցի եւ արտա-
քինն նոցա սուրբ: Վա՜յ ձեզ դպրաց եւ 27
փարիսեցւոց կեղծաւորաց. զի նման էք
գերեզմանաց բռելոց, որ արտաքոյ երե-
ւին գեղեցիկք եւ ի ներքոյ լի են ոսկերօք
մեռելոց եւ ամենայն պղծութեամբ: Նոյն- 28
պէս եւ դուք արտաքոյ երեւիք մարդկան
արդարք, եւ ի ներքոյ լի էք կեղծաւորու-
թեամբ եւ անօրէնութեամբ: Վա՜յ ձեզ 29
դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց.
զի շինէք զշիրիմս մարգարէից, եւ զար-
դարէք զգերեզմանս արդարոց, եւ ասէք, 30

եթէ էաք յաւուրս հարցն մերոց՝ ոչ հա-
31 ղորդէաք արեան մարգարէիցն: Ապա ու-
րեմն վկայէք զանձանց եթէ որդիք էք այ-
32 նոցիկ՝ որ կոտորէին զմարգարէսն. եւ
33 դուք լցէք զչափ հարցն ձերոց: Օձք՝
ծնունդք իժից, զիա՞րդ փախնուցուք ի
դատաստանէ գեհենին:

34 Վասն այդորիկ ահաւասիկ ես առա-
քեմ առ ձեզ մարգարէս եւ իմաստունս
եւ դպիրս, եւ ի նոցանէ սպանանիցէք եւ
ի խաչ հանիցէք, եւ ի նոցանէ տանջիցէք
ի ժողովուրդս ձեր, եւ հալածիցէք ի
35 քաղաքէ ի քաղաք: Որպէս զի եկեսցէ ի
վերայ ձեր ամենայն արիւն արդար հե-
ղեալ յերկրի, յարենէն Աբելի արդարոյ
մինչեւ ցարիւնն Զաքարիայ որդւոյ Բարա-
քեայ զոր սպանէք ընդ մէջ տաճարին եւ
36 սեղանոյ. ամէն ասեմ ձեզ, եկեսցէ այն
ամենայն ի վերայ ազգիս այսորիկ:

37 Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէր
զմարգարէս եւ քարկոծ առնէր զառա-
քեալսն առ նա: Քանիցս անգամ կամե-
ցայ ժողովել զմանկունս քո զոր օրինակ
ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ
38 ոչ կամեցարուք: Ահա թողեալ լիցի ձեզ
39 տունդ ձեր աւերակ: Բայց ասեմ ձեզ,
թէ ոչ եւս տեսանիցէք զիս յայսմ հետէ,
մինչեւ ասիցէք՝ օրհնեալ եկեալն յանուն
Տեառն:

ԳԼՈՒԽ ԻԴ

ԿԿ․ Եւ ելեալ արտաքս Յիսուս ի տա- 1
ճարէն՝ գնայր, եւ մատեան աշակերտքն
յուցանել նմա զշինուածս տաճարին։ Եւ 2
նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա․ Տե-
սանէ՞ք զայդ ամենայն․ ամէն ասեմ ձեզ,
ոչ մնասցէ այդր քար ի քարի վերայ որ ոչ
քակտեսցի։

Եւ մինչ դեռ նստէր ի լերինն Ձիթե- 3
նեաց, մատեան առ նա աշակերտքն ա-
ռանձինն եւ ասեն․ Ասա մեզ՝ երբ լինիցի
այդ, եւ կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գա-
լստեանն եւ վախճանի աշխարհիս։ Պա- 4
տասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա․ 5
Զգոյշ լերուք՝ գուցէ ոք զձեզ խաբիցէ․
զի բազումք գայցեն յանուն իմ, եւ ասի-
ցեն՝ թէ ես եմ Քրիստոսն, եւ զբազումս
մոլորեցուցանիցեն։

Լսելոց էք պատերազմունս եւ համ- 6
բաւս պատերազմաց․ զգոյշ լերուք՝ մի՛
խռովեսջիք, զի պարտ է լինել այնմ ամե-
նայնի, այլ չեւ է կատարած։ Յարիցէ 7
ազգ յազգի վերայ, եւ թագաւորութիւն
ի թագաւորութեան․ եւ եղիցին սովք եւ
սրածութիւնք եւ սասանութիւնք ի տե-
ղիս տեղիս․ սակայն եւ այն ամենայն՝ 8
սկիզբն է երկանց։

9 Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղու-
թիւն, եւ սպանանիցեն զձեզ․ եւ եղիջիք
ատեցեալք յամենայն ազգաց վասն ա-
10 նուան իմոյ։ Եւ յայնժամ գայթագղես-
ցեն բազումք, եւ զմիմեանս մատնեսցեն
11 եւ ատեսցեն զմիմեանս․ եւ բազում սուտ
մարգարէք յարիցեն, եւ զբազումս մոլո-
12 րեցուսցեն։ Եւ վասն բազմանալոյ անօ-
րէնութեանն՝ ցամաքեսցի սէր բազմաց․
13 բայց որ համբերեսցէ ի սպառ, նա կեցցէ։
14 Եւ քարոզեսցի աւետարանս արքայու-
թեան ընդ ամենայն տիեզերս՝ ի վկայու-
թիւն ամենայն հեթանոսաց, եւ ապա ե-
կեսցէ կատարած։
15 Արդ յորժամ տեսանիցէք զպղծու-
թիւն աւերածոյն, որ ասացեալն է ի ձեռն
Դանիէլի մարգարէի, զի կայցէ ի տեղւոջն
սրբութեան, որ ընթեռնուն՝ ի միտ առցէ։
16 Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախի-
17 ցեն ի լերինս․ եւ որ ի տանիս կայցէ՝ մի՛
18 իջցէ առնուլ ինչ 'ի տանէ իւրմէ․ եւ որ
յանդի իցէ՝ մի՛ դարձցի յետս առնուլ ըզ-
19 ձորձս իւր։ Բայց վայ իցէ յղեաց եւ սըն-
20 տուաց յաւուրսն յայնոսիկ։ Յաղօթս կա-
ցէք՝ զի մի՛ լինիցի փախուստն ձեր ձմե-
21 րայնի, եւ մի՛ ի շաբաթու։ Զի եղիցի յայն-
ժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղեւ
իսկզբանէ արարածոյ աշխարհի մինչեւ
22 ցայժմ, եւ ոչ այլ լիցի։ Եւ եթէ ոչ կար-

ճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամե֊
նայն մարմին. բայց վասն ընտրելոցն կար֊
ճեսցին աւուրքն այնոքիկ:
Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ՝ ահաւա֊ 23
սիկ աստ է Քրիստոսն կամ անդ, մի՛ հա֊
ւատայցէք: Զի յարիցեն սուտ քրիստոսք 24
եւ սուտ մարգարէք, եւ տայցեն նշանս
մեծամեծս եւ արուեստս, մինչ մոլորեցու֊
ցանել՝ թէ հնար ինչ իցէ՝ եւ զընտրեալսն.
ահա յառաջագոյն ասացի ձեզ: Ապա թէ 25
ասիցեն ձեզ՝ ահաւանիկ յանապատի է, 26
մի՛ ելանիցէք. եւ թէ ահա յշտեմարանս
է՝ մի՛ հաւատայցէք:
Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւե֊ 27
լից եւ երեւի մինչեւ յարեւմուտս, այն֊
պէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ:
Զի ուր դէշն իցէ, անդր ժողովեսցին ար֊ 28
ծուիք: Վաղվաղակի յետ նեղութեանն ա֊ 29
ւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի,
եւ լուսին ոչ տացէ զլոյս իւր, եւ աստեղք
անկցին յերկնից եւ զօրութիւնք երկնից
շարժեսցին: Եւ ապա երեւեսցի նշան որ֊ 30
դւոյ մարդոյ յերկինս. եւ յայնժամ կո֊
ծեսցին ամենայն ազգք երկրի, եւ տես֊
ցեն զորդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց
երկնից զօրութեամբ եւ փառօք բազմօք:
Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով 31
մեծաւ, եւ ժողովեսցեն զընտրեալս նորա
ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչեւ

32 ի ծագս նոցա: Ի թզենւոյ անտի ուսա֊
րուք զառակն. զի յորժամ նորա ոստքն
կակղասցին եւ տերեւն ցցուիցի, գիտէք
33 թէ մերձ է ամառն: Նոյնպէս եւ դուք՝
յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գի֊
34 տասջիք թէ մերձ է ի դուրս: Ամէն ա֊
սեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս, մին֊
35 չեւ այս ամենայն եղիցի: Երկինք եւ եր֊
36 կիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն: Բայց
վասն աւուրն այնորիկ եւ ժամու՝ ոչ ոք
գիտէ, ոչ հրեշտակք երկնից եւ ոչ Որդի,
բայց միայն Հայր:
37 Այլ որպէս աւուրքն Նոյի, այնպէս ե֊
38 ղիցի գալուստն որդւոյ մարդոյ: Զի որ֊
պէս էին յաւուրսն որ յառաջ քան զջր֊
հեղեղն, ուտէին եւ ըմպէին, կանայս առ֊
նէին եւ արանց լինէին մինչեւ յօրն՝ յո֊
39 րում եմուտ Նոյ ի տապանն. եւ ոչ գի֊
տացին՝ մինչեւ եկն ջրհեղեղն եւ եբարձ
զամենեսին, այնպէս եղիցի եւ գալուստն
որդւոյ մարդոյ:
40 Յայնժամ թէ իցեն երկու յագարա֊
կի, մին առնուցու եւ միւսն թողուցու.
41 եւ եթէ երկու աղայցեն ի մի երկանս,
42 մին առնուցու եւ միւսն թողուցու: Ար֊
թուն կացէք՝ զի ոչ գիտէք յորում ժա֊
43 մու Տէրն ձեր գայ: Զայն գիտասջիք, ե֊
թէ գիտէր տանուտէր՝ յորում պահու
գող գայ՝ սկէր, եւ ոչ տայր ական հա֊

տանել զտանն իւրոյ: Վասն այսորիկ եւ 44
դուք եղերուք պատրաստք, զի յորում
ժամու ոչ ակն ունիցիք՝ գայ որդի մարդոյ:
Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ եւ ի֊ 45
մաստուն, զոր կացոյց տէր իւր ի վերայ
ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր ի
ժամու: Երանի է ծառային այնմիկ՝ զոր 46
եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս.
ամէն ասեմ ձեզ, զի ի վերայ ամենայն ըն֊ 47
չից իւրոց կացուսցէ զնա: Ապա թէ ասի֊ 48
ցէ ծառայն չար ի սրտի իւրում, տէր իմ
յամէ զգալ, եւ սկսանիցի հարկանել ըզ֊ 49
ծառայակիցս իւր, ուտիցէ եւ ըմպիցէ
ընդ արբեցողս. գայցէ տէր ծառային այ֊ 50
նորիկ, յաւուր յորում ոչ ակն ունիցի,
եւ ի ժամու յորում ոչ գիտիցէ, եւ կը֊ 51
տրեսցէ զնա ընդ մէջ, եւ զբաժին նորա
ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ եւ
կրճել ատամանց:

ԳԼՈՒԽ ԻԵ

Յայնժամ նմանեսցի արքայութիւն եր֊ 1
կնից տասն կուսանաց, որոց առեալ ըզ֊
լապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փե֊
սային եւ հարսին. հինգն ի նոցանէ յի֊ 2
մարք էին եւ հինգն իմաստունք: Յիմարքն 3
առին զլապտերսն, եւ ձէթ ընդ իւրեանս
ոչ բարձին: Իսկ իմաստունքն առին ձէթ 4

5 ամանօք ընդ լապտերս իւրեանց: Եւ ի
յամել փեսային, նիրհեցին ամենեքեան
6 եւ ի քուն մտին: Եւ ի մէջ գիշերի եղեւ
բարբառ. Ահա փեսայ գայ, ելէք ընդ ա֊
7 ռաջ նորա: Յայնժամ յարեան ամենայն
կուսանքն, եւ կազմեցին զլապտերս իւ֊
8 րեանց: Ասեն յիմարքն ցիմաստունսն.
Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջա֊
9 նին լապտերքս մեր: Պատասխանի ետուն
իմաստունքն եւ ասեն. Գուցէ ոչ իցէ մեզ
եւ ձեզ բաւական, այլ երթայք ի վաճա֊
10 ռականս եւ գնեսջիք ձեզ: Իբրեւ նոքա
գնացին գնել՝ եկն փեսայն, եւ պատ֊
րաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, եւ
11 փակեցաւ դուռնն: Յետոյ գան եւ այլ
կուսանքն եւ ասեն. Տէր, Տէր, բաց մեզ:
12 Նա պատասխանի ետ եւ ասէ. Ամէն ա֊
13 սեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ: Արթուն
կացէք՝ զի ոչ գիտէք զօրն եւ ոչ զժամ:
14 Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշ֊
խարհ, կոչեաց զծառայս իւր՝ եւ ետ նո֊
15 ցա զինչս իւր: Ումեմն ետ հինգ քանքար,
եւ ումեմն երկուս, եւ ումեմն մի. իւրա֊
քանչիւր ըստ իւրում կարի, եւ գնաց:
16 Չոգաւ վաղվաղակի՝ որ առ զհինգն, գոր֊
ծեաց նոքօք եւ շահեցաւ այլ եւս հինգ:
17 Նոյնպէս եւ որ զերկուսն՝ շահեցաւ այլ
18 եւս երկուս: Եւ որ զմին առ, գնաց փո֊
րեաց զերկիր եւ թաքոյց զարծաթ տեառն

իւրոյ։ Յետ բազում ժամանակի գայ տէր 19
ծառայիցն այնոցիկ, եւ առնէ համարս ի
մէջ նոցա։ Եւ մատուցեալ որ զհինգ քան֊ 20
քարն առ, մատոյց այլ եւս հինգ քան֊
քար՝ եւ ասէ. Տէր, հինգ քանքար ետուր
ցիս, արդ ահաւասիկ հինգ այլ եւս քան֊
քար ՚ի վերայ շահեցայ։ Ասէ ցնա տէրն 21
իւր. Ազնիւ, ծառայ բարի եւ հաւատա֊
րիմ. որովհետեւ ի սակաւուդ հաւա֊
տարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից
զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քոյ։
Մատուցեալ եւ որոյ զերկուս քանքարսն 22
առեալ էր եւ ասէ. Տէր, երկուս քանքարս
ետուր ցիս, ահաւասիկ երկուս եւս այլ
քանքարս՝ զոր ի վերայ շահեցայ։ Ասէ 23
ցնա տէրն իւր. Ազնիւ, ծառայ բարի եւ
հաւատարիմ. որովհետեւ ի սակաւուդ
հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կա֊
ցուցից զքեզ. մուտ յուրախութիւն
տեառն քոյ։ Մատուցեալ եւ որոյ զմի 24
քանքարն առեալ էր, եւ ասէ. Տէր, գի֊
տէի զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ոչ
սերմանեցեր, եւ ժողովես՝ ուստի ոչ
սփռեցեր. երկեայ՝ գնացի եւ թաքուցի 25
զքանքարս քո յերկրի. արդ ահաւասիկ քոյդ
ցքեզ։ Պատասխանի ետ տէրն եւ ասէ 26
ցնա. Ծառայ չար եւ վատ, գիտէիր թէ
հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, եւ ժողո֊
վեմ՝ ուստի ոչ սփռեցի. պարտ էր քեզ 27

արկանել զարծաթդ իմ ի սեղանաւորս,
եւ եկեալ ես տոկոսեօք պահանջէի զիմն։
28 Արդ առէք ի դմանէ զքանքարդ՝ եւ տուք
29 այնմ որ ունիցի զտասն քանքարն։ Զի ա֊
մենայնի որ ունիցի՝ տացի եւ յաւելցի, եւ
որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝ բարձցի
30 ի նմանէ։ Եւ զծառայդ անպիտան հանէք
ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ
կրճել ատամանց։
31 Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փա֊
ռօք իւրովք՝ եւ ամենայն հրեշտակք ընդ
նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց
32 իւրոց. եւ ժողովեսցին առաջի նորա ա֊
մենայն ազգք, եւ մեկնեսցէ զնոսա ի մի֊
մեանց, որպէս հովիւ զի մեկնէ զօդիս յայ֊
33 ծեաց. եւ կացուսցէ զօդիսն ընդ աջմէ
34 իւրմէ եւ զայծիսն ՚ի ձախմէ։ Յայնժամ
ասասցէ թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ
աջմէն իցեն. Եկայք օրհնեալք հօր իմոյ,
ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ ար֊
35 քայութիւնն իսկզբանէ աշխարհի։ Զի
քաղցեայ՝ եւ ետուք ինձ ուտել, ծարա֊
ւեցի՝ եւ արբուցէք ինձ, օտար էի՝ եւ
36 ժողովեցէք զիս, մերկ՝ եւ զգեցուցէք զիս,
հիւանդ էի՝ եւ տեսէք զիս, ի բանտի էի՝
37 եւ եկիք առ իս։ Յայնժամ պատասխա֊
նի տացեն արդարքն եւ ասասցեն. Տէր,
38 Ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ եւ կերա֊
կրեցաք, կամ ծարաւի՝ եւ արբուցաք.

Երբ տեսաք զքեզ օտար եւ ժողովեցաք, 39
կամ մերկ՝ եւ զգեցուցաք. Երբ տեսաք
զքեզ հիւանդ կամ ի բանտի, եւ եկաք
առ քեզ։ Պատասխանի տացէ թագա- 40
ւորն եւ ասասցէ ցնոսա. Ամէն ասեմ
ձեզ, որովհետեւ արարէք միում յեղ-
բարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք։
Յայնժամ ասասցէ եւ ցայնոսիկ՝ որ ընդ 41
ահեկէն իցեն. Երթայք յինէն, անիծեալք,
ի հուրն յաւիտենական, որ պատրաս-
տեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա։
Զի քաղցեայ՝ եւ ոչ ետուք ինձ ուտել. 42
ծարաւեցի՝ եւ ոչ արբուցէք զիս. օտար 43
էի՝ եւ ոչ ժողովեցէք զիս. մերկ էի՝ եւ
ոչ զգեցուցէք զիս. հիւանդ եւ ի բանտի՝
եւ ոչ տեսէք զիս։ Յայնժամ պատասխա- 44
նի տացեն եւ նոքա՝ եւ ասասցեն. Տէր,
Երբ տեսաք զքեզ քաղցեալ, կամ ծարա-
ւի, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ
կամ ի բանտի, եւ ոչ պաշտեցաք զքեզ։
Յայնժամ պատասխանի տացէ նոցա եւ 45
ասասցէ. Ամէն ասեմ ձեզ, որովհետեւ
ոչ արարէք միում ի փոքրկանցս յայսցա-
նէ, եւ ոչ ինձ արարէք։ Եւ երթիցեն 46
նոքա ի տանջանսն յաւիտենականս, եւ
արդարքն ի կեանսն յաւիտենականս։

ԳԼՈՒԽ ԻԶ.

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զա-
մենայն զբանս զայսոսիկ, ասէ ցաշա-
2 կերտսն իւր. Գիտէք, զի յետ երկուց ա-
ւուրց զատիկ լինի, եւ որդի մարդոյ մատ-
ՎԶ) նի ի խաչ ելանել։
3 Յայնժամ ժողովեցան քահանայա-
պետքն եւ դպիրք եւ ծերք ժողովրդեանն
ի սրահ քահանայապետին, որում անուն
4 էր Կայիափա. եւ արարին խորհուրդ՝ զի
նենգութեամբ կալցին զՅիսուս եւ սպան-
5 ցեն։ Բայց ասէին, թէ մի՛ ի տօնի աստ՝
զի մի՛ խռովութիւն լինիցի ի ժողովր-
դեանն։
6 Իբրեւ եկն Յիսուս ի Բեթանիա ի տուն
7 Սիմոնի բորոտի, մատեաւ առ նա կին մի,
որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի, եւ թա-
8 փեաց ի գլուխ նորա ի բազմականին։ Իբ-
րեւ տեսին աշակերտքն՝ բարկացան եւ ա-
9 սեն. ընդէ՞ր է կորուստ այդ՝ իւղոյդ. զի
մարթ էր վաճառել զդա մեծագնի՝ եւ
10 տալ աղքատաց։ Գիտաց Յիսուս եւ ասէ
ցնոսա. Զի՞ աշխատ առնէք զկինդ. գործ
11 մի բարի գործեաց դա յիս։ Յամենայն
ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, բայց զիս
12 ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։ Արկանել
դորա զիւղդ ի մարմին իմ՝ առ ի թաղելոյ

զիս նշանակեաց: Բայց ամէն ասեմ ձեզ, 13
զի ուր եւ քարոզեսցի աւետարանս այս
ընդ ամենայն աշխարհ՝ խօսեսցի եւ զոր
արար դա ի յիշատակ դորա:

Յայնժամ գնաց մի յերկոտասանիցն 14
անուանեալն Յուդա սկարիովտացի առ
քահանայապետսն, եւ ասէ. Զի՞նչ կամիք 15
տալ ինձ, եւ ես մատնեցից զնա ձեզ: Եւ
նոքա կշռեցին նմա երեսուն արծաթի. եւ 16
յայնմ հետէ խնդրէր պարապ՝ զի մատ-
նեսցէ զնա նոցա:

Եւ յառաջնում աւուր բաղարջակե- 17
րացն մատեան աշակերտքն առ Յիսուս եւ
ասեն. Ո՞ւր կամիս՝ զի պատրաստեսցուք
քեզ ուտել զզատիկն: Եւ նա ասէ ցնո- 18
սա. Երթայք ի քաղաքն առ այս անուն,
եւ ասացէք ցնա. Վարդապետ ասէ, Ժա-
մանակ իմ մերձեալ է, առ քեզ առնեմ
զզատիկ աշակերտօքս հանդերձ: Եւ ա- 19
րարին աշակերտքն որպէս հրամայեաց
նոցա Յիսուս, եւ պատրաստեցին զզա-
տիկն:

Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ կայր բազմեալ 20
ընդ երկոտասան աշակերտսն: Եւ մինչ 21
դեռ ուտէին նոքա ասէ. Ամէն ասեմ ձեզ,
զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս: Եւ 22
տրտմեցան յոյժ. սկսան ասել ցնա իւրա-
քանչիւր ոք ի նոցանէ. Միթէ ես իցեմ,
Տէր: Նա պատասխանի ետ եւ ասէ. Որ 23

մխեաց ընդ իս զձեռն իւր ի սկաւա-
24 ռակն՝ նա մատնելոց է զիս: Որդի մար-
դոյ երթայ՝ որպէս գրեալ է վասն նորա.
բայց վա՜յ մարդոյն այնմիկ՝ յորոյ ձեռն որ-
դին մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՝
25 թէ չէր ծնեալ մարդն այն: Պատասխա-
նի ետ Յուդա՝ որ մատնելոցն էր զնա՝ եւ
ասէ. Միթէ ես իցեմ, վարդապետ: Ասէ
ցնա. Դու ասացեր:

26 Եւ մինչ դեռ ուտէին նոքա, առ Յիսուս
հաց՝ օրհնեաց եւ եբեկ, եւ ետ աշակեր-
տացն՝ եւ ասէ. Առէք կերայք, այս է մար-
27 մին իմ: Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ,
ետ նոցա եւ ասէ. Արբէք ի դմանէ ամե-
28 նեքին. զի այդ է արիւն իմ նորոյ ուխ-
տի, որ ի վերայ բազմաց հեղու ի թո-
29 ղութիւն մեղաց: Բայց ասեմ ձեզ, ոչ
եւս արբից յայսմ հետէ ի բերոյ որթոյ
մինչեւ ցօրն յայն՝ յորժամ արբից զդա
ընդ ձեզ նոր յարքայութեան հօր իմոյ:

30 Եւ օրհնեցին, եւ ելին ի լեառն Ձի-
թենեաց:

31 Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Ամենե-
քին դուք գայթագղելոց էք յինէն յայսմ
գիշերի. զի գրեալ է՝ թէ հարից զհովիւն՝
32 եւ ցրուեսցին ոչխարք հօտին: Եւ յետ
յառնելոյն իմոյ՝ յառաջեցից քան զձեզ
33 ի Գալիլեա: Պատասխանի ետ Պետրոս
եւ ասէ ցնա. Թէպէտ եւ ամենեքեան

գայթագղեսցին ի քէն, սակայն ես ոչ
գայթագղեցայց։ Ասէ ցնա Յիսուս. Ամէն 34
ասեմ քեզ, զի յայսմ գիշերի՝ մինչչեւ հա-
ւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս։
Ասէ ցնա Պետրոս. Թէ եւ մեռանել հա- 35
սանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց։ Նոյն-
պէս եւ ամենայն աշակերտքն ասէին։

Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ի 36
դեօղ մի՝ որում անուն էր Գեթսեմանի,
եւ ասէ ցնոսա. Նստարուք այդր՝ մինչեւ
երթայց կացից յաղօթս։ Եւ առեալ ընդ 37
իւր զՊետրոս եւ զերկոսին որդիսն Զեբե-
դեայ, սկսաւ տրտմել եւ հոգալ։ Յայն- 38
ժամ ասէ ցնոսա. Տրտում է ոգի իմ մին-
չեւ ի մահ. կացէք աստ՝ եւ սկեցէք
ընդ իս։

Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ 39
անկաւ ի վերայ երեսաց իւրոց, կայր յա-
ղօթս՝ եւ ասէ. Հայր իմ, եթէ հնար է՝
անցցէ բաժակս այս յինէն. բայց ոչ որ-
պէս ես կամիմ, այլ որպէս դու։ Գայ առ 40
աշակերտսն, եւ գտանէ զնոսա ի քուն,
եւ ասէ ցՊետրոս. Այդպէս ո՞չ կարացէք
մի ժամ արթուն կալ ընդ իս. արթուն 41
կացէք եւ աղօթս արարէք՝ զի մի՛ անկա-
նիցիք ի փորձութիւն. հոգիս յօժար է,
բայց մարմինս տկար։ Դարձեալ երկրորդ 42
անգամ չոգաւ եկաց յաղօթս Յիսուս՝ եւ
ասէ. Հայր իմ, եթէ հնար իցէ անցանել

յինէն բաժակիս այսմիկ, առանց թէ ոչ՝
43 արբից զսա. եղիցին կամք քո։ Եւ եկեալ
միւսանգամ եգիտ զնոսա ի քուն, զի էին
44 աչք իւրեանց ծանրացեալք։ Եթող զն-
նոսա՝ եւ գնաց կալ յաղօթս երրորդ ան-
գամ, եւ զնոյն բան ասաց։
45 Յայնժամ գայ առ աշակերտսն եւ ասէ
ցնոսա. Ննջեցէք այսուհետեւ եւ հան-
գերուք. զի ահա հասեալ է ժամ, եւ
որդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց.
46 արիք երթիցուք աստի, զի ահաւասիկ
եհաս որ մատնելոց է զիս։
47 Եւ մինչդեռ նա զայն խօսէր, ահա Յու-
դա՝ մի յերկոտասանիցն եկն, եւ ընդ նմա
ամբոխ բազում սրովք եւ բրօք՝ ի քա-
հանայապետիցն եւ ի ծերոց ժողովր-
48 դեանն։ Եւ որ մատնելոցն էր զնա՝ ետ
նոցա նշան եւ ասէ. Ընդ որում ես համ-
49 բուրեցից՝ նա է, զնա ունիցիք։ Եւ վաղ-
վաղակի մատուցեալ առ Յիսուս ասէ.
Ողջ եր, վարդապետ. եւ համբուրեաց
50 ընդ նմա։ Եւ Յիսուս ասէ ցնա. Ընկեր,
վասն որո՞յ եկիր։ Յայնժամ մատու-
ցեալ արկին ձեռս ի Յիսուս եւ կալան
զնա։
51 Եւ ահա մի ոմն յայնցանէ՝ որ էին ընդ
Յիսուսի, ձգեաց զձեռն եւ եհան զսուր
իւր՝ եւ եհար զծառայ քահանայապե-
52 տին, եւ ի բաց եհան զունկն նորա։ Յայն-

ժամ ասէ ցնա Յիսուս. Դարձո զսուր քո
ի տեղի իւր. զի ամենեքեան որ սուր առ_
նուցուն՝ սրով անկանիցին: Թէ համարի_ 53
ցիս՝ թէ ո՞չ կարիցեմ աղաչել զՀայր իմ,
եւ հասուցանիցէ ինձ այժմ այսր աւելի
քան զերկոտասան գունդս հրեշտակաց:
Այլ զիա՞րդ լնուցուն գիրք՝ եթէ այսպէս 54
պարտ է լինել:

Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխն. 55
Իբրեւ ի վերայ աւազակի ելէք սուսերօք
եւ բրօք՝ ունել զիս. հանապազ առ ձեզ
ի տաճարին նստէի եւ ուսուցանէի, եւ
ոչ կալայք զիս: Այլ այս ամենայն եղեւ՝ 56
զի լցցին գիրք մարգարէիցն: Յայնժամ ա_
շակերտքն ամենեքին թողին զնա եւ փա_
խեան:

Իսկ նոցա կալեալ զՅիսուս՝ ածին առ 57
Կայիափա քահանայապետ՝ ուր դպիրքն
եւ ծերքն ժողովեալ էին: Եւ Պետրոս զհետ 58
նորա երթայր բացագոյն մինչեւ ի սրահ
քահանայապետին. եւ մտեալ ի ներքս
նստէր ընդ սպասաւորսն տեսանել զկա_
տարածն: Իսկ քահանայապետքն եւ 59
ամենայն ատեանն խնդրէին սուտ վկայ_
ութիւն զՅիսուսէ, զի սպանանիցեն ըզ_
նա. եւ ոչ գտանէին ի բազմաց սուտ վը_ 60
կայիցն մատուցելոց: Յետոյ մատուցեալ
երկու սուտ վկայք՝ ասէին, թէ սա ասէր՝ 61
կարող եմ քակել զտաճարն Աստուծոյ,

62 եւ զերիս աւուրս շինել: Եւ յարուցեալ
քահանայապետն ասէ ցնա. Ո՞չ ինչ
պատասխանի, զինչ դոքա ամբաստա_
63 նեն զքէն: Եւ Յիսուս լռեալ կայր: Պա_
տասխանի ետ քահանայապետն եւ ասէ
ցնա. Երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած
կենդանի, զի ասասցես մեզ՝ թէ դու ես
64 Քրիստոսն որդի Աստուծոյ: Ասէ ցնա Յի_
սուս. Դու ասացեր. բայց ասեմ ձեզ,
յայսմ հետէ տեսանիցէք զորդի մարդոյ
նստեալ ընդ աջմէ զօրութեանն՝ եւ ե_
65 կեալ ընդ ամպս երկնից: Յայնժամ քա_
հանայապետն պատառեաց զհանդերձս
իւր, եւ ասէ. Հայհոյեաց. զի՞ եւս պիտոյ
են մեզ վկայք, ահա արդ լուայք զհայ_
66 հոյութիւն դորա. զի՞նչ հաճոյ է ձեզ:
Նոքա պատասխանի ետուն եւ ասեն. Մա_
67 հապարտ է: Յայնժամ թքին ընդ երեսս
նորա, եւ կափէցին զնա. եւ ոմանք ապ_
68 տակեցին, եւ ասեն. Մարգարեաց մեզ,
Քրիստոս, ո՞վ է որ եհար զքեզ:

69 Իսկ Պետրոս նստէր արտաքոյ ի գաւ_
թին. մատեաւ առ նա աղախին մի եւ ա_
սէ. Եւ դու ընդ Յիսուսի գալիլեացւոյ
70 էիր: Նա ուրացաւ առաջի ամենեցուն եւ
71 ասէ. Թէ ոչ գիտեմ զինչ խօսիս: Եւ
իբրեւ ել նա արտաքս քան զդուռնն՝ ե_
տես զնա այլ կին մի, եւ ասէ ցայնոսիկ
որ անդ կային. Եւ սա ընդ Յիսուսի նա_

զովրացւոյ էր։ Եւ դարձեալ ուրացաւ 72
երդմամբ, թէ ոչ գիտեմ զայրն։ Եւ յետ 73
սակաւ միոյ մատուցեալ որք կային անդ՝
ասեն ցՊետրոս. Արդարեւ եւ դու ի նո-
ցանէ ես, քանզի եւ խօսք քո յայտ առնեն
զքեզ։ Յայնժամ սկսաւ նզովել եւ երդ- 74
նուլ, թէ ոչ գիտեմ զայրն. եւ իսկոյն հաւ
խօսեցաւ։ Եւ յիշեաց Պետրոս զբանն Յի- 75
սուսի զոր ասաց, թէ մինչ չեւ հաւու
խօսեալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս. եւ ե-
լեալ արտաքս՝ ելաց դառնապէս։

ԳԼՈՒԽ ԻԷ

Իբրեւ այգ եղեւ, խորհուրդ արարին 1
ամենայն քահանայապետքն եւ ծերք ժո-
ղովրդեանն վասն Յիսուսի՝ սպանանել ըզ-
նա։ Կապեցին զնա, եւ առին գնացին, եւ 2
ետուն ի ձեռս պոնտացւոյ Պիղատոսի դա-
տաւորի։

Յայնժամ տեսեալ Յուդայի՝ որ մատ- 3
նեացն զնա, թէ պարտաւորեցաւ, զղջա-
ցաւ. եւ դարձոյց զարծաթն առ քահա-
նայապետսն եւ ծերս ժողովրդեանն՝ եւ 4
ասէ. Մեղայ զի մատնեցի զարիւն արդար։
Եւ նոքա ասեն. Մեզ չէ փոյթ, դու գի-
տես։ Եւ ընկէց զարծաթն ի տաճարին՝ 5
եւ գնաց, եւ չոգաւ խեղդեցաւ։

6 Իսկ քահանայապետիցն առեալ զար-
ծաթն՝ ասեն. Ոչ է արժան ընդունել
զայդ ի կորբանն, քանզի գինք արեան
7 են։ Խորհուրդ արարեալ՝ գնեցին այնու
զագարակն բրտի ի գերեզման օտարաց։
8 Վասն այնորիկ կոչեցաւ ագարակն այն՝
9 ագարակ արեան՝ մինչեւ ցայսօր։ Յայն-
ժամ լցաւ՝ որ ասացաւն ի ձեռն Երե-
միայի մարգարէի. Եւ առին զերեսուն ար-
ծաթին զգինս վաճառելոյն, զոր արկին
10 յորդւոցն Իսրայէլի, եւ ետուն զնա յա-
գարակն բրտի, որպէս հրամայեաց ինձ
Տէր։

11 Եւ Յիսուս եկաց առաջի դատաւորին.
եհարց զնա դատաւորն եւ ասէ. Դո՞ւ ես
Թագաւորն Հրէից։ Եւ Յիսուս ասէ. Դու
12 ասես։ Եւ ի չարախօսելն նորա ի քահա-
նայապետիցն եւ ի ծերոց, ոչ ինչ ետ
13 պատասխանի։ Յայնժամ ասէ ցնա Պի-
ղատոս. Ո՞չ լսես՝ որչափ զքեզ հակա-
14 ռակ քո վկայեն։ Եւ ոչ ետ նմա պա-
տասխանի՝ եւ ոչ բան մի. մինչեւ զար-
15 մանալ դատաւորին յոյժ։ Բայց ըստ
տօնի սովոր էր դատաւորն արձակել ժո-
ղովրդեանն կապեալ մի՝ զոր կամէին։
16 Ունէին յայնժամ կապեալ մի նշանա-
ւոր, որում անուն էր Յեսու Բարաբբա։
17 Իբրեւ ժողովեցան, ասէ ցնոսա Պիղա-
տոս. Զո՞ կամիք յերկուց աստի՝ զի ար-

ձակեցից ձեզ, զՅեսու Բարաբբա՝ եթէ
զՅիսուս զանուանեալն Քրիստոս։ Քանզի 18
գիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա։
Եւ մինչ նստէր յատենին, առաքեաց 19
առ նա կինն իւր՝ եւ ասէ. Չկայ ինչ քո եւ
արդարոյն այնորիկ, զի բազում անցք ան_
ցին ընդ իս այսօր յանուրջս վասն նորա։
Իսկ քահանայապետքն եւ ծերք հաւա_ 20
նեցուցին զժողովուրդն, զի խնդրեսցեն
զԲարաբբայն՝ եւ զՅիսուս կորուսցեն։
Պատասխանի ետ դատաւորն եւ ասէ ցնո_ 21
սա. Զո՞ կամիք զի արձակեցից ձեզ յեր_
կուց աստի։ Եւ նոքա ասեն. ԶԲարաբբա։
Ասէ ցնոսա Պիղատոս. Իսկ զի՞ արարից զՅի_ 22
սուս զանուանեալն Քրիստոս։ Ասեն ամե_ 23
նեքեան. Խաչեսցի։ Եւ նա ասէ. Զի՞նչ չար
արար։ Եւ նոքա առաւել եւս աղաղակէին
եւ ասէին. Խաչեսցի։
Եւ տեսեալ Պիղատոսի՝ թէ ոչ ինչ օգ_ 24
նէ, այլ առաւել խռովութիւն լինի, ա_
ռեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողո_
վրդեանն՝ եւ ասէ. Քաւեալ եմ ես յա_
րենէ արդարոյդ այդորիկ, դուք գիտա_
ջիք։ Պատասխանի ետ ամենայն ժողո_ 25
վուրդն եւ ասէ. Արիւն դորա ի վերայ մեր
եւ ի վերայ որդւոց մերոց։ Յայնժամ ար_ 26
ձակեաց նոցա զԲարաբբայն, եւ զՅիսուս
գան հարեալ ետ ի ձեռս՝ զի խաչեսցի։
Յայնժամ զինուորք դատաւորին առին 27

զՅիսուս յապարանս, եւ ժողովեցին ի վե_
28 րայ նորա զամենայն զգունդն. մերկացին
զնա. եւ արկին զնովաւ քղամիդ կարմիր.
29 եւ գործեալ պսակ ի փշոյ՝ եդին ի գլուխ
նորա, եւ եղէգն յաջու ձեռին նորա. ի
ծունր իջեալ առաջի նորա՝ կատակէին եւ
30 ասէին. Ողջ եր, թագաւոր հրէից։ Եւ
թքեալ ի նա՝ առնուին զեղեգնն եւ ծե_
31 ծէին զգլուխ նորա։ Եւ յորժամ ձաղե_
ցին զնա, մերկացուցին ի նմանէ զքղա_
միդն՝ եւ ագուցին նմա զիւր հանդերձն.
եւ տարան զնա ի խաչ հանել։
32 Եւ ելեալ արտաքս՝ գտին այր մի կիւ_
րենացի՝ անուն Սիմովն. զնա կալան պա_
33 հակ՝ զի բարձցէ զխաչն նորա։ Եւ եկեալ
ի տեղին անուանեալ Գողգոթա, որ է
34 տեղի կառափելոյ, ետուն նմա ըմպել գի_
նի ընդ լեղի խառնեալ. եւ իբրեւ ճաշա_
կեաց, ոչ կամէր ըմպել։
35 Եւ հանեալ զնա ի խաչ, բաժանեցին
զհանդերձս նորա վիճակաւ. զի լցցի
բանն՝ որ ասացաւ ի մարգարէէն. Բաժա_
նեցին զհանդերձս իմ յիւրեանս, եւ ի
վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկա_
36 նէին։ Եւ նստեալ պահէին զնա։
37 Եւ եդին ի վերայ գլխոյ նորա գրեալ
զվնաս նորա, թէ Այս է Յիսուս թագա_
ւորն հրէից։
38 Յայնժամ հանին ընդ նմա ի խաչ եր_

կուս աւազակս, մի յաջմէ նորա եւ մի
յահեկէ։
Եւ որ անցանէինն՝ հայհոյէին զնա. 39
շարժէին զգլուխս իւրեանց, եւ ասէին. 40
Վա՜հ, որ քակէիր զտաճարն եւ զերիս ա-
ւուրս շինէիր զնա. ապրեցո զքեզ, թէ
որդի ես Աստուծոյ՝ էջ 'ի խաչէդ։ Նոյն- 41
պէս եւ քահանայապետքն ծաղրէին հան-
դերձ դպրօքն եւ ծերովք եւ ասէին. Զայլս 42
ապրեցոյց զինքն ոչ կարէ ապրեցուցանել.
եթէ թագաւոր է Իսրայէլի՝ իջցէ այժմ ի
խաչէդ եւ հաւատասցուք դմա. եթէ յու- 43
սացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ զդա՝
եթէ կամի զդա. քանզի ասաց՝ եթէ Աստու-
ծոյ որդի եմ։ Զնոյն եւ աւազակքն՝ որ 44
խաչեալ էին ընդ նմա, նախատէին զնա։
Եւ ի վեց ժամէ աւուրն խաւար եղեւ 45
ի վերայ ամենայն երկրի մինչեւ ցինն ժամ։
Եւ զինն ժամաւն գոչեաց Յիսուս ի ձայն 46
մեծ եւ ասէ. Էլի, Էլի, լամա սաբաքթա-
նի. այս ինքն է, Աստուած իմ, Աստուած
իմ, ընդէր թողեր զիս։ Ոմանք յայնցանէ 47
որ անդն կային, իբրեւ լուան՝ ասէին.
զԵղիա կարդայ դա։ Եւ վաղվաղակի ըն- 48
թացեալ մի ոմն ի նոցանէ, առ սպունգ լի
քացախով, հարեալ յեղեգան՝ եւ ըմպէր
նմա։ Եւ կէսքն ասէին. Թող տեսցուք ե- 49
թէ գայ Եղիա փրկել զդա։ Եւ Յիսուս 50
դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ, եւ ար-
ձակեաց զոգին։

51 Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ
յերկուս՝ ի վերուստ մինչեւ ի վայր. եւ
երկիր շարժեցաւ, եւ վէմք պատառեցան,
52 եւ գերեզմանք բացան. եւ բազում մար-
53 մինք ննջեցելոց սրբոց յարեան, եւ ելեալ
ի գերեզմանաց յետ յարութեանն նորա՝
մտին ի քաղաքն սուրբ, եւ երեւեցան
բազմաց։
54 Իսկ հարիւրապետն եւ որ ընդ նմա
պահէին զՅիսուս՝ իբրեւ տեսին զշար-
ժումն եւ զեղեալսն, երկեան յոյժ եւ
ասեն. Արդարեւ Աստուծոյ որդի էր սա։
55 Էին անդ կանայք բազումք, կային ի հե-
ռաստանէ եւ հայէին, որք եկին զկնի Յի-
56 սուսի ի Գալիլեէ պաշտել զնա. յորս էր
Մարիամ Մագդաղենացի, եւ Մարիամ
Յակովբայ եւ Յովսեայ մայր, եւ մայր
որդւոցն Զեբեդեայ։
57 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի
մեծատուն յԱրիմաթեայ, որում անուն
էր Յովսէփ, որ աշակերտեցաւ իսկ Յիսու-
58 սի. սա մատուցեալ առ Պիղատոս խնդ-
րեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ Պի-
59 ղատոս հրամայեաց տալ զմարմինն։ Եւ
առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց
60 սուրբ կտաւովք եւ եդ ի նոր գերեզմա-
նի՝ զոր փորեաց ի վիմի. եւ թաւալեցու-
ցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ
61 մի մեծ՝ գնաց։ Անդ էր Մարիամ Մագ-

գաղենացի, եւ միւս Մարիամն. նստէին
հանդէպ գերեզմանին:
62
Եւ ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբա-
թուն, ժողովեցան քահանայապետքն եւ
63
փարիսեցիքն առ Պիղատոս, եւ ասեն. Տէր,
յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր մինչ
կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառ-
64
նեմ: Արդ հրամայեա զգուշանալ գերեզ-
մանին մինչեւ ցերիս աւուրս, գուցէ ե-
կեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զը-
նա, եւ ասիցեն ժողովրդեանն, թէ յա-
րեաւ ի մեռելոց, եւ լինիցի յետին մոլո-
65
րութիւնն չար քան զառաջինն: Ասէ ցնո-
սա Պիղատոս. Ունիք զզօրականն, եր-
թայք զգուշացարուք որպէս եւ գիտէք:
66
Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմա-
նին, եւ կնքեցին զվէմն, հանդերձ զօրա-
կանօք:

ԳԼՈՒԽ ԻԸ

1
Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լու-
սանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագ-
դաղենացի եւ միւս Մարիամն տեսանել
2
զգերեզմանն: Եւ ահա շարժումն մեծ ե-
ղեւ, զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից՝
մատուցեալ ի բաց թաւալեցոյց զվէմն ի
3
դրաց անտի, եւ նստէր ի վերայ նորա. եւ
էր տեսիլ նորա իբրեւ զփայլակն, եւ հան-

4 դերձ նորա սպիտակ իբրեւ զձիւն: Եւ
յահէ անտի նորա խռովեցան պահա-
5 պանքն, եւ եղեն իբրեւ զմեռեալս: Պա-
տասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցկա-
նայսն. Մի երկնչիք դուք, գիտեմ զի ըզ-
6 Յիսուս զխաչելեալն խնդրէք. չէ աստ,
քանզի յարեաւ՝ որպէս ասացն. եկայք
7 տեսէք զտեղին ուր կայր: Եւ վաղվաղա-
կի երթայք ասացէք աշակերտացն նորա
թէ յարեաւ. եւ ահա յառաջանայ քան
զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա.
8 ահա ասացի ձեզ: Եւ ելեալ վաղվաղակի
ի գերեզմանէ անտի ահիւ եւ խնդու-
թեամբ բազմաւ՝ ընթանային պատմել ա-
շակերտացն:
9
Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս եւ
ասէ. Ողջ էք: Եւ նոքա մատուցեալ կալան
10 զոտս նորա, եւ երկիր պագին նմա: Յայն-
ժամ ասէ ցնոսա Յիսուս. Մի երկնչիք.
երթայք ասացէք եղբարցն իմոց՝ զի եր-
թիցեն ի Գալիլեա եւ անդ տեսցեն զիս:
11 Իբրեւ նոքա գնացին, ահա ոմանք ի զօ-
րականացն եկին ի քաղաքն, եւ պատմե-
ցին քահանայապետիցն զամենայն որ ինչ
12 եղեւն: Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծե-
րովքն, խորհուրդ առեալ՝ արծաթ յոյժ
13 ետուն զօրականացն եւ ասեն. Ասաս-
ջիք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշե-
րի գողացան զնա, մինչ մեք ի քուն էաք.

եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք 14
հաւանեցուցուք զնա, եւ զձեզ անհոգս արաս-
ցուք։ Եւ նոքա առեալ զարծաթն, արա- 15
րին որպէս ուսանն. եւ ել համբաւս այս
ի Հրեից մինչեւ ցայսօր։

Իսկ մետասան աշակերտքն գնացին ի 16
Գալիլեա ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ
նոցա Յիսուս. իբրեւ տեսին զնա՝ երկիր 17
պագին նմա, եւ ոմանք յերկուացան։ Եւ 18
մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա
եւ ասէ. Տուաւ ինձ ամենայն իշխանու-
թիւն յերկինս եւ յերկրի. որպէս առա-
քեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ։
Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զա- 19
մենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յա-
նուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։
Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ 20
պատուիրեցի ձեզ։ Եւ ահաւասիկ ես ընդ
ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչեւ ի կա-
տարած աշխարհի։

N°1404.

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստո-
սի Որդւոյ Աստուծոյ:
2 Որպէս եւ գրեալ է ի մարգարէս. Ահա-
ւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առա-
ջի քո, որ հանդերձեսցէ զճանապարհս
3 քո առաջի քո: Ձայն բարբառոյ յանա-
պատի. պատրաստ արարէք զճանա-
պարհս Տեառն, եւ ուղիղս արարէք զշա-
ւիղս նորա:
4 Եւ եղեւ՝ զի Յովհաննէս մկրտէր յա-
նապատի, եւ քարոզէր մկրտութիւն ա-
պաշխարութեան ի թողութիւն մեղաց:
5 Եւ երթայր առ նա ամենայն աշխարհն
Հրէաստանի, եւ Երուսաղեմացիք ամե-
նեքեան. եւ մկրտէին ի նմանէ ի Յորդա-
նան գետ՝ խոստովանեալ զմեղս իւրեանց:
6 Եւ էր Յովհաննէս զգեցեալ ստեւ ուղ-

տու, եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. եւ
կերակուր նորա մարախ եւ մեղր վայրե-
նի: Քարոզէր եւ ասէր. Գայ զօրագոյնն 7
քան զիս զկնի իմ, որում չեմ բաւական
խոնարհել լուծանել զխրացս կօշկաց նո-
րա: Ես մկրտեցի զձեզ ջրով, եւ նա մկր- 8
տեսցէ զձեզ Հոգւովն սրբով:
Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ եկն Յի- 9
սուս ի Նազարեթէ Գալիլեացւոց, եւ մկ-
րտեցաւ ի Յովհաննէ ի Յորդանան: Եւ 10
նոյնժամայն ընդ վերանալ ի ջրոյն, ետես
ցելեալ զերկինս, եւ զՀոգին Աստուծոյ
իբրեւ զաղաւնի՝ զի իջանէր ի վերայ նո-
րա: Ձայն եղեւ յերկնից եւ ասէ. Դու 11
ես որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ:
Եւ նոյնժամայն հոգին հանէ զնա յա- 12
նապատ: Եւ էր նա անդ զաւուրս քա- 13
ռասուն փորձեալ ի սատանայէ. եւ էր
ընդ գազանս. եւ հրեշտակք պաշտէին զնա:
ԲԲ. Եւ յետ մատնելոյն Յովհաննու՝ 14
եկն Յիսուս ի Գալիլեա. քարոզէր զաւե-
տարանն Աստուծոյ՝ եւ ասէր, Թէ կատա- 15
րեալ է ժամանակ, եւ հասեալ է արքա-
յութիւնն Աստուծոյ. ապաշխարեցէք,
եւ հաւատացէք յաւետարանն:
Իբրեւ անցանէր առ ծովեզերբն Գալի- 16
լեացւոց, ետես զՍիմոն եւ զԱնդրէաս
եղբայր Սիմոնի, զի արկեալ էր նոցա
ուռկանս ի ծով. քանզի ձկնորսք էին: Եւ 17

ասէ ցնոսա Յիսուս. Եկայք զկնի իմ, եւ
արարից զձեզ լինել որսորդս մարդկան:
18 Եւ վաղվաղակի թողեալ զուռկանսն,
գնացին զհետ նորա:
19 Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յա-
ռաջ, ետես զՅակովբոս Զեբեդեայ եւ
զՅովհաննէս եղբայր նորա, եւ զնոսա ի
նաւին՝ մինչ կազմէին զուռկանս, եւ կո-
20 չեաց զնոսա: Եւ վաղվաղակի թողեալ
զհայր իւրեանց Զեբեդէոս ի նաւին վարձ-
կանօքն հանդերձ, գնացին զհետ նորա:
21 ԲԳ. Եւ մտանեն ի Կափառնաում, եւ
իսկ եւ իսկ ի շաբաթուն մտեալ ի ժո-
22 ղովուրդն ուսուցանէր զնոսա: Եւ զար-
մանային ընդ վարդապետութիւն նորա,
զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխանու-
թեամբ, եւ ոչ որպէս դպիրքն:
23 Եւ էր ի ժողովրդեանն նոցա այր մի,
յորում այս պիղծ գոյր ի նմա. որ աղա-
24 ղակեաց եւ ասէ. Թոյլ տուր, զի՞ կայ մեր
եւ քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորու-
սանել զմեզ. գիտեմք զքեզ ով ես, սուրբդ
25 Աստուծոյ: Սաստեաց ի նա Յիսուս եւ
26 ասէ. կարկեաց՝ եւ ել ի դմանէ: Եւ զար-
կոյց զնա այսն պիղծ. եւ աղաղակեաց ի
27 ձայն մեծ, եւ ել ի նմանէ: Եւ զարմա-
ցան ամենեքին, մինչեւ հծծել ընդ մի-
մեանս եւ ասել. Զի՞նչ է այս նոր վարդա-
պետութիւնս, զի իշխանութեամբ եւ այ-

սոց պղծոց սաստէ, եւ հնազանդին նմա:
Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն 28
Գալիլեացւոց:

Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն, 29
եկն ի տուն Սիմովնի եւ Անդրէայ՝ Յակով-
բաւ եւ Յովհաննու հանդերձ: Եւ զոքանչ 30
Սիմովնի դնէր ջերմացեալ. եւ վաղվաղա-
կի ասեն ցնա վասն նորա: Եւ մատուցեալ 31
յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա. եւ
եթող զնա տենդն՝ եւ պաշտէր զնոսա:

Եւ իբրեւ երեկոյ եղեւ ի մտանել արե- 32
գականն բերէին առ նա զամենայն հիւան-
դս եւ զդիւահարս. եւ էր ամենայն քա- 33
ղաքն ժողովեալ առ դուրսն: Եւ բժշկեաց 34
բազում հիւանդս ի պէսպէս ախտից, եւ
դեւս բազումս եհան, եւ ոչ տայր խօսել
դիւացն, զի գիտէին զնա թէ Քրիստոս է:

ԲԴ. Եւ ընդ այգն ընդ առաւօտն յա- 35
րուցեալ ել եւ գնաց յանապատ տեղի,
եւ անդ կայր յաղօթս. եւ գնաց զհետ 36
նորա Սիմովն՝ եւ որ ընդ նմայն էին. եւ 37
իբրեւ գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենե-
քին խնդրեն զքեզ: Եւ ասէ ցնոսա. Եկայք 38
երթիցուք եւ յայլ մօտաւոր գիւղաքա-
ղաքսն, զի եւ անդ քարոզեցից. զի յայս
իսկ եկեալ եմ: Եւ քարոզէր ի ժողո- 39
վուրդս նոցա ընդ ամենայն Գալիլեացիս,
եւ դեւս հանէր:

Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ ի ծունր 40

իջանէր եւ ասէր. եթէ կամիս, կարող ես
41 զիս սրբել: Իսկ Յիսուս գթացեալ՝ ձգեաց
զձեռն, մերձեցաւ ի նա՝ եւ ասէ ցնա. կա-
42 միմ, սրբեաց: Եւ իբրեւ ասացն ցնա,
վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտու-
43 թիւնն՝ եւ սրբեցաւ: Եւ սաստեալ նմա՝
եհան զնա արտաքս վաղվաղակի, եւ ա-
44 սէ. Զգո՛յշ լեր, մի՛ ումեք ինչ ասիցես. այլ
երթ ցո՛յց զքեզ քահանային. եւ մատո՛
վասն սրբութեան քո պատարագ՝ զոր
հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն
45 նոցա: Եւ նա ելեալ սկսաւ քարոզել
յոյժ՝ եւ հռչակ հարկանել զբանն, մինչ
ոչ եւս կարող լինել նմա յայտնապէս ի
քաղաք մտանել, այլ արտաքոյ յանա-
պատ տեղիս էր. եւ գային առ նա յա-
մենայն կողմանց:

ԳԼՈՒԽ Բ

1 ԲԵ. Եւ մտեալ դարձեալ ի Կափառ-
նաում՝ յետ աւուրց լուր եղեւ եթէ ի
2 տան է. եւ ժողովեցան բազումք՝ մինչեւ
տեղի եւս ոչ լինել՝ եւ ոչ առ դրանն. եւ
խօսէր նոցա զբանն:
3 Եւ գային առ նա՝ բերէին անդամա-
4 լոյծ մի բարձեալ ի չորից: Եւ իբրեւ ոչ
կարէին մերձենալ առ նա յամբոխէ ան-

տի, քակեցին զյարկն՝ ուր էր Յիսուս,
եւ բացեալ զառաստաղն՝ իջուցին զմա֊
հիճսն յորում կայր անդամալոյծն: Եւ տե֊ 5
սեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցան֊
դամալոյծն. Որդեակ, թողեալ լիցին քեզ
մեղք քո: Եւ էին ոմանք ի դպրաց անտի՝ 6
որ անդ նստէին, եւ խորհէին ի սիրտս իւ֊
րեանց. զի՞նչ է այս՝ որ խօսի սա զհայհո֊ 7
յութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ
ոչ մի Աստուած: Եւ գիտաց Յիսուս յոգի 8
իւր՝ թէ այնպէս խորհին ի սիրտս իւ֊
րեանց, եւ ասէ. Զի՞ խորհիք զայդ ի սիրտս
ձեր: Զի՞նչ դիւրին է. ասել ցանդամա֊ 9
լոյծն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ
ասել՝ արի, առ զմահիճս քո եւ երթ ի տուն
քո: Այլ զի գիտասջիք եթէ իշխանու֊ 10
թիւն ունի որդի մարդոյ ի վերայ երկրի
թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն. Քեզ 11
ասեմ, արի, առ զմահիճս քո՝ եւ երթ ի
տուն քո: Եւ յարեաւ վաղվաղակի առեալ 12
զմահիճսն, ել առաջի ամենեցուն. մինչեւ
զարմանալ ամենեցուն, եւ փառաւոր առ֊
նել զԱստուած՝ եւ ասել, թէ այսպիսի
ինչ երբէք ո՛չ տեսաք:

ԲԶ. Եւ ել դարձեալ ի ծովեզրն, եւ 13
ամենայն ժողովուրդն գայր առ նա. եւ
ուսուցանէր զնոսա:

Եւ մինչդեռ անցանէր, ետես զՂեւի 14
Ալփեայ՝ զի նստէր ի մաքսաւորութեան

եւ ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ. եւ յարուցեալ
գնաց զկնի նորա:

15 Եւ եղեւ ի բազմելն նորա ի տան նո֊
րա, եւ բազում մաքսաւորք բազմեալ
էին ընդ Յիսուսի՝ եւ ընդ աշակերտան նո֊
րա. քանզի էին բազումք որ երթային
16 զհետ նորա: Իսկ դպիրքն եւ փարիսեցիք
իբրեւ տեսին՝ թէ ուտէ ընդ մաքսաւորս
եւ ընդ մեղաւորս, ասեն ցաշակերտան
նորա. Զի՞ է՝ զի ընդ մեղաւորս եւ ընդ
17 մաքսաւորս ուտէք եւ ըմպէք: Իբրեւ
լուաւ Յիսուս՝ ասէ ցնոսա. Ոչ ինչ է պի֊
տոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց, եւ ոչ
եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս:

18 Եւ էին աշակերտքն Յովհաննու՝ եւ
փարիսեցիքն ի պահս, գան եւ ասեն
ցնա. Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու եւ
փարիսեցիքն պահեն, եւ քո աշակերտքդ
19 ոչ պահեն: Եւ ասէ ցնոսա Յիսուս. Միթէ
մարթ ինչ իցէ որդւոց առագաստի մինչ
ընդ նոսա իցէ փեսայն՝ պահել. որչափ
ընդ իւրեանս ունիցին զփեսայն՝ ոչ է
20 մարթ պահել: Այլ եկեսցեն աւուրք՝
յորժամ վերասցի ի նոցանէ փեսայն,
21 ապա պահեսցեն յաւուրն յայնմիկ: Ոչ
ոք կապերտ նոր անթափ արկանէ ի վե֊
րայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ առ֊
նու լրութեամբն իւրով նորն ի հնոյ ան֊
22 տի, եւ չար եւս պատառումն լինի: Եւ

ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս.
ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին զտիկսն,
գինին հեղու, եւ տիկքն կորնչին. այլ
գինի նոր ի տիկս նորս արկանելի է:

Եւ եղեւ նմա ի շաբաթու անցանել 23
ընդ արտորայս. եւ աշակերտքն ի գնալն
իւրեանց՝ սկսան հասկ կորզել եւ ուտել:
Եւ փարիսեցիքն ասէին ցնա. Տե՛ս զի՞նչ գոր- 24
ծեն աշակերտքն քո ի շաբաթու՝ զոր չէ
արժան: Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ո՞չ եր- 25
բէք իցէ ընթերցեալ ձեր զոր արարն Դա-
ւիթ, յորժամ պիտոյն եղեւ՝ եւ քաղ-
ցեաւ նա եւ որ ընդ նմայն էին: Զիա՞րդ 26
եմուտ ի տունն Աստուծոյ առ Աբիաթա-
րաւ քահանայապետիւ, եւ զհացսն զա-
ռաջաւորութեան եկեր՝ եւ ետ այնոցիկ
որ ընդ նմայն էին, զոր ոչ էր օրէն ուտել,
բայց միայն քահանայիցն: Եւ ասէ ցնո- 27
սա. Շաբաթ՝ վասն մարդոյ եղեւ, եւ ոչ
եթէ մարդ վասն շաբաթու: Ապա ու- 28
րեմն՝ Տէր է որդի մարդոյ եւ շաբաթու:

ԳԼՈՒԽ Գ.

Եւ եմուտ միւսանգամ ի ժողովուրդն, 1
եւ էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսա-
ցեալ էր: Եւ սպասէին նմա եթէ բժշկիցէ 2
զնա ի շաբաթուն՝ զի չարախօսեսցեն զնը-

3 մանէ: Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսա-
4 ցեալ էր. Ա՛րի, անց ի մէջ: Եւ ասէ ցնո-
սա. Զի՞նչ արժան է ի շաբաթու, բարի՞
ինչ գործել՝ եթէ չար առնել. ոգի՞ մի
ապրեցուցանել եթէ կորուսանել. եւ նո-
5 քա լռեցին: Եւ հայեցեալ Յիսուսի ըզ-
նոքօք լի ցասմամբ, տրտմեալ վասն կու-
րութեան սրտից նոցա՝ ասէ ցայրն. Ձգեա՛
զձեռն քո. եւ նա ձգեաց, եւ ողջացաւ
ձեռն նորա:

6 գ.կ. Եւ ելեալ արտաքս վաղվաղակի
փարիսեցիքն հերովդիանոսօքն հանդերձ,
խորհուրդ առնէին վասն նորա՝ թէ զիա՞րդ
7 կորուսցեն զնա: Իսկ Յիսուս աշակերտօքն
իւրովք գնաց ի ծովեզրն. եւ բազում ժո-
ղովուրդ ի Գալիլեացւոց երթային զհետ
8 նորա. եւ ի Հրէաստանէ, եւ յԵրուսաղէ-
մէ, եւ յայնկոյս Յորդանանու, եւ որք
ի Տիւրոսէ եւ ի Սիդոնէ, բազում ժո-
ղովուրդ իբրեւ լսէին՝ որչափ ինչ առնէր,
9 գային առ նա: Եւ ասէ ցաշակերտսն
իւր, զի նաւակ մի պատրաստական կայցէ
նմա վասն ամբոխին՝ զի մի՛ նեղեսցեն ըզ-
10 նա: Քանզի զբազումս բժշկեաց. մինչ
գալ խռնել զնովաւ՝ զի մերձեսցին առ
11 նա, որք ունէին ախտս ինչ: Եւ այսք
պիղծք յորժամ տեսանէին զնա, անկա-
նէին առաջի նորա, աղաղակէին եւ ա-
12 սէին, թէ դու ես որդին Աստուծոյ. եւ

նա յոյժ սաստէր նոցա, զի մի՛ յայտնի
առնիցեն զնա։

ԳԲ. Ելանէ ի լեառն, եւ կոչէ առ ինքն 13
զորս ինքն կամեցաւ, եւ չոգան առ նա։
Եւ արար երկոտասանս՝ զի իցեն զնովաւ, 14
եւ զի առաքեսցէ զնոսա քարոզել, եւ ու- 15
նել իշխանութիւն բժշկելոյ զցաւս եւ
հանելոյ զդեւս։ Եւ եդ անուն Սիմոնի՝ 16
Պետրոս. եւ Յակովբու Զեբեդեայ՝ եւ 17
Յովհաննու եղբօրն Յակովբայ, եդ նոցա
անուանս Բանէրեգէս, որ է՝ որդիք որո-
տման. եւ զԱնդրէաս, եւ զՓիլիպպոս, եւ 18
զԲարթուղիմէոս, եւ զՄատթէոս զմաք-
սաւորն, եւ զԹովմաս, եւ զՅակովբոս
Ալփեայ, եւ զԹադէոս, եւ զՍիմովն Կա-
նանացի. եւ զՅուդա Իսկարիովտացի, որ 19
եւ մատնեաց զնա։

ԳԳ. Գան ի տուն, եւ գայ միւսանգամ 20
ընդ նոսա ժողովուրդն. մինչ զի եւ հաց
եւս ոչ ժամանել ուտել նոցա։ Եւ իբրեւ 21
լուան որ իւրքն էին՝ ելին ունել զնա, զի
համարէին թէ մոլեգնեալ իցէ։ Եւ դը- 22
պիրքն՝ որ յԵրուսաղեմէ իջեալ էին, ա-
սէին թէ Բէեղզեբուղ գոյ ի դմա, եւ իշ-
խանաւ դիւացն հանէ դա զդեւս։ Եւ կո- 23
չեցեալ զնոսա առ ինքն, առակօք խօսէր
ընդ նոսա. Զիա՞րդ կարէ սատանայ զսատա-
նայ հանել։ Եւ արդ եթէ թագաւորու- 24
թիւն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ

25 կալ թագաւորութիւնն այն։ Եւ եթէ
տուն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ
26 կալ տունն։ Եւ եթէ սատանայ ի վերայ
անձին իւրոյ յարեաւ եւ բաժանեալ է,
27 ոչ կարէ կալ, այլ վախճանեալ է։ Այլ
ոչ ոք կարէ զկարասի հզօրին՝ մտեալ ի
տուն նորա՝ աւար հարկանել, եթէ ոչ
նախ զհզօրն կապիցէ, եւ ապա զտուն նո-
րա աւար հարկանիցէ։

28 Ամէն ասեմ ձեզ, զի ամենայն թողցի
որդւոց մարդկան մեղք եւ հայհոյու-
29 թիւնք՝ որչափ եւ հայհոյիցեն. բայց որ
հայհոյեսցէ զՀոգին սուրբ, ոչ ունիցի
թողութիւն յաւիտեան. այլ պարտա-
30 պան լիցի յաւիտենից մեղաց։ Զի ա-
սէին, թէ այս պիղծ գոյ ի նմա։

31 ԳԴ. Գան եղբարքն եւ մայր նորա, եւ
արտաքոյ կացեալ՝ յղեցին եւ կոչէին ըզ-
32 նա։ Եւ անդ ժողովուրդն շուրջ զնովաւ
նստէր. եւ իբրեւ ասացին ցնա. Ահաւա-
սիկ մայր քո եւ եղբարք քո կան արտա-
33 քոյ, եւ խնդրեն զքեզ. պատասխանի ետ
նոցա եւ ասէ. Ո՞վ է իմ մայր, կամ եղ-
34 բարք։ Հայեցաւ շուրջ զիւրեւ յաշա-
կերտսն զի նստէին, եւ ասէ. Ահաւասիկ
35 մայր իմ եւ եղբարք իմ։ Զի որ առնիցէ
զկամս Աստուծոյ, նա է իմ եղբայր եւ
քոյր եւ մայր։

ԳԼՈՒԽ Դ

ԳԵ․ Դարձեալ սկսաւ ուսուցանել առ 1
ծովեզերբն․ եւ խռնեցան զնովաւ ժողո-
վուրդք բազումք, մինչեւ ի նաւ մտանել
նմա, եւ նստել ի ծովուն․ եւ ամենայն
ժողովուրդն զծովեզերբն զցամաքն ու-
նէին։ Եւ ուսուցանէր զնոսա առակօք 2
բազում ինչ։ Եւ ասէր նոցա ի վարդա-
պետութեան իւրում․ Լուարուք․ ահա 3
ել սերմանող սերմանել։ Եւ եղեւ ի սեր- 4
մանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ,
եւ եկն թռչուն եւ եկեր զնա։ Եւ այլն 5
անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող
բազում եւ վաղվաղակի բուսաւ, քանզի
ոչ գոյր հիւթ երկրին․ եւ յորժամ ծա- 6
գեաց արեւ՝ ջեռաւ, եւ զի ոչ գոյին ար-
մատք՝ ցամաքեցաւ։ Եւ այլն անկաւ ի 7
մէջ փշոց․ ելին փուշքն եւ հեղձուցին
զնա․ եւ պտուղ ոչ ետ։ Եւ այլն անկաւ 8
յերկիր բարուոք․ եւ ելեալ աճեցեալ տայր
պտուղ, եւ բերէր ընդ միոյ երեսուն եւ
ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարիւր։
Եւ ասէր․ Որ ունիցի ականջս լսելոյ՝ 9
լուիցէ։

ԳԶ․ Եւ իբրեւ եղեւ առանձինն՝ հար- 10
ցին ցնա, որ զնովաւն էին աշակերտօքն
հանդերձ՝ զառակսն։ Եւ ասէ ցնոսա․ Ձեզ 11

տուեալ է գիտել զխորհուրդս արքայու-
թեան Աստուծոյ․ բայց նոցա որ արտա-
12 քինքն են՝ ամենայն ինչ առակօք լինի․ զի
տեսանելով տեսցեն եւ մի՛ տեսցեն, եւ լը-
սելով լուիցեն եւ մի՛ իմասցին․ զի մի՛ եր-
13 բէք դարձցին՝ եւ թողցի նոցա։ Եւ ասէ
ցնոսա․ Ո՛չ գիտէք զառակս զայս, եւ
14 զիա՞րդ զամենայն առակսն գիտիցէք․ Որ
15 սերմանէն՝ զբանն սերմանէ։ Եւ նոքա են
որ առ ճանապարհաւն, ուր բանն սեր-
մանի․ եւ յորժամ լսեն զնա, գայ սա-
տանայ եւ հանէ զբանն սերմանեալ ի
16 սիրտս նոցա։ Եւ նոքա են որ յապառա-
ժին սերմանեցան, որք յորժամ լսիցեն
զբանն, եւ վաղվաղակի խնդութեամբ ըն-
17 դունին․ եւ զի ոչ ունին արմատս յան-
ձինս, այլ առ ժամանակ մի են․ ապա ի
հասանել նեղութեան կամ հալածման
վասն բանին, վաղվաղակի գայթագղին։
18 Իսկ որ ի մէջ փշոցն սերմանեցան նոքա
19 են, որ իբրեւ զբանն լսեն, եւ հոգք աշ-
խարհիս եւ պատրանք մեծութեան մը-
տանեն եւ հեղձուցանեն զբանն՝ եւ անպը-
20 տուղ լինի։ Եւ նոքա են որ յերկիրն բա-
րիոք սերմանեցան, որք լսեն զբանն՝ եւ
ընդունին եւ տան պտուղ՝ ընդ միոյ ե-
րեսուն եւ ընդ միոյ վաթսուն եւ ընդ
միոյ հարիւր։
21 ԳԷ․ Եւ ասէ ցնոսա․ Մի՛թէ գա՞յ ճրագ

զի ընդ գրուանաւ դնիցի կամ ընդ մահ-
ճօք. ո՞չ ապաքէն ի վերայ աշտանակի դնի-
ցի: Զի չէ ինչ ի ծածուկ որ թէ ոչ յայտ- 22
նեսցի. եւ ոչ եղեւ ինչ գաղտնի, եթէ ոչ
ի յայտ գայցէ: Եթէ ոք ունիցի ականջս 23
լսելոյ՝ լուիցէ: Եւ ասէ ցնոսա. Տեսէք 24
զինչ լսէքդ, եւ յաւելցի ձեզ որոց լսէքդ:
Որով չափով չափէք՝ նովին չափեսցի
ձեզ: Որ ոք ունիցի՝ տացի նմա. եւ որ 25
ոչն ունիցի՝ եւ զոր ունիցին՝ բարձցի ի նը-
մանէ:

ԴԿ. Եւ ասէր. Այսպէս է արքայու- 26
թիւն Աստուծոյ. որպէս զի այր մի ար-
կանիցէ սերմանիս յերկիր, եւ ննջիցէ եւ 27
յառնիցէ զցայգ եւ զցերեկ, եւ սերմա-
նիքն բուսանիցին եւ աճիցեն. եւ նա ոչ
գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. 28
նախ զխոտն եւ ապա զհասկն, ապա ըզ-
ցորեանն ատոք ի հասկին: Այլ յորժամ 29
տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի
մանգաղ. զի հասեալ են հունձք:

Եւ ասէր. Ո՞ւմ նմանեցուսցուք զար- 30
քայութիւնն Աստուծոյ, կամ որո՞վ առա-
կաւ առակեսցուք զնա: Որպէս հատն 31
մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յեր-
կրի, փոքրագոյն է քան զամենայն սերմա-
նիս որ են յերկրի. եւ յորժամ սերմա- 32
նիցի՝ բուսանի եւ լինի մեծ քան զամե-
նայն բանջար, եւ արձակէ ոստս մեծա-

մեծս, մինչեւ բաւական լինել ընդ հովա-
33 նեաւ նորա թռչնոց երկնից բնակել: Եւ
այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա ըզ-
34 բանն, որպէս կարող լինէին լսել. եւ ա-
ռանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա,
բայց առանձինն աշակերտացն իւրոց
մեկնէր զամենայն:

35 ԴԲ. Եւ ասէ ցնոսա յաւուրն յայն-
միկ՝ իբրեւ ընդ երեկս լինէր. Եկա՛յք
36 անցցուք յայն կոյս: Թողուն զժողո-
վուրդն, եւ առնուն զնա նաւաւն հան-
դերձ, եւ այլ եւս նաւսն՝ որ էին ընդ
37 նմա: Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ, եւ
զալիսն ի նաւն զեղոյր, մինչ գրեթէ լի
38 իսկ լինել: Եւ ինքն ննջէր ի խելս նաւուն
ի վերայ բարձի. զարթուցանէին զնա եւ
ասէին. Վարդապետ, ոչինչ է քեզ փոյթ,
39 զի կորնչիմք աւասիկ: Եւ զարթուցեալ
սաստեաց հողմոյն. եւ ծովուն ասէ.
Դադարեա՛ կարկեա՛ց. եւ դադարեաց
հողմն, եւ եղեւ խաղաղութիւն մեծ:
40 Եւ ասէ ցնոսա. Ընդէ՞ր այդպէս վատա-
սիրտք էք. չեւ եւս ունիք հաւատս: Եւ
երկեան երկիւղ մեծ, եւ ասէին ցմի-
մեանս. ո՞ ոք արդեօք իցէ սա, զի եւ
հողմ եւ ծով հնազանդին սմա:

ԳԼՈՒԽ Ե

Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն 1
Գերգեսացւոց։ Եւ ընդ ելանելն նորա ի 2
նաւէ անտի, պատահեաց նմա այր մի ի
գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ. որոյ 3
եւ բնակութիւն իւր էր ի գերեզմանս
էր. եւ ոչ շղթայիւք ոք եւս կարէր կա-
պել զնա, վասն բազում անգամ ոտնա- 4
կապօք եւ շղթայիւք կապելոյ, եւ խզե-
լոյ ի նմանէ զշղթայսն, եւ զոտնակապսն
խորտակելոյ. եւ ոչ ոք կարէր պարտել
զնա. քանզի հանապազ զցայգ զցերեկ ի 5
գերեզմանս եւ ի լերինս աղաղակէր, եւ
կոծէր զանձն իւր քարամբք։ Իբրեւ ե- 6
տես զՅիսուս ի հեռաստանէ, ընթացաւ
եւ երկիր եպագ նմա։ Աղաղակեաց ի ձայն 7
մեծ՝ եւ ասէ. Զի՞ կայ իմ եւ քո Յիսուս՝
որդի Աստուծոյ բարձրելոյ. երդմնեցու-
ցանեմ զքեզ յԱստուած, մի՛ տանջեր
զիս։ Քանզի ասէր ցնա. Ել այդ պիղծ ի 8
մարդոյ այտի։ Եւ հարցանէր ցնա՝ թէ 9
զի՞նչ անուն է քո. եւ ասէ ցնա. Լեգէոն
անուն է իմ, քանզի բազումք եմք։ Եւ աղա- 10
չէին զնա յոյժ, զի մի՛ առաքեսցէ զնոսա
արտաքս քան զաշխարհն։ Եւ անդ էր առ 11
լերամբն երամակ մի խոզաց արօտական
մեծ։ Աղաչեցին զնա ամենայն դեւքն եւ 12

ասեն. Առաքեա զմեզ ի խոզսն, զի մտ-
13 ցուք ի նոսա։ Եւ հրամայեաց նոցա։ Եւ
իբրեւ ելին այսքն պիղծք՝ մտին ի խոզսն,
եւ դիմեաց երամակն ի դարէ անտի ի
ծովն. էին իբրեւ երկու հազարք, եւ
14 հեղձնուին ի ծովուն։ Եւ խոզարածքն
փախեան, եւ պատմեցին ի քաղաքին եւ
յագարակս, եւ ելին տեսանել զինչ իցէ
15 որ գործեցաւն։ Գան առ Յիսուս, եւ տե-
սանեն զդիւահարն զի նստէր զգեցեալ
եւ զգաստացեալ, որ ունէր զլեգէոնն,
16 եւ զահի հարան։ Եւ պատմեցին նոցա
որոց տեսեալն էր, թէ զինչ եղեւ այսա-
17 հարին, եւ զինչ վասն խոզիցն։ Եւ սկը-
սան աղաչել զնա գնալ ի սահմանաց նո-
18 ցա։ Եւ իբրեւ եմուտ նա ի նաւն, աղա-
19 չէր զնա դիւահարն՝ զի ընդ նմա իցէ. եւ
Յիսուս ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա.
Երթ ի տուն քո առ ընտանիս քո, եւ
պատմեա նոցա որ ինչ միանգամ Տէր ա-
20 րար քեզ՝ եւ ողորմեցաւ քեզ։ Եւ չոգաւ՝
եւ սկսաւ քարոզել ի Դեկապոլին, զոր
ինչ արար նմա Յիսուս, եւ ամենեքին
զարմանային։

21 ԴԳ. Եւ իբրեւ անց Յիսուս միւսան-
գամ յայն կողմն՝ ժողովեցաւ առ նա ժո-
ղովուրդ բազում, եւ էր առ ծովեզերբն։
22 Եւ ահա մի ի ժողովրդապետաց անտի գայր,
որում անուն էր Յայրոս. եւ իբրեւ ե-

տես զնա անկաւ առ ոտս նորա. աղաչէր 23
զնա յոյժ եւ ասէր, թէ դուստր նորա
մերձ է ի մահ, զի եկեալ դնիցես նմա ձեռն,
որպէս զի ապրեսցի եւ կեցցէ: Եւ գնաց 24
ընդ նմա. երթայր եւ ժողովուրդ բազում
զհետ նորա, եւ նեղէին զնա:

Եւ կին մի էր ի տեռատեսութեան ա- 25
րեան զերկոտասան ամ. եւ յոյժ վշտա- 26
ցեալ ի բազում բժշկաց, եւ ծախեալ
զինչս իւր զամենայն եւ չէր ինչ օգտեալ,
այլ եւս առաւել վայրացեալ: Իբրեւ լը- 27
ւաւ զՅիսուսէ՝ եկն ի մէջ ամբոխին յե-
տոյ եւ բուռն եհար զհանդերձէ նորա.
քանզի խորհէր ի միտ, թէ միայն մերձե- 28
ցայց ի հանդերձս նորա՝ փրկեցայց: Եւ 29
վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան
նորա. եւ գիտաց ի մարմին իւր թէ բը-
ժշկեցաւ ի տանջանացն: Եւ անդէն վաղ- 30
վաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զզօ-
րութիւնն որ ել ի նմանէ. դարձաւ յամ-
բոխն եւ ասէ. Ո՞վ մերձեցաւ ի հանդերձս
իմ: Եւ ասեն ցնա աշակերտքն. Տեսանես 31
զի ամբոխդ նեղէ զքեզ, եւ ասես թէ ո՞վ
մերձեցաւ ի հանդերձս իմ: Եւ շուրջ 32
հայէր տեսանել թէ ո՞վ զայն արար: Եւ 33
կինն զարհուրեալ եւ դողացեալ վասն ո-
րոյ զաղտն արար, քանզի գիտէր զինչ
եղեւ նմա, եկն անկաւ առաջի նորա, եւ
ասաց զամենայն իրսն ստուգութեամբ:

34 Եւ Յիսուս ասէ ցնա. Դուստր հաւատք
քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղու-
թիւն, եւ եղիջիր ողջ ի տանջանաց քոց:
35 ԴԴ. Մինչդեռ նա զայն խօսէր, գան
ոմանք ի տանէ ժողովրդապետին՝ եւ ա-
սեն, թէ դուստրն քո մեռաւ, զի՞ եւս
36 աշխատ առնես զվարդապետդ: Իսկ Յի-
սուս իբրեւ լուաւ զբանն ասացեալ, ա-
սէ ցժողովրդապետն. Մի՛ երկնչիր, բայց
37 միայն հաւատա: Եւ ոչ զոք եթող ընդ
իւր երթալ, բայց միայն զՊետրոս եւ ըզ-
Յակովբոս եւ զՅովհաննէս զեղբայրն Յա-
38 կոբայ: Գայ ի տուն ժողովրդապետին,
եւ տեսանէ ամբոխ յոյժ եւ լալականս,
39 եւ աղաղակ յոյժ: Եւ մտեալ ի ներքս՝
ասէ ցնոսա. Զի՞ խռովեալ էք եւ լայք,
40 մանուկն ոչ է մեռեալ, այլ ննջէ: Եւ
ծաղր առնէին զնա. եւ նորա հանեալ
արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր
զհայր մանկանն եւ զմայր, եւ զնոսա որ
ընդ նմայն էին, եւ մտանէ ուր դնէր մա-
41 նուկն: Եւ կալեալ զձեռանէ մանկանն,
ասէ ցնա. Տալիթա կումի, որ թարգմա-
42 նի, աղջիկ դու՝ քեզ ասեմ, արի: Եւ վաղ-
վաղակի յարեաւ աղջիկն եւ գնայր,
քանզի էր ամաց իբրեւ երկոտասանից.
43 եւ զարմացան մեծաւ զարմանալեօք: Եւ
պատուէր տայր նոցա յոյժ, զի մի՛ ոք
գիտասցէ զայն. եւ ասաց տալ նմա ուտել:

ԳԼՈՒԽ Զ

ԳԵ· Եւ ել անտի եկն ի գաւառ իւր. եւ 1
երթային զհետ նորա աշակերտքն իւր։
Եւ եղեւ ի շաբաթուն՝ սկսաւ ուսուցա_ 2
նել ի ժողովրդեանն. եւ բազումք իբրեւ
լսէին՝ զարմանային ընդ վարդապետու_
թիւն նորա, եւ ասէին. Ուստի՞ է սմա այս,
կամ զի՞նչ է իմաստութիւնս որ տուեալ
է սմա, զի զօրութիւնք այսպիսիք ի ձե_
ռաց սորա լինին։ Ո՞չ սա է հիւ_ 3
սանն, եւ որդին Մարեմայ, եղբայր Յա_
կոբայ եւ Յովսեայ եւ Յուդայի եւ Սիմո_
նի, եւ չիցե՞ն քորք դորա աստ առ մեզ.
եւ գայթագղէին ի նա։ Եւ ասէ ցնոսա. 4
Ո՞չ է մարգարէ անարգ, բայց եթէ ի գա_
ւառի իւրում եւ յազգատոհմի եւ ի
տան իւրում։ Եւ ոչ կարէր անդ եւ ոչ մի 5
ինչ զօրութիւն առնել, բայց սակաւ հի_
ւանդաց ձեռն եդեալ բժշկէր զնոսա։
Եւ զարմանայր վասն անհաւատութեան 6
նոցա։

ԳԶ· Եւ շրջէր շուրջ զգաւառօքն, եւ ու_
սուցանէր։ Եւ կոչեաց առ ինքն զերկո_ 7
տասանսն, եւ սկսաւ առաքել զնոսա եր_
կուս երկուս. եւ տայր նոցա իշխանու_
թիւն ի վերայ այսոց պղծոց։ Եւ պա_ 8

տուիրեաց նոցա զի մի ինչ բարձցեն ի
ճանապարհ, բայց միայն գաւազան, մի
9 պարկ, մի հաց, մի պղինձ ի գօտիս. այլ
ագանել հողաթափս, եւ մի զգենուցուք,
10 ասէ, երկուս պարեգօտս։ Եւ ասէր ցնո_
սա. Յոր տուն մտանիցէք, անդէն օթե_
ւանս կալջիք մինչեւ ելանիցէք անտի։
11 Եւ որ ոչ ընկալցին զձեզ, եւ ոչ լուիցեն
ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթա_
փեսջիք զփոշի ոտից ձերոց ի վկայութիւն
12 նոցա։ Եւ ելեալ քարոզէին զի ապաշ_
13 խարեսցեն։ Եւ դեւս բազումս հանէին.
եւ օծանէին իւղով զբազում հիւանդս
եւ բժշկէին զնոսա։
14 ԳԷ· Եւ լուաւ արքայ Հերովդէս, քան_
զի յայտնի եղեւ անուն նորա. եւ ասէր,
թէ Յովհաննէս Մկրտիչ յարեաւ ի մե_
ռելոց, եւ վասն այնորիկ զօրութիւնք
15 լինին նովաւ։ Այլք ասէին թէ Եղիա է,
իսկ այլքն թէ մարգարէ է, կամ թէ ի_
16 բրեւ զմի ի մարգարէից։ Իբրեւ լուաւ Հե_
րովդէս, ասէ. Զորոյ ես զգլուխն հատի
զՅովհաննու, սա է նա, յարեաւ ի մե_
17 ռելոց։ Զի ինքն Հերովդէս առաքեաց
կալաւ զՅովհաննէս, եւ կապեաց զնա եւ
եդ ի բանտի վասն Հերովդիայ կնոջ Փի_
լիպպոսի եղբօր նորա, զի նա կին արար
18 զնա։ Քանզի ասէր Յովհաննէս ցՀերով_
դէս, թէ ոչ է օրէն քեզ ունել զկին եղ_

բօր քո: Եւ Հերովդիա ոխացեալ էր ընդ 19
նմա, եւ կամէր սպանանել զնա, եւ ոչ
կարէր: Զի Հերովդէս երկնչէր ի Յովհան- 20
նէ. քանզի գիտէր զնա այր արդար եւ
սուրբ, եւ սպասէր նմա. եւ լուեալ ի
նմանէ բազում ինչ առնէր, եւ քաղցրու-
թեամբ լսէր նմա: Իբրեւ օր մի լինէր պա- 21
րապոյ, յորժամ ընթրիս տայր Հերով-
դէս յաւուր ծննդոց իւրոց նախարարաց
իւրոց եւ հազարապետաց եւ մեծամե-
ծաց Գալիլեացւոց. եւ ի մտանել դըս- 22
տերն Հերովդիայ եւ ի կաքաւել, հաճոյ
եղեւ Հերովդի եւ բազմականացն: Ասէ
թագաւորն ցաղջիկն. Խնդրեա՛ յինէն զոր
ինչ կամիս; եւ տաց քեզ: Եւ երդուաւ 23
նմա բազում անգամ, թէ զոր ինչ եւ
խնդրեսցես դու յինէն տաց քեզ, մինչեւ
ցկէս թագաւորութեան իմոյ: Նա ելեալ 24
ասէ ցմայր իւր. Զի՞նչ խնդրեցից. եւ Նա
ասէ. Զգլուխն Յովհաննու Մկրտչի: Եւ 25
մտեալ անդրէն փութանակի առ թագա-
ւորն՝ ասէ. Կամիմ զի այժմ տացես ինձ
վաղվաղակի ի վերայ սկտեղ զգլուխն Յով-
հաննու Մկրտչի: Եւ տրտմեցաւ յոյժ 26
թագաւորն. այլ վասն երդմանցն եւ կոչ-
նականացն, ոչ կամեցաւ անարգել զնա.
եւ առաքեաց վաղվաղակի թագաւորն դա- 27
հիճ, եւ հրամայեաց բերել զգլուխն նորա.
եւ չոգաւ գլխատեաց զնա ի բանտին, եւ ե- 28

բեր զգլուխն նորա սկտեղբ՝ եւ ետ ցաղ-
ջիկն, եւ աղջիկն տարաւ ետ մօր իւրում:
29 Իբրեւ լուան աշակերտքն նորա, եկին
բարձին զմարմինն եւ եդին ի գերեզ-
մանի:

30 ԵԿ. Ժողովեցան առաքեալքն առ Յի-
սուս, եւ պատմեցին նմա զամենայն ինչ
31 զոր արարին եւ զոր ուսուցին: Եւ ասէ
ցնոսա Յիսուս. Եկայք դուք առանձինն
յանապատ տեղի, եւ հանգիջիք սակաւ
մի. զի էին բազումք որ երթային եւ
գային, եւ հաց անգամ չժամանէին ու-
32 տել: Եւ գնացին նաւու յանապատ տե-
33 ղի առանձինն: Եւ տեսին զնոսա զի եր-
թային, եւ զգացին բազումք. եւ հե-
տի յամենայն քաղաքաց խուռն ընթա-
նային անդր, եւ մերձենային առ նոսա:
34 Եւ ելեալ ետես ամբոխ բազում, եւ գը-
թացաւ ի նոսա, զի էին իբրեւ ոչխարք՝
որոց ոչ իցէ հովիւ. եւ սկսաւ ուսուցա-
35 նել զնոսա յոյժ: Եւ իբրեւ բազում ժամ
եղեւ, մատուցեալ աշակերտքն ասէին.
Տեղիս անապատ է, մինչեւ աւուր կայ,
36 արձակեա՛ զժողովուրդս, զի երթեալ
շուրջ յագարակս եւ ի գեօղս՝ գնեսցեն
իւրեանց զինչ ուտիցեն, զի աստ ուտել
37 ինչ ոչ ունին: Նա պատասխանի ետ եւ
ասէ ցնոսա. Դուք տուք դոցա ուտել.
ասեն ցնա. Երթիցուք գնեսցուք երկե-

րիւր դահեկանի հաց, եւ տացուք դոցա
ուտել։ Ասէ ցնոսա. քանի՞ նկանակ ու- 38
նիք. երթա՛յք տեսէ՛ք. Իբրեւ գիտացին,
ասեն ցնա. հինգ, եւ երկուս ձկունս։ Եւ 39
հրամայեաց նոցա բազմել երախանս երա-
խանս ի վերայ դալար խոտոյ։ Եւ բազ- 40
մեցան դասք դասք՝ ուր հարիւր եւ ուր
յիսուն։ Եւ առեալ զհինգ նկանակն եւ 41
զերկուս ձկունսն, հայեցաւ յերկինս,
օրհնեաց, մանրեաց զնկանակսն եւ ետ
ցաշակերտսն զի արկցեն նոցա. եւ զեր-
կուս ձկունսն բաշխեաց ամենեցուն։ Կե- 42
րան եւ յագեցան. եւ բարձին զնշխարսն 43
երկոտասան սակառի լի, եւ ի ձկանց ան-
տի։ Եւ էին որ կերանն՝ իբրեւ արք հինգ 44
հազար։

ԾԲ. Եւ նոյն ժամայն ճեպեաց զաշա- 45
կերտսն մտանել ի նաւ, եւ յառաջագոյն
քան զնա երթալ յայնկոյս ի Բեթսայիդա,
մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ։ Եւ 46
հրաժարեալ ի նոցանէ ել ի լեառն կալ
յաղօթս։ Եւ իբրեւ երեկոյ եղեւ, էր 47
նաւն ի մէջ ծովուն, եւ ինքն ի ցամաքի։
Եւ ետես զնոսա հողմակոծեալս ի վա- 48
րելն, զի էր հողմն ընդդէմ նոցա. եւ զչոր-
րորդ պահու գիշերոյն գայ առ նոսա գնա-
լով ի վերայ ծովուն. եւ կամէր զանց առ-
նել առ նոքօք։ Նոքա իբրեւ տեսին զի գը- 49
նայր ի վերայ ծովուն, համարեցան թէ

առաջօք ինչ լինիցի, եւ զաղաղակ բարձին։
50 Քանզի ամենեքեան տեսին զնա՝ եւ խռո-
վեցան. եւ նա անդէն վաղվաղակի խօ-
սեցաւ ընդ նոսա եւ ասէ. քաջալերեցա-
51 րուք, ես եմ, մի՛ երկնչիք։ Եւ ել ի նաւն
առ նոսա, եւ դադարեաց հողմն։ Եւ ա-
ռաւել եւս յիմարեալ էին ի միտս իւ-
52 րեանց, եւ զարմանային յոյժ. քանզի եւ
ի վերայ հացին ոչ իմացան, զի էր սիրտ
նոցա թմբրեալ։

53 Եւ իբրեւ անցին յայնկոյս, եկին յեր-
54 կիրն Գեննեսարէթ։ Եւ իբրեւ ելին ի նա-
ւէ անտի, իսկ եւ իսկ ծանեան զնա արք
55 տեղւոյն այնորիկ. եւ ընթացեալ այսր
անդր ընդ ամենայն գաւառն, սկսան
մահճօք բերել զհիւանդս, ուր լսէին թէ
56 անդ իցէ։ Եւ ուր եւ մտանէր ի գեօղս
կամ ի քաղաքս կամ յագարակս, ի հրա-
պարակս դնէին զախտաժէտս, եւ աղա-
չէին զնա. զի գոնէ ի քղանցս հանդերձից
նորա մերձենայցեն. եւ որ միանգամ
մերձեցանն՝ փրկեցան։

ԳԼՈՒԽ Է

1 ԾԳ. Եւ ժողովեցան առ նա փարիսե-
ցիքն եւ ոմանք ի դպրացն՝ որ եկեալ էին
2 յԵրուսաղեմէ։ Եւ տեսեալ զոմանս յա-
շակերտացն նորա, զի խառնակ ձեռօք,

այսինքն է՝ անլուայ ուտէին հաց, բամբա-
սէցին: Զի փարիսեցիքն եւ ամենայն Հր- 3
բեայք՝ եթէ ոչ բռնալիր լուանան զձեռս,
հաց ոչ ուտեն. քանզի ունէին զաւանդու-
թիւն ծերոցն. եւ ի հրապարակէ մտեալ՝ 4
եթէ ոչ նախ մկրտիցին, ոչ ուտեն. եւ այլ
ինչ բազում է՝ զոր ընկալան ունել, մկր-
տութիւնս բաժակաց եւ ստամանաց եւ
պղնձեաց եւ մահճաց: Ապա հարցանեն 5
զնա փարիսեցիքն եւ դպիրք՝ թէ ընդէր
աշակերտքն քո ոչ գնան ըստ աւանդու-
թեան ծերոցն, այլ խառնակ ձեռօք հաց
ուտեն: Նա պատասխանի ետ եւ ա- 6
սէ ցնոսա. Թէ բարւոք մարգարէացաւ
Եսայի վասն ձեր կեղծաւորաց, որպէս ա-
սաց. Ժողովուրդս այս շրթամբք մեծարէ
զիս, եւ սիրտք նոցա հեռացեալ ի բացեայ
են յինէն: Զուր պաշտեն զիս. ուսուցա- 7
նեն վարդապետութիւնս զմարդկան պա-
տուիրեալս: Թողեալ զպատուիրանն Ա- 8
ստուծոյ, ունիք զմարդկան աւանդութիւն,
մկրտութիւնս ստամանաց եւ բաժակաց,
եւ այլոց նմանեաց սոցին առնէք բազում:
Եւ ասէ ցնոսա. Բարւոք խոտէք զպատուի- 9
րանն Աստուծոյ, զի զձեր աւանդութիւնն
հաստատիցէք: Զի Մովսէս ասէ. Պատո- 10
ւեա՛ զհայր քո եւ զմայր. եւ որ չարա-
խօսեսցէ զհօրէ կամ զմօրէ՝ մահու վախ-
ճանեսցի: Եւ դուք ասէք. Եթէ ասիցէ ոք 11

ցհայր կամ զմայր կորբան, որ է պատա-
12 րագ, զոր յինէն օգտեսցիս. եւ ո՛չ եւս
տայք թոյլ նմա առնել ինչ հօրն կամ
13 մօր: Եւ անարգէք զբանն Աստուծոյ ձե-
րով աւանդութեամբն, զոր աւանդեցիք.
եւ բազում ինչ այլ, որ այսմ նման է՝ առ-
14 նէք: Եւ կոչեալ առ ինքն զամենայն ժո-
ղովուրդն, ասէ ցնոսա. Լուարո՛ւք ինձ
15 ամենեքեան եւ ի միտ առէք. Ոչինչ ար-
տաքուստ ի մարդ մտեալ՝ եթէ կարիցէ
պղծել զնա. այլ որ ելանէ ի նմանէ, այն
16 է որ պղծէ զմարդն: Որ ունիցի ականջս
լսելոյ լուիցէ:
17 ԽԴ. Եւ իբրեւ եմուտ ի տուն յամբո-
խէ անտի, հարցանէին զնա աշակերտքն
18 վասն առակին: Եւ ասէ ցնոսա. Այդպէս
եւ դուք անմիտ էք. ոչ իմանայք եթէ
ամենայն որ արտաքուստ ի ներքս մտա-
19 նէ ի մարդ, ոչ կարէ զնա պղծել. զի ոչ
եթէ ի սիրտ նորա մտանէ, այլ յորո-
վայն՝ եւ արտաքս ելանէ. եւ սրբէ զա-
20 նայն կերակուրսն: Եւ ասէր, թէ որ ինչ
21 ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ. զի ի
ներքուստ ի սրտէ մարդկան խորհուրդք
չարութեան ելանեն. շնութիւնք, պոռն-
22 կութիւնք, գողութիւնք, սպանութիւնք,
ագահութիւնք, չարութիւնք, նենգու-
թիւնք, գիջութիւնք, չարակնութիւն,
հայհոյութիւն, ամբարտաւանութիւն,

անզգամութիւն: Այս ամենայն չարիք ի 23
ներքուստ ելանեն, եւ պղծեն զմարդ:
ԵԵ. Եւ անտի յարուցեալ՝ եկն ի սահ- 24
մանս Տիւրոսի եւ Սիդոնի. եւ մտեալ ի
տուն ոչ ումեք կամէր յայտնել, եւ ոչ կա-
րաց ծածկել: Լուաւ կին մի զնմանէ, ո- 25
րոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղ-
ծոյ. եկն անկաւ առաջի նորա: Եւ կինն 26
էր հեթանոս՝ փիւնիկ ասորի յազգէ. եւ
աղաչէր զնա՝ զի զդեւն հանցէ ի դստերէ
նորա: Եւ Յիսուս ասէ ցնա. Թոյլ տուր, 27
նախ յագեսցին մանկունք. զի ոչ է բարւոք
առնուլ զհաց մանկանց եւ արկանել
շանց: Նա պատասխանի ետ եւ ասէ. Տէր, 28
եւ շունք ի փշրանաց սեղանոյ մանկանցն
կերակրին: Եւ ասէ ցնա. Վասն այդր բա- 29
նի երթ, ել դեւն ի դստերէ քումմէ: Գը- 30
նաց ի տուն իւր, եւ եգիտ ելեալ զդեւն,
եւ զդուստրն, զի անկեալ դնէր ի մա-
հիճս:

Եւ ելեալ միւսանգամ ի սահմանացն 31
Տիւրոսի եւ Սիդոնի, եւ եկն ի ծովեզրն
Գալիլեացւոց ի մէջ սահմանացն Դեկա-
պոլեայ: Եւ բերին առաջի նորա խուլ մի 32
եւ համր. եւ աղաչէին զի ձեռն դիցէ ի
վերայ նորա: Եւ առեալ զնա մեկուսի 33
յամբոխէ անտի, արկ զմատունս իւր
ընդ ականջս նորա եւ եթուք անդր. եւ
կալաւ զլեզուէ նորա, հայեցաւ յերկինս 34

յօդւոց եհան՝ եւ ասէ. Եփփաթա՝ որ
35 է բացիր: Եւ նոյն ժամայն բացան լսե-
լիք նորա, եւ լուծան կապանք լեզուի
36 նորա, եւ խօսէր ուղիղ: Եւ պատուի-
րեաց նոցա զի մի՛ ումեք ասիցեն. եւ որ-
չափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս
37 առաւել քարոզէին. եւ եւս քան զեւս
զարմանային եւ ասէին. Զամենայն ինչ
բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ
եւ համրոց խօսել:

ԳԼՈՒԽ Ը

1 ԵԶ. Յաւուրսն յայնոսիկ դարձեալ
ժողովուրդ բազում էր, եւ ինչ ոչ ու-
նէին ուտել. կոչեաց զաշակերտս իւր՝ եւ
2 ասէ ցնոսա. Գթամ ես ի վերայ ժողո-
վըրդեանդ, զի արդ երեք աւուրք են՝
մինչ առ իս են, եւ ոչ ունին զինչ ուտի-
3 ցեն: Եւ եթէ արձակեմ զդոսա նօթիս
ի տունս իւրեանց՝ նքթիցեն ի ճանապար-
հի. զի ոմանք ի դոցանէ ի հեռաստանէ
4 եկեալ են: Պատասխանի ետուն նմա ա-
շակերտքն նորա. Ուստի՞ կարէ ոք յագե-
ցուցանել զդոսա հացիւ յանապատի
5 աստ: Եւ հարցանէր զնոսա. Քանի՞ նկա-
նակ հաց ունիք. եւ նոքա ասեն. Եօթն:
6 Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի
վերայ երկրի. եւ առեալ զեօթն նկա-

նակն՝ գոհացաւ, եբեկ եւ ետուր ցաշա-
կերտսն զի արկցեն. եւ արկին առաջի ժո-
ղովրդեանն: Եւ ձկունս սակաւ ունէին. 7
եւ զայն եւս օրհնեաց, եւ հրամայեաց ար-
կանել: Կերան եւ յագեցան. եւ բարձին 8
զնշխարս կոտորոցն՝ եօթն զամբիղ: Եւ 9
էին որք կերանն իբրեւ չորք հազարք. եւ
արձակեաց զնոսա:

ԵԼ. Եւ նոյն ժամայն մտեալ ի նաւ 10
համագերձ աշակերտօքն՝ եկն ի կողմանս
Դաղմանունեայ: Ելին փարիսեցիքն եւ 11
սկսան վիճել ընդ նմա, եւ խնդրէին ի նը-
մանէ նշան յերկնից՝ փորձելով զնա: Եւ 12
զայրացաւ յոգի իւր՝ եւ ասէ. Զի՞ է զի
ազգս այս նշան խնդրէ. ամէն ասեմ ձեզ,
թէ տացի նշան ազգիս այսմիկ:

Եթող զնոսա, դարձեալ եմուտ ի նաւ՝ եւ 13
գնաց յայնկոյս: Եւ մոռացան հաց բառ- 14
նալ. բայց միայն մի նկանակ ունէին ընդ
իւրեանս ի նաւին: Եւ պատուիրէր նոցա 15
եւ ասէր. Զգոյշ եղերուք ի խմորոյ անտի
փարիսեցւոց՝ եւ ի խմորոյ հերովդիանո-
սաց: Եւ խորհէին ընդ միմեանս եւ ա- 16
սէին, թէ զի հացս ոչ ունիմք: Գիտաց Յի- 17
սուս եւ ասէ ցնոսա. Զի՞ խորհիք ի միտս
ձեր թերահաւատք՝ թէ հաց ոչ ունիք.
տակաւին ո՞չ իմանայք եւ ո՞չ յիշէք. առ-
շութիւն ունի զսիրտս ձեր. աչք գոն եւ 18
ոչ տեսանէք, ականջք են եւ ոչ լսէք, եւ

ոչ իմանայք տակաւին. եւ ոչ յիշէք,
19 յորժամ զհինգ նկանակն ի հինգ հա-
զարսն, եւ քանի՞ սակառի լի բարձէք ըզ-
20 կոտորոցն. եւ ասեն. Երկոտասան: Եւ
յորժամ զեօթն նկանակն ի չորս հա-
զարսն, քանի՞ զամբիղ լի բարձէք զկոտո-
21 րոցն. եւ նոքա ասեն. Եօթն: Եւ ասէ
ցնոսա. Իսկ զիա՞րդ ոչ իմանայք:
22 Գան ի Բեթսայիդա. եւ ածեն առաջի
նոցա կոյր մի, եւ աղաչէին զնա՝ զի մեր-
23 ձեսցի ի նա: Եւ առեալ զձեռանէ կու-
րին՝ եհան արտաքոյ շինին, եթուք յաչս
նորա, եւ ձեռն եդ ի վերայ նորա. եւ հար-
24 ցանէր ցնա՝ թէ տեսանիցէ՞ ինչ: Բացաւ
եւ ասէր. Տեսանեմ զմարդիկս՝ զի շրջին
25 իբրեւ զծառս: Դարձեալ եդ ձեռս ի վե-
րայ աչաց նորա եբաց, եւ տեսանէր. ող-
ջացաւ՝ եւ տեսանէր համարձակ զամե-
26 նայն: Արձակեաց զնա ի տուն իւր՝ եւ ա-
սէ. Ի շէնդ մի՛ մտանիցես, այլ երթ ի տուն
քո. եւ յորժամ ի շէնն մտանիցես՝ մի՛
ումեք ասիցես ի շինին:
27 ԶԿ. Եւ ել Յիսուս աշակերտօքն հան-
դերձ ի շէնս Կեսարեայ Փիլիպպեայ. եւ
ի ճանապարհին հարցանէր ցաշակերտսն
եւ ասէր. Զո՞ ասեն զինէն մար-
28 դիկն թէ իցեմ: Նոքա ետուն պատաս-
խանի եւ ասեն. զՅովհաննէս Մկրտիչ,
եւ այլք զԵղիա, եւ այլք զմի ոք ի մար-

գարէից մնալ։ Ասէ ցնոսա. Իսկ դուք 29
զո՞ ուստէք ասէք զինէն թէ իցեմ։ Պա-
տասխանի ետ Պետրոս, և ասէ ցնա.
Դու ես Քրիստոսն։ Եւ սաստեաց ի նո- 30
սա՝ զի մի՛ ումեք ասիցեն զնմանէ։ Եւ 31
սկսաւ ուսուցանել զնոսա, թէ պարտ
է որդւոյ մարդոյ բազում չարչարանս
ընդունել, և անարգել յերիցանց և ի
դպրաց, և մեռանել, և յերիր աւուր
յառնել. և համարձակ զբանն խօսե-
ցաւ։ Եւ առեալ զնա մեկուսի Պետրոսի՝ 32
սկսաւ սաստել նմա։ Եւ նա դարձաւ ե- 33
տես զաշակերտսն, սաստեաց Պետրոսի
և ասէ. Երթ յետս իմ սատանայ, զի ոչ
խորհիս դու զաստուածոյսն այլ զմարդ-
կան։ Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն 34
աշակերտօքն հանդերձ՝ ասէ ցնոսա. Եթէ
ոք կամի գալ զկնի իմ՝ ուրասցի զանձն
իւր, և բարձցէ զխաչ իւր, և եկեսցէ
զկնի իմ։ Զի որ կամիցի ապրեցուցանել 35
զանձն իւր, կորուսցէ զնա. և որ կորուս-
ցէ զանձն իւր վասն աւետարանին, ապ-
րեցուսցէ զնա։ Զի՞նչ օգուտ է մարդոյ 36
եթէ զաշխարհս ամենայն շահեսցի, և
զանձն իւր տուժեսցի։ Քանզի զի՞նչ տա- 37
ցէ մարդ փոխանակ անձին իւրոյ։ Զի որ 38
ոք ամօթ համարեսցի զիս և զբանս իմ
ի շնացող և ի մեղաւոր ազգիս յայսմիկ,
և որդի մարդոյ յամօթ արասցէ զնա,

յորժամ եկեսցէ փառօք հօր իւրոյ և
39 հրեշտակաց սրբոց։ Եւ ասէ ցնոսա. Ամէն
ասեմ ձեզ. զի են ոմանք ի սոցանէ որ
աստ կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝
մինչև տեսցեն զարքայութիւն Աստու-
ծոյ եկեալ զօրութեամբ։

ԳԼՈՒԽ Թ.

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր
զՅիսուս զՊետրոս և զՅակոբոս և զՅով-
հաննէս, և հանէ զնոսա ի լեառն մի
բարձր առանձինն. և յայլակերպս եղև
2 առաջի նոցա։ Եւ ձորձք նորա եղեն փայ-
լուն սպիտակ յոյժ, որպէս թափիչք եր-
կրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցա-
3 նել։ Եւ երևեցաւ նոցա Եղիա Մովսէսիւ
4 հանդերձ, և խօսէին ընդ Յիսուսի։ Պա-
տասխանի ետ Պետրոս՝ և ասէ ցՅիսուս.
Ռաբբի, բարւոք է մեզ աստ լինել. և ա-
րասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ և մի
5 Մովսէսի և մի Եղիայի։ Քանզի ոչ գիտէր
6 զինչ խօսէր, զի զարհուրեալ էին։ Եւ
եղև ամպ մի հովանի ի վերայ նոցա.
ձայն եղև յամպոյ անտի, և ասէ. Դա
7 է որդի իմ սիրելի, դմա լուարուք։ Եւ
յանկարծակի հայեցեալ այսր անդր՝ ոչ
ևս զոք ուրեք տեսին, բայց միայն զՅի-
8 սուս ընդ իւրեանս։ Եւ մինչդեռ իջա-

նէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա
զի մի՛ ումեք պատմեսցեն զոր տեսին,
բայց յորժամ որդի մարդոյ ի մեռելոց
յարիցէ։ Եւ նոքա զբանն ի մտի ունէին, 9
եւ խնդրէին ընդ միմեանս՝ թէ զի՞նչ իցէ
ի մեռելոցն յառնել։ Հարցին զնա եւ ա- 10
սեն. Զի՞նչ է այն զոր դպիրքն ասեն՝ եթէ
նախ Եղիայի պարտ է գալ։ Նա պատաս- 11
խանի ետ նոցա եւ ասէ. Եղիա նախ ե-
կեալ յարդարեսցէ զամենայն. իսկ զիա՞րդ
գրեալ է զորդւոյ մարդոյ, զի բազում ինչ
չարչարեսցի եւ անգոսնեսցի։ Այլ ես ա- 12
սեմ ձեզ. Եթէ Եղիա եկն եւ արարին ընդ
նմա զի՛նչ եւ կամեցան, որպէս եւ գրեալ
է վասն նորա։

ԶԲ. Եւ եկեալ առ աշակերտսն, տե- 13
սին ամբոխ շուրջ զնոքօք, եւ զդպիրսն՝
զի վիճէին ընդ նոսա։ Եւ վաղվաղակի ա- 14
մենայն ժողովուրդն իբրեւ տեսին զնա՝
զարմացան, եւ ընդ առաջ ընթացեալ ող-
ջոյն տային նմա։ Եւ եհարց ցնոսա՝ թէ 15
զի՞նչ վիճէիք ընդ նոսա։ Պատասխանի ետ 16
մի ոմն ի ժողովրդենէն եւ ասէ. Վարդա-
պետ, ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի
այս համր. եւ ուր հասանէ՝ զարկուցանէ 17
զնա. եւ փրփրէ եւ կրճտէ զատամունս
իւր եւ ցամաքի. եւ ասացի ցաշակերտսն
քո զի հանցեն, եւ ոչ կարացին հանել
զնա։ Պատասխանի ետ նոցա եւ ասէ. Ո՛վ 18

ազգ անհաւատ, մինչեւ յե՞րբ իցեմ առ
ձեզ, մինչեւ ցե՞րբ անսայցեմ ձեզ. ածէք
19 զնա առ իս։ Եւ ածին զնա առ նա. իբրեւ
ետես զնա այսն, վաղվաղակի շարժլեաց
զնա. եւ անկեալ յերկիր թաւալէր եւ
20 փրփրեայր։ Եհարց ցհայր նորա եւ ա-
սէ. Քանի՞ ժամանակք են յորմէհետէ
այդ եղեւ դմա։ Եւ նա ասէ. ի մանկու-
21 թենէ. բազում անգամ ի հուր արկանէ
զդա եւ ի ջուր՝ զի կորուսցէ. արդ եթէ
կարող ինչ ես, օգնեա մեզ, Տէր, գթա-
22 ցեալ ի վերայ մեր։ Եւ Յիսուս ասէ ցնա.
Ասացեր թէ կարող ես. ամենայն ինչ հնա-
23 րաւոր է այնմ, որ հաւատայն։ Եւ վաղ-
վաղակի աղաղակեաց հայր մանկանն՝ եւ
ասէ. Հաւատամ, օգնեա անհաւատու-
24 թեանս իմում։ Իբրեւ ետես Յիսուս եթէ
կուտի ժողովուրդն ի վերայ, սաստեաց
այսոյն պղծոյ եւ ասէ. Համրդ եւ խուլ
այս, ես տամ քեզ հրաման, ել ի դմա-
25 նէ, եւ այլ եւս մի՛ մտանիցես ի դա։ Եւ
աղաղակեաց՝ եւ յոյժ լլկեաց զնա, եւ
ել. եւ եղեւ պատանեակն իբրեւ զմե-
ռեալ, մինչեւ բազմաց իսկ ասել թէ մե-
26 ռաւ։ Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա՝
27 յարոյց զնա, եւ կանգնեցաւ։ Եւ իբրեւ
եմուտ նա ի տուն, աշակերտքն առան-
ձինն հարցին ցնա. Մեք ընդէ՞ր ոչ կարա-
28 ցաք հանել զնա։ Եւ ասէ ցնոսա. Այդ

ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք եւ
աղօթիւք։
ՂԳ. Եւ անտի ելեալ անցանէին ա- 29
Գալիլեացւովք. եւ ոչ կամէր եթէ ոք գի-
տասցէ։ Քանզի ուսուցանէր զաշակերտ- 30
սն իւր՝ եւ ասէր ցնոսա, թէ որդի մար-
դոյ մատնելոց է ի ձեռս մարդկան, եւ
սպանցեն զնա. եւ իբրեւ սպանցի՝ յերիր
աւուր յարիցէ։ Եւ նոքա ոչ գիտէին զ- 31
բանն, եւ երկնչէին հարցանել զնա։
Եկն ի Կափառնաում. եւ իբրեւ եմուտ 32
ի տուն, հարցանէր ցնոսա. Զի՞նչ վիճէիք
զճանապարհայն ընդ միմեանս։ Եւ նոքա 33
լուռ լինէին. քանզի ընդ միմեանս վիճէին
ի ճանապարհին թէ ո՞վ մեծ իցէ։ Եւ ի- 34
բրեւ նստաւ՝ կոչեաց զերկոտասանսն եւ
ասէ ցնոսա. Եթէ ոք կամի առաջին լինել,
եղիցի ամենեցուն կրտսեր եւ ամենեցուն
սպասաւոր։ Եւ առեալ մանուկ մի կա- 35
ցոյց ի մէջ նոցա. եւ ընկալեալ զնա ի
գիրկս իւր, ասէ ցնոսա. Որ միանգամ 36
յայսպիսի մանկանց ընկալցի յանուն
իմ, զիս ընդունի. եւ որ զիս ընդունիցի,
ոչ զիս ընդունի՝ այլ զայն որ առաքեացն
զիս։ Պատասխանի ետ նմա Յովհաննէս եւ 37
ասէ. Վարդապետ, տեսաք զոմն զի յա-
նուն քո դեւս հանէր՝ եւ զմեր հետ ոչ
շրջէր, եւ արգելաք զնա։ Եւ նա ասէ. 38
Մի արգելուք զնա. զի ոչ ոք է որ առնէ

զօրութիւնս յանուն իմ, եւ կարիցէ հայ-
39 հոյել զիս։ Զի որ ոչն է ընդ մեզ հակա-
40 ռակ՝ ի մեր կոյս է։ Եւ որ ոք արբուսցէ
ձեզ ջուր բաժակաւ յանուանս յայս, թէ
դուք Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ՝ մի
41 կորուսցէ զվարձս իւր։ Եւ որ ոք գայ-
թագղեցուսցէ զմի ի փոքրկանցս՝ որ հա-
ւատան յիս, լաւ էր նմա առաւել՝ եթէ
արկեալ էր ընդ պարանոց նորա երկան
42 իշոյ, եւ ընկեցեալ ի ծով։ Եւ եթէ գայ-
թագղեցուսցէ զքեզ ձեռն քո, հատ, ըն-
կեա ի քէն. զի լաւ իցէ քեզ խեղ մտա-
նել ի կեանսն յաւիտենից, քան երկուս
ձեռս ունել՝ եւ երթալ ի գեհեն ի հուրն
43 անշէջ. ուր որդն նոցա ոչ մեռանի եւ
44 հուրն ոչ շիջանի։ Եւ եթէ ոտն քո գայ-
թագղեցուսցէ զքեզ, հատ, ընկեա զնա
ի քէն. լաւ իցէ քեզ կաղ մտանել ի
կեանսն յաւիտենից, քան երկուս ոտս
ունել՝ եւ անկանել ի գեհեն ի հուրն ան-
45 շէջ. ուր որդն նոցա ոչ մեռանի եւ հուրն
46 ոչ շիջանի։ Եւ եթէ ակն քո գայթա-
ղեցուսցէ զքեզ, հան զնա ի բաց. լաւ ի-
ցէ քեզ միով ակամբ մտանել յարքայու-
թիւն Աստուծոյ, քան երկուս աչս ու-
47 նել եւ անկանել ի գեհեն. ուր որդն նո-
48 ցա ոչ մեռանի եւ հուրն ոչ շիջանի։ Զի
ամենայն ինչ հրով յաղեսցի, եւ ամե-
49 նայն ողջակէզ աղիւ յաղեսցի։ Բարւոք է

աղ. եւ եթէ աղն անհամեսցի, իւ համե-
մեսցի. արդ դուք կալարուք յանձինս
ձեր զաղն, եւ խաղաղութիւն արարէք
ընդ միմեանս։

ԳԼՈՒԽ Ժ

ԶԴ. Եւ անտի յարուցեալ գայ ի սահ- 1
մանս Հրէաստանի յայնկոյս Յորդանանու.
Եւ երթայր դարձեալ խռնեալ ժողովուր-
դըն առ նա, եւ որպէս սովոր էր՝ միւսան-
գամ ուսուցանէր զնոսա։ Իսկ փարիսե- 2
ցիքն մատուցեալ փորձելով հարցանէին
զնա՝ եւ ասէին. Եթէ արժա՞ն իցէ առն
զկին իւր արձակել։ Նա պատասխանի ետ 3
նոցա եւ ասէ. Զի՞նչ պատուիրեաց ձեզ
Մովսէս։ Եւ նոքա ասեն. Մովսէս հրաման 4
ետ՝ գիր մեկնելոյ գրել, եւ արձակել։ Պա- 5
տասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա.
Վասն խստասրտութեան ձերոյ գրեաց
ձեզ զպատուիրանն զայն։ Այլ ի սկզբա- 6
նէ արարածոց, արու եւ էգ արար զնո-
սա Աստուած, եւ ասէ. Վասն այսորիկ 7
թողցէ այր զհայր իւր եւ զմայր, եւ եր-
թիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին եր- 8
կոքին ի մարմին մի։ Եւ այնուհետեւ ոչ
են երկու՝ այլ մարմին մի։ Արդ զոր Աս- 9
տուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ։

10 Եւ ի տան դարձեալ աշակերտքն զնոյն
11 հարցին զնա. Եւ ասէ ցնոսա. Եթէ այր
արձակեսցէ զկին իւր՝ եւ առասցէ այլ,
12 շնայ. Եւ կին եթէ ելցէ յառնէ իւրմէ՝
եւ եղիցի առն այլում, շնայ։
13 ԶԵ. Եւ մատուցանէին առ նա մանկը-
տի՝ զի ձեռն դիցէ նոցա. իսկ աշակերտքն
սաստէին այնոցիկ՝ որ մատուցանէին։
14 Իբրեւ ետես Յիսուս, բարկացեալ սաս-
տեաց նոցա եւ ասէ. Թոյլ տուք մանկը-
տւոյդ գալ առ իս, եւ մի՛ արգելուք ըզ-
դոսա. զի այդպիսեացդ է արքայութիւն
15 Աստուծոյ։ Ամէն ասեմ ձեզ, որ ոչ ըն-
կալցի զարքայութիւն Աստուծոյ իբրեւ
16 զմանուկ՝ ոչ մտցէ ի նա։ Եւ առեալ ըզ-
դոսա ի գիրկս, ձեռն եդ ի վերայ՝ եւ օրհ-
նեաց զնոսա։
17 Եւ ընդ ելանելն նորա անտի ի ճանա-
պարհ, ահաւասիկ ոմն մեծատուն ըն-
թացեալ ի ծունր իջանէր, հարցանէր
զնա՝ եւ ասէր. Վարդապետ բարի՝ զի՞նչ
արարից զի զկեանսն յաւիտենականս
18 ժառանգեցից։ Եւ Յիսուս ասէ ցնա. Զի՞
ասես զիս բարի. չիք ոք բարի՝ բայց մի
19 Աստուած։ Զպատուիրանսն գիտես. մի՛
շնար, մի՛ սպանաներ, մի՛ գողանար, մի՛
սուտ վկայեր. պատուեա զհայր քո եւ
20 զմայր։ Նա՝ պատասխանի ետ եւ ասէ
ցնա. Վարդապետ՝ զայդ ամենայն արա-

րն ի մանկութենէ իմմէ, արդ զի՞նչ եւս
պակաս իցեմ: Եւ Յիսուս հայեցեալ ի 21
նա սիրեաց զնա, եւ ասէ ցնա. Մի ինչ
պակաս է ի քէն. եթէ կամիս կատարեալ
լինել, երթ զոր ինչ ունիս վաճառեա եւ
տուր աղքատաց, եւ ունիցիս գանձս յեր-
կինս, եւ առ զխաչն՝ եւ եկ զկնի իմ: Եւ 22
նա խոժոռեալ ընդ բանն՝ գնաց տրտում.
զի ունէր ինչս բազումս: Եւ հայեցեալ 23
յայսկոյս յայնկոյս Յիսուս, ասէ ցաշա-
կերտսն. Զիա՞րդ դժուարին է որ զինչս
ունին, մտանել յարքայութիւն Աստու-
ծոյ: Եւ աշակերտքն զարմացեալ էին ի վե- 24
րայ բանիցն նորա: Իսկ Յիսուս դարձեալ
պատասխանի ետ նոցա եւ ասէ. Որդեակք
ո՞րչափ դժուարին է յուսացելոց յինչս՝
մտանել յարքայութիւն Աստուծոյ: Դիւ- 25
րին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել,
քան մեծատան յարքայութիւն Աստու-
ծոյ մտանել: Եւ նոքա առաւել եւս զար- 26
մանային՝ եւ ասէին ընդ միմեանս. Իսկ
ո՞ կարասցէ ապրել: Հայեցեալ ընդ նոսա 27
Յիսուս՝ ասէ. Առ ի մարդկանէ այդ անհը-
նարին է, այլ ոչ առ ի յԱստուծոյ:
ԶԶ. Սկսաւ ասել ցնա Պետրոս. Ահա- 28
ւասիկ մեք թողաք զամենայն, եւ եկաք
զկնի քո: Պատասխանի ետ Յիսուս եւ ա- 29
սէ. Ամէն ասեմ ձեզ, ոչ ոք է որ եթող
զտուն կամ զեղբարս կամ զքորս կամ

զհայր կամ զմայր կամ զորդիս՝ կամ զա-
գարակս վասն իմ կամ վասն աւետարա-
30 նին, եթէ ոչ առնուցու հարիւրապատիկ
այժմ յայսմ ժամանակի՝ տունս եւ եղ-
բարս եւ քորս եւ մարս եւ որդիս եւ ա-
գարակս հալածանօք հանդերձ, եւ յաշ-
խարհին որ գալոց է զկեանսն յաւիտե-
31 նականս: Զի բազումք եղիցին առաջինք
32 յետինք՝ եւ յետինք առաջինք: Եւ էին
ի ճանապարհի մինչդեռ ելանէին յԵրու-
սաղէմ. եւ երթայր Յիսուս առաջի քան
զնոսա, եւ զարմացեալ էին որ զհետն եր-
թային՝ եւ երկնչէին:
ԶԷ. Եւ առեալ միւսանգամ զերկո-
տասանսն առանձինն, սկսաւ ասել նոցա
33 զինչ անցք անցանելոց իցեն ընդ նա. Թէ
ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, եւ
որդի մարդոյ մատնեսցի քահանայապե-
տից եւ դպրաց, եւ դատեսցեն զնա ի
մահ, եւ մատնեսցեն զնա հեթանոսաց.
34 եւ կատակեսցեն զնովաւ, եւ հարկանի-
ցեն զնա, եւ թքանիցեն ի նա, եւ սպան-
ցեն, եւ յերիր աւուր յարիցէ:
35 Եւ երթային առ նովաւ Յակոբոս եւ
Յովհաննէս որդիքն Զեբեդեայ, եւ ասեն
ցնա. Վարդապետ, կամիմք զի զոր ինչ
36 խնդրեսցուք ի քէն՝ արասցես մեզ: Եւ
նա ասէ ցնոսա. Զինչ կամիք յինէն զի ա-
37 րարից ձեզ: Եւ նոքա ասեն ցնա. Տուր մեզ

զի նստցուք մի յաջմէ քումմէ եւ մի յա-
հեկէ՝ ի փառսն քում: Պատասխանի ետ 38
Յիսուս եւ ասէ ցնոսա. Ոչ գիտէք զինչ
խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր
ես ըմպելոց եմ. կամ զմկրտութիւնն մը-
կըրտիլ՝ զոր ես մկրտելոցն եմ: Եւ նոքա 39
ասեն ցնա. կարեմք: Եւ Յիսուս ասէ ցնո-
սա. Զբաժակն զոր ես ըմպելոց եմ ըմպի-
ցէք, եւ զմկրտութիւնն զոր ես մկրտե-
լոց եմ մկրտիցիք. այլ նստուցանել ընդ 40
աջմէ իմմէ եւ ընդ ահեկէ՝ ոչ է իմ տալ,
այլ որոց պատրաստեալ իցէ: Եւ լուեալ 41
զայն տասանցն, սկսան բարկանալ Յա-
կոբայ եւ Յովհաննու: Եւ Յիսուս կո- 42
չեաց զնոսա առ ինքն, եւ ասէ ցնոսա. Գի-
տէք՝ զի որ յանուան իշխանքն են հեթա-
նոսաց, տիրեն նոցա. եւ մեծամեծք նո-
ցա՝ իշխեն նոցա: Ոչ նոյնպէս իցէ եւ ի 43
ձերում միջի. այլ որ կամիցի ի ձէնջ մեծ
լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. եւ որ կա- 44
միցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ամենե-
ցուն ծառայ: Քանզի եւ որդի մարդոյ ոչ 45
եկն առնուլ պաշտօն՝ այլ պաշտել, եւ
տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազ-
մաց:

ԻԿ. Եւ գան յԵրիքով. եւ ընդ ելա- 46
նելն նորա յԵրիքովէ աշակերտօքն՝ եւ
բազում ժողովրդով, որդի Տիմեի Բարտի-
մէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճա-

47 նապարհի: Իբրեւ լուաւ թէ Յիսուս Նա-
զովրեցի է, սկսաւ աղաղակել եւ ասել.
48 Որդի Դաւթի Յիսուս ողորմեաց ինձ: Եւ
սաստէին նմա բազումք զի լռեսցէ. եւ նա
առաւել եւս աղաղակէր. Որդի Դաւթի,
49 ողորմեաց ինձ: Զտեղի առ Յիսուս՝ եւ
հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն՝ եւ
ասեն ցնա. Քաջալերեաց, արի՝ կոչէ ըզ-
50 քեզ: Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր,
51 յարեաւ եւ եկն առ Յիսուս: Պատաս-
խանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Զի՞նչ կա-
միս թէ արարից քեզ. ասէ ցնա կոյրն.
52 Ռաբբունի՝ զի բացայց: Եւ Յիսուս ասէ
ցնա. Երթ, հաւատք քո կեցուցին զքեզ:
Եւ վաղվաղակի բացաւ, եւ երթայր ըզ-
հետ նորա ի ճանապարհին:

ԳԼՈՒԽ ԺԱ

1 Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ
ի Բեթփագէ եւ ի Բեթանիա մօտ ի լեառն
Ձիթենեաց, առաքէ երկուս յաշակեր-
2 տաց անտի, եւ ասէ ցնոսա. Երթայք
դուք ի գեօղդ՝ որ ընդդէմ ձեր կայ. եւ
նոյն ժամայն իբրեւ մտանէք ի նա, գը-
տանէք յաւանակ մի կապեալ. յորոյ վե-
րայ ոչ ոք ի մարդկանէ նստաւ, լուծէք
3 զնա եւ ածէք: Եւ եթէ ոք ասասցէ ձեզ՝

եթէ զի՞ լուծանէք զյաւանակդ, ասաս-
ջիք եթէ տեառն իւրում պիտոյ է. եւ
վաղվաղակի առաքեսցէ զնա այսր: Զո- 4
քան եւ գտին զյաւանակն կապեալ առ
դուրս արտաքոյ ի փողոցի անդ, եւ լու-
ծին զնա: Եւ ոմանք՝ յորոց անդն կային, 5
ասեն ցնոսա. Զի՞ գործէք, զի՞ լուծանէք
զյաւանակդ: Եւ նոքա ասեն ցնոսա որ- 6
պէս ասացն Յիսուս. եւ թոյլ ետուն նո-
ցա: Ածեն զյաւանակն առ Յիսուս, եւ 7
արկանեն ի վերայ նորա հանդերձս, եւ
նստաւ ի վերայ նորա: Եւ բազումք ըզ- 8
հանդերձս իւրեանց տարածանէին ի վե-
րայ ճանապարհին, եւ այլք ոստս ի ծա-
ռոց հատանէին՝ եւ արկանէին զճանա-
պարհաւն: Եւ որ առաջին եւ զկնի եր- 9
թային, աղաղակէին եւ ասէին. Ովսաննայ
բարձրելոյն. Օրհնեալ որ գայդ յանուն 10
Տեառն. օրհնեալ թագաւորութիւնդ ե-
կեալ հօր մերոյ Դաւթի. խաղաղութիւն
յերկինս, եւ փառք ի բարձունս: Եւ ե- 11
մուտ Յիսուս յԵրուսաղէմ ի տաճարն,
եւ հայեցաւ շուրջ զամենեքումբք. եւ
զի էր երեկոյացեալ ժամն, ել ի Բեթա-
նիա երկոտասանիւքն հանդերձ:

ԺԲ. Եւ ի վաղիւ անդր մինչ դեռ ելա- 12
նէին ի Բեթանիայ, քաղցեաւ: Եւ եւտես 13
թզենի մի ի բացուստ տերեւալից. եւ եկն՝
թէ գտանիցէ ինչ ի նմա. եւ իբրեւ եկն ի

նա՝ ոչինչ եգիտ, բայց միայն տերեւ. զի
14 ոչ եւս էր ժամանակ թզոյ: Պատասխա-
նի ետ եւ ասէ ցնա. Մի՛ եւս ոք յաւի-
տեան ի քէն պտուղ կերիցէ. եւ լսէին
աշակերտքն նորա:
15 Գան յԵրուսաղէմ. եւ մտեալ ի տա-
ճարն՝ սկսաւ հանել զվաճառականսն
եւ զգնօղս որ էին ի տաճարին. եւ զսե-
ղանս հատավաճառացն ցրուեաց. եւ զա-
թոռս աղաւնեվաճառացն կործանեաց.
16 եւ ոչ թողոյր՝ եթէ ոք անօթ ինչ անցու-
17 ցանիցէ ընդ տաճարն. եւ ուսուցանէր
եւ ասէր ցնոսա. Գրեալ է, տուն իմ, տուն
աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց,
եւ դուք արարէք զդա այրս աւազակաց:
18 Լուան քահանայապետքն եւ դպիրք. եւ
խնդրէին՝ թէ ո՛րպէս կորուսցեն զնա.
բայց երկնչէին ի նմանէ. զի ամենայն ժո-
ղովուրդն զարմացեալ էր ընդ ուսումն
նորա:
19 Եւ իբրեւ երեկոյ լինէր՝ արտաքոյ
20 քան զքաղաքն ելանէին: Եւ մինչդեռ
այգուցն առ նովաւ անցանէին, տե-
21 սին զթզենին ցամաքեալ յարմատոց: Յի-
շեաց Պետրոս՝ եւ ասէ ցնա. Ռաբբի, ա-
հաւասիկ թզենին զոր անիծեր, ցամա-
22 քեցաւ: Պատասխանի ետ Յիսուս եւ ա-
սէ ցնոսա. Եթէ ունիցիք զհաւատսն Աս-
23 տուծոյ, ամէն ասեմ ձեզ, որ ոք ասիցէ

լերինս այսմիկ՝ բարձիր եւ անկիր ի ծով,
եւ ոչ երկմտիցէ ի սրտի իւրում, այլ
հաւատայցէ թէ զոր ասէն լինի, եղիցի
նմա զոր ինչ եւ ասիցէ: Վասն այսորիկ 24
ասեմ ձեզ. զամենայն ինչ վասն որոյ ա-
ղօթս արարեալ խնդրիցէք, եւ հաւա-
տայցէք թէ առնուցուք, եղիցի ձեզ: Եւ 25
յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք ե-
թէ ունիցիք ինչ զումեքէ. զի եւ հայրն
ձեր՝ որ յերկինս է, թողցէ ձեզ զյան-
ցանս ձեր: Զի եթէ դուք ոչ թողուցուք, 26
եւ ոչ հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ
ձեզ զյանցանս ձեր:

ԽԳ. Գան միւսանգամ յԵրուսաղէմ. եւ 27
մինչդեռ ի տաճարի անդ զգնայր, գան
առ նա քահանայապետքն եւ դպիրք եւ
ծերք, եւ ասեն ցնա. Որո՞վ իշխանու- 28
թեամբ զայդ առնես, եւ ո՞վ ետ քեզ զիշ-
խանութիւնդ զայդ: Պատասխանի ետ Յի- 29
սուս եւ ասէ ցնոսա. Հարցից եւ ես ըզ-
ձեզ բան մի, տուք ինձ պատասխանի,
եւ ես ասացից ձեզ որով իշխանութեամբ
առնեմ զայս: Մկրտութիւնն Յովհաննու 30
յերկնի՞ց էր եթէ ի մարդկանէ, տուք ինձ
պատասխանի: Խորհէին ընդ միմեանս՝ 31
եւ ասէին. Եթէ ասեմք եթէ յերկնից.
ասէ ցմեզ՝ իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք
նմա: Այլ եթէ ասեմք ի մարդկանէ, եր- 32
կնչիմք ի ժողովրդենէն. զի ամենեքին

գիտէին զՅովհաննէս՝ թէ մարգարէ էր:
33 Պատասխանի ետուն եւ ասեն ցՅիսուս.
Չգիտեմք: Եւ Յիսուս ետ նոցա պատաս-
խանի եւ ասէ. Եւ ոչ ես ասեմ ձեզ, ո-
րով իշխանութեամբ առնեմ զայս:

ԳԼՈՒԽ ԺԲ

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք՝
եւ ասել. Այր մի տնկեաց այգի, եւ ած
շուրջ զնովաւ ցանգ, եւ փորեաց հնձան
փորեաց, եւ շինեաց աշտարակ. եւ ետ
զնա ցմշակս, եւ գնաց ի տար աշխարհ:
2 Եւ առաքեաց առ մշակսն ի ժամանակի
ծառայ մի, զի ի մշակաց անտի առցէ ի
3 պտղոյ այգւոյն: Եւ նոցա կալեալ զան
հարին զնա, եւ արձակեցին ունայն:
4 Դարձեալ առաքեաց առ նոսա այլ ծա-
ռայ, եւ զնա կառափնատեցին եւ ար-
5 ձակեցին անարգեալ: Եւ դարձեալ այլ ա-
ռաքեաց, եւ զնա սպանին. եւ զբազումս
այլս՝ զոմանս հարկանէին եւ զոմանս
6 սպանանէին: Արդ որդի մի էր իւր սիրե-
լի, զնա առաքեաց առ նոսա յետոյ, եւ
ասէ. Թերեւս ամաչեսցեն յորդւոյ աստի
7 իմմէ: Իսկ մշակքն իբրեւ տեսին զնա թէ
գայ՝ ասեն ցմիմեանս. սա է ժառանգն,
եկայք սպանցուք զսա, եւ մեր լիցի ժա-
8 ռանգութիւնն: Եւ կալեալ զնա սպանին,

եւ հանին արտաքոյ այգւոյն: Արդ զի՞նչ 9
արասցէ տէր այգւոյն. եկեսցէ եւ կո-
րուսցէ զմշակսն, եւ տացէ զայգին ի ձեռս
այլոց: Եւ ո՞չ զգիրն զայն իցէ ընթերցեալ 10
ձեր, թէ զվէմն զոր անարգեցին շինողքն,
նա եղեւ գլուխ անկեան: Ի Տեառնէ ե- 11
ղեւ այս, եւ է սքանչելի յաչս մեր: Եւ 12
խնդրէին զնա ունել, եւ երկեան ի ժո-
ղովրդենէ անտի, զի գիտացին թէ առ նո-
սա ասաց զառակն. եւ թողին զնա եւ
գնացին:

Եւ առաքեն առ նա զոմանս ի փարի- 13
սեցւոց անտի՝ եւ ի հերովդիանոսաց, զի
զնա որսասցեն բանիւ: Եւ նոքա եկեալ 14
հարցանէին զնա նենգութեամբ՝ եւ ա-
սէին. Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ
ես, եւ ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ. զի
ոչ հայիս յերեսս մարդկան, այլ ճշմար-
տութեամբ զճանապարհն Աստուծոյ ու-
սուցանես. արդ՝ ասա մեզ, արժա՞ն է
հարկս տալ կայսեր՝ թէ ոչ. տացո՞ւք ե-
թէ ոչ տացուք: Եւ Յիսուս գիտաց զկեղ- 15
ծաւորութիւն նոցա՝ ասէ ցնոսա. Զի՞
փորձէք զիս կեղծաւորք. բերէք ինձ դա-
հեկան մի զի տեսից: Եւ նոքա բերին. եւ 16
ասէ ցնոսա. Ո՞յր է պատկերս այս կամ
գիր. եւ նոքա ասեն ցնա. Կայսեր: Պա- 17
տասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա.
Երթայք տուք զկայսերն կայսեր, եւ

զԱստուծոյն Աստուծոյ. եւ զարմացան
ընդ նա:
18 ԻԴ. Գան առ նա սադուկեցիքն որ ա-
սեն՝ թէ չիք յարութիւն. հարցանէին
19 ցնա եւ ասէին. Վարդապետ, Մովսէս
գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մեռա-
նիցի եւ թողուցու կին՝ եւ որդի ոչ թո-
ղուցու, զի առցէ եղբայր նորա զկին նո-
րա, եւ յարուսցէ զաւակ եղբօր իւ-
20 րում: Արդ եղբարք եօթն էին առ մեզ.
առաջինն առ կին՝ եւ մեռաւ, եւ ոչ ե-
21 թող զաւակ. եւ երկրորդն առ զնոյնն՝
եւ մեռաւ, եւ ոչ նա եթող զաւակ. նոյն-
22 պէս եւ երրորդն առ զնոյն, եւ եօթնե-
քեան իսկ, եւ ոչ թողին զաւակ. յետ
23 ամենեցուն մեռաւ եւ կինն: Արդ ի յա-
րութեանն յորժամ յառնիցեն, ո՞յր ի նո-
ցանէ լինիցի կինն, զի եօթնեքեան կալան
24 զնա կին: Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ ցնոսա. Ո՞չ վասն այդորիկ իսկ մոլո-
րեալ էք. զի ոչ գիտէք զգիրս՝ եւ ոչ ըզ-
25 զօրութիւնն Աստուծոյ: Զի յորժամ ի
մեռելոց յարիցեն, ոչ արք կանայս առ-
նեն, եւ ոչ կանայք արանց լինին. այլ
իբրեւ զհրեշտակս իցեն՝ որ յերկինս են:
26 Այլ վասն յարութեան մեռելոց զի յառ-
նեն, ո՞չ իցէ ընթերցեալ ձեր ի գիրսն
Մովսիսի՝ ի մորենւոջն որպէս ասաց ցնա
Աստուած. Ես եմ, ասէ, Աստուած Աբրա-

համու, Աստուած Իսահակայ, եւ Աս-
տուած Յակոբայ: Եւ ոչ է Աստուած 27
մեռելոց՝ այլ կենդանեաց. եւ արդ դուք
յոյժ մոլորեալ էք:

Եւ մատուցեալ մի ոմն ի դպրացն՝ լսէր 28
նոցա մինչ վիճէին. իբրեւ ետես եթէ
բարւոք ետ նոցա պատասխանին, եհարց
ցնա եւ ասէ. Ո՞ր պատուիրան է առա-
ջին: Եւ Յիսուս ասէ ցնա. Առաջին քան 29
զամենայն՝ Լուր Իսրայէլ, տէր Աստուած
մեր՝ Տէր մի է. եւ Սիրեսցես զտէր Աս- 30
տուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ
յամենայն անձնէ քումմէ, եւ յամենայն
մտաց քոց, եւ յամենայն զօրութենէ
քումմէ. այս է առաջին պատուիրան:
Եւ երկրորդն նման սմին. սիրեսցես զըն- 31
կեր քո՝ իբրեւ զանձն քո. մեծ քան զսո-
սա այլ պատուիրան ոչ գոյ: Եւ ասէ ցնա 32
դպիրն. Բարւոք է, վարդապետ. Ճշմար-
տութեամբ ասացեր՝ թէ մի է Աստուած,
եւ ոչ գոյ այլ՝ բաց ի նմանէ: Եւ սիրել 33
զնա յամենայն սրտէ եւ յամենայն զօ-
րութենէ եւ յամենայն մտաց, եւ սիրել
զընկերն իբրեւ զանձն, առաւել է քան
զողջակէզս եւ զզոհս: Եւ տեսեալ Յիսու- 34
սի թէ իմաստութեամբ ետ պատասխա-
նի՝ ասէ ցնա. Ոչ ես հեռի յարքայութե-
նէ Աստուծոյ. եւ ոչ եւս ոք իշխէր ինչ
հարցանել ցնա:

35 ԼԵ. Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ՝
մինչ ուսուցանէր ի տաճարին. Զիա՞րդ
ասեն դպիրքն, եթէ Քրիստոսն որդի Դաւ-
36 թի է. եւ ինքն Դաւիթ հոգւովն սրբով
ասէ. Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջ-
մէ իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պա-
37 տուանդան ոտից քոց: Արդ եթէ ինքն
իսկ Դաւիթ զնա Տէր կոչէ՝ զիա՞րդ իցէ
որդի նորա. եւ բազում ժողովուրդ լսէր
նմա քաղցրութեամբ:
38 Եւ ասէր ուսուցանելով ի վարդապե-
տութեան իւրում. Զգոյշ լերուք ի դը-
պրաց անտի, որ կամին ի հանդերձս երկ-
այնս շրջել, զողջոյնս խնդրել ի հը-
39 րապարակս, եւ զնախաթոռս ի ժողո-
վուրդս, եւ զգահոյսս յընթրիս:
40 Որ ուտեն զտունս այրեաց, պատճառա-
նօք յերկարեալ զաղօթս, զի աւելի եւս
դատաստանս ընկալցին:
41 Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին,
տեսանէր թէ զիա՞րդ ժողովուրդն արկա-
նէր պղինձ ի գանձանակն. եւ բազում
42 մեծատունք արկին բազում ինչ: Եկն այ-
րի մի եւ արկ երկուս լումայս, որ է նա-
43 քարակիտ մի. եւ կոչեցեալ առ ինքն զա-
շակերտսն, ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ՝
զի այրին այն տառապեալ շատ արկ քան
զամենեսեան՝ որ արկին ի գանձանակն:
44 Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց

արկին. այլ նա ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր արկ, զոյն չափ զկեանս իւր։

ԳԼՈՒԽ ԺԳ

ԿԶ. Եւ յելանելն նորա ի տաճարէ ան- 1
տի, ասէ ցնա մի յաշակերտացն նորա.
Վարդապետ, տես որպիսի են քարինքս,
եւ որպիսի շինուածք։ Պատասխանի ետ 2
նմա Յիսուս եւ ասէ. Տեսանես զայդ ա-
մենայն շինուածս, ամէն ասեմ ձեզ՝ է-
թէ ոչ թողցի այդր քար ի քարի վերայ որ
ոչ քակտեսցի։ Եւ մինչ նստէր նա ի 3
լերինն Ձիթենեաց յանդիման տաճարին,
հարցանէին ցնա առանձինն՝ Պետրոս եւ
Յակոբոս եւ Յովհաննէս եւ Անդրէաս. Ա- 4
սա մեզ, երբ լինիցի այդ, եւ զի՞նչ նշան է՝
յորժամ կատարելոց իցէ այդ ամենայն։
Պատասխանի ետ Յիսուս, եւ ասէ ցնոսա. 5
Զգոյշ կացէք, մի ոք զձեզ խաբեսցէ։ Զի 6
բազումք եկեսցեն յանուն իմ, եւ ասի-
ցեն՝ թէ ես եմ Քրիստոսն. եւ զբազումս
մոլորեցուսցեն։ Այլ յորժամ լսիցէք 7
պատերազմունս եւ համբաւս պատերազ-
մաց՝ մի խռովիցիք. զի պարտ է լինել, բայց
չեւ է կատարածն։ Զի յարիցէ ազգ յազ- 8
գի վերայ, եւ թագաւորութիւն ի թա-
գաւորութեան վերայ. եւ եղիցին շարժ-

մունք ի տեղիս տեղիս, սովք եւ սրտմտու-
թիւնք եւ խռովութիւնք. այլ այն սկզ-
9 բունք են երկանց։ Եւ զձեզ իսկ
մատնեսցեն յատեանս, եւ ի ժողովուրդս
տանջիցիք, եւ առաջի դատաւորաց եւ
թագաւորաց կայցէք վասն իմ ի վկայու-
թիւն նոցա, եւ ամենայն հեթանոսաց.
10 բայց նախ պարտ է աւետարանիս քա-
11 րոզել։ Այլ յորժամ մատնիցեն զձեզ
մատնել, մի յառաջագոյն հոգայցէք, եւ
մի զմտաւ ածիցէք՝ թէ զի՛նչ խօսիցիք.
այլ որ ինչ տացի ձեզ ի ժամուն յայնմիկ՝
զայն խօսիցիք. զի ոչ դուք էք որ խօսի-
12 ցիքն՝ այլ Հոգին սուրբ։ Մատնեսցէ եղ-
բայր զեղբայր ի մահ, եւ հայր՝ զորդի. եւ
յարիցեն որդիք ի վերայ հարց, եւ սպա-
13 նանիցեն զնոսա։ Եւ եղիջիք ատեցեալք
յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ
14 համբերեսցէ ի սպառ՝ նա կեցցէ։ Եւ յոր-
ժամ տեսանիցէք զպղծութիւն աւերա-
ծին, զի կայցէ ի տեղւոջ ուր չիցէ ար-
ժան. որ ընթեռնուն ի միտ առցէ։ Յայն-
ժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի
15 լերինս. եւ որ ի վերայ տանեացն իցէ՝ մի
իջցէ ի տուն, եւ մի մտցէ բառնալ ինչ ի
16 տանէ իւրմէ. եւ որ յագարակին իցէ՝ մի
17 դարձցի յետս առնուլ զձորձս իւր։ Բայց
վա՜յ իցէ յղեաց եւ ստնտուաց յաւուրսն
18 յայնոսիկ։ Յաղօթս կացէք զի մի ձմե-

ռանի լինիցի այն։ Եղիցին աւուրքն այ- 19
նոքիկ նեղութեանց՝ որպիսի ոչ եղեն եր-
բեք այնպիսիք ի սկզբանէ արարածոց
մինչեւ ցայժմ, եւ մի այլ լիցի։ Եւ եթէ 20
ոչ էր կարճեալ Աստուծոյ զաւուրսն զայ-
նոսիկ վասն ընտրելոց իւրոց, ոչ ապրէր
ամենայն մարմին. այլ վասն ընտրելոցն
զորս ընտրեաց՝ կարճեաց զաւուրսն զայ-
նոսիկ։ Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ, 21
եթէ ահաւասիկ է Քրիստոսն՝ կամ ահա-
նիկ. մի հաւատայցէք։ Զի յարիցեն սուտ 22
Քրիստոսք եւ սուտ մարգարէք, եւ տա-
ցեն նշանս եւ արուեստս՝ առ ի մոլորե-
ցուցանելոյ եթէ հնար ինչ իցէ եւ զըն-
տրեալսն։ Բայց դուք զգոյշ լերուք, ահա- 23
ւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զամե-
նայն։ Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նե- 24
ղութեանն այնորիկ, արեգակն խաւարես-
ցի, եւ լուսին ոչ տացէ զլոյս իւր։ Եւ աս- 25
տեղք յերկնից թօթափեսցին, եւ զօրու-
թիւնք յերկինս շարժեսցին։ Եւ յայն- 26
ժամ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ամ-
պովք՝ զօրութեամբ եւ փառօք բազմօք։
Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր, 27
եւ ժողովեսցէ զընտրեալս իւր ի չորից
հողմոց՝ ի ծագաց երկրի մինչեւ ի ծագս
երկնից։ Բայց դուք ի թզենւոյ անտի 28
ուսջիք զառակն. յորժամ տակաւ ոստքն
նորա կակղանայցեն եւ տերեւ արձակիցի

29 ի նմա, գիտէք թէ մերձ է ամառն. նոյն-
պէս եւ դուք՝ յորժամ տեսանիցէք զայս
ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ է
30 առ դուրս։ Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անց-
ցէ ազգս այս՝ մինչեւ այս ամենայն եղի-
31 ցի։ Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք
32 իմ ոչ անցանիցեն։ Այլ վասն աւուրն
այնորիկ եւ ժամու՝ ոչ ոք գիտէ, ոչ հրեշ-
տակք յերկինս՝ եւ ոչ Որդի, բայց Հայր
33 միայն։ Զգոյշ եղերուք, սկեցէք եւ կա-
ցէք յաղօթս. զի ոչ գիտէք երբ ժամա-
34 նակն իցէ։ Որպէս այր մի գնացեալ ի
տար աշխարհ՝ թողուցու զտուն իւր. եւ
տայցէ ծառայից իւրոց իշխանութիւն,
եւ իւրաքանչիւր զգործս իւր, եւ դռնա-
պանին պատուէր տայցէ, զի արթուն լի-
35 նիցի։ Արդ արթուն կացէք. զի ոչ գիտէք
երբ տէր տանն գայցէ, յերեկորեայ՝ եթէ
ի մէջ գիշերի՝ եթէ ի հաւախօսի՝ եթէ ընդ
36 առաւօտս։ Գուցէ եկեալ յանկարծակի՝
37 գտանիցէ զձեզ ի քուն։ Բայց զոր ձեզդ
ասեմ, ամենեցուն ասեմ՝ արթուն կացէք։

ԳԼՈՒԽ ԺԴ

1 Էէ. Եւ էր զատիկն եւ բաղարջակերք
յետ երկուց աւուրց. խնդրէին քահա-
նայապետքն եւ դպիրք՝ եթէ զիարդ զնա
2 նենգաւ կալեալ սպանանիցեն։ Բայց ա-

ասէին՝ թէ մի՛ ի տօնի աստ, զի մի՛ խռո֊
վութիւն լինիցի ի ժողովրդեանն։
Եւ մինչ էր ի Բեթանիա՝ ի տան Սի֊ 3
մովնի բորոտի բազմեալ, եկն կին մի որ
ունէր շիշ իւղոյ նարդեան ազնուի մե֊
ծագնոյ, եւ բեկեալ զշիշն՝ եհեղ ի վերայ
գլխոյ նորա։ Եւ աշակերտքն զայրէին եւ 4
ասէին. ընդէ՞ր եղեւ կորուստ իւղոյդ այ֊
դորիկ. մարթ էր զայդ իւղ վաճառել ա֊ 5
ւելի քան երեք հարիւր դահեկանի, եւ
տալ աղքատաց. եւ զայրանային նմա
յոյժ։ Եւ Յիսուս ասէ ցնոսա. Թոյլ տուք 6
դմա. զի՞ աշխատ առնէք, զի գործ մի բա֊
րի գործեաց դա յիս։ Յամենայն ժամ 7
զաղքատս ընդ ձեզ ունիք, եւ յորժամ
կամիք՝ կարող էք առնել նոցա բարիս.
այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ ու֊
նիք։ Դա զոր ունէրդ՝ արար. յառաջա֊ 8
գոյն խնկեաց զմարմին իմ ի նշան պատա֊
նաց։ Ամէն ասեմ ձեզ. Ուր եւ քարոզես֊ 9
ցի աւետարանս այս ընդ ամենայն աշ֊
խարհ, եւ զոր արար դա՝ խօսեսցի վասն
յիշատակի դորին։
Եւ Յուդա Սկարիովտացի մի յերկոտա֊ 10
սանից անտի, գնաց առ քահանայապետ֊
սն զի մատնեսցէ զնա նոցա։ Նոքա իբրեւ 11
լուան՝ խնդացին, եւ խոստացան տալ նը֊
մա արծաթ. եւ խնդրէր՝ թէ զիա՞րդ պա֊
րապով մատնեսցէ զնա։

12 Եւ յառաջնում աւուր բաղարջակե֊
րացն՝ յորժամ զզատիկն զենուին, ասեն
ցնա աշակերտքն. Ո՞ւր կամիս՝ երթիցուք
պատրաստեսցուք՝ զի կերիցես զզատիկն։
13 Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի՝
եւ ասէ ցնոսա. Երթայք ի քաղաքն, եւ
իբրեւ մտանիցէք ի քաղաքն՝ պատահես֊
ցէ ձեզ այր մի որ սափոր ջրոյ յուս ու֊
14 նիցի, երթայք զհետ նորա։ Եւ յոր տուն
մտանիցէ, ասասջի՛ք ցտանուտէրն. Վար֊
դապետ ասէ, ո՞ւր են իջավանքն՝ ուր ա֊
15 շակերտօքս ուտիցեմ զզատիկն։ Եւ նա
ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդա֊
16 րեալ. անդ պատրաստեսջի՛ք մեզ։ Եւ
գնացին պատրաստել աշակերտքն նորա.
եկին ի քաղաքն, եւ գտին որպէս ասացն
նոցա. եւ պատրաստեցին զզատիկն։
17 Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ գայ երկոտա֊
18 սանիւքն հանդերձ։ Եւ իբրեւ բազմեցան
եւ դեռ ուտէին, ասէ Յիսուս. Ամէն ասեմ
ձեզ՝ զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս,
19 որ ուտէ իսկ ընդ իս։ Եւ նոքա սկսան
տրտմել՝ եւ ասել մի ըստ միոջէ. Միթէ
20 ես իցեմ, եւ միւսն՝ միթէ ես իցեմ։ Նա
պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. Մի
յերկոտասանից անտի, որ մխեաց ընդ իս
21 ի սկաւառակդ։ Այլ որդի մարդոյ եր֊
թայ որպէս եւ գրեալ է վասն նորա.
բայց վա՜յ իցէ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռս

որդի մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՝ թէ
չէր իսկ ծնեալ մարդն այն։ Եւ մինչդեռ 22
ուտէին, առեալ Յիսուսի հաց՝ օրհնեաց
եւ եբեկ, ետ նոցա, եւ ասէ. Առէք. այդ
է մարմին իմ։ Եւ առեալ բաժակ՝ գոհա- 23
ցաւ եւ ետ նոցա. եւ արբին ի նմանէ ա-
մենեքեան։ Եւ ասէ ցնոսա. Այս է արիւն 24
իմ նորոյ ուխտի, որ փոխանակ բազմաց
հեղանի։ Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ եւս յա- 25
ւելից ըմպել ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն
ցայն՝ յորժամ արբից զնա նոր յարքայու-
թեան Աստուծոյ։ Եւ գոհացեալ՝ ելին ի 26
լեառն Ձիթենեաց։

Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ամենեքին գայ- 27
թագղելոց էք յինէն յայսմ գիշերի. զի
գրեալ է, թէ հարից զհովիւն՝ եւ ոչխար-
քըն ցրուեսցին։ Այլ յետ յարութեան 28
իմոյ՝ յառաջագոյն երթայց քան զձեզ ի
Գալիլեա։ Պատասխանի ետ Պետրոս եւ 29
ասէ ցնա. Թէպէտ եւ ամենեքին գայ-
թագղեսցին, այլ ես ոչ։ Եւ ասէ ցնա Յի- 30
սուս. Ամէն ասեմ քեզ, թէ դու իսկ յայսմ
գիշերի մինչ չեւ հաւու խօսեալ իցէ՝ ե-
րիցս ուրասցիս զիս։ Իսկ Պետրոս առա- 31
ւել եւս պնդէր եւ ասէր. եթէ մեռանել
եւս հասանիցէ ընդ քեզ՝ զքեզ ոչ ուրա-
ցայց. նոյնպէս եւ ամենեքեան ասէին։

Գան ի գեօղն՝ որում անուն էր Գեթ- 32
սեմանի. եւ ասէ ցաշակերտսն. Նստա-

33 րուք աստ՝ մինչեւ ես յաղօթս կացից։ Եւ
առնու ընդ իւր զՊետրոս եւ զՅակովբոս
եւ զՅովհաննէս. եւ սկսաւ տխրել եւ հո-
34 գալ։ Յայնժամ ասէ ցնոսա. Տրտում է
անձն իմ մինչեւ ի մահ, մնացէք աստ՝
35 եւ արթուն կացէք։ Եւ մատուցեալ
սակաւիկ մի յառաջ, անկաւ ի վերայ ե-
րեսաց իւրոց յերկիր. եւ կայր յաղօթս,
զի եթէ հնար ինչ է՝ անցցէ ի նմանէ
36 ժամն։ Եւ ասէ. Աբբա, հայր, ամենայն
ինչ քեզ հնարաւոր է. անցո զբաժակս
զայս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ՝
37 այլ որպէս դու կամիս։ Եւ գայ գտանէ
զնոսա զի ննջէին. եւ ասէ ցՊետրոս. Սի-
մոն, ննջե՞ս. ո՞չ կարացեր ժամ մի ար-
38 թուն կալ։ Արթուն կացէք եւ յաղօթս
կացէք, զի մի՛ մտջիք ի փորձութիւն. ո-
39 գիս յօժար է՝ բայց մարմինս տկար։ Եւ
դարձեալ չոգաւ եկաց յաղօթս, եւ ըզ-
40 նոյն բանս ասաց։ Դարձաւ միւսանգամ
անդրէն, եւ եգիտ զնոսա ի քուն. քանզի
էին աչք նոցա ծանրացեալ, եւ ոչ գի-
տէին թէ զինչ պատասխանի տայցեն նը-
41 մա։ Գայ երրորդ անգամ, եւ ասէ ցնո-
սա. Ննջեցէք այսուհետեւ եւ հանգե-
րուք, զի հասեալ է վախճան. եկն ժամ՝
եւ ահա մատնի որդի մարդոյ ի ձեռս մե-
42 ղաւորաց։ Օ՛ն, արի՛ք գնասցուք. զի ահա-
ւասիկ մերձեցաւ որ մատնելոցն է զիս։

Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝ գայ Յուդա 43
Իսկարիովտացի՝ մի յերկոտասանից անտի,
եւ ընդ նմա ամբոխ սուսերօք եւ բրօք՝ ի
քահանայապետից եւ ի դպրաց եւ ի ծե-
րոց: Տուեալ էր նշան մատնչին՝ եւ ասէր. 44
Ընդ որում ես համբուրեցից՝ նա է. կալ-
ջիք զնա եւ տարջիք զգուշութեամբ: Եւ 45
մատուցեալ վաղվաղակի՝ ասէ ցնա. Ռաբ-
բի, ռաբբի. եւ համբուրեաց զնա: Եւ 46
նոքա արկին ի նա ձեռս՝ եւ կալան զնա:
Եւ մի ոմն յայնցանէ՝ որ առ նովաւն կային՝ 47
ձգեաց սուր, եւ եհար զծառայ քահա-
նայապետին, եւ ի բաց եհան զունկն նո-
րա: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ 48
ցնոսա. Իբրեւ ի վերայ աւազակի ելէք
սուսերօք եւ բրօք ունել զիս: Հանապազ 49
առ ձեզ էի՝ եւ ուսուցանէի ի տաճարին,
եւ ոչ կալայք զիս. այլ զի լցցին գիրք մար-
գարէից: Յայնժամ թողին զնա աշա- 50
կերտքն ամենեքին՝ եւ փախեան:

Եւ ոմն երիտասարդ զհետ երթայր 51
նորա՝ արկեալ զիւրեւ կտաւ մի ի մեր-
կուց. ունէին զնա երիտասարդքն. եւ 52
նորա թողեալ զկտաւն՝ փախեաւ մերկ ի
նոցանէ:

Եւ տարան զՅիսուս առ քահանայա- 53
պետն Կայիափա. եւ գային ընդ նմա ա-
մենայն քահանայապետքն՝ եւ դպիրք եւ
ծերք: Եւ Պետրոս երթայր ի հեռաստա- 54

նէ զհետ նորա մինչեւ ի ներքս իսկ ի գա-
ւիթ քահանայապետին, եւ նստէր ընդ
սպասաւորսն՝ եւ ջեռնոյր առ լուսովն:
55 Իսկ քահանայապետքն եւ ամենայն ա-
տեանն՝ խնդրէին հակառակ Յիսուսի վը-
կայութիւն ինչ, զի սպանանիցեն զնա,
56 եւ ոչ գտանէին: Զի բազում սուտ վը-
կայութիւն վկայէին զնմանէ, եւ նման
57 միմեանց ոչ էին վկայութիւնքն: Այլք
յարուցեալ վկայէին սուտ զնմանէ, եւ
58 ասէին, թէ մեք լուաք ի դմանէ՝ զի ա-
սէր. Ես քակեցից զտաճարդ զայդ ձե-
ռագործ, եւ զերիս աւուրս շինեցից այլ՝
59 առանց ձեռագործի: Սակայն եւ այնպէս
60 չէր նման վկայութիւնն նոցա: Ապա յա-
րուցեալ քահանայապետն ի մէջ՝ հար-
ցանէր զՅիսուս, եւ ասէր. Ո՞չ ինչ տաս
պատասխանի, զի՞նչ դոքա զքէն վկայեն:
61 Եւ նա լուռ եւեթ կայր, եւ չտայր ինչ
պատասխանի: Դարձեալ քահանայա-
պետն հարցանէր զնա կրկին անգամ եւ
ասէր. Դո՞ւ ես Քրիստոս որդի Աստուծոյ
62 օրհնելոյն: Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ ցնա. Դու ասացեր՝ թէ ես եմ. բայց
տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ
աջմէ զօրութեանն, եւ եկեալ ընդ ամպս
63 երկնից: Եւ քահանայապետն պատա-
ռեաց վաղվաղակի զպատմուճանս իւր՝
եւ ասէ. Զի՞նչ եւս պիտոյ են մեզ վկայք.

աչա՛ լուայք ամենեքին զհայհոյութիւն ի 64
բերանոյ դորա. զի՞արդ Թուի ձեզ: Եւ
ամենեքեան դատապարտեցին զնա՝ Թէ
մահապարտ է: Եւ ոմանք սկսան Թքա- 65
նել ընդ երեսս նորա, ձորձ զգլխով ար-
կանել՝ կոփել եւ ասել. մարգարէաց մեզ
Քրիստոս, ո՞վ է այն որ եհարն զքեզ. եւ
սպասաւորքն ապտակս հանէին նմա:

Եւ Պետրոս մինչդեռ էր ի խոնարհ ի 66
դաւիթին, գայ աղախին մի քահանայա-
պետին, եւ տեսանէ զնա՝ զի ջեռնոյր. 67
հայեցաւ ընդ նա՝ եւ ասէ. Եւ դու ընդ
Յիսուսի Նազովրեցւոյ էիր: Նա ուրացաւ 68
եւ ասէ. Ոչ ճանաչեմ եւ ոչ գիտեմ զինչ
դուդ ասես. եւ իբրեւ ել յարտաքին գա-
ւիթն, եւ հաւ խօսեցաւ: Դարձեալ ե- 69
տես զնա աղախինն, եւ սկսաւ ասել ցայ-
նոսիկ որ շուրջն կային, Թէ եւ սա ի նո-
ցանէ է: Եւ նա դարձեալ ուրացաւ: Եւ 70
յետ սակաւ միոյ՝ դարձեալ որ շուրջն
կային, ասէին ցՊետրոս. Արդարեւ եւ դու
ի նոցանէ ես, քանզի Գալիլեացի ես՝ եւ
խօսքդ իսկ քո նման են: Եւ նա սկսաւ 71
նզովել երդնուլ եւ ասել, Թէ ոչ գիտեմ
զայրն՝ զորմէ դուքդ ասէք: Եւ նոյնժա- 72
մայն կրկին հաւ խօսեցաւ. եւ յիշեաց
Պետրոս զբանն՝ զոր ասաց ցնա Յիսուս,
Թէ չեւ իցէ հաւու երիցս խօսեալ՝ զի դու
երիցս ուրասցիս զիս. եւ սկսաւ լալ:

ԳԼՈՒԽ ԺԵ

1 Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խոր-
հուրդ արարեալ քահանայապետիցն
հանդերձ ծերովքն եւ դպրօք՝ եւ ամե-
նայն ատեանն, կապեցին զՅիսուս՝ եւ
2 տարան մատնեցին Պիղատոսի: Եհարց
զնա Պիղատոս եւ ասէ. Դո՞ւ ես Թագա-
ւորն Հրէից: Նա պատասխանի ետ նմա եւ
3 ասէ, Դո՛ւ ասես: Եւ չարախօսէին զնմանէ
յոյժ քահանայապետքն, եւ նա ոչինչ
4 տայր պատասխանի: Իսկ Պիղատոս դար-
ձեալ հարցանէր զնա. Ո՞չ ինչ տաս պա-
տասխանի. տե՛ս՝ քանի՞ ամբաստանեն
5 զքէն: Եւ Յիսուս այնուհետեւ ոչինչ ետ
պատասխանի, մինչեւ զարմանալ յոյժ
Պիղատոսի:

6 Բայց ըստ տօնի արձակէր նոցա զմի
ոք զկապեալ, զոր խնդրէին:
7 Եւ էր որում անուն էր Բարաբբա՝ կա-
պեալ ընդ խռովիչսն, որոց ի խռովելն՝
8 այր մի սպանեալ էր: Ի ձայն բարձր սկ-
սաւ աղաղակել ամբոխն եւ խնդրել՝ որ-
պէս սովոր էր, զի արձակեսցէ նոցա զԲա-
9 րաբբայն: Պատասխանի ետ Պիղատոս եւ
ասէ ցնոսա. Կամի՞ք զի արձակեցից ձեզ
10 զարքայն Հրէից: Քանզի գիտէր Թէ առ
նախանձու մատնեցին զնա քահանայա-

պետքն․ որք եւ զամբոխն հաւանեցուցին՝ 11
զի արձակեսցէ նոցա զԲարաբբայն։ Դար֊ 12
ձեալ պատասխանի ետ Պիղատոս եւ ասէ
ցնոսա․ Իսկ զի՞նչ կամիք թէ արարից զար֊
քայն Հրէից։ Եւ նոքա դարձեալ աղաղա֊ 13
կէին՝ յուզեալք ի քահանայապետիցն․ Ի
խաչ հան զդա։ Ասէ ցնոսա Պիղատոս․ 14
Զի՞նչ ինչ չար արարեալ իցէ դորա․ եւ
նոքա առաւել եւս աղաղակէին եւ ասէին․
Ի խաչ հան զդա։ Իսկ Պիղատոս իբրեւ 15
զմիտս կամեցաւ հաճել զամբոխին, ար֊
ձակեաց նոցա զԲարաբբայն․ եւ զՅիսուս
գան հարեալ ետ ի ձեռս, զի ի խաչ ելա֊
նիցէ։

Եւ զինուորքն տարան զնա ի ներքս ի 16
գաւիթն՝ ուր հրապարակն էր․ եւ կոչեն
միանգամայն զամենայն զգունդն․ եւ ըզ֊ 17
գեցուցանեն նմա քղամիդ կարմիր եւ ծի֊
րանիս․ եւ եդին ի գլուխ նորա պսակ ա֊
ռարեալ ի փշոց։ Եւ սկսան ողջոյն տալ 18
նմա՝ եւ ասել․ Ո՛ղջ եր արքայդ Հրէից։
Եւ ծեծէին զգլուխն եղեգամբ, եւ թքա֊ 19
նէին ընդ երեսս, եւ ի ծունր իջեալ եր֊
կիր պագանէին նմա։ Եւ իբրեւ կատակե֊ 20
ցին զնա՝ մերկացուցին զքղամիդն եւ զծի֊
րանիս, եւ զգեցուցին նմա զիւր հանդեր֊
ձըն, եւ ածին արտաքս զի ի խաչ հանցեն
զնա։ Եւ ունէին պահակ զՍիմոն կիւրե֊ 21
նացի՝ որ ընդ այն անցանէր՝ եկեալ յա֊

գարակէ, զհայրն Աղեքսանդրի եւ Ռու֊
փայ, զի բարձցէ զխաչափայտն նորա։
22 Եւ ածեն զնա ի Գողգոթա՝ տեղի մի,
23 որ թարգմանի տեղի կառափելոյ։ Եւ
տային նմա գինի զմռսեալ, եւ նա ոչ առ․
24 եւ հանին զնա ի խաչ։ Եւ բաժանեցին
զհանդերձս նորա, արկեալ վիճակս ի վե֊
25 րայ թէ ո՛ զինչ առնուցու։ Էր ժամ եր֊
26 րորդ եւ հանին զնա ի խաչ։ Եւ էր գիր
վնասու նորա գրեալ՝ թէ թագաւոր է
27 Հրէից։ Եւ ընդ նմա հանին ի խաչ երկուս
աւազակս․ մի ընդ աջմէ, եւ մի ընդ ա֊
28 հեկէ նորա։ Եւ լցաւ գիրն որ ասէ, թէ
29 ընդ անօրէնս համարեցաւ։ Եւ որք ան֊
ցանէինն՝ հայհոյէին զնա շարժեալ ըզ֊
գլուխս իւրեանց եւ ասէին․ Վա՜հ, որ
քակէիր զտաճարն եւ զերիս աւուրս շի֊
30 նէիր, ապրեցո զանձն քո եւ էջ ի խաչէդ։
31 Նոյնպէս եւ քահանայապետից այպն ա֊
րարեալ ընդ միմեանս հանդերձ դպրօքն՝
ասէին․ Զայլս ապրեցոյց, զանձն ոչ կարէ
32 ապրեցուցանել․ Քրիստոսդ արքայդ Իս֊
րայէլի, իջցէ այժմ ի խաչէ այտի, զի
տեսցուք եւ հաւատասցուք դմա։ Եւ որ
ընդ նմա ի խաչն ելեալ էին՝ նախատէին
33 զնա։ Եւ իբրեւ վեց ժամ եղեւ՝ խաւար
կալաւ զամենայն երկիր մինչեւ ցինն
34 ժամ։ Եւ յիններորդ ժամուն աղաղա֊
կեաց Յիսուս ի ձայն մեծ, եւ ասէ․ Էլի

Էլի՛ Լամա սաբաքթանի. որ թարգմանի.
Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թո-
ղեր զիս: Եւ ոմանք ի նոցանէ որ շուրջն 35
կային լուեալ՝ իբրեւ լուան, ասէին թէ
զԵղիա կարդայ: Եւ ընթացեալ մի ոմն՝ ե- 36
լից սպունգ մի քացախով, եւ հարեալ
յեղեգան՝ տայր ըմպել նմա, եւ ասէ.
Թոյլ տուք տեսցուք՝ գա՞յ Եղիա իջուցանել
զդա: Եւ Յիսուս արձակեաց ձայն մեծ՝ 37
եւ եհան զոգի: Եւ վարագոյր տաճարին 38
պատառեցաւ յերկուս՝ ի վերուստ մինչեւ
ի խոնարհ:

Եւ տեսեալ հարիւրապետին որ կայր 39
անդ՝ եթէ աղաղակեաց եւ եհան զոգի,
ասէ. Արդարեւ այրս այս որդի Աստուծոյ
էր: Էին եւ կանայք՝ որ հայէին ի հեռաս- 40
տանէ. յորս էր Մարիամ Մագդաղենացի,
եւ Մարիամ Յակոբայ փոքրկան, եւ Յով-
սեայ մայրն, եւ Սողոմէ. որք յորժամ 41
էր ի Գալիլեա՝ զհետ շրջէին նորա եւ
պաշտէին զնա. եւ այլ բազում կանայք,
որ ընդ նմա իսկ ելեալ էին յԵրուսաղէմ:

Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ քանզի ուր- 42
բաթ էր որ է շաբաթն մտանէր, եկեալ 43
Յովսէփ որ յԱրիմաթեայն էր՝ այր պար-
կեշտ նախարար, որ եւ ինքն իսկ ակն ու-
նէր արքայութեանն Աստուծոյ, համար-
ձակեցաւ եմուտ առ Պիղատոս, եւ խըն-
դրեաց զմարմինն Յիսուսի: Եւ Պիղատոս 44

զարմացաւ թէ այնչափ վաղ մեռաւ. եւ
կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն՝ ե-
հարց զնա եւ ասէ, թէ արդարեւ այն-
45 չափ վա՞ղ մեռաւ: Եւ իբրեւ ստուգեաց ի
հարիւրապետէն անտի, շնորհեաց զմար-
46 մինն Յովսեփայ: Եւ Յովսէփ գնեաց կը-
տաւ՝ եւ իջուցեալ զնա պատեաց կտա-
ւովն, եւ եդ ի գերեզմանի, զոր էր փո-
րեալ ի վիմէ. եւ թաւալեցոյց վէմ մի ի
47 դուռն գերեզմանին: Իսկ Մարիամ Մագ-
դաղենացի եւ Մարիամ Յակովբայ եւ
Յովսեայ, տեսին զտեղին ուր եդաւ:

ԳԼՈՒԽ ԺԶ

1 Եւ իբրեւ անց շաբաթն, Մարիամ
մագդաղենացի՝ եւ Մարիամ Յակովբայ
եւ Սողոմէ՝ չոքան պատրաստեցին
2 խունկս, զի եկեսցեն օծցեն զնա: Եւ ընդ
առաւօտս միաշաբաթուն գան ի գերեզ-
մանն՝ ընդ արեւագալն. եւ ասէին ցմի-
3 մեանս. Ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն ի
4 դրաց գերեզմանին: Եւ հայեցեալ տե-
սին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն ի գե-
5 րեզմանէն. քանզի էր մեծ յոյժ: Եւ մը-
տեալ ի ներքս ի գերեզմանն՝ տեսին ե-
րիտասարդ մի՝ զի նստէր ընդ աջմէ կող-
մանէ զգեցեալ պատմուճան սպիտակ,
6 եւ զարհուրեցան: Եւ նա ասէ ցնոսա.

մի՛ երկնչիք, զՅիսուս խնդրէք զՆազով-
րեցի զխաչելեալն. յարեաւ՝ չէ՛ աստ.
ահաւադիկ տեղին ուր եդին զնա: Այլ 7
երթայք ասացէք ցաշակերտս նորա եւ
ցՊետրոս, եթէ ահա յառաջագոյն եր-
թայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսա-
նիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ: Եւ իբրեւ 8
լուան՝ ելին եւ փախեան ի գերեզմանէն,
քանզի զահի հարեալ էին. եւ ոչ ումեք
ինչ ասացին, զի երկնչէին:

Յարուցեալ Յիսուս առաւօտուն առա- 9
ջին միաշաբաթուն՝ երեւեցաւ Մարիա-
մու Մագդաղենացւոյ, յորմէ հանեալ էր
զեօթն դեւսն: Եւ նա երթեալ պատմեաց 10
այնոցիկ որ ընդ նմայն էին, մինչդեռ սը-
գային եւ լային: Նոքա իբրեւ լուան թէ 11
կենդանի է՝ եւ երեւեցաւ նմա, ոչ հաւա-
տացին: Յետոյ երեւեցաւ այլով կերպա- 12
րանաւ՝ ոյք երթային յանդաստան: Նոքա 13
չոգան պատմեցին այլոց, եւ ոչ նոցա հա-
ւատացին: Յետոյ մինչդեռ բազմեալ էին 14
մետասանքն երեւեցաւ նոցա, եւ թըշ-
նամանեաց զանհաւատութիւն նոցա, եւ
զխստասրտութիւն. զի որ երեւեցաւ նո-
ցա յարուցեալ ի մեռելոց՝ եւ նոքա ոչ հա-
ւատացին: Եւ ասէ ցնոսա. Երթայք յաշ- 15
խարհ ամենայն, եւ քարոզեցէք զաւե-
տարանն ամենայն արարածոց: Որ հա- 16
ւատայ եւ մկրտեսցի՝ կեցցէ, եւ որ ոչն

17 հաւատայ՝ դատապարտեսցի: Նշանք՝ այ-
նոցիկ որ հաւատասցեն՝ երթիցեն զհետ՝
այսոքիկ. Յանուն իմ դեւս հանիցեն. լե-
18 զուս խօսեսցին. ի ձեռս իւրեանց օձս
բարձցեն. եւ եթէ մահացու ինչ դեղ
արբցեն՝ նոցա ինչ ոչ վնասեսցէ. ի վերայ
հիւանդաց ձեռս դիցեն՝ եւ բժշկեսցին:
19 Եւ ինքն տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ
նոսա՝ համբարձաւ յերկինս, եւ նստաւ
ընդ աջմէ Հօր:
20 Եւ նոքա ելեալ քարոզեցին ընդ ամե-
նայն երկիր, տեառն գործակցութեամբ.
եւ զբանն հաստատէին ամենայն նշանօք՝
որ երթայր զհետ նոցա:

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 ՔԱՆԶԻ բազումք յօժարեցին վերստին
կարգել զպատմութիւնն վասն իրացն
2 հաստատելոց ի մեզ, որպէս աւանդեցին
մեզ՝ որ ի սկզբանէ ականատեսք եւ ըս-
3 պասաւորք եղեն բանին. կամ եղեւ եւ
ինձ, որ ի սկզբանէ զհետ երթեալ էի
ամենայնի, ճշմարտութեամբ կարգաւ
4 գրել քեզ՝ քաջդ Թէոփիլէ. զի ծանիցես
զբանիցն որոց աշակերտեցար՝ զճշմար-
տութիւն:
5 Եւ եղեւ յաւուրս Հերովդի արքայի
Հրէաստանի, քահանայ ոմն անուն Զա-
քարիա, ի դասակարգէ Աբիայ. եւ կին
նորա ի դստերաց Ահարոնի, եւ անուն
6 նորա Եղիսաբեթ: Եւ էին արդարք եր-
կոքին առաջի Աստուծոյ. գնային յամե-
նայն պատուիրանս եւ յիրաւունս Տեա-
7 ռն անարատք: Եւ ոչ գոյր նոցա որ-

դեակ, քանզի Եղիսաբեթ ամուլ էր. եւ
երկոքեան անցեալ էին զաւուրբք իւ-
րեանց։ Եւ եղեւ ի քահանայանալն նորա 8
ըստ կարգի աւուրցն հասանելոյ՝ առաջի
Աստուծոյ, ըստ օրինի քահանայութեանն՝ 9
եհաս նմա խունկ արկանել մտեալ ի տա-
ճարն Տեառն. եւ ամենայն բազմութիւն 10
ժողովրդեանն կային յաղօթս արտաքոյ՝
ի ժամ խնկոցն։ Եւ երեւեցաւ նմա հրեշ- 11
տակ Տեառն, զի կայր ընդ աջմէ սեղանոյ
խնկոցն։ Եւ խռովեցաւ Զաքարիա իբրեւ 12
ետես, եւ անկաւ ահ ի վերայ նորա։ Ասէ 13
ցնա հրեշտակն Տեառն. Մի երկնչիր Զա-
քարիա, զի լուեալ եղեն աղօթք քո. եւ
կին քո Եղիսաբեթ ծնցի քեզ որդի՝ եւ կո-
չեսցես զանուն նորա Յովհաննէս։ Եւ ե- 14
ղիցի քեզ ուրախութիւն եւ ցնծութիւն,
եւ բազումք ի ծննդեան նորա խնդաս-
ցեն. զի եղիցի մեծ առաջի Տեառն. եւ 15
գինի եւ օղի մի արբցէ, եւ հոգւով սրբով
լցցի անդստին յորովայնէ մօր իւրոյ. եւ 16
զբազումս յորդւոցն Իսրայէլի դարձուս-
ցէ ի տէր Աստուած իւրեանց։ Եւ ինքն 17
եկեսցէ առաջի նորա հոգւով զօրու-
թեամբ Եղիայի, դարձուցանել զսիրտս
հարց յորդիս, եւ զանհաւանս յիմաս-
տութիւն արդարոց. պատրաստել Տեա-
ռըն ժողովուրդ կազմեալ։ Եւ ասէ Զաքա- 18
րիա ցհրեշտակն. Եւ ի՞ւ գիտացից զայդ,

զի ես ծեր եմ, եւ կին իմ անցեալ զա-
19 ւուրբք իւրովք։ Պատասխանի ետ հրեշ-
տակն եւ ասէ ցնա. Ես եմ Գաբրիէլ որ
կամ առաջի Աստուծոյ, եւ առաքեցայ
խօսել ընդ քեզ՝ եւ աւետարանել քեզ
20 զայդ։ Եւ ահա եղիցիս համր, եւ մի՛ կա-
րասցես խօսել մինչեւ ցօրն՝ յորում այդ
լինիցի. փոխանակ զի ոչ հաւատացեր
բանից իմոց՝ որք լցցին ի ժամանակի իւ-
21 րեանց։ Եւ ժողովուրդն ակն ունէր Զա-
քարիայ, եւ զարմանային ընդ յամելն
22 նորա ի տաճարին։ Եւ իբրեւ ել՝ ոչ կա-
րէր խօսել ընդ նոսա. եւ իմացան թէ
տեսիլ ետես ի տաճարին. եւ նա նշանա-
ցի խօսէր ընդ նոսա, եւ կայր պապան-
23 ձեալ։ Եւ եղեւ իբրեւ լցան աւուրք պաշ-
24 տաման նորա, գնաց ի տուն իւր. եւ յետ
աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբեթ
կինն նորա, եւ թաքուցանէր զանձն ա-
25 միսս հինգ, եւ ասէր։ Զինչ գործ գոր-
ծեաց ընդ իս Տէր յաւուրս՝ յորս հայե-
ցաւ յիս բառնալ զնախատինս իմ ի մարդ-
կանէ։

26 Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ
Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ ի քաղաք
մի Գալիլեացւոց, որում անուն էր Նա-
27 զարէթ, առ կոյս խօսեցեալ առն, որում
անուն էր Յովսէփ, ի տանէ Դաւթի. եւ
28 անուն կուսին Մարիամ։ Եւ եկեալ առ

նա՝ ասէ. Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր
ընդ քեզ: Եւ նա ընդ բանսն խռովեցաւ, 29
եւ խորհէր ընդ միտս՝ թէ որպիսի՞ ինչ ի-
ցէ ողջոյնս այս: Եւ ասէ ցնա հրեշտակն. 30
Մի՛ երկնչիր, Մարիամ, զի գտեր շնորհս
յԱստուծոյ: Եւ ահա յղասջիր եւ ծնցես 31
որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս:
Նա եղիցի մեծ, եւ որդի Բարձրելոյ կո- 32
չեսցի. եւ տացէ նմա տէր Աստուած զա-
թոռն Դաւթի հօր նորա, եւ թագաւո-
րեսցէ ի վերայ տանն Յակովբայ ի յաւի-
տեանս. եւ թագաւորութեան նորա վախ- 33
ճան մի՛ լիցի: Եւ ասէ Մարիամ ցհրեշ- 34
տակն. Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի
զայր ոչ գիտեմ: Պատասխանի ետ հրեշ- 35
տակն եւ ասէ ցնա. Հոգի սուրբ եկեսցէ
ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն հովա-
նի լիցի ի վերայ քո. քանզի եւ որ ծնանե-
լոցն է ի քէն՝ սուրբ է, եւ որդի Աստու-
ծոյ կոչեսցի: Եւ ահա Եղիսաբեթ ազգա- 36
կան քո՝ եւ նա յղի է ի ծերութեան ի-
րում. եւ այս վեցերորդ ամիս է նորա՝ որ
ամուլն կոչեցեալ էր. զի ոչ տկարասցի 37
առ յԱստուծոյ ամենայն բան: Եւ ասէ 38
Մարիամ. Ահաւասիկ կամ աղախին Տեա-
ռըն. Եղիցի ինձ ըստ բանի քում: Եւ գը-
նաց ի նմանէ հրեշտակն:

Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայ- 39
նոսիկ, գնաց ի լեռնակողմն փութապէս,

40 ի քաղաքն Յուդայ. Եւ եմուտ ի տուն
Զաքարիայ, եւ ետ ողջոյն Եղիսաբեթի:
41 Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն Մարիա-
մու Եղիսաբեթ, խաղաց մանուկն յորո-
վայնի նորա: Եւ լցաւ Եղիսաբեթ Հոգւով
42 սրբով, եւ ի ձայն բարձր աղաղակեաց եւ
ասէ. Օրհնեալ ես դու ի կանայս, եւ
43 օրհնեալ է պտուղ որովայնի քո: Եւ ուս-
տի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն
44 իմոյ առ իս: Զի ահաւասիկ իբրեւ եղեւ
ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց
45 ցնծալով մանուկս յորովայնի իմում. եւ
երանի որ հաւատայցէ՝ եթէ եղիցի կա-
տարումն ասացելոցս նմա ի Տեառնէ:
46 Եւ ասէ Մարիամ. Մեծացուսցէ անձն
47 իմ զՏէր. եւ ցնծացաւ հոգի իմ յԱս-
48 տուած փրկիչ իմ. զի հայեցաւ ի խոնար-
հութիւն աղախնոյ իւրոյ: Զի ահա յայսմ
հետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք:
49 Զի արար ինձ մեծամեծս հզօրն, եւ սուրբ
50 է անուն նորա. եւ ողորմութիւն նորա
51 ազգաց յազգս երկիւղածաց իւրոց: Արար
զօրութիւն բազկաւ իւրով. ցրուեաց
զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց.
52 քակեաց զհզօրս յաթոռոց, եւ բարձ-
53 րացոյց զխոնարհս: Զքաղցեալս լցոյց
բարութեամբ, եւ զմեծատունս արձա-
54 կեաց ունայնս: Պաշտպանեաց Իսրայէլի
ծառայի իւրում՝ յիշել զողորմութիւնս.

որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահա- 55
մու եւ զաւակի նորա յաւիտեան: Եկաց 56
Մարիամ առ նմա իբրեւ ամիսս երիս, եւ
դարձաւ ի տուն իւր:

Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծնա- 57
նելոյ, եւ ծնաւ որդի: Եւ լուան որ շուրջ 58
զնովաւ էին՝ եւ ազգատոհմ նորա, զի մեծ
արար Տէր զողորմութիւն իւր ընդ նմա,
եւ խնդային ընդ նմա: Եւ եղեւ յաւուրն 59
ութերորդի՝ եկին թլփատել զմանուկն,
եւ կոչէին զնա յանուն հօր իւրոյ Զաքա-
րիա: Պատասխանի ետ մայր նորա եւ ա- 60
սէ. Ոչ, այլ կոչեսցի Յովհաննէս: Եւ ա- 61
սեն ցնա. Քանզի ոչ ոք է յազգի քում,
որոյ կոչի անուն Յովհաննէս: Ակնարկէին 62
հօրն նորա՝ թէ զի՛նչ կամիցի կոչել զնա:
Եւ խնդրեաց տախտակ, գրեաց եւ ասէ. 63
Յովհաննէս է անուն դորա. եւ զարմա-
ցան ամենեքին: Եւ բացաւ բերան նորա 64
վաղվաղակի՝ եւ լեզու նորա, եւ խօսէր,
եւ օրհնէր զԱստուած: Եւ եղեւ ահ ի 65
վերայ ամենեցուն որ լսէին զայս, եւ որ
շուրջ բնակեալ էին զնոքօք. եւ ընդ ամե-
նայն լեռնակողմն Հրէաստանի պատմէին
ամենայն բանքս այսոքիկ: Եւ եդին ամե- 66
նեքեան որ լսէին ի սիրտս իւրեանց, եւ
ասէին. Զի՞նչ լինիցի մանուկս այս: Եւ
ձեռն Տեառն էր ընդ նմա: Եւ Զաքարիա 67
հայր նորա լցաւ Հոգւով սրբով, մարգա-

68 րէացաւ եւ ասէ. Օրհնեալ տէր Աստուած
Իսրայէլի, զի յայց ել մեզ, եւ արար
69 փրկութիւն ժողովրդեան իւրում: Եւ
յարոյց եղջիւր փրկութեան մեզ ի տա-
70 նէ Դաւթի ծառայի իւրոյ, որպէս խօսե-
ցաւ բերանով սրբոց՝ որ յաւիտենից մար-
71 գարէքն նորա էին: Փրկութիւն ի թըշ-
նամեաց մերոց, եւ ի ձեռաց ամենայն
72 ատելեաց մերոց. առնել ողորմութիւն ընդ
հարս մեր, եւ յիշել զուխտն իւր սուրբ:
73 Զերդումն զոր երդուաւ Աբրահամու
74 հօր մերում՝ տալ մեզ, առանց երկիւղի,
ի ձեռաց թշնամեաց մերոց փրկեալս.
75 պաշտել զնա սրբութեամբ եւ արդա-
րութեամբ առաջի նորա զամենայն ա-
76 ւուրս կենաց: Եւ դու, մանուկ, մարգա-
րէ Բարձրելոյ կոչեսցիս. զի երթիցես ա-
ռաջի երեսաց Տեառն պատրաստել զճա-
77 նապարհս նորա: Տալ գիտութիւն փըր-
կութեան ժողովրդեան նորա, ի թողու-
78 թիւն մեղաց նոցա: Վասն գթութեանց
ողորմութեան Աստուծոյ մերոյ, որովք
այց արասցէ մեզ արեգակն ի բարձանց,
79 երեւել՝ որոց ի խաւարի եւ ի ստուերս
մահու նստէին, ուղղել զոտս մեր ի ճա-
80 նապարհս խաղաղութեան:

Եւ մանուկն աճէր եւ զօրանայր հո-
գւով. եւ էր յանապատս մինչեւ յօր ե-
րեւելոյ նորա Իսրայէլի:

ԳԼՈՒԽ Բ

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել 1
հրաման յՕգոստոս կայսերէ՝ աշխարհա֊
գիր առնել ընդ ամենայն տիեզերս։ Այս 2
առաջին աշխարհագիր եղեւ ի դատաւո֊
րութեան Ասորւոց Կիւրենեայ։ Եւ եր֊ 3
թային ամենեքեան մտանել յաշխարհա֊
գիր յիւրաքանչիւր քաղաքի։ Ել եւ Յով֊ 4
սէփ ի Գալիլեէ ի քաղաքէ Նազարեթէ՝ ի
Հրէաստան՝ ի քաղաք Դաւթի, որ կոչի
Բեթղեհեմ. վասն լինելոյ նորա ի տանէ
եւ յազգէ Դաւթի, մտանել յաշխարհա֊ 5
գիր Մարեմաւ հանդերձ՝ զոր խօսեալն
էր նմա, եւ էր յղի։ Եւ եղեւ ի հասա֊ 6
նելն նոցա անդր, լցան աւուրք ծնանե֊
լոյ նորա։ Եւ ծնաւ զորդին իւր զանդրա֊ 7
նիկ, եւ պատեաց ի խանձարուրս՝ եւ եդ
զնա ի մսուր. զի ոչ գոյր նոցա տեղի յի֊
ջեւանին։

Եւ հովիւք էին ի տեղւոջն յայնմիկ 8
բացօթեայք, որ պահէին զպահպանու֊
թիւնս գիշերոյ հօտից իւրեանց։ Եւ հրեշ֊ 9
տակ Տեառն երեւեցաւ նոցա, եւ փառք
Տեառն ծագեցին առ նոսա, եւ եր֊
կեան երկիւղ մեծ։ Եւ ասէ ցնոսա հրեշ֊ 10
տակն. Մի երկնչիք, զի ահաւասիկ աւե֊
տարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ

11 եղիցի ամենայն ժողովրդեանն. զի ծնաւ
ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տէր, ի
12 քաղաքի Դաւթի։ Եւ այս նշանակ ձեզ.
գտանիցէք մանուկ պատեալ ի խանձա֊
13 րուրս, եւ եդեալ ի մսուր։ Եւ յան֊
կարծակի եղեւ ընդ հրեշտակին ընդ այն֊
միկ բազմութիւն զօրաց երկնաւորաց,
14 որ օրհնէին զԱստուած՝ եւ ասէին. Փառք
ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խա֊
15 ղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Եւ
եղեւ իբրեւ վերացան ի նոցանէ հրեշ֊
տակքն յերկինս, ասեն ցմիմեանս հո֊
վիւքն. Եկայք, երթիցուք մինչեւ ցԲեթ֊
ղեհեմ, եւ տեսցուք զինչ է բանս այս որ
16 եղեւ, զոր Տէր եցոյց մեզ։ Եւ եկին փու֊
թանակի. եւ գտին զՄարիամ եւ զՅով֊
17 սէփ եւ զմանուկն եդեալ ի մսուր։ Եւ
ծանեան վասն բանին՝ որ ասացաւ նոցա
18 զմանկանէն։ Եւ ամենեքեան որ լսէին,
զարմանային վասն բանիցն՝ զոր խօսեցան
19 ընդ նոսա հովիւքն։ Եւ Մարիամ զամե֊
նայն զբանս զայսոսիկ պահէր, եւ խե֊
20 լամուտ լինէր ի սրտի իւրում։ Եւ դար֊
ձան հովիւքն. փառաւոր առնէին եւ օրհ֊
նէին զԱստուած վասն ամենայնի՝ զոր
լուան եւ տեսին, որպէս պատմեցաւ
նոցա։

21 Եւ իբրեւ լցան աւուրք ութ թլփա֊
տել զնա. եւ կոչեցաւ անուն նորա Յի֊

սուս, որ կոչեցեալն էր ի հրեշտակէն,
մինչչեւ յղացեալ էր զնա յորովայնի։
Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նո- 22
րա ըստ օրինացն Մովսէսի, ածին զնա
յԵրուսաղէմ յանդիման առնել Տեառն։
Որպէս եւ գրեալ է յօրէնս Տեառն, թէ 23
ամենայն արու որ բանայ զարգանդ՝ սուրբ
Տեառն կոչեսցի։ Եւ տալ պատարագ՝ 24
ըստ ասացելոյն յօրէնս Տեառն. զոյգս
տատրակաց, կամ երկուս ձագս աղաւ-
նեաց։
Եւ ահա այր մի էր յԵրուսաղէմ, որոյ 25
անուն էր Սիմէոն. եւ էր այրն այն ար-
դար եւ երկիւղած. եւ ակն ունէր մխի-
թարութեանն Իսրայէլի. եւ հոգի սուրբ
էր ի նմա։ Եւ էր նորա հրաման առեալ ի 26
հոգւոյն սրբոյ՝ մի՛ տեսանել զմահ, մինչեւ
տեսցէ զօծեալն Տեառն. եւ եկն հոգւովն 27
ի տաճարն։ Եւ իբրեւ ածին ծնողքն ըզ-
մանուկն Յիսուս՝ առնել նոցա ըստ սովո-
րութեան օրինացն ի վերայ նորա. եւ նա 28
առընկալաւ զնա ի գիրկս իւր, եւ օրհ-
նեաց զԱստուած, եւ ասէ. Արդ արձա- 29
կես զծառայս քո, Տէր, ըստ բանի քում
ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ ըզ- 30
փրկութիւն քո, զոր պատրաստեցեր ա- 31
ռաջի ամենայն ժողովրդոց։ Լոյս ի յայտ- 32
նութիւն հեթանոսաց. եւ փառս ժողո-
վրդեան քում Իսրայէլի։ Եւ էին հայրն 33

եւ մայրն նորա զարմացեալ ի վերայ բա-
34 նիցն, որ խօսէին զնմանէ։ Եւ օրհնեաց
զնոսա Սիմէոն, եւ ասէ ցՄարիամ մայր
նորա. Ահա սա կայ ի գլորումն եւ ի
կանգնումն բազմաց ի մէջ Իսրայէլի, եւ
35 ի նշան հակառակութեան։ Եւ ընդ քո
իսկ անձն անցցէ սուր. զի յայտնեսցին
ի բազմաց սրտից խորհուրդք։
36 Եւ անդ էր Աննա մարգարէ՝ դուստր
Փանուէլի յազգէ Ասերայ. սա ինքն ան-
ցեալ էր զաւուրբք բազմօք՝ կեցեալ ընդ
առն ամս եօթն ի կուսութենէ իւրմէ։
37 Եւ էր այրի ամաց իբրեւ ութսուն եւ
չորից. որ ոչ մեկնէր ի տաճարէն, այլ
պահօք եւ աղօթիւք պաշտէր զցայգ եւ
38 զցերեկ։ Եւ սա ի նմին ժամու յարու-
ցեալ գոհանայր զՏեառնէ, եւ խօսէր
զնմանէ ընդ ամենեսին՝ որ ակն ունէին
փրկութեանն Երուսաղէմի։
39 Եւ իբրեւ կատարեցին զամենայն ըստ
օրինացն Տեառն, դարձան անդրէն ի Գա-
լիլեա ի քաղաքն իւրեանց Նազարէթ։
40 Եւ մանուկն աճէր եւ զօրանայր լի ի-
մաստութեամբ. եւ շնորհք Աստուծոյ
էին ի վերայ նորա։
41 Եւ երթային ծնողքն նորա ամի ամի յԵ-
42 րուսաղէմ ի տօն զատկին։ Եւ իբրեւ ե-
ղեն նորա ամք երկոտասան, ելանել նո-
ցա յԵրուսաղէմ ըստ սովորութեան տօ-

նին, եւ կատարել զաւուրսն՝ եւ դառ- 43
նալ անդրէն, մնաց Յիսուս մանուկն յԵ-
րուսաղէմ. եւ ոչ գիտացին ծնողքն նորա:
Կարծէին զնմանէ թէ ընդ ուղեկիցսն իցէ.
եկին իբրեւ աւուր միոյ ճանապարհ՝ եւ 44
խնդրէին զնա ընդ դրացիսն եւ ընդ ծանօ-
թըս: Եւ իբրեւ ոչ գտին, դարձան անդրէն 45
յԵրուսաղէմ խնդրել զնա: Եւ եղեւ յետ 46
երից աւուրց՝ գտին զնա ի տաճարին, զի
նստէր ընդ վարդապետսն. լսէր ի նոցա-
նէ, եւ հարցանէր զնոսա: Զարմանային 47
ամենեքեան որ լսէին ի նմանէ՝ ընդ իմաս-
տութիւնն եւ ընդ պատասխանիս նորա:
Եւ իբրեւ տեսին զնա՝ սքանչացան. եւ 48
ասէ ցնա մայրն իւր. Որդեակ, զի՞նչ գործ
գործեցեր դու ընդ մեզ. ահաւասիկ հայր
քո եւ ես տառապեալք խնդրեաք զքեզ:
Եւ ասէ ցնոսա. Զի՞ խնդրէիք զիս, ո՞չ գի- 49
տէիք եթէ ի տան հօր իմոյ պարտ է ինձ
լինել: Եւ նոքա ոչ իմացան զբանն՝ զոր 50
խօսեցաւ ընդ նոսա: Եւ էջ ընդ նոսա, եւ 51
գնաց ի Նազարեթ. եւ էր նոցա հնազանդ.
եւ մայր նորա պահէր զամենայն զբան-
սըն ի սրտի իւրում: Եւ Յիսուս զարգա- 52
նայր իմաստութեամբ եւ հասակաւ, եւ
շնորհօք յԱստուծոյ եւ ի մարդկանէ:

ԳԼՈՒԽ Գ

1 Ի հնգետասաներորդի ամի տէրու-
թեանն Տիբերեայ կայսեր, ի դատաւո-
րութեան Հրէաստանի Պիղատոսի պոն-
տացւոյ, եւ ի չորրորդապետութեան Գա-
լիլեացւոց Հերովդի, եւ ի Փիլիպպոսի եղ-
բօր նորա չորրորդապետութեան Իտու-
րացւոց եւ Տրաքոնացւոց աշխարհին,
եւ ի չորրորդապետութեանն Լիւսանեայ
2 Աբիլենացւոյ, եւ ի քահանայապետու-
թեան Աննայի եւ Կայիափայ, եղեւ բան
Աստուծոյ ի վերայ Յովհաննու որդւոյ
3 Զաքարիայ յանապատի անդ: Եւ եկն
յամենայն կողմն Յորդանանու քարոզել
մկրտութիւն ապաշխարութեան ի թո-
4 ղութիւն մեղաց. որպէս եւ գրեալ է ի
գիրս պատգամաց Եսայեայ մարգարէի.
Ձայն բարբառոյ յանապատի. պատրաստ
արարէք զճանապարհ Տեառն, եւ ուղիղ
5 արարէք զշաւիղս նորա: Ամենայն ձորք
լցցին, եւ ամենայն լերինք եւ բլուրք խո-
նարհեսցին. եւ եղիցին դժուարինքն ի
դիւրինս, եւ սառապարքն ի հարթ ճա-
6 նապարհս. եւ տեսցէ ամենայն մարմին
7 զփրկութիւն Աստուծոյ: Եւ ասէր ցժո-
ղովուրդսն ելեալս մկրտիլ ի նմանէ. Ծը-
նունդք իժից, ո՞ եցոյց ձեզ փախչել ի

բարկութենէն՝ որ գալոց է: Արարէք այ- 8
սուհետեւ պտուղս արժանի ապաշխա-
րութեան. եւ մի՛ սկսանիցիք ասել՝ եթէ
ունիմք հայր զԱբրահամ. զայս ասեմ ձեզ,
եթէ կարօղ է Աստուած ի քարանցս յայս-
ցանէ յարուցանել որդիս Աբրահամու:
Բայց ահաւասիկ տապար առ արմին ծա- 9
ռոց կայ. ամենայն ծառ որ ոչ առնէ զպտ-
ուղ բարւոք՝ հատանի եւ ի հուր ար-
կանի:

Հարցանէին զնա ժողովուրդքն եւ ա- 10
սէին. Իսկ արդ զի՞նչ գործեսցուք: Պա- 11
տասխանի ետ եւ ասէ ցնոսա. Ոյր իցեն
երկու հանդերձք՝ տացէ զմին այնմ ոյր
ոչն գուցէ. եւ ոյր կայցէ կերակուր՝ նոյն-
պէս արասցէ: Եկին եւ մաքսաւորք մկր- 12
տիլ, եւ ասեն ցնա. Վարդապետ, զի՞նչ
գործեսցուք: Եւ նա ասէ ցնոսա. Մի՛ ինչ 13
աւելի քան զհրամայեալն ձեզ առնիցէք:
Հարցանէին զնա եւ զինուորքն եւ ասէին. 14
Եւ մեք զի՞նչ գործեսցուք: Ասէ ցնոսա.
Մի՛ զոք խռովիցէք եւ մի՛ զոք զրպարտիցէք,
շատ լիցին ձեզ թոշակքն ձեր:

Մինչ ակն ունէր ժողովուրդն՝ եւ խոր- 15
հէին ամենեքեան ի սիրտս իւրեանց վասն
Յովհաննու՝ մի՛թէ նա իցէ Քրիստոսն. պա- 16
տասխանի ետ ամենեցուն եւ ասէ. Ես
մկրտեմ զձեզ ջրով. բայց գայ զօրագոյն
քան զիս, զորոյ չեմ բաւական բառնալ

զխօշիկս. նա մկրտեսցէ զձեզ հոգւով սր-
17 բով եւ հրով: Որոյ հեծանոցն ի ձեռին իւ-
րում սրբել զկալ իւր՝ եւ ժողովել զցո-
րեանն ի շտեմարանս իւր, եւ զյարդն
18 այրեսցէ անշէջ հրով: Բազում եւ այլ
ինչ մխիթարութեամբ աւետարանէր ժո-
ղովրդեանն:

19 Բայց Հերովդէս չորրորդապետ յանդի-
մանեալ ի նմանէ վասն Հերովդիայ կնոջ
եղբօր իւրոյ՝ եւ վասն ամենայն չարեացն
20 զոր գործեաց Հերովդէս, յաւել եւ զայն
եւս ի վերայ ամենայնի, եւ եդ ի բանտի
զՅովհաննէս:

21 Եւ եղեւ ի մկրտել ամենայն ժողովր-
դեանն, եւ ընդ Յիսուսի մկրտելն եւ կալ
22 յաղօթս, բանալ երկնից, եւ իջանել
Հոգւոյն Սրբոյ մարմնաւոր տեսլեամբ
իբրեւ զաղաւնի ի վերայ նորա. եւ գալ
ձայն յերկնից՝ որ ասէր. Դու ես որդի
իմ սիրելի՝ ընդ քեզ հաճեցայ:

23 Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երես-
նից՝ սկսեալ՝ որոց որպէս եւ կարծէր որդի
Յովսեփայ, որ Յակոբեայն, որ Հեղեայն,
24 որ Մատաթեայն, որ Ղեւեայն, որ Մեղ-
քեայն, որ Յաննեայն, որ Յովսեփայն,
25 որ Մաաթեայն, որ Ամովսայն, որ Նա-
ւումայն, որ Եսղեայն, որ Նանգեայն
26 որ Մաաթեայն, որ Մատաթեայն, որ
Սեմեայն, որ Յովսեքեայն, որ Յովդայն,

որ Յովհաննայն, որ Ռեսայն, որ Զորոբա- 27
բելին, որ Սաղաթիէլին, որ Ներեայն,
որ Մելքեայն, որ Ադդեայն, որ Կովսա- 28
մայն, որ Եղմովդադայն, որ Երայն, որ 29
Յեսուայն, որ Եղիազարայն, որ Յովրա-
մայն, որ Մատթայն, որ Ղեւեայն, որ Սի- 30
մէովնին, որ Յուդային, որ Յովսեփայն,
որ Յովնանայն, որ Եղիակիմայն, որ Մել- 31
թեայն, որ Մեննայն, որ Մատաթայն,
որ Նաթանայն, որ Դաւթին, որ Յեսսեայն, 32
որ Ովբեդայն, որ Բոոսայն, որ Սաղմով-
նայն, որ Նաասոնին, որ Ամինադաբայն, 33
որ Արամայն, որ Ադմեայն, որ Առնեայն
որ Եսրովմայն, որ Փարեսին, որ Յուդային,
որ Յակովբայն, որ Իսահակայն, որ Աբ- 34
րահամուն, որ Թարային, որ Նաքովրայն,
որ Սերուքայն, որ Ռագաւայն, որ Փաղե- 35
կայն, որ Եբերայն, որ Սաղային, որ Կայ- 36
նանայն, որ Արփաքսադայն, որ Սեմայն,
որ Նոյին, որ Ղամեքայն, որ Մաթուսա- 37
ղային, որ Ենովքայն, որ Յարեդին, որ
Մաղաղայելին, որ Կայնանայն, որ Ենով- 38
սայն, որ Սեթայն, որ Ադամայն, որ Աս-
տուծոյն։

ԳԼՈՒԽ Դ

1 Եւ Յիսուս լի հոգւով սրբով դարձաւ
ի Յորդանանէ. եւ վարէր հոգւովն յա-
2 նապատ, աւուրս քառասուն փորձեալ
ի սատանայէ. եւ ոչ եկեր եւ ոչ արբ յա-
ւուրսն յայնոսիկ. եւ ի կատարելն նոցա
3 քաղցեաւ։ Եւ ասէ ցնա սատանայ. Եթէ
որդի ես Աստուծոյ, ասա քարիդ այդմիկ
4 զի հաց լիցի։ Պատասխանի ետ նմա Յի-
սուս եւ ասէ. Գրեալ է, եթէ ոչ հացիւ
միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ
Աստուծոյ։

5 Եւ հանեալ զնա ի լեառն մի բարձր՝
եցոյց նմա զամենայն թագաւորութիւնս
6 աշխարհի ի վայրկեան ժամանակի. եւ
ասէ ցնա սատանայ. Քեզ տաց զայս ա-
մենայն իշխանութիւն եւ զփառս սոցա,
զի ինձ տուեալ է, եւ ում կամիմ տամ
7 զսա։ Արդ դու եթէ անկեալ երկիր պա-
գանիցես առաջի իմ, քեզ եղիցի ամե-
8 նայն։ Պատասխանի ետ նմա Յիսուս եւ
ասէ. Գրեալ է, Երկիր պագցես Տեառն
Աստուծոյ քում, եւ զնա միայն պաշ-
տեսցես։

9 Եւ ած զնա յԵրուսաղէմ, եւ կացոյց
ի վերայ աշտարակի տաճարին. եւ ասէ
ցնա. Եթէ որդի ես Աստուծոյ, արկ ըզ-

քեզ աստի ի վայր: Զի գրեալ է, եթէ 10
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն
քո՝ պահել զքեզ. զի ի վերայ ձեռաց 11
բարձցեն զքեզ, մի՛ երբեք հարցես զքա-
րի զոտն քո: Պատասխանի ետ նմա Յի- 12
սուս եւ ասէ. Ասացեալ է, թէ ոչ փոր-
ձեսցես զՏէր Աստուած քո: Եւ կատա- 13
րեալ զամենայն փորձութիւնս սատա-
նայի, ի բաց եկաց ի նմանէ առ ժամա-
նակ մի:

ԲԿ. Եւ դարձաւ Յիսուս զօրութեամբ 14
Հոգւոյն ի Գալիլեա. եւ ել համբաւ զնմա-
նէ ընդ ամենայն կողմանս գաւառին: Եւ 15
նա ուսուցանէր ի ժողովուրդս նոցա փա-
ռաւորեալ յամենեցունց:

Եւ եկն ի Նազարեթ՝ ուր սնեալն էր. 16
եւ եմուտ ըստ սովորութեան իւրում յա-
ւուրն շաբաթուց ի ժողովուրդն: Եւ ե- 17
տուն նմա գիրս զԵսայեայ մարգարէի, եւ
յարեաւ ընթեռնուլ. եւ իբրեւ եբաց
զգիրսն՝ եգիտ զայն տեղի յորում գրեալն
էր. Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ 18
եւ օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց
առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սըր-
տիւք, քարոզել գերեաց զթողութիւն, 19
եւ կուրաց տեսանել. արձակել զվիրա-
ւորս ի թողութիւն, քարոզել զտարե-
կան Տեառն ընդունելի: Եւ խփեալ զգիր- 20
սն՝ ետ ցպաշտօնեայն, եւ նստաւ. եւ

ամենեցուն որ ի ժողովրդեանն էին աչք՝
21 ի նա հայէին: Եւ սկսաւ ասել ցնոսա.
22 Այսօր լցան գիրքս այս յականջս ձեր: Եւ
ամենեքին վկայէին նմա, եւ զարմանային
ընդ բանս շնորհացն՝ որ ելանէին ի բերա-
նոյ նորա. եւ ասէին. Ո՞չ սա է որդին
23 Յովսեփայ: Եւ ասէ ցնոսա. Ապաքէն ա-
սիցէք առ իս զառակս զայս. Բժիշկ,
բժշկեա զանձն քո. որչափ լուաք զոր ա-
րարեր ի Կափառնաում, արա եւ աստ
24 ի քում գաւառի: Եւ ասէ. Ամէն ասեմ
ձեզ՝ թէ չէ մարգարէ ընդունելի ի քա-
25 ղաքի իւրում: Արդարեւ ասեմ ձեզ զի
բազում այրիք էին յաւուրս Եղիայի ի
մէջ Իսրայէլի, յորժամ փակեցանն եր-
կինք զերիս ամս եւ զվեց ամիս, եւ եղեւ
26 սով մեծ ընդ ամենայն երկիր. եւ ոչ առ
մի ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց
միայն ի Սարեփթա Սիդոնացւոց առ
27 կին մի այրի: Եւ բազում բորոտք էին
յԻսրայէլի առ Եղիսէիւ մարգարէիւ. եւ
ոչ ոք ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն Նէ
28 եման ասորի: Եւ լցան ամենեքին բար-
կութեամբ ի ժողովրդեանն՝ իբրեւ լսէին
29 զայս: Եւ յարուցեալ հանին զնա արտա-
քոյ քաղաքին, եւ ածին զնա մինչեւ յար-
տեւան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նո-
30 ցա շինեալ էր՝ գահավէժ առնել զնա: Եւ
նա անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր:

ԲԲ. Եւ էջ ի Կափառնաում ի քաղաքն 31
Գալիլեացւոց, եւ ուսուցանէր զնոսա ի
շաբաթսն: Եւ զարմանային ընդ վարդա- 32
պետութիւն նորա, զի իշխանութեամբ
էր բան նորա:

Եւ էր ի ժողովրդեանն այր մի, զոր ու- 33
նէր այս դիւի պղծոյ, եւ աղաղակեաց ի
ձայն մեծ եւ ասէ. Թուլացո զի՞ կայ մեր 34
եւ քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսա-
նել զմեզ. գիտեմ զքեզ՝ ով ես սուրբդ
Աստուծոյ: Սաստեաց ի նա Յիսուս եւ ա- 35
սէ. Պապանձեաց եւ ել ի դմանէ. զգետ-
նեաց զնա դեւն ի մէջ անդ՝ եւ ել ի նմա-
նէ, եւ ինչ ոչ վնասեաց նմա: Եւ եղեն 36
զարմանալիք ի վերայ ամենեցուն, խօ-
սէին ընդ միմեանս եւ ասէին. Զի՞նչ է
բանս այս, զի իշխանութեամբ եւ զօրու-
թեամբ սաստէ այսոց պղծոց՝ եւ ելանեն:
Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն 37
տեղիս շուրջ զգաւառաւն:

Եւ յարուցեալ ի ժողովրդենէ անտի, 38
եմուտ ի տուն Սիմովնի: Զոքանչ Սիմով- 39
նի տագնապէր ջերմամբ մեծաւ, եւ աղա-
չեցին զնա վասն նորա: Եկաց առ նմա, 40
սաստեաց ջերմանն, եւ եթող զնա. եւ
վաղվաղակի յարեաւ՝ եւ պաշտէր զնոսա:

Եւ ընդ արեւուն մտանել՝ ամենեքեան 41
որոց էին հիւանդք ի պէսպէս ցաւս՝ բե-
րէին զնոսա առ նա: Եւ նա իւրաքան-

չիւր ումեք ի նոցանէ դնէր ձեռս՝ եւ
42 բժշկէր զնոսա: Ելանէին եւ դեւք ի բազ-
մաց, աղաղակէին եւ ասէին. Եթէ դու
ես որդի Աստուծոյ. եւ նա սաստէր, եւ
ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին
զնա թէ Քրիստոսն է:

43 ԲԳ. Եւ իբրեւ տիւ եղեւ՝ ել գնաց
յանապատ տեղի. եւ ժողովուրդքն խըն-
դրէին զնա. եկին մինչեւ առ նա՝ եւ ար-
գելուին զնա, զի մի՛ գնասցէ ի նոցանէ:
44 Եւ նա ասէ ցնոսա. Եւ այլոց քաղաքաց
պարտ է ինձ աւետարանել զարքայու-
թիւնն Աստուծոյ, զի յայն իսկ առաքե-
45 ցայ: Եւ քարոզէր ի ժողովուրդսն Գա-
լիլեացւոց:

ԳԼՈՒԽ Ե

1 Եւ եղեւ ի խռնել զնովաւ ժողովըր-
դեանն եւ լսել զբանն Աստուծոյ, եւ
ինքն կայր առ ծովակին Գեննեսարեթայ:
2 Եւ ետես երկուս նաւս՝ զի կային առ
ծովակին, եւ ձկնորսքն ելեալ ի նոցանէ
3 լուանային զգործիսն: Ել նա ի մի նա-
ւուցն՝ որ էր Սիմովնի, եւ աղաչեաց զնա
սակաւիկ մի տանել ի ներքս ի ցամաքէն.
նստաւ, եւ ուսուցանէր ի նաւէ անտի
4 զժողովուրդս: Եւ իբրեւ լռեաց ի խօ-
սիցն, ասէ ցՍիմովն. Խաղացո՛ ի խորն, եւ

արկէք զգործիս ձեր յորս: Պատասխա- 5
նի ետ Սիմոն եւ ասէ ցնա. Վարդապետ,
զամենայն գիշերս աշխատ եղեաք՝ եւ ոչինչ
կալաք, բայց վասն քո բանիդ արկցուք
զգործիսս: Զայս իբրեւ արարին՝ փակե- 6
ցին ի ներքս բազմութիւն ձկանց յոյժ,
մինչեւ պարպատէին ուռկանք նոցա: Եւ 7
ակնարկէին որսակցացն ի միւս նաւն՝ գալ
օգնել նոցա. եւ եկին եւ լցին երկոքին
նաւքն՝ մինչեւ մերձ ընկղմել նոցա: Ի- 8
բրեւ ետես Սիմոն Պետրոս՝ անկաւ առ
ծունկս Յիսուսի եւ ասէ. Ի բաց գնա
յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես:
Քանզի ահ պատեաց զնա, եւ զամենե- 9
սեան որ ընդ նմայն էին՝ վասն որսոյ ձը-
կանցն զոր ըմբռնեցին. Նոյնպէս եւ զՅա- 10
կովբոս եւ զՅովհաննէս զորդիսն Զեբե-
դեայ. որ էին որսակիցք Սիմոնի: Եւ ա-
սէ ցՍիմոն Յիսուս. Մի երկնչիր, յայսմ
հետէ զմարդիկ որսայցես ի կեանս: Եւ 11
հանեալ զնաւսն ի ցամաք, թողին զամե-
նայն, եւ գնացին զհետ նորա:

ԲԴ. Եւ եղեւ ի հասանելն նորա ի մի քա- 12
ղաքացն, ահա այր մի լի բորոտութեամբ
իբրեւ ետես զՅիսուս՝ անկեալ ի վերայ
երեսաց աղաչեաց զնա, եւ ասէ. Տէր, ե-
թէ կամիս, կարող ես զիս սրբել: Ձգեաց 13
զձեռն իւր՝ հասոյց ի նա եւ ասէ. Կամիմ՝
սրբեաց. եւ վաղվաղակի գնաց ի նմանէ

14 բորոտութիւնն: Եւ նա պատուիրեաց
նմա՝ մի՛ ումեք ասել, այլ թէ երթ ցո՛յց
զանձն քո քահանային. եւ մատո՛ պա-
տարագ վասն սրբութեան քո՝ որպէս եւ
հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն նո-
15 ցա: Եւ յորդէր առաւել բանն զնմանէ.
եւ ժողովէին ժողովուրդք բազումք լը-
սել՝ եւ բժշկել ի հիւանդութենէ իւ-
16 րեանց: Եւ նա խոյս տայր յանապատ
տեղիս, եւ կայր յաղօթս:

17 ԲԵ. Եւ եղեւ ի միում աւուրց՝ եւ ինքն
ուսուցանէր, եւ փարիսեցիքն եւ օրի-
նացն վարդապետք նստէին. որք ժողո-
վեալ էին յամենայն քաղաքաց Գալիլեա-
ցւոց՝ եւ Հրէաստանի եւ Երուսաղեմի.
եւ զօրութիւն Տեառն էր ի բժշկել զնո-
18 սա: Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝
որ էր անդամալոյծ, եւ խնդրէին զնա մու-
ծանել ի ներքս՝ եւ դնել առաջի նորա:
19 Եւ իբրեւ ոչ գտանէին թէ ընդ որ մու-
ծանիցեն զնա ի ներքս վասն ամբոխին,
ելին ի տանիս եւ ի ցուոցն կախեցին ըզ-
նա, եւ իջուցին մահճօքն հանդերձ ի
20 մէջ առաջի Յիսուսի: Եւ տեսեալ զհա-
ւատն նոցա՝ ասէ ցնա. Այր դու՝ թո-
21 ղեալ լիցին քեզ մեղք քո: Սկսան խոր-
հել դպիրքն եւ փարիսեցիքն, եւ ասեն.
Ո՞ է սա՝ որ խօսի զհայհոյութիւնս, ո՞վ
կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն Աս-

տուած: Իբրեւ գիտաց Յիսուս զխոր֊ 22
հուրդս նոցա, պատասխանի ետ եւ ասէ
ցնոսա. Զի՞ խորհիք ի սիրտս ձեր: Զի՞նչ 23
դիւրագոյն է, ասել՝ Թողեա՜լ լիցին քեզ
մեղք քո, եթէ ասել՝ արի՛ եւ գնա: Այլ 24
զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի
որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս, —
ասէ ցանդամալոյծն, — քեզ ասեմ՝ արի՛,
ա՛ռ զմահիճս քո՝ եւ երթ ի տուն քո: Եւ 25
առժամայն յարուցեալ առաջի ամենե֊
ցուն՝ ա՛ռ զիւրեւ յորոյ վերայ անկեալ
դնէր, գնաց ի տուն իւր, եւ փառաւոր
առնէր զԱստուած: Զարմանք կալան զա֊ 26
մենեսեան, եւ փառաւոր առնէին զԱս֊
տուած. լի եղեն ահիւ, եւ ասեն, եթէ
տեսաք այսօր նոր նշանս:

ԲԶ. Եւ յետ այնորիկ ել անտի՝ եւ ե֊ 27
տես մաքսաւոր մի՝ որում անուն էր Ղեւի,
զի նստէր ի մաքսաւորութեան. եւ ասէ
ցնա. Եկ զկնի իմ: Եւ թողեալ զամենայն՝ 28
յարեաւ գնաց զկնի նորա: Եւ արար ըն֊ 29
դունելութիւն մեծ նմա Ղեւի ի տան իւ֊
րում. եւ էր ժողովուրդ բազում մաքսա֊
ւորաց եւ այլոց՝ որ էին բազմեալ ընդ
նոսա: Եւ տրտնջէին փարիսեցիքն եւ դը֊ 30
պիրքն նոցա զնմանէ առ աշակերտսն նորա՝
եւ ասէին. ընդէ՞ր ընդ մաքսաւորս եւ ընդ
մեղաւորս ուտէք եւ ըմպէք: Պատաս֊ 31
խանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ոչինչ

են պիտոյ բժիշկք ողջոց, այլ հիւանդաց:
32 Եւ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղա֊
33 ւորս յապաշխարութիւն: Եւ նոքա ա֊
սեն ցնա. ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու
պահեն ստէպ՝ եւ խնդրուածս առնեն,
նոյնպէս եւ փարիսեցւոցն, եւ քոյքդ ու֊
34 տեն եւ ըմպեն: Եւ նա ասէ ցնոսա. Մի֊
թէ կարո՞ղ էք մանկանց առագաստի,
մինչ փեսայն ընդ նոսա իցէ, հրաման
35 տալ պահել: Եկեսցեն աւուրք յորժամ
բարձցի ի նոցանէ փեսայն, ապա պա֊
36 հեսցեն յաւուրսն յայնոսիկ: Ասաց եւ
առակ մի առ նոսա, թէ ոչ ոք արկանէ ի
նոր հանդերձէ ի վերայ հնացեալ ձորձոյ.
ապա թէ ոչ՝ եւ զնորն պատառէ, եւ
ընդ հնոյն չմիաբանի կապերտն որ ի նո֊
37 րոյն: Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս
հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին
նոր զտիկսն հինս, ինքն հեղու, եւ տիկքն
38 կորնչին: Այլ գինի նոր ի տիկս նորս ար֊
39 կանելի է, եւ երկոքին պահին: Եւ ոչ ոք
ըմպէ զհինն՝ եւ կամիցի զնորն. քանզի
ասէ՝ թէ հինն քաղցրագոյն է:

ԳԼՈՒԽ Զ

1 ԲԷ. Եւ եղեւ ի շաբաթու յերկրորդում
առաջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն.
եւ աշակերտքն նորա կորզէին հասկ՝

շփէին ընդ ափ, եւ ուտէին: Եւ ոմանք ի 2
փարիսեցւոցն ասեն ցնոսա. Զի՞նչ գոր-
ծէք՝ զոր չէ օրէն ի շաբաթու: Պատաս- 3
խանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. Ձի՞ցէ ըն-
թերցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ, յոր-
ժամ քաղցեաւն ինքն՝ եւ որ ընդ նմայն
էին. զիա՞րդ եմուտ նա ի տունն Աստու- 4
ծոյ, եւ զհացն զառաջաւորութեան ե-
կեր՝ եւ ետ այնոցիկ որ ընդ նմայն էին.
զոր ոչ էր օրէն ումեք ուտել, բայց միայն
քահանայապետիցն: Եւ ասէ ցնոսա. Տէր 5
է որդի մարդոյ եւ շաբաթու:

Եւ եղեւ ի միւսում շաբաթուն մտա- 6
նել նմա ի ժողովուրդն՝ եւ ուսուցանել.
եւ էր անդ այր մի՝ եւ ձեռն իւր աջ գօ-
սացեալ էր: Եւ սպասէին նմա դպիրքն 7
եւ փարիսեցիք՝ թէ ի շաբաթուն բժշկի-
ցէ, զի գտանիցեն չարախօսութիւն զնը-
մանէ: Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա. 8
ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօսացեալ էր.
Արի՛, անց ի մէջ: Եւ նա յարուցեալ ե-
կաց: Ասէ ցնոսա Յիսուս. Հարցից ինչ 9
զձեզ. զի՞նչ արժան է ի շաբաթու, բա-
րի՞ ինչ առնել եթէ չար գործել. ոգի մի
ապրեցուցանել թէ կորուսանել: Եւ հա- 10
յեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին՝
ասէ ցնա. Ձգեա զձեռն քո: Եւ նա ձգեաց,
եւ հաստատեցաւ ձեռն նորա իբրեւ ըզ-
միւսն: Նոքա լցան յիմարութեամբ, եւ 11

խօսէին ընդ միմեանս՝ թէ զինչ առնիցեն
Յիսուսի:

12 Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ
ել ի լեառն կալ յաղօթս, եւ հանէր զգի-
13 շերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ: Եւ ի-
բրեւ այգ եղեւ՝ կոչեաց զաշակերտսն
իւր, եւ ընտրեաց ի նոցանէ երկոտա-
սանս, զորս եւ առաքեալս անուանեաց.
14 զՍիմովն՝ զոր եւ Պետրոս անուանեաց,
եւ զԱնդրէաս զեղբայր նորին, եւ զՅա-
կովբոս եւ զՅովհաննէս, եւ զՓիլիպպոս եւ
15 զԲարթուղիմէոս, եւ զՄատթէոս եւ ըզ-
Թովմաս, եւ զՅակովբոս Ալփեայ, եւ
զՍիմովն զկոչեցեալն Նախանձայոյզ, եւ
16 զՅուդա Յակովբայ, Եւ զՅուդա Իսկա-
17 րիովտացի՝ որ եղեւ իսկ մատնիչ: Եւ ի-
ջեալ նոքօք հանդերձ ի տեղի մի տափա-
րակ, եւ ժողով աշակերտացն նորա՝ եւ
բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յա-
մենայն Հրէաստանէ եւ յԵրուսաղեմէ՝ եւ
յայնմ կողմանէ՝ եւ ի ծովեզերէն Տիւրո-
18 սի եւ Սիդովնի, որ եկին լսել ի նմանէ՝
եւ բժշկել ի հիւանդութենէ իւրեանց.
19 եւ նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին: Եւ
ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ
ի նա, զի զօրութիւն բազում ելանէր ի
նմանէ եւ բժշկէր զամենեսին:

20 Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտսն
իւր՝ եւ ասէ. Երանի՜ աղքատացդ հոգւով.

զի ձեր է արքայութիւնն Աստուծոյ: Երա- 21
նի որ քաղցեալ են այժմ, զի յագեսցին:
Երանի որ լան այժմ, զի ծիծաղեսցին: Ե- 22
րանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ
մարդիկ, եւ յորժամ որոշիցեն զձեզ եւ
նախատիցեն, եւ հանիցեն անուն չար
զձէնջ վասն որդւոյ մարդոյ: Ուրախ լիջիք 23
յաւուր յայնմիկ եւ ցնծասջիք, զի ահա
վարձք ձեր բազում են յերկինս. ըստ
դմին օրինակի առնէին մարգարէիցն հարք
իւրեանց: Բայց վա՛յ ձեզ մեծատանցդ, 24
զի ընկալայք զմխիթարութիւն ձեր: Վա՛յ 25
ձեզ որ յագեալդ էք այժմ, զի քաղցիցէք.
վա՛յ ձեզ որ ծիծաղիքդ այժմ, զի սգայ-
ցէք եւ լայցէք: Վա՛յ ձեզ՝ յորժամ բա- 26
րի ասիցեն զձէնջ ամենայն մարդիկ, զի
այդպէս առնէին սուտ մարգարէիցն հարք
նոցա:

Այլ ձեզ ասեմ որ լսէքդ. Սիրեցէք 27
զթշնամիս ձեր. բարի արարէք ատելեաց
ձերոց: Օրհնեցէք զանիծիչս ձեր. աղօթս 28
արարէք ի վերայ նեղչաց ձերոց: Որ հար- 29
կանէ զծնօտ քո՝ մատո նմա եւ զմիւսն. եւ
որ հանէ ի քէն զբաճկոն քո՝ մի արգե-
լուր ի նմանէ եւ զշապիկս: Ամենայնի որ 30
խնդրէ ի քէն՝ տուր, եւ զոր ինչ հանէ ոք
ի քէն՝ մի պահանջեր: Եւ որպէս կամիք 31
թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս ա-
րասջիք եւ դուք նոցա: Եւ եթէ սիրէք 32

դուք զսիրելիս ձեր՝ զի՞նչ շնորհ է ձեր.
զի եւ մեղաւորք սիրեն զսիրելիս իւրեանց:
33 Եւ եթէ բարի առնէք բարերարաց ձե-
րոց՝ ո՞ր շնորհ է ձեր. զի եւ մեղաւորք
34 զնոյն գործեն: Եւ եթէ տայք փոխ այ-
նոցիկ՝ յորոց ակն ունիցիք առնուլ՝ ո՞ր
շնորհ է ձեր. քանզի եւ մեղաւորք մե-
ղաւորաց փոխ տան, զի առցեն անդրէն
35 զկշիռն: Բայց սիրեցէք զթշնամիս ձեր,
եւ բարի արարէք ատելեաց ձերոց. եւ
տուք փոխ՝ ուստի ոչ ակն ունիցիք առ-
նուլ. եւ եղիցին վարձք ձեր բազում, եւ
եղիջիք որդիք Բարձրելոյ. զի նա քաղցր
36 է ի վերայ չարաց եւ ապաշնորհաց: Ե-
ղերուք գթածք՝ որպէս եւ հայրն ձեր
37 գթած է: Մի դատիք, եւ ոչ դատիցիք.
մի պարտէք, եւ ոչ պարտիցիք. արձա-
38 կեցէք եւ արձակիցիք: Տուք՝ եւ տացի
ձեզ, չափ բարւոք թաթաղուն շարժուն
զեղուն՝ տացեն ի գոգս ձեր: Նովին չա-
փով որով չափէք՝ չափեսցի ձեզ:
39 Ասաց եւ առակ մի առ նոսա. Միթէ
կարիցէ՞ կոյր կուրի առաջնորդել. ո՞չ ա-
պաքէն երկոքին ի խորխորատ անկանիցին:
40 Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ
իւր. ամենայն կատարեալն եղիցի իբրեւ
զվարդապետ իւր:
41 Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր
քո, եւ ի քում ական զգերանդ ոչ նշմա-

րես։ Կամ զիա՞րդ կարես ասել ցեղբայր 42
քո. եղբա՛յր, թող հանից զշիւղդ յականէ
քումմէ, եւ դու ի քում ական զգերանդ
ոչ տեսանես։ Կեղծաւոր, հան նախ զգե֊
րանդ յականէ քումմէ, եւ ապա հայես֊
ջիր հանել զշիւղ յականէ եղբօր քո։
Զի ոչ է ծառ բարի՝ որ առնէ պտուղ 43
չար, եւ ոչ դարձեալ ծառ չար՝ որ առնէ
պտուղ բարի. զի իւրաքանչիւր ծառ ի
պտղոյ իւրմէ ճանաչի։ Զի ոչ եթէ ի փշոց 44
քաղեն թուզ, եւ ոչ ի մորենւոյ կթեն
խաղող։ Մարդ բարի՝ ի բարի գանձուց 45
սրտի իւրոյ բղխէ զբարի, եւ մարդ չար՝
ի չարէն բղխէ զչար. քանզի ի յաւելուա֊
ծոյ սրտին խօսի բերան նորա։
Զի՞ կոչէք զիս Տէր Տէր, եւ զոր ա֊ 46
սեմն ոչ առնէք։ Ամենայն որ գայ առ իս, 47
եւ լսէ զբանս իմ՝ եւ առնէ զնոսա, ցու֊
ցից ձեզ ում նման է։ Նման է առն, որ 48
շինիցէ տուն. որ փորեաց եւ խորեաց, եւ
եդ հիմն ի վերայ վիմի. ի յառնել հեղե֊
ղաց՝ բաղխեաց գետ զտունն, եւ ոչ կա֊
րաց շարժել զնա. զի հաստատեալ էր
հիմն ի վերայ վիմի։ Իսկ որ լսէ զբանս 49
իմ՝ եւ ոչ առնէ, նման է առն՝ որ շինիցէ
տուն ի վերայ հողոյ, առանց հիման. զոր
բաղխեաց գետ, եւ վաղվաղակի անկաւ,
եւ եղեւ կործանումն տանն այնորիկ մեծ։

ԳԼՈՒԽ Է

1 ԳԲ. Եւ իբրեւ կատարեաց զամենայն
զբանս իւր ի լսելիս ժողովրդեանն, ե֊
մուտ ի Կափառնաում։
2 Հարիւրապետի ուրումն ծառայ չա֊
րաչար հիւանդացեալ՝ մերձ էր ի վախ֊
3 ճանել, որ էր նմա պատուական։ Իբրեւ
լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն ի
Հրէից, աղաչէր զնա՝ զի եկեսցէ ապրե֊
4 ցուսցէ զծառայն նորա։ Եւ նոքա եկեալ
առ Յիսուս՝ աղաչէին զնա ստէպ եւ ա֊
սէին, թէ արժանի է՝ որում զշնորհս
5 զայս առնես։ Զի սիրէ զազգս մեր, եւ
6 զժողովրդանոցն նա շինեաց մեզ։ Եւ Յի֊
սուս գնաց ընդ նոսա։ Իբրեւ ոչինչ կարի
հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հա֊
րիւրապետն բարեկամս, եւ ասէ ցնա.
Տէր, մի՛ ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւա֊
կան եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես.
7 վասն որոյ եւ ոչ զանձն համարեցայ
արժանի առ քեզ գալոյ. այլ ասա բա֊
8 նիւ՝ եւ բժշկեսցի մանուկս իմ։ Քանզի
եւ ես այր մի եմ կարգեալ ընդ իշխա֊
նութեամբ. ունիմ ընդ ինեւ զինուորս,
եւ ասեմ սմա՝ երթ, եւ երթայ. եւ այ֊
լում թէ եկ, եւ գայ. եւ ծառայի իմում
9 թէ արա՛ զայս, եւ առնէ։ Եւ իբրեւ

լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ, դարձաւ
առ ժողովուրդն որ երթային զհետ նո-
րա՝ եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ, թէ եւ ոչ
յԻսրայէլի այսչափ հաւատս գտի: Եւ 10
դարձան անդրէն պատգամաւորքն ի
տուն, եւ գտին զծառայն հիւանդ՝ բժըշ-
կեալ:

ԳԳ. Եւ եղեւ ի վաղիւն երթայր ի քա- 11
ղաք մի՝ որում անուն էր Նային. երթային
ընդ նմա եւ աշակերտք նորա եւ ժողո-
վուրդք բազում: Իբրեւ մերձ եղեւ ի 12
դուռն քաղաքին, եւ ահա ելանէր մե-
ռեալ մի, որդի միամօր մօր իւրոյ, եւ նա
էր այրի. եւ ժողովուրդ բազում քաղա-
քին էր ընդ նմա: Իբրեւ ետես զնա Տէր՝ 13
գթացաւ ի նա եւ ասէ. Մի՛ լար: Եւ մա- 14
տուցեալ մերձեցաւ ի դագաղն. եւ որք
բարձեալն տանէին՝ զտեղի առին, եւ ա-
սէ. Պատանի դու, քեզ ասեմ՝ արի: Կանգ- 15
նեցաւ եւ նստաւ մեռեալն, եւ սկսաւ
խօսել. եւ ետ զնա ցմայր իւր: Եւ ահ 16
կալաւ զամենեսին, եւ փառաւոր առ-
նէին զԱստուած՝ եւ ասէին, թէ մարգա-
րէ ոմն մեծ յարուցեալ է ի միջի մերում.
եւ թէ այց արար Աստուած ժողովրդեան
իւրում ի բարութիւն: Եւ ել զրոյցս այս 17
ընդ ամենայն Հրէաստան վասն նորա, եւ
ընդ ամենայն կողմանս աշխարհին:

Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն 18

19 իւր վասն ամենայնի այսորիկ: Եւ կոչեաց
առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն
իւրոց Յովհաննէս, առաքեաց առ Տէր
եւ ասէ. Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ
20 այլում ակն կալցուք: Եւ եկեալ արքն
առ նա՝ ասեն. Յովհաննէս Մկրտիչ առա-
քեաց զմեզ առ քեզ՝ եւ ասէ. Դո՞ւ ես
որ գալոցն ես՝ եթէ այլում ակն կալցուք:
21 Եւ ի նմին ժամու բժշկեաց զբազումս ի
հիւանդութեանց եւ ի հարուածոց եւ
յայսոց չարաց. եւ կուրաց բազմաց
22 շնորհեաց տեսանել: Պատասխանի ետ
նոցա եւ ասէ. Երթայք պատմեցէք Յով-
հաննու՝ զոր տեսէք եւ լուայք. զի կոյրք
տեսանեն, եւ կաղք գնան, բորոտք սըր-
բին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղ-
23 քատք աւետարանին. եւ երանի իցէ՝ որ
ոչ գայթագղեսցի յիս:
24 Եւ իբրեւ գնացին հրեշտակքն Յովհան-
նու, սկսաւ խօսել ընդ ժողովուրդսն
վասն Յովհաննու. Զի՞նչ ելէք յանապատ
տեսանել. եղէգն շարժուն ի հողմոյ:
25 Այլ զի՞նչ ելէք տեսանել. այր ի հան-
դերձս փափկութեան զարդարեալ. ահա-
ւանիկ որք ի հանդերձս երեւելիս եւ ի
26 փափկութեան են՝ յարքունիս են: Այլ
զի՞նչ ելէք տեսանել. մարգարէ. այո, ա-
սեմ ձեզ՝ առաւել եւս քան զմարգարէ:
27 Զի սա է՝ վասն որոյ գրեալ է, թէ ահա

առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո՝ որ
յարդարեսցէ զճանապարհս քո առաջի
քո: Ամէն ասեմ ձեզ, մեծ ի ծնունդս 28
կանանց մարգարէ քան զՅովհաննէս ոչ
ոք է. բայց փոքրիկն յարքայութեան Աս-
տուծոյ մեծ է քան զնա: Եւ ամենայն 29
ժողովուրդն իբրեւ լուաւ, եւ մաքսա-
ւորքն, արդարացուցին զԱստուած. զի
մկրտեցան ի մկրտութիւնն Յովհաննու:
Իսկ փարիսեցիքն եւ օրինականքն զխոր- 30
հուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս
իւրեանց, զի ոչ մկրտեցան ի նմանէ: Արդ 31
ում նմանեցուցից զմարդիկ ազգիս այսո-
րիկ. եւ ում իցեն նմանօղք: Նման են 32
մանկտւոյ՝ որ ի հրապարակս նստիցին,
կարդայցեն զմիմեանս եւ ասիցեն. փողս
հարաք ձեզ՝ եւ ոչ կաքաւեցէք, ողբա-
ցաք՝ եւ ոչ լացէք: Եկն Յովհաննէս մկր- 33
տիչ, ոչ ուտէր եւ ոչ ըմպէր, եւ ասէիք.
դեւ գոյ ի նմա: Եկն որդի մարդոյ ուտէ 34
եւ ըմպէ, եւ ասէք. ահա այր կերող եւ
արբեցող՝ բարեկամ մաքսաւորաց եւ մե-
ղաւորաց: Եւ արդարացաւ իմաստու- 35
թիւն յորդւոց իւրոց:
ԳԴ. Աղաչէր զնա ոմն ի փարիսեցւոցն՝ 36
զի կերիցէ հաց ընդ նմա. եւ մտեալ ի
տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ: Եւ կին 37
մի էր ի քաղաքին մեղաւոր. իբրեւ գի-
տաց թէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն,

38 բերեալ շիշ մի իւղոյ ազնուի, կայր յե-
տոյ առ ոտս նորա, լայր, եւ արտա-
սուօքն սկսաւ թանալ զոտս նորա. եւ
հերով գլխոյ իւրոյ ջնջէր, եւ համբու-
39 րէր զոտս նորա, եւ օծանէր իւղովն: Եւ
տեսեալ փարիսեցւոյն՝ որ կոչեացն զնա.
ասէր ընդ միտս իւր. Սա թէ մարգարէ
ոք էր, ապա գիտէր թէ ով եւ որպիսի
ոք կին մերձենայ ի սա, զի մեղաւոր է:
40 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա.
Սիմովն, ունիմ ինչ ասել քեզ: Եւ նա
41 ասէ. Ասա, վարդապետ: Եւ ասէ. Եր-
կու պարտապանք էին ուրումն փոխա-
տուի. միոյն պարտէր հինգ հարիւր դա-
42 հեկան, եւ միւսն յիսուն: Եւ իբրեւ ոչ
գոյր նոցա հատուցանել, երկոցունցն շը-
նորհեաց. արդ ասա, ո՞վ առաւել սիրես-
43 ցէ զնա: Ասէ Սիմովն. Ինձ այսպէս թուի՝
եթէ որում զբազումն շնորհեաց: Եւ նա
44 ասէ ցնա. Ուղիղ դատեցար: Եւ դար-
ձեալ ի կինն կողմն, ասէ ցՍիմովն. Տե-
սանե՞ս զայս կին. մտի ի տուն քո, ջուր
ոտից իմոց ոչ ետուր, իսկ սա արտա-
սուօք իւրովք եթաց զոտս իմ, եւ հերով
45 իւրով ջնջեաց: Համբոյր մի դու ոչ ետուր
ինձ. սա աւասիկ յորմէ հետէ մտեալ
եմ՝ ոչ դադարեաց ի համբուրելոյ զոտս
46 իմ. իւղով զգլուխ իմ ոչ օծեր. սա իւղով
47 անուշիւ օծ: Վասն որոյ ասեմ քեզ. թո-

ղեալ լիցին սմա մեղք իւր բազում, զի յոյժ
սիրեաց. զի որում շատ թողուցու՝ շատ
սիրէ, եւ որում սակաւ՝ սակաւ: Եւ ասէ 48
ցնա. Թողեալ լիցին քեզ մեղք քո: Եւ 49
սկսան՝ որ բազմեալն էին ընդ նմա, ասել
ընդ միտս իւրեանց. ո՞վ է սա՝ որ զմեղս
թողու: Եւ նա ասէ ցկինն. հաւատք քո 50
կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն:

ԳԼՈՒԽ Ը

ԳԵ. Եւ եղեւ յետ այնորիկ՝ եւ ինքն 1
շրջէր ընդ քաղաքս եւ ընդ գեօղս, քարո-
զէր եւ աւետարանէր զարքայութիւն Աս-
տուծոյ, եւ երկոտասանքն ընդ նմա. եւ 2
կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայսոց
չարաց եւ ի հիւանդութեանց. Մարիամ՝
որ կոչէր Մագդաղենացի, յորմէ եօթն
դեւն ելեալ էր. եւ Յովաննա կին Քուզայ՝ 3
հազարապետին Հերովդի, եւ Շուշան, եւ
այլք բազումք, որք պաշտէին զնա յըն-
չից իւրեանց:

Եւ ի ժողովել բազում ժողովրդոց, եւ 4
ըստ քաղաքաց քաղաքաց եկելոց առ նա,
ասէ առակաւ. Ել սերմանացան սերմա- 5
նել զսերմանիս իւր. եւ ի սերմանելն իւ-
րում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ
եւ եղեւ կոխան, եւ թռչունք երկնից կե-

6 րան զնա: Եւ այլն անկաւ յապառաժի,
եւ ընդ բուսանելն՝ չորացաւ, առ ի չը-
7 գոյէ հիւթոյ: Եւ այլն անկաւ ի մէջ փը-
շոց, եւ ընդ նմին բուսեալ փշոցն՝ հեղ-
8 ձուցին զնա: Եւ այլն անկաւ յերկիր
բարի եւ պարարտ, եւ բուսեալ՝ արար
պտուղ հարիւրապատիկ: Զայս իբրեւ
խօսեցաւ, ասէ. Որ ունիցի ականջս լսե-
9 լոյ լուիցէ: Հարցանէին զնա աշակերտքն,
10 թէ զի՞նչ իցէ առակն: Եւ նա ասէ. Ձեզ
տուեալ է գիտել զխորհուրդս արքայու-
թեան Աստուծոյ, բայց այլոցն առակօք.
զի տեսցեն՝ եւ մի՛ տեսցեն, եւ լուիցեն՝
11 եւ մի՛ իմասցին: Բայց առակն այս ինչ է.
12 սերմն բանն Աստուծոյ է. եւ որք առ
ճանապարհաւն, այնոքիկ են որ լսենն,
եւ ապա գայ սատանայ՝ հանէ զբանն ի
սրտից նոցա, զի մի՛ հաւատասցեն եւ
13 ապրեսցին: Եւ որք յապառաժին, որք
յորժամ լսիցեն՝ խնդութեամբ ընդունին
զբանն, եւ արմատս ոչ ունիցին. որք առ
ժամանակ մի հաւատան, եւ ի ժամա-
14 նակի փորձութեան հեռանան: Իսկ որ ի
մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որ իբրեւ
լսեն զբանն՝ եւ ի հոգս եւ ի մեծութիւն
եւ ի ցանկութիւն աշխարհիս զբաղեալ,
15 հեղձնուն եւ անպտուղ լինին: Իսկ որ
յերկիրն պարարտ, որոց բարուք եւ
զուարթագին սրտիւ լուեալ զբանն՝ ըն-

դունին, եւ տան պտուղ համբերու-
թեամբ։

Ոչ ոք լուցանէ ճրագ եւ թաքուցանէ 16
ընդ կարասեաւ՝ կամ դնէ ընդ մահճօք.
այլ ի վերայ աշտանակի դնէ, զի որ մտա-
նեն՝ զլոյս տեսցեն։ Զի ոչ ինչ ծածուկ՝ որ 17
ոչ յայտ լիցի. եւ ոչ գաղտնի՝ որ ոչ ծա-
նիցի, եւ եկեսցէ ի յայտ։ Տեսէք այսու- 18
հետեւ զիարդ լսէք. զի ոյր գուցէ՝ տա-
ցի նմա, եւ ոյր ոչն գուցէ՝ եւ զոր կար-
ծէն թէ ունիցի՝ բարձցի ի նմանէ։

Եկին առ նա մայրն եւ եղբարք իւր, 19
եւ ոչ կարէին հասանել ի նա վասն բազ-
մութեանն։ Ազդ եղեւ նմա եւ ասեն. 20
Մայր քո եւ եղբարք քո կան արտաքոյ՝
եւ կամին զքեզ տեսանել։ Եւ ասէ ցնո- 21
սա. Մայր իմ եւ եղբարք իմ սոքա են,
որ զբանն Աստուծոյ լսեն եւ առնեն։

ԳԶ. Եւ եղեւ ի միում աւուրց ինքն ել 22
ի նաւ՝ եւ աշակերտքն նորա, եւ ասէ
ցնոսա. Եկայք անցցուք յայնկոյս ծովա-
կիս. եւ գնացին։ Եւ մինչդեռ նաւէին՝ ի 23
քուն եմուտ. եւ էջ մրրիկ հողմոյ ի ծո-
վակն՝ եւ ուռնոյր, եւ տագնապէին։ Մա- 24
տուցեալ զարթուցին զնա եւ ասեն. Վար-
դապետ, վարդապետ, կորնչիմք աւասիկ.
եւ նա յարուցեալ սաստեաց հողմոյն եւ
խռովութեան ջուրցն՝ եւ հանդարտեցին,
եւ եղեւ խաղաղութիւն։ Ասէ ցնոսա. 25

ուր են հաւատք ձեր. եւ զահի հարեալ
զարմացան, եւ ասէին ցմիմեանս. Ո՞վ
արդեօք իցէ սա՝ զի եւ հողմոց եւ ջրոց
26 հրաման տայ, եւ հնազանդին սմա։ Եւ
նաւեցին իջին յաշխարհն Գերգեսացւոց.
որ է յայնկոյս հանդէպ Գալիլեայ։

27 Եւ ընդ ելանելն նորա ի ցամաք, պա-
տահեաց այր մի ի քաղաքէն՝ յորում էին
դեւք. եւ բազում ժամանակս չէր հան-
դերձ զգեցեալ, եւ ոչ ի տան բնակեալ,
28 այլ ի գերեզմանս։ Եւ տեսեալ զՅիսուս,
աղաղակեաց եւ անկաւ առաջի նորա, եւ
ասէ մեծաձայն. Զի՞ կայ իմ եւ քո, Յի-
սուս որդի Աստուծոյ բարձրելոյ, աղա-
29 չեմ զքեզ մի՛ տանջեր զիս։ Քանզի հրա-
ման տայր այսոյն պղծոյ ելանել ի մար-
դոյ անտի. զի բազում ժամանակս յա-
փշտակեալ էր զնա, եւ կապէր ի շղ-
թայս, եւ պահէր յերկաթս, եւ խզէր
զկապանսն, եւ վարէր ի դիւէն յանա-
30 պատս։ Եհարց ցնա Յիսուս եւ ասէ.
Զի՞նչ անուն է քեզ։ Եւ նա ասէ. Լե-
գէոն։ Զի դեւք բազումք մտեալ էին ի
31 նա. եւ աղաչէին զնա զի մի՛ հրաման տա-
32 ցէ նոցա երթալ յանդունդս։ Եւ էր
անդ երամակ մի խոզից բազմաց արօտա-
կան ի լերինն. եւ աղաչեցին զնա զի հրա-
ման տացէ նոցա մտանել ի նոսա. եւ
33 հրամայեաց նոցա։ Եւ ելեալ դեւքն

յառնէն՝ մտին ի խոզսն , եւ դիմեաց
երամակն ի դարէ անտի ի ծովակն՝ եւ
հեղձաւ: Իբրեւ տեսին խոզարածքն զիրսն 34
որ եղեն՝ փախեան , եւ պատմեցին ի քա-
ղաքին եւ յագարակսն: Եւ իբրեւ ելին 35
տեսանել զգործսն , եւ եկին առ Յիսուս ,
եւ գտին զայրն՝ ուստի դեւքն ելեալ էին ,
զգեցեալ եւ զգաստացեալ՝ նստէր առ
ոտսն Յիսուսի , եւ երկեան: Պատմեցին 36
նոցա որոց տեսեալն էր՝ թէ զիա՞րդ փըր-
կեցաւ դիւահարն: Եւ աղաչէր զնա ամե- 37
նայն բազմութիւնն շուրջ զկողմամբքն
Գերգեսացւոց՝ գնալ ի սահմանաց նոցա.
քանզի ահիւ մեծաւ տագնապէին: Եւ
նա մտեալ ի նաւ՝ դարձաւ անդրէն: Ա- 38
ղաչէր զնա այրն՝ ուստի դեւքն ելեալ
էին՝ շրջել ընդ նմա. արձակեաց զնա , եւ
ասէ. Դարձ ի տուն քո , եւ պատմեա զոր 39
միանգամ արար քեզ Աստուած: Գնաց
ի քաղաքն՝ եւ քարոզէր զոր ինչ արար
նմա Յիսուս:

Եւ իբրեւ դարձաւ անդրէն Յիսուս , 40
ընկալաւ զնա ժողովուրդն , քանզի ամե-
նեքեան ակն ունէին նմա: Եւ ահա եկն 41
այր մի՝ որում անուն էր Յայրոս. եւ նա
էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ
ոտսն Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել ի
տուն նորա. զի դուստր միամօր էր նորա՝ 42
ամաց իբրեւ երկոտասանից , եւ էր մերձ

ի մահ. եւ ընդ երթալն նորա՝ ժողո-
վուրդքն նեղէին զնա:
43 Եւ կին մի էր ի տեռատեսութեան ա-
րեան յամաց երկոտասանից , որ ի բժիշկս
ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում
44 ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկիլ: Մա-
տուցեալ յետոյ մերձեցաւ ի քղանցս
հանդերձի նորա. եւ նոյն ժամայն եկաց
45 բղխումն արեան նորա: Եւ ասէ Յիսուս.
Ո՞վ է՝ որ մերձեցաւն յիս. Իբրեւ ամենե-
քեան ուրանային , ասէ Պետրոս եւ որ
ընդ նմա էին. Վարդապետ , ժողովուրդք
46 պնդեն եւ նեղեն զքեզ: Եւ ասէ Յիսուս.
Ոմն մերձեցաւ յիս , քանզի գիտացի՝ ե-
47 թէ զօրութիւն ել յինէն: Իբրեւ ետես
կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ ի նմանէ , եկն
դողալով՝ եւ անկաւ առաջի նորա , թէ
վասն որոյ իրաց մերձեցաւ ի նա՝ պատ-
մեաց առաջի ամենայն ժողովրդեանն , եւ
48 թէ որպէս բժշկեցաւ առժամայն: Եւ ա-
սէ. Քաջալերեաց , դուստր , հաւատք քո
կեցուցին զքեզ , երթ ի խաղաղութիւն:
49 Եւ մինչդեռ նա խօսէր , գայ ոմն ի
տանէ ժողովրդապետին՝ եւ ասէ ցնա.
Մեռաւ դուստրն քո , մի՛ ինչ աշխատ առ-
50 նէր զդա: Իսկ Յիսուս իբրեւ լուաւ , պա-
տասխանի ետ նմա՝ եւ ասէ. Մի՛ երկնչիր ,
51 միայն հաւատա՝ եւ կեցցէ: Եւ մտեալ
ի տունն՝ ոչ զոք եթող մտանել , բայց

միայն զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅով-
հաննէս, եւ զհայր մանկանն եւ զմայր
նորա։ Լային ամենեքեան՝ եւ կոծէին զնա. 52
եւ նա ասէ. Մի՛ լայք՝ զի չէ մեռեալ, այլ
ննջէ։ Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գի- 53
տէին թէ մեռաւ։ Եւ նորա հանեալ զա- 54
մենեսին արտաքս, կալաւ զձեռանէ նո-
րա՝ բարբառեցաւ եւ ասէ. Արի՛ կաց մա- 55
նուկ դու։ Եւ դարձաւ ոգի նորա, եւ 56
կանգնեցաւ վաղվաղակի. եւ հրամայեաց
տալ նմա ուտել։ Եւ զարմացան ծնօղքն 57
նորա. եւ նա պատուիրեաց մի՛ ումեք ա-
սել որ ինչ եղեւն։

ԳԼՈՒԽ Թ

Գլ. Եւ կոչեցեալ զերկոտասան առա- 1
քեալսն, ետ նոցա զօրութիւն եւ իշխա-
նութիւն ի վերայ ամենայն դիւաց, եւ
բժշկել զհիւանդութիւնս։ Եւ առաքեաց 2
զնոսա քարոզել զարքայութիւնն Աստու-
ծոյ, եւ բժշկել զախտաժէտս։ Եւ ասէ 3
ցնոսա. Մի՛ ինչ բառնայք ի ճանապարհ.
մի՛ գաւազան եւ մի՛ մախաղ, մի՛ հաց եւ
մի՛ արծաթ. մի՛ երկուս հանդերձս ունի-
ցիք։ Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ագ- 4
ջիք, եւ անտի գնայցէք։ Եւ որք ոչ ըն- 5
դունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ի քա-
ղաքէն յայնմանէ, զփոշի ոտից ձերոց թօ-

6 թափեսջիք ի վկայութիւն նոցա։ Եւ ե-
լեալ շրջէին ընդ քաղաքս եւ ընդ գեօղս,
աւետարանէին, եւ բժշկէին ընդ ամե-
նայն տեղիս։

7 Լուաւ Հերովդէս չորրորդապետ զգ-
գործսն ամենայն, եւ զարմանայր վասն
8 ասելոյն յոմանց, թէ Յովհաննէս յա-
րեաւ ի մեռելոց. եւ յոմանց՝ թէ Եղիա
յայտնեցաւ. եւ յայլոց՝ թէ մարգարէ
9 ոմն յառաջնոցն յարեաւ։ Ասէ Հերով-
դէս. ԶՅովհաննէս ես գլխատեցի. իսկ սա
ո՞վ իցէ՝ զորմէ զայսպիսի իրս լսեմ. եւ
խնդրէր տեսանել զնա։

10 Դարձան առաքեալքն, եւ պատմեցին
նմա զամենայն զոր արարին։ Եւ առեալ
զնոսա՝ խուսեաց առանձինն ի տեղի ան-
ապատ քաղաքի միոյ, որում անուն էր
11 Բեթսայիդա։ Եւ ժողովուրդքն իբրեւ
գիտացին, գնացին զհետ նորա. եւ ըն-
կալեալ զնոսա՝ խօսէր ընդ նոսա վասն
արքայութեանն Աստուծոյ, եւ որոց
12 պէտք էին բժշկութեան՝ բժշկէր։ Եւ
օրն սկսաւ տարաժամել. մատեան եր-
կոտասանքն եւ ասեն ցնա. Արձակեա
զժողովուրդդ, զի երթեալ շուրջ ի
գիւղսն եւ յագարակս՝ հանգիցեն, եւ
գտցեն կերակուր. զի աստ յանապատ
13 տեղւոջ եմք։ Ասէ ցնոսա. Դուք տուք
դոցա ուտել։ Եւ նոքա ասեն. Ոչ գոյ մեր

աւելի քան զհինգ նկանակ եւ զերկուս
ձկունս, բայց եթէ երթիցուք գնեսցուք
բաւական ժողովրդեանդ կերակուր: Քան- 14
զի էին արք իբրեւ հինգ հազար: Ասէ ցա-
շակերտսն. Բազմեցուցէք զդոսա դասս
դասս՝ յիսուն յիսուն: Եւ արարին այնպէս, 15
եւ բազմեցուցին զամենեսեան: Եւ առեալ 16
զհինգ նկանակն եւ զերկուս ձկունսն՝
հայեցաւ յերկինս, օրհնեաց եւ եբեկ, եւ
տայր ցաշակերտսն արկանել ժողովր-
դեանն: Կերան եւ յագեցան ամենե- 17
քեան. եւ բարձին զնշխարս կոտորոցն
երկոտասան սակառի:

ԴԿ. Եւ եղեւ ի կալն նորա յաղօթս ա- 18
ռանձինն, էին ընդ նմա եւ աշակերտքն
նորա. եհարց զնոսա եւ ասէ. Զո՞ ոք ա-
սեն զինէն ժողովուրդքն թէ իցեմ: Եւ 19
նոցա պատասխանի տուեալ ասեն. ԶՅով-
հաննէս Մկրտիչ, եւ այլք զԵղիա, իսկ
այլք թէ մարգարէ ոք յառաջնոցն յա-
րեաւ: Ասէ ցնոսա. Դուք զո՞վ ոք ասէք 20
զինէն՝ թէ իցեմ: Պատասխանի ետ Պե-
տրոս եւ ասէ. ԶՔրիստոսն Աստուծոյ:
Նա սաստեաց ի նոսա, եւ պատուիրեաց 21
մի ումեք ասել զայն. եւ ասէ թէ պարտ 22
է որդւոյ մարդոյ բազում չարչարել եւ
անարգել ի քահանայապետից եւ ի ծե-
րոց եւ ի դպրաց, եւ սպանանել, եւ յե-
րիր աւուր յառնել:

23 Եւ ասէր առ ամենեսին. Եթէ ոք կա-
մի զկնի իմ գալ, ուրասցի զանձն, եւ
առցէ զխաչ իւր հանապազ՝ եւ եկեսցէ
24 զհետ իմ: Զի որ կամիցի զանձն իւր կե-
ցուցանել՝ կորուսցէ զնա, եւ որ կորուսցէ
25 զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա: Զի՞նչ
օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ շահեսցի,
եւ զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի:
26 Զի որ ամօթ համարեսցի զիս եւ զբանս
իմ, զնա եւ որդի մարդոյ յամօթ արա-
ցէ՝ յորժամ գայցէ փառօք իւրովք՝ եւ
27 հօր՝ եւ հրեշտակաց սրբոց: Բայց արդա-
րեւ ասեմ ձեզ, եթէ են ոմանք ի դոցա-
նէ որ այդր կան՝ որք մի՛ ճաշակեսցեն
զմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւն
Աստուծոյ:

28 Եւ եղեւ յետ այսց բանից իբրեւ ա-
ւուրք ութ, առեալ զՊետրոս եւ զՅա-
կոբոս եւ զՅովհաննէս՝ ել ի լեառն կալ
29 յաղօթս: Եւ ի կալ նմա յաղօթս՝ եղեւ
տեսիլ երեսաց նորա այլակերպ. եւ փո-
խեցաւ հանդերձ նորա, եւ եղեւ սպի-
30 տակ փայլուն: Եւ ահա արք երկու խօ-
սէին ընդ նմա, որ էին Մովսէս եւ Եղիա,
31 երեւեալ փառօք. եւ ասէին զելիցն նո-
րա՝ զոր կատարելոց էր յԵրուսաղէմ:
32 Իսկ Պետրոս՝ եւ որ ընդ նմայն էին՝
ծանրացեալք ի քնոյ՝ զարթեան, տեսին
զփառսն նորա՝ եւ զերկուս արսն որ

կայլն առ նմա: Եւ եղեւ ի մեկնելն նոցա 33
ի նմանէ, ասէ Պետրոս ցՅիսուս. Վարդա-
պետ, բարւոք է մեզ աստ լինել, եւ ա-
րասցուք երիս տաղաւարս, մի քեզ եւ
մի Մովսիսի եւ մի Եղիայի: Եւ ոչ գիտէր
զինչ խօսէր: Եւ իբրեւ զայս ասաց, եկն 34
ամպ եւ հովանի եղեւ ի վերայ նոցա. եւ
երկեան ի մտանելն նոցա ընդ ամպովն:
Ձայն եղեւ յամպոյն եւ ասէ. Դա է որ- 35
դի իմ ընտրեալ, դմա լուարուք: Եւ ընդ 36
լինել բարբառոյն՝ գտաւ Յիսուս միայն.
եւ նոքա լռեցին, եւ ոչ ումեք պատ-
մեցին յաւուրսն յայնոսիկ եւ ոչինչ՝ յո-
րոց տեսինն:

ԴԲ. Եւ եղեւ ի վաղիւն մինչ իջանէին 37
նոքա ի լեռնէ անտի, ընդ առաջ եղեւ
նմա ժողովուրդ բազում: Եւ ահա այր մի 38
ի ժողովրդենէ անտի աղաղակեաց եւ ա-
սէ. Վարդապետ, աղաչեմ զքեզ՝ հայեաց
յորդի իմ, զի միամօր է ինձ. եւ ահա այս 39
հարկանի ի նմա, եւ յանկարծ գոչէ՝ եւ
զարկուցանէ զնա եւ թաւալեցուցանէ
եւ փրփրեցուցանէ, եւ հազիւ մեկնի ի
նմանէ խորտակեալ զնա. եւ աղաչեցի 40
զաշակերտսն քո զի հանցեն զնա, եւ ոչ
կարացին: Պատասխանի ետ Յիսուս եւ 41
ասէ. Ո՜վ ազգ անհաւատ եւ թիւր, մին-
չեւ յերբ եղէց ընդ ձեզ՝ եւ անսայցեմ
ձեզ. մատո այսր զորդին քո: Եւ մինչդեռ 42

մատչէր, զարկոյց զնա դեւն՝ եւ չարճ-
43 լեաց: Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ,
եւ բժշկեաց զմանուկն, եւ ետ զնա
44 ցհայր իւր: Եւ զարմանային ամենե-
քեան ի վերայ մեծամեծացն Աստուծոյ.
եւ ի զարմանալն ամենեցուն ի վերայ ա-
մենայնի զոր առնէր, ասէ ցաշակերտսն
իւր. Դիք դուք ի լսելիս ձեր զբանս զայ-
սոսիկ. զի որդի մարդոյ մատնելոց է ի
45 ձեռս մարդկան: Եւ նոքա ոչ գիտէին զը-
բանն, եւ էր ծածկեալ ի նոցանէ զի մի
գիտասցեն. եւ երկնչէին հարցանել զնա
վասն բանին այնորիկ:

46 Եմուտ խորհուրդ ի նոսա՝ թէ ո՞ ար-
47 դեօք մեծ իցէ ի նոցանէ: Յիսուս իբրեւ
ծանեաւ զխորհուրդս սրտից նոցա, առ
մանուկ մի, կացոյց ի մէջ նոցա առ իւր,
48 եւ ասէ ցնոսա. Որ ոք ընկալցի զմանուկս
զայս յանուն իմ՝ զիս ընդունի. եւ որ
զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ.
զի որ փոքրիկն է յամենեսին ի ձեզ՝ նա
49 եղիցի մեծ: Պատասխանի ետ Յովհաննէս
եւ ասէ. Վարդապետ, տեսաք զոմն զի
յանուն քո դեւս հանէր, եւ արգելաք
50 զնա, զի ոչ շրջի ընդ մեզ: Ասէ ցնոսա
Յիսուս. Մի արգելուք զնա. զի որ ոչն է
ձեր թշնամի՝ ի ձեր կողմն է:

51 ԴԳ. Եւ եղեւ ի կատարել աւուրց վե-
րանալոյ նորա՝ եւ ինքն զերեսս հաստա-

տեաց երթալ յԵրուսաղէմ: Եւ առա- 52
քեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց.
եւ իբրեւ չոգան՝ մտին ի գիւղ մի Սամա-
րացւոց պատրաստել ինչ նմա: Եւ ոչ 53
ընկալան զնա, զի դէմ եդեալ էր նորա
երթալ յԵրուսաղէմ: Իբրեւ տեսին ա- 54
շակերտքն Յակովբոս եւ Յովհաննէս, ա-
սեն. Տէր, կամիս զի ասասցուք, եւ իջ-
ցէ հուր յերկնից՝ եւ սատակեսցէ զնո-
սա: Դարձաւ սաստեաց ի նոսա, եւ ա- 55
սէ. Ոչ գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք: Զի 56
որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կո-
րուսանել՝ այլ կեցուցանել: Եւ գնացին
յայլ գեօղ:

Եւ մինչդեռ երթային նոքա ի ճանա- 57
պարհի, ասէ ոմն ցնա. Եկից զկնի քո յոր
վայր եւ երթիցես: Ասէ ցնա Յիսուս. Ա- 58
ղուեսուց որջք գոն, եւ թռչնոց երկնից
դադարք. եւ որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր
դիցէ զգլուխ:

Ասէ ցմիւս եւս. Եկ զկնի իմ: Եւ նա 59
ասէ. Տէր, հրաման տուր ինձ՝ երթալ
նախ թաղել զհայր իմ: Ասէ ցնա Յիսուս. 60
Թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւ-
րեանց, եւ դու երթ պատմեա զարքայու-
թիւն Աստուծոյ:

Ասէ եւ այլ ոմն. Եկից զկնի քո, Տէր. 61
բայց նախ հրաման տուր ինձ հրաժա-
րել ի տանէ իմմէ: Ասէ ցնա Յիսուս. 62

Ոչ ոք արկանէ ձեռն զմաճով եւ հայիցի
յետս, եթէ յաջողեալ իցէ արքայու-
թեան Աստուծոյ:

ԳԼՈՒԽ Ժ

1 ԴԴ. Յետ այսորիկ երեւեցոյց Տէր եւ
այլ եւս եօթանասուն եւ երկուս, եւ
առաքեաց զնոսա երկուս երկուս առա-
ջի իւր յամենայն քաղաքս եւ ի տեղիս,
2 ուր ինքն երթալոց էր: Եւ ասէ ցնոսա.
Հունձք բազում են՝ եւ մշակք սակաւ.
արդ աղաչեցէք զտէր հնձոց, զի հանցէ
3 մշակս ի հունձս իւր: Երթայք. ահա ա-
ռաքեմ զձեզ իբրեւ զգառինս ի մէջ
4 գայլոց: Մի բառնայք քսակ, մի մախաղ,
մի կօշիկս. եւ ի ճանապարհի ումեք ող
5 ջոյն մի տայցէք: Յոր տուն մտանիցէք՝
նախ ասասջիք թէ ողջոյն տանս այսմիկ.
6 եւ եթէ իցէ անդ որդի ողջունի՝ հան-
գիցէ ի վերայ նորա ողջոյնն ձեր. ապա
7 թէ ոչ՝ ի ձեզ դարձցի: Եւ ի նմին տան
ագանիջիք, ուտիջիք եւ ըմպիջիք ի նոցա-
նէ. զի արժանի է մշակն վարձու իւրոյ.
8 մի փոխիցիք տանէ ի տուն: Յոր քաղաք
մտանիցէք եւ ընդունիցին զձեզ, ուտի-
9 ջիք զինչ առաջի դնիցեն ձեր. եւ բժշկեա-
ջիք որ ի նմա հիւանդք իցեն. եւ ասասջիք

նոցա, մերձեալ է ի վերայ ձեր արքայու-
թիւն Աստուծոյ: Իսկ յոր քաղաք մտա- 10
նիցէք՝ եւ ոչ ընդունիցին զձեզ, իբրեւ ե-
լանիցէք ի հրապարակս նորա, ասասջիք.
Եւ զփոշին որ կառուեալ է ի քաղաքէ ձեր- 11
մէ յոտս մեր՝ թօթափեսցուք ի ձեզ.
բայց զայս գիտասջիք զի մերձեալ է ար-
քայութիւն Աստուծոյ: Ասեմ ձեզ, զի 12
Սոդոմացւոց ընդարձակագոյն լիցի յա-
ւուրն յայնմիկ՝ քան քաղաքին այնմիկ:

Վա՜յ քեզ Քորազին. վա՜յ քեզ Բեթսայի- 13
դա. զի եթէ ի Տիւրոս եւ ի Սիդոն ե-
ղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն ի ձեզ,
վաղուց եւս արդեօք ի խորգ եւ ի մոխիր
նստեալ ապաշխարեալ էր: Բայց Տիւրո- 14
նի եւ Սիդոնի ընդարձակագոյն լիցի ի
դատաստանի՝ քան ձեզ: Եւ դու Կափառ- 15
նաում, որ մինչեւ յերկինս բարձրացեալ
ես, մինչեւ ի դժոխս իջցես:

Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ. եւ որ զձեզ ա- 16
նարգէ՝ զիս անարգէ. եւ որ զիս անար-
գէ՝ զառաքիչն իմ անարգէ. եւ որ ինձ
լսէ՝ լսէ այնմիկ որ զիսն առաքեաց:

Դարձան եօթանասունքն եւ երկուքն 17
խնդութեամբ եւ ասեն. Տէր, եւ դեւք
հնազանդին մեզ յանուն քո: Եւ ասէ ցնո- 18
սա. Տեսանէի զսատանայ անկեալ յերկ-
նից իբրեւ զփայլակն: Ահա ետու ձեզ իշ- 19
խանութիւն կոխել զօձս եւ զկարիճս եւ

զամենայն զօրութիւն թշնամւոյն, եւ
20 ձեզ ոչինչ մեղանչիցեն: Բայց ընդ այն
մի խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ,
այլ խնդացէք՝ զի անուանք ձեր գրեալ
են յերկինս:

21 Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս Հո-
գւովն սրբով եւ ասէ. Գոհանամ զքէն,
Հայր, Տէր երկնից եւ երկրի, զի ծած-
կեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց՝
եւ յայտնեցեր զայս տղայոց. այո, Հայր,
22 զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո: Ամե-
նայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. եւ ոչ
ոք գիտէ թէ ո՛վ է Որդի, եթէ ոչ՝ Հայր,
եւ ո՛ է Հայր՝ եթէ ոչ՝ Որդի, եւ ում կա-
23 միցի Որդին յայտնել: Եւ դարձեալ ա-
ռանձինն առ աշակերտսն ասէ. Երանի
աչաց՝ որ տեսանիցեն զոր տեսանէքդ:
24 Ասեմ ձեզ, զի բազում մարգարէք եւ
թագաւորք կամեցան տեսանել զոր
դուքդ տեսանէք, եւ ոչ տեսին. եւ լսել
զոր լսէքդ, եւ ոչ լուան:

25 ԴԵ. Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝
փորձէր զնա եւ ասէր. Վարդապետ,
զի՞նչ գործեցից՝ զի զկեանս յաւիտե-
26 նականս ժառանգեցից: Եւ նա ասէ ցնա.
Յօրէնս զի՞նչ գրեալ է, ո՞րպէս ընթեռ-
27 նուս: Նա պատասխանի ետ եւ ասէ. Սի-
րեսցես զՏէր Աստուած քո յամենայն
սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քում-

մէ, եւ յամենայն զօրութենէ քումմէ,
եւ յամենայն մտաց քոց. եւ զընկեր քո
իբրեւ զանձն քո: Եւ ասէ ցնա. Ուղիղ է 28
տուր զպատասխանիդ, զայդ արա՝ եւ
կեցցես: Նա իբրեւ կամեցաւ զանձն ար- 29
դարացուցանել՝ ասէ ցՅիսուս. Եւ ո՞վ է
իմ ընկեր: Պատասխանի ետ Յիսուս եւ 30
ասէ. Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵ-
րիքով, եւ անկաւ ի ձեռս աւազակաց,
որք մերկացուցին զնա եւ վէրս ի վերայ
եդին, թողին կիսամահ եւ գնացին: Դէպ 31
եղեւ քահանայի միոջ իջանել ընդ նոյն
ճանապարհ, եւ տեսեալ զնա՝ զանց ա-
րար: Նոյնպէս եւ ղեւտացի մի եկեալ 32
ընդ նոյն տեղի՝ տեսեալ եւ զանց արար:
Սամարացի ոմն ճանապարհորդեալ եկն 33
ընդ նոյն առ նովաւ, եւ տեսեալ զնա՝
գթացաւ. եւ մատուցեալ պատեաց զվէրս 34
նորա, արկեալ ի վերայ ձէթ եւ գինի. եւ
եդեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա
ի պանդոկի մի, եւ դարմանեաց զնա: Եւ 35
ի վաղիւ անդր իբրեւ ելանէր անտի, հա-
նեալ ետ ցպանդոկապետն երկուս դահե-
կանս, եւ ասէ. դարման տար դմա, եւ
զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւսանգամ
դարձեալ իմում հատուցից քեզ: Արդ՝ 36
ո՞ յերեցունց ի նոցանէ թուի քեզ մերձա-
ւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազակաց:
Եւ նա ասէ. Որ արար զողորմութիւնն ի 37

վերայ նորա: Ասէ ցնա Յիսուս. Երթ եւ
դու արա նոյնպէս:
38 Եւ եղեւ ի գնալն նոցա, եւ ինքն եմուտ
ի գեօղ մի. եւ կին ոմն անուն Մարթա
39 ընկալաւ զնա ի տան իւրում: Եւ նորա
էր քոյր մի, որում անուն էր Մարիամ,
որ եկն նստաւ առ ոտսն Տեառն, եւ լսէր
40 զբանս նորա: Եւ Մարթա զբաղեալ էր
ի բազում սպասու. եկն եկաց առ նմա
եւ ասէ. Տէր, ոչինչ է փոյթ քեզ, զի
քոյրդ իմ միայն եթող զիս ի սպասու.
41 արդ ասա դմա զի օգնեսցէ ինձ: Պատաս-
խանի ետ Յիսուս եւ ասէ. Մարթա, Մար-
թա, դու հոգաս եւ զբաղում իւիք ըզ-
42 բաղեալ ես. բայց սակաւ ինչ պիտոյ
է. Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ
բարձցի ի նմանէ:

ԳԼՈՒԽ ԺԱ

1 ԳՋ. Եւ եղեւ ի տեղւոջ ուրեք կալ
յաղօթս. եւ իբրեւ դադարեաց՝ ասէ ցնա
ոմն յաշակերտացն իւրոց. Տէր, ուսո
մեզ յաղօթս կալ, որպէս եւ Յովհաննէս
2 ուսոյց աշակերտաց իւրոց: Ասէ ցնոսա.
Յորժամ կայցէք յաղօթս, ասասջիք.
Հայր մեր՝ սուրբ եղիցի անուն քո. եկես-
3 ցէ արքայութիւն քո: Զհաց մեր հանա-
4 պազորդ տուր մեզ զօրըստօրէն. եւ թող

մեզ զմեղս մեր, զի եւ մեք թողումք ա-
մենայնի՝ որ պարտիցի մեզ. եւ մի՛ տանիր
զմեզ ի փորձութիւն:
Եւ ասէ ցնոսա. Ո՞վ է ի ձէնջ՝ որոյ իցէ 5
բարեկամ, եւ երթիցէ առ նա ի մէջ գի-
շերի, եւ ասիցէ ցնա. բարեկամ, տուր
ինձ փոխ երիս նկանակս, զի բարեկամ 6
իմ եկն առ իս յուղւոյ, եւ ոչինչ ունիմ
դնել առաջի նորա: Եւ նա ի ներքուստ 7
տայցէ պատասխանի եւ ասիցէ. մի՛ աշ-
խատ առներ զիս, զի դուռնդ փակեալ են,
եւ մանկունքս ընդ իննեւ կան յանկողնի.
ոչ կարեմ յառնել եւ տալ քեզ: Ասեմ 8
ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա
վասն բարեկամութեանն, սակայն վասն
ժտութեանն յարուցեալ տայցէ նմա՝
զինչ եւ պիտոյ իցէ: Եւ ես ասեմ ձեզ, 9
խնդրեցէք՝ եւ տացի ձեզ, հայցեցէք՝ եւ
գտջիք, բախեցէք՝ եւ բացցի ձեզ. զի ա- 10
մենայն որ խնդրէ՝ առնու, եւ որ հայցէ՝
գտանէ, եւ որ բախէ՝ բացցի նմա: Ո՞ ոք 11
ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն,
միթէ փոխանակ ձկանն օձ տայցէ նմա.
եւ կամ խնդրիցէ ձու, միթէ կարի՛ճ 12
տայցէ նմա: Իսկ եթէ դուք որ չարքդ 13
էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց
ձերոց, ո՞րչափ եւս առաւել հայր ձեր
յերկնից տացէ բարիս այնոցիկ, որ խնդ-
րեն ի նմանէ:

14 Դէ. Եւ հանէր դեւ մի համր. եւ եղեւ
յելանել դիւին խօսեցաւ համրն, եւ զար-
15 մացան ամենայն ժողովուրդքն: Եւ ո-
մանք ի նոցանէ ասեն. Բէեղզեբուղաւ
16 իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս: Եւ
այլք փորձէին՝ եւ նշան յերկնից խնդ-
17 րէին ի նմանէ: Իսկ նորա գիտացեալ
զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. Ամենայն
թագաւորութիւն բաժանեալ յանձն՝
աւերի, եւ տուն բաժանեալ յանձն՝
18 կործանի: Ապա եթէ եւ սատանայ բա-
ժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ թագա-
ւորութիւն նորա. զի ասէք զինէն եթէ
Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ
19 դա զդեւս: Եթէ ես Բէեղզեբուղաւ հա-
նեմ զդեւս, որդիքն ձեր իւ՞ հանիցեն.
վասն այդորիկ նոքին եղիցին ձեր դատա-
20 ւորք: Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հա-
նեմ զդեւս, ապա հասեալ է ի վերայ
ձեր արքայութիւն Աստուծոյ:
21 Յորժամ հզօր վառեալ՝ պահիցէ ըզ-
տուն իւր, ի խաղաղութեան են ինչք նո-
22 րա. բայց եթէ հզօրագոյն քան զնա ի
վերայ եկեալ յաղթեսցէ նմա, զսպա-
ռազինութիւնն հանէ՝ յոր յուսացեալ
23 էր, եւ զաւար նորա բաշխեսցէ: Որ ոչ
է ընդ իս՝ հակառակ իմ է, եւ որ ոչ ժո-
24 ղովէ ընդ իս, ցրուէ: Յորժամ այսն ել-
նիցէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս,

խնդրէ հանգիստ. եւ իբրեւ ոչ գտանէ,
ասէ. դարձայց անդրէն ի տուն իմ ուստի
ելի. եւ գայ գտանէ մաքրեալ եւ յար- 25
դարեալ: Յայնժամ երթայ եւ առնու 26
եօթն այլ այսս չար եւս քան զինքն, եւ
մտանէ բնակէ անդ. եւ լինի յետինն մար-
դոյն այնորիկ չար քան զառաջինն:
Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս, ձայն 27
եբարձ կին մի ի ժողովրդենէ անտի եւ
ասէ. Երանի՜ է որովայնին՝ որ կրեաց ըզ-
քեզ, եւ ստեանցն՝ որ դիեցուցին զքեզ:
Եւ նա ասէ. Նա երանի այնոցիկ է, որ 28
լսեն զբանն Աստուծոյ եւ պահեն:
Եւ ի դիզանել ի վերայ նորա ժողովըր- 29
դոցն՝ սկսաւ ասել. Ազգս այս ազգ չար է.
նշան խնդրէ, եւ նշան յերկնից ոչ տացի
սմա՝ բայց նշանն Յովնանու: Զի որպէս 30
եղեւ Յովնան նշան Նինուէացւոց, այն-
պէս եղիցի եւ որդի մարդոյ ազգիս այս-
միկ: Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաս- 31
տանի ընդ արս ազգիս այսորիկ՝ եւ դա-
տապարտեսցէ զնոսա, զի եկն ի ծագաց
երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի.
եւ ահա առաւել քան զՍողոմոն է աստ:
Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստա- 32
նի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ եւ դատապար-
տեսցեն զսա, զի ապաշխարեցին ի քարո-
զութեանն Յովնանու. եւ ահա առաւել
քան զՅովնան է աստ:

33 ԵԿ. Ոչ ուրուք լուցեալ ճրագ՝ դնէ
ի թաքստեան, եւ ոչ ընդ գրուանաւ.
այլ ի վերայ աշտանակի, զի որ մտանեն՝
34 լոյս տեսանիցեն: Ճրագ մարմնոյ ակն է.
յորժամ ակնն առատ է, ամենայն մար-
մինն լուսաւոր եղիցի. եւ երբ ակն չար
35 է, եւ մարմինն խաւարին եղիցի: Արդ
զգոյշ լեր, գուցէ լոյսդ որ ի քեզ է՝ խա-
36 ւար իցէ: Եթէ մարմինդ քո ամենայն լու-
սաւոր է՝ եւ չգուցէ մասն ինչ խաւարին,
եղիցի լուսաւոր ամենայն. որպէս յոր-
ժամ ճրագն նշուլիւք լուսաւորեսցէ
զքեզ:
37 Եւ մինչդեռ խօսէր զայս, աղաչէր զնա
ոմն փարիսեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա.
38 եւ նա մտեալ բազմեցաւ: Իբրեւ ետես
փարիսեցին՝ զարմացաւ, զի նախ ոչ մըր-
39 տեցաւ յառաջ քան զճաշ: Ասէ ցնա
Տէր. Այժմ դուք փարիսեցիք զարտաքին
բաժակին եւ զպնակին սրբէք. եւ ներ-
քինն ձեր լի է յափշտակութեամբ եւ
40 չարութեամբ: Անմիտք, ո՞չ ապաքէն որ
զարտաքինն արար՝ եւ զներքինն նոյն ա-
41 րար: Բայց աղէ զարժանն տուք ո-
ղորմութիւն, եւ ահա ամենայն սուրբ է
42 ձեր: Այլ վա՜յ ձեզ փարիսեցւոց, զի տա-
սանորդէք զանանուխ եւ զփեգենա եւ
զամենայն բանջար, եւ անցանէք զիրա-
ւամբք եւ զսիրովն Աստուծոյ. զայս ար-

ժան էր առնել՝ եւ զայնու ոչ անցանել։
Վա՜յ ձեզ փարիսեցւոց, զի սիրէք զբարձ 43
րագահս ի ժողովուրդս, եւ զնախողջոյնս
ի հրապարակս։ Վա՜յ ձեզ, զի էք դուք 44
իբրեւ զգերեզմանս անյայտս, եւ մարդիկ
գնան ի վերայ՝ եւ ոչ գիտեն։ Պատաս- 45
խանի ետ ոմն յօրինականացն՝ եւ ասէ
ցնա. Վարդապետ, զայս բանս ասելով եւ
զմեզ թշնամանես։ Եւ նա ասէ. Եւ ձեզ 46
վա՜յ օրինականացդ, զի բառնայք մարդ-
կան բեռինս դժուարակիրս, եւ դուք մա-
տամբ միով ի բեռինսն ոչ մերձենայք։
Վա՜յ ձեզ, զի շինէք զշիրիմս մարգարէիցն 47
եւ հարքն ձեր սպանին զնոսա. Ապա ու- 48
րեմն վկայէք՝ եթէ կամակից էք գործոց
հարցն ձերոց. զի նոքա կոտորեցին զնո-
սա, եւ դուք զգերեզմանս նոցա շինէք։
Վասն այնորիկ իմաստութիւնն Աստու- 49
ծոյ ասաց. առաքեցից ի նոսա մարգարէս
եւ առաքեալս, եւ ի նոցանէ սպանանի-
ցեն եւ հալածիցեն։ Զի խնդրեսցի արիւն 50
ամենայն մարգարէից՝ հեղեալ ի սկզբա-
նէ աշխարհի՝ յազգէ յայդմանէ, յարե- 51
նէն Աբելի մինչեւ յարիւնն Զաքարիայ կո-
րուսելոյ ընդ սեղանն եւ ընդ տաճարն. այո՛
ասեմ ձեզ՝ խնդրեսցի յազգէ յայդմանէ։
Վա՜յ ձեզ օրինականացդ, զի թաքուցա- 52
նէք զփականս գիտութեանն. դուք ոչ մը-
տանէք, եւ որ մտանելոցն էին արգելուք։

53 Եւ ի խօսելն զայս ամենայն առ նոսա
առաջի ամենայն ժողովրդեանն, զամօթի
հարկանէին։ Եւ սկսան դպիրքն եւ փա-
րիսեցիք զչարել եւ դրդել ընդ նմա վասն
54 բազում իրաց. եւ սպասել որսալ ինչ
բանս ի բերանոյ նորա, զի չարախօսեսցեն
զնմանէ։

ԳԼՈՒԽ ԺԲ

1 Որովք ի կուտել բիւրաւորաց ժողո-
վրդեանն՝ մինչեւ կոխել զմիմեանս, սկը-
սաւ ասել ցաշակերտսն իւր. Նախ՝ ըզ-
գոյշ լերուք անձանց ի խմորոյ փարի-
2 սեցւոցն, որ է կեղծաւորութիւն։ Զի
ոչինչ է ի ծածուկ որ ոչ յայտնեսցի, եւ
3 գաղտնի՝ որ ոչ ծանիցի։ Վասն զի զոր
ինչ ասիցէք ի խաւարի՝ լուիցի ի լոյս.
եւ զոր յունկանէն խօսեցարուք ի շտե-
մարանս՝ քարոզեսցի ի վերայ տանեաց։
4 Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. մի՛
զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանանեն
զմարմին, եւ յետ այնորիկ աւելի ինչ ոչ
5 ունիցին առնել։ Այլ ցուցից ձեզ յումմէ
երկնչիցիք. երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ
սպանանելոյ ունի իշխանութիւն արկա-
նել ի գեհեն. այո, ասեմ ձեզ, յայնմանէ
երկնչիջիք։
6 Ո՞չ ապաքէն հինգ ձագ երկուց դան-

գոյ վաճառի, եւ մի ի նոցանէ ոչ է մո-
ռացեալ առաջի Աստուծոյ: Այլ ձեր եւ 7
ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. մի
երկնչիք, զի քան զբազում ճագս լաւ էք
դուք:

Ասեմ ձեզ, զի ամենայն որ խոստովա- 8
նեսցի յիս առաջի մարդկան, եւ որդի
մարդոյ խոստովանեսցի զնմանէ առաջի
հրեշտակաց Աստուծոյ: Եւ որ ուրասցի 9
զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի
առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ ամե- 10
նայն որ ասէ բան զորդւոյ մարդոյ՝ թողու-
ցի նմա. բայց որ զհոգին սուրբ հայհոյե-
ցէ, մի թողցի նմա:

Այլ յորժամ տանիցին զձեզ ի ժողո- 11
վուրդս եւ ի պետութիւնս եւ յիշխանու-
թիւնս, մի հոգայցէք՝ որպէս թէ զինչ
պատասխանի տայցէք, կամ զինչ ասի-
ցէք. զի հոգին սուրբ ուսուսցէ ձեզ ի նո- 12
մին ժամու՝ զինչ պարտ իցէ խօսել:

ԵԲ. Ասէ ոմն ի ժողովրդենէն ցնա. Վար- 13
դապետ, ասա եղբօր իմ բաժանել ընդ
իս զժառանգութիւնն: Եւ նա ասէ ցնա. 14
Այր դու, ո՞ կացոյց զիս դատաւոր կամ
բաժանարար ի վերայ ձեր: Եւ ասէ ցնո- 15
սա. Տեսէք եւ զգոյշ լերուք յամենայն
ագահութենէ, զի ոչ եթէ ի մթերից ըն-
չից ուրուք իցեն կեանք նորա: Խօսեցաւ 16
ու նոսա առակ մի՝ եւ ասէ. Առն ուրումն

17 մեծատան եկուն անդք առհմականս. եւ
խորհէր ի միտս իւր՝ եւ ասէր. զի՞ գոր-
ծեցից, զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցից
18 զարդիւնս իմ: Եւ ասէ. գիտեմ զինչ ա-
րարից. քակեցից զշտեմարանս իմ, եւ
եւս մեծամեծս շինեցից. եւ անդր ժողո-
վեցից զցորեան եւ զամենայն բարու-
19 թիւնս իմ. եւ ասացից ցանձն իմ. անձն,
ունիս բազում բարութիւնս համբարեալ
ամաց բազմաց. հանգիր, կեր, արբ եւ
20 ուրախ լեր: Ասէ ցնա Աստուած. ան-
միտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց
պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցերն
21 ո՞ւմ լինիցի: Նոյնպէս եւ որ գանձէ ան-
ձին, եւ ոչ յԱստուած մեծանայցէ:
22 Ասէ ցաշակերտսն իւր. Վասն այդորիկ
ասեմ ձեզ. մի հոգայք ընդ ոգւոյ՝ թէ
զինչ ուտիցէք, եւ մի ընդ մարմնոյ՝ թէ
23 զինչ զգենուցուք. զի ոգի առաւել է քան
զկերակուր, եւ մարմին քան զհանդերձ:
24 Հայեցարուք ընդ ագռաւս, զի ոչ սեր-
մանեն եւ ոչ հնձեն, որոց ոչ գոն շտեմա-
րանք եւ ոչ համբարանոցք, եւ Աստուած
կերակրէ զնոսա. ո՞րչափ եւս առաւել
25 զձեզ՝ որ լաւ էք քան զթռչունս: Ո՞վ
ի ձէնջ առ հոգալ՝ կարիցէ յաւելուլ ի
26 հասակ իւր կանգուն մի: Իսկ արդ եթէ
ի փոքուն չէք բաւական՝ վասն այլոցն զի՞
27 հոգայցէք: Հայեցարուք ընդ շուշանն՝

որպէս աճէ, ոչ ջանայ՝ եւ ոչ նիւթէ.
ասեմ ձեզ, եւ ոչ Սողոմոն յամենայն ի
փառսն իւր զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ։
Իսկ եթէ զխոտն՝ որ այսօր ի բացի է՝ եւ 28
վաղիւ ի հնոց արկանելի, Աստուած այն-
պէս զգեցուցանէ. որչափ եւս առաւել
զձեզ, թերահաւատք։ Եւ դուք մի խնդ- 29
րէք՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպի-
ցէք, եւ մի զբաղնուք. զի զայն ամենայն 30
հեթանոսք աշխարհի խնդրեն. այլ ձեր
Հայր գիտէ զի պիտոյ է այն ամենայն։
Բայց խնդրեցէք զարքայութիւն Աստուա- 31
ծոյ, եւ այն ամենայն յաւելցի ձեզ։

ԵԳ. Մի երկնչիր հօտ փոքրիկ, զի հա- 32
ճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայու-
թիւն։ Վաճառեցէք զինչս ձեր, եւ տուք 33
ողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակս
առանց հնանալոյ, գանձ անպակաս յեր-
կինս. ուր ոչ գող մերձենայ, եւ ոչ ցեց
ապականէ։ Զի ուր գանձն ձեր է, անդ 34
եւ սիրտք ձեր եղիցին։

Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս, 35
եւ ճրագունք լուցեալք. եւ դուք նմանօղք 36
մարդկան՝ որ ակն ունիցին տեառն իւ-
րեանց՝ թէ երբ դառնայցէ ի հարսանեաց.
զի յորժամ գայցէ եւ բախիցէ, վաղվա-
ղակի բանայցեն նմա։ Երանի՛ իցէ ծա- 37
ռայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ
արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ

մէջ ածցէ՝ եւ բազմեցուսցէ զնոսա, եւ
38 անցեալ պաշտիցէ զնոսա. եւ եթէ յեր-
կրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ՝ եւ
գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այ-
39 նոքիկ։ Բայց զայն գիտասջիք, եթէ գի-
տէր տանուտէրն յորում ժամու գող
գայ՝ հսկէր, եւ չտայր թողուլ ական հա-
40 տանել ի տան իւրում։ Եւ դուք եղերուք
պատրաստք՝ զի յորում ժամու ոչ կար-
41 ծիցէք, գայ որդի մարդոյ։ Ասէ Պետ-
րոս. Տէր, առ մեզ ասացեր զառակդ
42 զայդ՝ եթէ առ ամենեսեան։ Եւ ասէ
Տէր. ով իցէ հաւատարիմ տնտես եւ
իմաստուն, զոր կացուցէ տէր իւր ի վերայ
գերդաստանի իւրոյ տալ ի ժամու զկե-
43 րակուրս։ Երանի իցէ ծառային այնմիկ՝
զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ
44 այնպէս։ Արդարեւ ասեմ ձեզ, զի ի վե-
րայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զը-
45 նա։ Ապա եթէ ասիցէ ծառայն այն ի
սրտի իւրում. յամէ տէր իմ ի գալ, եւ
սկսանիցի հարկանել զծառայսն եւ զա-
ղախնայս, ուտել եւ ըմպել եւ արբե-
46 նալ. եկեսցէ տէր ծառային այնորիկ՝
յաւուր յորում ակն ոչ ունիցի, եւ ի
ժամու յորում ոչ գիտիցէ. ընդ մէջ
կտրեսցէ զնա, եւ զբաժին նորա ընդ ան-
47 հաւատս դիցէ։ Եւ ծառայ որ գիտիցէ
զկամս տեառն իւրոյ՝ եւ ոչ պատրաս-

առնիցէ ըստ կամաց նորա, արբցէ գան
բազում: Եւ որ ոչն գիտիցէ և արժանի 48
գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ:
Ամենայնի՝ որում շատ տուաւ, շատ խըն-
դրեսցի ի նմանէ, և որում բազում ա-
ւանդեցաւ, առաւել եւս պահանջեսցեն
ի նմանէ:

ԵԳ. Հուր եկի արկանել յերկիր. և 49
զի՞նչ կամիմ թէ արդէն բորբոքէր:
Եւ մկրտութիւն մի ունիմ մկրտել, և 50
զիա՞րդ փութամ՝ մինչև կատարեսցի:
Համարի՞ք եթէ խաղաղութիւն եկի տալ 51
յերկիր. ոչ՝ ասեմ ձեզ, այլ բաժինս:
Զի եղիցին յայսմ հետէ հինգ ի տան 52
միում բաժանեալք, երեքն յերկուց, և
երկուքն յերից: Բաժանեսցի հայր յոր- 53
դւոյ, և որդի ի հօրէ, մայր ի դստերէ,
և դուստրն ի մօրէ, սկեսուր ի հարսնէ,
և հարսն ի սկեսրէ իւրմէ:

Ասաց և ցժողովուրդսն. Յորժամ տե- 54
սանիցէք ամպ ծագեալ յարեւմտից, իս-
կոյն ասէք թէ անձրեւ գայ, և լինի այն-
պէս. և յորժամ հարաւ շնչեալ, ասէք 55
թէ խորշակ լինի, և լինի այնպէս: Կեղ- 56
ծաւորք, զերեսս երկնի և երկրի գիտէք
փորձել, իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ
փորձէք: Ընդէ՞ր և յանձանց իսկ ոչ ըն- 57
տրէք զարժանն: Յորժամ երթայցես 58
ընդ ոսոխի քում առ իշխան, ի ճանա-

պարհի տուր զհաշիւն զերծանել ի նմա-
նէ. զի գուցէ քարշիցէ զքեզ առ դատա-
ւորն, և դատաւորն մատնիցէ դահճի, և
59 դահիճն արկանիցէ ի բանտ: Ասեմ քեզ,
ոչ ելանիցես անտի՝ մինչև հատուցանի-
ցես զյետին բնիոնն:

ԳԼՈՒԽ ԺԳ

1 Եկին ոմանք ի նմին ժամանակի, և
պատմեցին նմա վասն Գալիլեացւոցն, ո-
րոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ
2 զոհս նոցա: Պատասխանի ետ և ասէ
ցնոսա. Համարի՞ք եթէ այն Գալիլեացիք
եղեն մեղաւոր քան զամենայն Գալիլեա-
3 ցիս, զի զայնպիսի անցս կրեցին. ոչ, ա-
սեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝
4 ամենեքին նոյնպէս կորնչիցիք: Կամ նոքա
ութուտասանքն՝ յորոց վերայ աշտա-
րակն անկաւ ի Սելովամ, և սպան զնո-
սա, համարի՞ք եթէ նոքա պարտապանք
եղեն քան զամենայն մարդիկ՝ որ բնա-
5 կեալ են յԵրուսաղէմ. ոչ, ասեմ ձեզ,
այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան
նոյնպէս կորնչիջիք:
6 Ասաց և զառակս զայս. Թզենի մի էր
ուրումն տնկեալ յայգւոջ իւրում. և
եկն խնդրել պտուղ ի նմանէ, և ոչ ե-
7 գիտ: Ասէ ցայգեգործն. Ահա երեք ամ

են՝ յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի
թզենւոջդ՝ եւ ոչ գտանեմ· արդ՝ կոտրեա
զդա, ընդէ՞ր եւ զերկիրդ խափանէ: Նա 8
պատասխանի ետ եւ ասէ· Տէր, թող զդա
յայս ամ եւս, մինչեւ շուրջ զդովաւ բրե-
ցից եւ արկից աղբ, թերեւս արասցէ պը- 9
տուղ· ապա թէ ոչ՝ յամէ եւս հատցես
զդա:

ԽԵ· Եւ ուսուցանէր ի միում ի ժողո- 10
վրդանոցացն ի շաբաթս· եւ ահա կին 11
մի՝ զոր ունէր այս հիւանդութեան ամս
ութուտասն, եւ էր կորկամեալ, եւ ոչ
կարէր ամենեւին ի վեր հայել: Եւ տե- 12
սեալ զնա Յիսուսի՝ կոչեաց առ ինքն՝ եւ
ասէ ցնա· Կին դու՝ արձակեալ ես ի հի-
ւանդութենէ քումմէ: Եւ եդ ի վերայ 13
նորա ձեռն, եւ առժամայն ուղղեցաւ,
եւ փառաւոր առնէր զԱստուած: Պա- 14
տասխանի ետ ժողովրդապետն ցասու-
ցեալ՝ թէ ընդէր ի շաբաթու բժշկեաց
Յիսուս՝ եւ ասէ ցժողովուրդն· Վեց օր
է՝ յորս արժան է գործել, յայնս եկայք
բժշկեցարուք, եւ մի յաւուր շաբաթու:
Պատասխանի ետ նմա Տէր եւ ասէ· Կեղ- 15
ծաւորք, իւրաքանչիւր ոք ի ձէնջ ի շաբա-
թու ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ ի
մսրոյ՝ եւ տանի տայ ջուր: Իսկ այս՝ 16
դուստր Աբրահամու էր, զոր կապեաց
սատանայ ահաւասիկ ութուտասն ամ,

ո՞չ էր արժան արձակել ի կապանաց ան-
17 տի ի շաբաթու: Եւ զայս իբրեւ ասաց՝
յամօթ լինէին ամենեքին որ հակառակն
կային նմա, եւ ամենայն ժողովուրդն ու-
րախ լինէր ի վերայ ամենայն փառաւո-
րութեանցն՝ որ գործէին ի նմանէ:
18 Եւ ասէր· Ո՞ւմ նման է արքայութիւն
Աստուծոյ, եւ որո՞ւմ նմանութեան նը-
19 մանեցուցից զնա: Նման է հատոյ մա-
նանխոյ, զոր առեալ մարդոյ՝ արկ ի պար-
տէզ իւր· աճեաց եւ եղեւ ծառ, եւ
թռչունք երկնից բնակեալ էին յոստս
20 նորա: Եւ դարձեալ ասէ· Ո՞ւմ նմանե-
21 ցուցից զարքայութիւն Աստուծոյ· Նման
է խմորոյ՝ զոր առեալ կնոջ թաքոյց յա-
լեր երից գրուաց, մինչեւ խմորեցաւ ա-
մենայն:

22 ԽԶ· Եւ շրջէր ընդ քաղաքս եւ ընդ
գեօղս՝ ուսուցանէր· եւ ճանապարհ ա-
23 րարեալ յԵրուսաղէմ, ասէ ոմն ցնա·
Տէր, եթէ սակա՞ւք իցեն որ ապրելոց ի-
24 ցեն· Եւ նա ասէ ցնոսա· Ջանացարուք
մտանել ընդ դուռն նեղ· ասեմ ձեզ՝ զի
բազումք խնդրեսցեն մտանել՝ եւ ոչ կա-
25 րասցեն, յորմէ հետէ մտցէ տանուտէրն
եւ փակեսցէ զդուռնն· եւ սկսանիցիք
կալ արտաքոյ եւ բախել զդուռնն, եւ
ասել· Տէր Տէր, բա՛ց մեզ· եւ պատաս-
խանի տուեալ ասիցէ ձեզ, ոչ գիտեմ

զձեզ ուստի էք: Յայնժամ սկսանիջիք 26
ասել. կերաք առաջի քո եւ արբաք, եւ
ի հրապարակս մեր ուսուցեր: Եւ ասի- 27
ցէ. ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ ուստի
էք. ի բաց կացէք յինէն ամենայն մշակք
անիրաւութեան: Անդ եղիցի լալ եւ կըր- 28
ճել ատամանց, յորժամ տեսանիցէք
զԱբրահամ եւ զԻսահակ եւ զՅակոբ եւ
զամենայն մարգարէս յարքայութեան Աս-
տուծոյ, եւ զձեզ հանեալ արտաքս: Եւ 29
եկեսցեն յարեւելից եւ յարեւմտից եւ
ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ, եւ բազմես-
ցին յարքայութեան Աստուծոյ: Եւ ահա 30
իցեն յետինք՝ որ եղիցին առաջինք, եւ ի-
ցեն առաջինք՝ որ լինիցին յետինք:
Ի նմին աւուր մատեան ոմանք փարի- 31
սեցիք, եւ ասեն ցնա. Ել եւ գնա աստի,
զի Հերովդէս կամի սպանանել զքեզ: Եւ 32
ասէ ցնոսա. Երթայք ասացէք աղուեսուն
այնմիկ. ահաւասիկ հանեմ դեւս, եւ
բժշկութիւնս կատարեմ այսօր եւ վա-
ղիւ, եւ յերիր աւուր կատարիմ: Բայց 33
պարտ է այսօր եւ վաղիւ, եւ ի միւսում
աւուր գնալ. զի ոչ է մարթ մարգարէի
կորնչել արտաքոյ քան զԵրուսաղէմ:
Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր 34
զմարգարէս, եւ քարկոծ առնէիր զառա-
քեալսն առ քեզ. քանիցս անգամ կա-
մեցայ ժողովել զորդիս քո, որպէս հաւ

զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամե-
35 ցարուք: Ահա թողեալ լիցի ձեզ տունդ
ձեր: Բայց ասեմ ձեզ, եթէ ոչ եւս տե-
սանիցէք զիս, մինչեւ ասիցէք, օրհնեալ
եկեալն յանուն Տեառն:

ԳԼՈՒԽ ԺԴ

1 Եւ եղեւ ի մտանելն նորա ի տուն
ուրուք իշխանացն փարիսեցւոց ի շա-
բաթու՝ ուտել հաց, եւ նոքա սպասէին
2 նմա: Եւ ահա այր մի էր անդ ջրգո-
3 ղեալ՝ առաջի նորա: Պատասխանի ետ Յի-
սուս եւ ասէ ցօրէնսգէտսն եւ ցփարիսե-
ցիս. Եթէ արժա՞ն իցէ ի շաբաթու բժըշ-
4 կել: Եւ նոքա լուռ եղեն. եւ բուռն հա-
րեալ զնմանէ՝ բժշկեաց զնա, եւ արձա-
5 կեաց: Եւ ասէ ցնոսա. Ո՞յր ուրուք ի
ձէնջ էշ կամ եզն՝ անկանիցի ի ջրհոր, եւ
ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շա-
6 բաթու: Եւ ոչ կարացին տալ նմա պա-
տասխանի առ այն:
7 Ասաց եւ առ կոչնականսն առակ մի,
հայեցեալ թէ զիարդ բարձրնախիր լինէին.
8 ասէ ցնոսա. Յորժամ կոչիցէ ոք զքեզ ի
ի հարսանիս՝ կամ ի կոչունս, մի՛ բազմի-
ցիս յառաջին բարձին. գուցէ պատուա-
կանագոյն եւս քան զքեզ իցէ կոչեցեալ
9 ի նմանէ. եւ եկեալ՝ որ զքեզն եւ զնա

կոչեաց՝ ասիցէ ցքեզ, տուր սմա տեղի.
եւ ապա սկսանիցիս ամօթով զյետին տե-
ղին ունել։ Այլ յորժամ կոչիցիս, եր- 10
թիջիր բազմեսջիր ի յետին տեղւոջ. զի
յորժամ գայցէ որ կոչեացն զքեզ՝ ասիցէ
ցքեզ. բարեկամ, ի վեր մատիր. յայնժամ
եղիցին քեզ փառք առաջի բարձակցացն
քոց։ Զի ամենայն որ բարձրացուցանէ 11
զանձն՝ խոնարհեսցի. եւ որ խոնարհե-
ցուցանէ զանձն՝ բարձրասցի։
Ասէ եւ ցկոչնատէրն. Յորժամ առնի- 12
ցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարե-
կամս քո, եւ մի՛ զեղբարս քո, եւ մի՛ զազ-
գականս քո, եւ մի՛ զդրացիս քո, եւ մի՛
զմեծամեծս. զի մի՛ եւ նոքա փոխարէն
կոչեսցեն զքեզ, եւ լինիցի քեզ հատու-
ցումն։ Այլ յորժամ առնիցես ընդու- 13
նելութիւն՝ կոչեա զաղքատս եւ զխեղս
եւ զկաղս եւ զկոյրս. եւ երանելի լինի- 14
ցիս. զի ոչ ունին փոխարէն հատուցանե-
լոյ քեզ. եւ հատուսցի քեզ փոխարէն ի
յարութեան արդարոց։ Իբրեւ լուաւ 15
զայս ոմն ի բազմականացն՝ ասէ ցնա. ե-
րանի՛ որ կերիցէ ճաշ յարքայութեան
Աստուծոյ։ Եւ նա ասէ. Այր ոմն գոր- 16
ծեաց ընթրիս, եւ հրաւիրեաց զբազու-
մս։ Եւ առաքեաց զծառայ իւր ի ժա- 17
մու ընթրեացն կոչել զհրաւիրեալսն թէ
եկայք, զի ահաւասիկ պատրաստ է ա-

18 մենայն ինչ։ Եւ սկսան մի ըստ միոջէ ա-
մենեքեան հրաժարել։ Առաջինն ասէ.
ագարակ գնեցի, եւ հարկ է ելանել տե-
սանել զնա, աղաչեմ զքեզ կալ զիս հրա-
19 ժարեալ։ Եւ միւսն ասէ. լուծս հինգ ե-
զանց գնեցի, եւ երթամ փորձել զնո-
սա. աղաչեմ զքեզ կալ զիս հրաժարեալ։
20 Եւ միւսն ասէ. կին առի, եւ վասն այնո-
21 րիկ ոչ կարեմ գալ։ Եւ եկեալ ծառայն
պատմեաց զայն տեառն իւրում։ Յայն-
ժամ բարկացեալ տանուտէրն՝ ասէ ցծա-
ռայն իւր. Ել վաղվաղակի ի հրապարակս
եւ ի փողոցս քաղաքիդ, եւ զաղքատս եւ
զխեղս եւ զկաղս եւ զկոյրս մոյծ այսր։
22 Եւ ասէ ծառայն. Տէր, եղեւ զոր հրա-
23 մայեցերն, եւ կայ եւս տեղի։ Եւ ասէ
տէրն ցծառայն. Ել ի ճանապարհս եւ ի
ցանկս, եւ արա այսր մտանել, զի լցցի
24 տունս իմ։ Ասեմ ձեզ, զի ոչ ոք յայնց
կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց իմոց։
25 ԶԿ. Եւ երթային ընդ նմա ժողովուրդք
26 բազումք. դարձաւ եւ ասէ ցնոսա. Եթէ
ոք գայ առ իս՝ եւ ոչ ատեայ զհայր իւր
եւ զմայր եւ զկին եւ զորդիս եւ զեղ-
բարս եւ զքորս. նա՛ եւ զանձն եւս իւր,
27 ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Զի որ ոչ
բառնայ զխաչ իւր եւ գայ զկնի իմ, ոչ
կարէ իմ աշակերտ լինել։
28 Ո՞վ ոք ի ձէնջ կամիցի շինել աշտարակ.

եւ ոչ նախ նստեալ համարիցի զծախսն՝
եթէ ունիցի բաւական ի կատարումն:
Զի գուցէ իբրեւ արկանիցէ հիմն՝ եւ ոչ 29
կարիցէ կատարել, ամենեքին որ տեսանի-
ցեն, սկսանիցին ծաղր առնել զնա, եւ ա- 30
սել, թէ այս այր սկսաւ շինել, եւ ոչ կա-
րաց կատարել: Կամ ո՞ր թագաւոր եր- 31
թեալ տայցէ պատերազմ ընդ այլում
թագաւորի. եւ ոչ նստեալ նախ խորհի-
ցի, եթէ կարող իցէ տասն հազարաւ ըն-
դէմ ունել զայնորիկ՝ որ գայցէ ի վերայ
նորա քսան հազարաւ: Ապա թէ ոչ՝ մինչ- 32
դեռ հեռագոյն իցէ, հրեշտակութիւն ա-
ռաքեալ՝ աղաչեսցէ ի խաղաղութիւն:
Արդ այսպէս ամենայն ոք ի ձէնջ՝ որ 33
ոչ հրաժարեսցէ յամենայն ընչից իւրոց,
ոչ կարէ իմ աշակերտ լինել:
Բարւոք է աղ. ապա թէ աղն անհա- 34
մեսցի՝ իւ համեմեսցի. ոչ յերկիր եւ 35
ոչ յաղբ է պիտանացու, այլ ընկենուլ
զնա արտաքս: Որ ունիցի ականջս լսելոյ
լուիցէ:

ԳԼՈՒԽ ԺԵ

Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսա- 1
ւորք եւ մեղաւորք՝ լսել ի նմանէ: Տրտըն- 2
ջէին փարիսեցիքն եւ դպիրք եւ ասէին.
Ընդէ՞ր սա զմեղաւորս ընդունի եւ ուտէ

3 ընդ նոսա: Ասաց առ նոսա զառակս զայս.
4 Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր
ոչխար, եւ կորուսանիցէ մի ի նոցանէ.
ո՞չ թողուցու զիննսուն եւ զինն յանա-
պատի, եւ երթայցէ զհետ կորուսելոյն՝
5 մինչեւ գտանիցէ զնա: Եւ իբրեւ գտանէ,
դնէ զնա ի վերայ ուսոց իւրոց խնդալով,
6 եւ երթայ ի տուն. կոչէ զբարեկամս եւ
զդրացիս, եւ ասէ ցնոսա. ուրախ եղե-
րուք ընդ իս, զի գտի զոչխարն իմ զկո-
7 րուսեալ: Ասեմ ձեզ, զի այսպէս է ու-
րախութիւն յերկինս վասն միոյ մեղա-
ւորի որ ապաշխարիցէ, քան վասն իննսուն
եւ ինն արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ա-
8 պաշխարութիւն: Կամ ո՞վ իցէ կին, որոյ
իցեն դրամք տասն, եւ եթէ կորուսանի-
ցէ դրամ մի, ո՞չ լուցանիցէ ճրագ, եւ
ածիցէ աւել ի տան եւ խնդրիցէ ստէպ՝
9 մինչեւ գտանիցէ: Եւ իբրեւ գտանէ, կո-
չէ զբարեկամս եւ զդրացիս՝ եւ ասէ.
ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն
10 իմ զոր կորուսի: Այնպէս՝ ասեմ ձեզ,
ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց
Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ա-
պաշխարիցէ:
11 Եւ ասէ. Առն միոջ էին երկու որդիք.
12 ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն. Հայր,
տուր ինձ բաժին, որ անկանի յընչիցդ.
13 եւ նա բաժանեաց նոցա զկեանսն: Եւ

յետ ոչ բազում աւուրց՝ ժողովեալ զա-
մենայն կրտսեր որդւոյն՝ գնաց յաշխարհ
հեռի. եւ անդ վատնեաց զինչս իւր. զի
կեայր անառակութեամբ: Եւ իբրեւ 14
սպառեաց զամենայն, եղեւ սով սաստիկ
յաշխարհին յայնմիկ, եւ սկսաւ ինքն չը-
քաւորել: Եւ գնացեալ յարեցաւ ի մի 15
ումն ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ.
եւ յղեաց զնա յագարակ իւր արածել
խոզս: Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր 16
յեղջերեն զոր խոզքն ուտէին, եւ ոչ ոք
տայր նմա: Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ. 17
Քանի՛ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ
հացալիցք, եւ ես աստ սովամահ կորնչիմ:
Յարուցեալ գնացից առ հայր իմ, եւ ա- 18
սացից ցնա. Հայր, մեղայ յերկինս եւ ա-
ռաջի քո, եւ ոչ եւս եմ արժանի կոչել 19
որդի քո, արա զիս իբրեւ զմի ի վարձկա-
նաց քոց: Եւ յարուցեալ եկն առ հայր 20
իւր. եւ մինչդեռ հեռագոյն էր, եհես
զնա հայրն՝ եւ գթացաւ. յարեաւ եւ
ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանո-
ցաւն նորա, եւ համբուրեաց զնա: Եւ 21
ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս եւ
առաջի քո, ոչ եւս եմ արժանի կոչել որ-
դի քո: Ասէ հայրն ցծառայս իւր. Վաղվա- 22
ղակի հանէք զպատմուճանն առաջին, եւ
ագուցէք նմա, եւ տուք զմատանին ի
ձեռն նորա, եւ կօշիկս յոտս նորա. եւ 23

ածէք զեզն պարարակ, զենէք. կերիցուք
24 եւ ուրախ լիցուք. զի այս որդի իմ մե-
ռեալ էր եւ եկեաց, կորուսեալ էր եւ
25 գտաւ: Եւ սկսան ուրախ լինել: Եւ էր
երէց որդին նորա յագարակի. եւ մինչ
դեռ գայր եւ մերձ եղեւ ի տունն, լուաւ
26 զձայն երգոց եւ զպարուց. եւ կոչեցեալ
առ ինքն զմի ի ծառայիցն՝ հարցանէր թէ
27 զինչ իցէ այն: Եւ նա ասէ ցնա. զի եղ-
բայր քո եկեալ է, եւ եզեն հայր քո զեզն
պարարակ. զի ողջամբ ընկալաւ զնա:
28 Բարկացաւ եւ ոչ կամէր մտանել. եւ
29 հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա: Պա-
տասխանի ետ եւ ասէ ցհայրն. Այսքանի
ամք են՝ զի ծառայեմ քեզ, եւ երբեք ըզ-
պատուիրանաւ քով ոչ անցի. ուլ մի եր-
բէք ոչ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ
30 բարեկամս իմ: Յորժամ եկն որդիդ քո
այդ՝ որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս,
31 զենէր դմա զեզն պարարակ: Եւ ասէ
ցնա. Որդեակ, դու հանապազ ընդ իս
32 ես, եւ ամենայն որ ինչ իմ է՝ քո է. այլ
ուրախ լինել եւ խնդալ պարտ էր, զի եղ-
բայր քո այս մեռեալ էր՝ եւ եկեաց, կո-
րուսեալ էր՝ եւ գտաւ:

ԳԼՈՒԽ ԺԶ

ԶԲ․ Եւ ասէր առ աշակերտսն․ այր 1
մի էր մեծատուն, որոյ էր տնտես․ եւ
եղեւ զնմանէ ամբաստանութիւն, որպէս
թէ վատնիցէ զինչս նորա։ Կոչեաց եւ ա- 2
սէ ցնա․ Զի՞նչ է այս զոր լսեմս զքէն․
տուր զհամար տնտեսութեան քո․ զի ոչ
եւս կարես լինել տնտես։ Ասէ ընդ միտս 3
իւր տնտեսն․ զի՞նչ գործեցից, զի տէր իմ
հանէ զտնտեսութիւնս․ գործել ոչ կա-
րեմ, մուրանալ ամաչեմ․ գիտեմ զինչ 4
արարից, զի յորժամ ի բաց լինիցիմ ի
տնտեսութենէս՝ ընկալցին զիս ի տունս
իւրեանց։ Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ 5
միոջէ ի պարտապանաց տեառն իւրոյ,
ասէ ցառաջինն․ քանի՞ ինչ պարտիս տեառն
իմում։ Եւ նա ասէ․ հարիւր մար ձիթոյ․ 6
ասէ ցնա․ կա՛ զգիր քո, եւ նիստ գրեա
վաղվաղակի յիսուն։ Դարձեալ ասէ ցմիւ- 7
սն․ դու քանի՞ ինչ պարտիս․ եւ նա ա-
սէ․ հարիւր քոռ ցորենոյ․ եւ ասէ ցնա․
կա՛ զգիր քո եւ նիստ գրեա ութսուն։ Եւ 8
գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան,
զի իմաստութեամբ արար․ զի որդիք աշ-
խարհիս այսորիկ իմաստնագոյն են քան
զորդիս լուսոյ յազգս իւրեանց։

9 Եւ ես ձեզ ասեմ․ արարէք ձեզ բա-
րեկամս ի մամոնայէ անիրաւութեան․
զի յորժամ պակասիցէ այն ընկալցին ըզ-
ձեզ ի յարկսն յաւիտենականս։
10 Որ ի փոքուն հաւատարիմ է, եւ ի
բազմին հաւատարիմ է․ եւ որ ի փո-
քուն անիրաւ է, եւ ի բազմին անիրաւ է։
11 Իսկ արդ եթէ յանիրաւ մամոնային չե-
ղէք հաւատարիմք, զճշմարիտն ձեզ ո՞
12 հաւատասցէ։ Եւ եթէ յօտարին չեղէք
13 հաւատարիմք, զձերն ո՞ տացէ ձեզ։ Ոչ
ոք ծառայ կարէ երկուց տերանց ծա-
ռայել․ զի եթէ զմին ատիցէ՝ զմիւսն սի-
րիցէ, կամ զմին մեծարիցէ, եւ զմիւսն
արհամարհիցէ․ ոչ կարէք Աստուծոյ ծա-
ռայել եւ մամոնայի։
14 Իբրեւ լսէին զայս ամենայն փարիսե-
ցիքն՝ քանզի արծաթասէրք էին, եւ ան-
15 գոսնէին զնա։ Եւ ասէ ցնոսա․ Դուք էք
որ արդարացուցանէք զանձինս առաջի
մարդկան, սակայն Աստուած գիտէ ըզ-
սիրտս ձեր․ զի որ առաջի մարդկան
16 բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ։ Օ-
րէնքն եւ մարգարէք մինչեւ ցՅովհան-
նէս․ յայնմ հետէ արքայութիւն Աս-
տուծոյ աւետարանի, եւ ամենայն ոք զնա
17 բռնաբարէ։ Դիւրին է երկնից եւ եր-
կրի անցանել, քան յօրինացն միոյ նշա-
նախեցի անկանել։

Ամենայն որ արձակէ զկին իւր եւ առ- 18
նէ այլ՝ շնայ. եւ որ զարձակեալն առնէ՝
շնայ։

Այր ոմն էր մեծատուն, եւ ագանէր 19
բեհեզս եւ ծիրանիս, եւ ուրախ լինէր
հանապազ առատապէս։ Եւ աղքատ ոմն 20
անուն Ղազարոս անկեալ դնէր առ դրան
նորա վիրաւորեալ. եւ ցանկայր յագել 21
ի փշրանացն՝ որ անկանէին ի սեղանոյ մե-
ծատանն. այլ եւ շունք եւս գային, եւ
լեզուին զվէրս նորա։ Եւ եղեւ մեռանել 22
աղքատին, եւ տանել հրեշտակաց զնա ի
գոգն Աբրահամու. մեռաւ եւ մեծա-
տունն, եւ թաղեցաւ. եւ ի դժոխսն՝ ամ- 23
բարձ զաչս իւր, մինչ ի տանջանսն էր, ե-
տես զԱբրահամ ի հեռաստանէ, եւ զՂա-
զարոս ի գոգ նորա հանգուցեալ։ Եւ նա 24
աղաղակեաց եւ ասէ. հայր Աբրահամ,
ողորմեաց ինձ, եւ առաքեա զՂազարոս,
զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր, եւ
զովացուսցէ զլեզու իմ, զի պապակիմ ի
տապոյ աստի։ Եւ ասէ ցնա Աբրահամ. 25
Որդեակ, յիշեա զի ընկալար անդրէն զբա-
րիս քո ի կեանս քում. եւ Ղազարոս նոյն-
պէս զչարչարանս. արդ սա աստ մխիթա-
րի, եւ դու այդր պապակիս։ Եւ ի վերայ 26
այսր ամենայնի՝ վիհ մեծ է ընդ մեզ եւ
ընդ ձեզ. եթէ կամիցին աստի առ ձեզ
անցանել՝ ոչ կարեն, եւ ոչ այտի ոք առ

27 մեզ անցանել։ Եւ ասէ. արդ աղաչեմ ըզ-
քեզ հայր, զի արձակեսցես զդա ի տուն
28 հօր իմոյ. են իմ անդ եղբարք հինգ, որ-
պէս զի տացէ նոցա վկայութիւն. զի մի՛
եւ նոքա գայցեն յայս տեղի տանջանաց։
29 Եւ ասէ Աբրահամ. Ունին զՄովսէս եւ
30 զմարգարէս, նոցա լուիցեն։ Եւ նա ասէ.
Ոչ, հայր Աբրահամ, բայց եթէ ի մեռե-
լոց ոք երթիցէ առ նոսա, եւ ապաշխա-
31 րեսցեն։ Եւ ասէ ցնա. Եթէ Մովսիսի եւ
մարգարէիցն ոչ լսեն, եւ ոչ թէ ի մեռե-
լոց ոք յառնիցէ՝ հաւատասցեն։

ԳԼՈՒԽ ԺԷ

1 Զգ. Ասաց եւ առ աշակերտսն իւր. Ոչ
է մարթ չգալ գայթագղութեան. բայց
2 վա՜յ այնմիկ է՝ յոյր ձեռն գայցէ։ Լաւ էր
նմա՝ թէ վէմ երկանաքար կախէր զպա-
րանոցէ նորա՝ եւ անկանէր ի ծով, քան
թէ գայթագղեցուցանիցէ զմի ոք ի փո-
քրկանցս յայսցանէ։
3 Զգոյշ կացէք անձանց. եթէ մեղիցէ
եղբայր քո, սաստեա նմա. եւ եթէ ա-
4 պաշխարիցէ, թող նմա։ Եւ եթէ եօթն
անգամ մեղիցէ քեզ, եւ եօթն անգամ
դարձցի ի քեզ՝ եւ ասիցէ, ապաշխարեմ,
թողցես նմա։
5 Եւ ասեն առաքեալքն ցՏէր. Յաւել

մեզ հաւատս: Եւ ասէ Տէր. Եթէ ունի֊ 6
ցիք հաւատս քան զհատ մանանխոյ, եւ
ասիցէք թթենւոյս այսմիկ, խլեաց եւ
անկեաց ի ծովու, եւ հնազանդեսցի ձեզ:
Իսկ ո՞վ ոք ի ձէնջ, որ ունիցի ծառայ 7
հողագործ կամ հովիւ, որ իբրեւ մտանի֊
ցէ յագարակէ՝ ասիցէ ցնա վաղվաղակի.
Թէ անց բազմեաց: Այլ ո՞չ ասիցէ ցնա, 8
Թէ պատրաստեա զինչ ընթրեաց իցեմ,
եւ գօտի ածեալ պաշտեա զիս՝ մինչեւ կե֊
րայց եւ արբից, եւ ապա կերիցես եւ
արբցես դու: Միթէ շնո՞րհ ինչ ունիցի 9
ծառային այնմիկ, զի արար զամենայն
հրամանսն: Նոյնպէս եւ դուք՝ յորժամ 10
առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ,
ասասջիք թէ ծառայք անպիտանք եմք,
զոր պարտէաքն առնել, արարաք:
Եւ եղեւ մինչեւ երթայր նա յԵրու֊ 11
սաղէմ, եւ ինքն անցանէր ընդ մէջ Սա֊
մարիայ եւ Գալիլեայ: Եւ մինչդեռ 12
մտանէր ի դեօղ ուրեմն, պատահեցին
նմա տասն այր բորոտ. որք կացին ի հե֊
ռաստանէ, բարձին զձայնս, եւ ասեն. 13
Յիսուս վարդապետ, ողորմեաց մեզ: Եւ 14
իբրեւ ետես զնոսա, ասէ ցնոսա. Երթայք
ցուցէք զանձինս քահանայիցն: Եւ եղեւ
իբրեւ գնային. առժամայն սրբեցան: Մի 15
ոմն ի նոցանէ իբրեւ ետես՝ եթէ բժշկե֊
ցաւ, դարձաւ անդրէն, ի ձայն մեծ փա֊

16 ռաւոր առնէր զԱստուած. անկաւ ի վե֊
րայ երեսաց իւրոց առ ոտս նորա, եւ գո֊
17 հանայր զնմանէ. եւ ինքն էր Սամարացի:
Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ո՞չ
տասն ոքա սրբեցան, իսկ արդ ինունքն
18 ո՞ւր են. զի ոչ գտան դառնալ տալ փառս
Աստուծոյ, բայց միայն այլազգիս այս:
19 Եւ ասէ ցնա. Արի գնա, զի հաւատք քո
կեցուցին զքեզ:
20 ԶԴ. Իբրեւ հարցաւ ի փարիսեցւոցն՝
թէ երբ գայցէ արքայութիւն Աստուծոյ.
պատասխանի ետ նոցա եւ ասէ. Ոչ գայ
21 արքայութիւն Աստուծոյ խտրանօք. եւ
չասիցեն թէ ահաւասիկ աստ է կամ անդ.
զի ահա արքայութիւն Աստուծոյ ի ներքս
22 ի ձեզ է: Ասաց եւ առ աշակերտսն. Ե֊
կեսցեն աւուրք ցանկանալոյ ձեզ մի յա֊
ւուրցն որդւոյ մարդոյ տեսանել՝ եւ ոչ
23 տեսանիցէք: Եւ եթէ ասիցեն ձեզ՝ եթէ
ահաւասիկ է կամ անդ, մի՛ երթայցէք
24 զհետ: Զի որպէս փայլակն փայլատա֊
կեալ ի ներքոյ երկնից՝ ընդ երկնիւք ծա֊
գիցէ, նոյնպէս եւ որդի մարդոյ յաւուրն
25 իւրում: Բայց նախ պարտ է նմա բազում
չարչարել, եւ խոտել յազգէս յայսմանէ:
26 Եւ որպէս եղեւ յաւուրսն Նոյի, նոյն֊
պէս եղիցի եւ յաւուրս որդւոյ մարդոյ:
27 Ուտէին, ըմպէին, կանայս առնէին, եւ
արանց լինէին, մինչեւ յօրն՝ յորում ե֊

մուտ Նոյ ի տապանն, եւ եկն ջրհեղեղն՝
եւ կորոյս զամենեսեան։ Նոյնպէս եւ որ- 28
պէս յաւուրսն Ղովտայ եղեւ. ուտէին,
ըմպէին, գնէին, վաճառէին, տնկէին, շի-
նէին. եւ յորում աւուր ել Ղովտ ի Սո- 29
դոմայ, տեղաց հուր եւ ծծումբ յերկնից՝
եւ կորոյս զամենեսեան. ըստ նմին օրինա- 30
կի եղիցի եւ յաւուրն՝ յորում որդի
մարդոյ յայտնելոց է։ Յայնմ աւուր որ 31
կայցէ ի տանիս՝ եւ կարասի իւր ի տան,
մի իջցէ առնուլ զայն. եւ որ յանդի իցէ,
նոյնպէս մի դարձցի յետս։ Յիշեցէք զկինն 32
Ղովտայ։ Որ խնդրիցէ զանձն իւր ապրե- 33
ցուցանել, կորուսցէ զնա. եւ որ կորու-
ցէ՝ ապրեցուսցէ զնա։ Ասեմ ձեզ. յայնմ 34
գիշերի՝ թէ եղիցին երկու ի մի մահճի,
մին առցի՝ եւ միւսն թողցի. եւ եթէ եղի- 35
ցին երկու՝ աղալ ի միասին, մին առցի՝
եւ միւսն թողցի. եւ եթէ իցեն երկու
յանդի, մին առցի՝ եւ միւսն թողցի։ Պա- 36
տասխանի ետուն եւ ասեն ցնա. յո՞, Տէր։
Եւ նա ասէ ցնոսա. Ուր մարմին է, անդ 37
եւ արծուիք ժողովեսցին։

ԳԼՈՒԽ ԺԸ

ԶԵ. Ասաց եւ առակ մի նոցա՝ առ այն, 1
թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա
յաղօթս եւ մի ձանձրանալ։ Ասէ. Դա- 2

տաւոր մի էր ի քաղաքի ուրեմն. յԱստուա-
ծոյ ոչ երկնչէր, եւ ի մարդկանէ ոչ ամա-
3 չէր. եւ այրի մի էր ի նմին քաղաքի, գայր
առ նա եւ ասէր. դատ արա ինձ յոսոխէ
4 իմմէ. եւ ոչ կամէր ի բազում ժամանակս։
Յետ այնորիկ ասէ ի միտս իւրում. եթէ
եւ յԱստուծոյ ոչ երկնչիմ, եւ ի մարդ-
5 կանէ ոչ ամաչեմ, գոնէ վասն աշխատ առ-
նելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ, զի
6 մի իսպառ եկեալ թախանձիցէ զիս։ Եւ
ասէ տէր. Լուարուք զինչ դատաւորն
7 անիրաւութեան ասէր։ Իսկ Աստուած
ո՞չ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից
իւրոց, որ աղաղակեն առ նա ի տուէ եւ
ի գիշերի, եւ երկայնամիտ միայն լինիցի
8 առ նոսա։ Այո, ասեմ ձեզ, զի արասցէ
վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի։ Իսկ
որդի մարդոյ եկեալ՝ գտանիցէ՞ արդեօք
հաւատս յերկրի։

9 Ասաց եւ առ ոմանս պանծացեալս
յանձինս՝ թէ արդարք իցեն, եւ խոտիցեն
10 զբազումս, զառակս զայս։ Արք երկու
ելին ի տաճարն կալ յաղօթս, մին փարի-
11 սեցի՝ եւ միւսն մաքսաւոր։ Փարիսեցին
կայր մեկուսի, եւ զայս առանձինն ա-
ղօթս մատուցանէր. Աստուած իմ, գո-
հանամ զքէն, զի ոչ եմ իբրեւ զայլս ի
մարդկանէ, զյափշտակօղս եւ զանի-
րաւս եւ զշունս, կամ իբրեւ զայս մաք-

սաւոր· այլ պահեմ երկիցս ի շաբա֊ 12
թու, եւ տամ տասանորդս յամենայն
ստացուածոյ իմոյ։ Եւ մաքսաւորն կայր 13
մեկուսի, եւ ոչ կամէր եւ ոչ զաչսն ընդ
երկինս ամբառնալ· այլ կոծէր զկուր֊
ծըս իւր, եւ ասէր· Աստուած, քաւեա
զիս զմեղաւորս։ Ասեմ ձեզ, էջ սա ար֊ 14
դարացեալ ի տուն իւր քան զնա։ Զի ա֊
մենայն որ բարձրացուցանէ զանձն իւր՝
խոնարհեսցի· եւ որ խոնարհեցուցանէ
զանձն, բարձրասցի։

ՁԶ· Մատուցանէին առ նա եւ մանկտի՝ 15
զի մերձենայցէ ի նոսա· իբրեւ տեսին ա֊
շակերտքն՝ սաստէին նոցա։ Իսկ Յիսուս 16
կոչեցեալ զնոսա առ ինքն՝ ասէ· Թոյլ տուք
մանկտւոյդ գալ առ իս, եւ մի՛ արգելուք
զդոսա· զի այդպիսեացդ է արքայութիւն
Աստուծոյ։ Ամէն ասեմ ձեզ· որ ոչ ընդու֊ 17
նիցի զարքայութիւնն Աստուծոյ իբրեւ ըզ֊
մանուկ, ոչ մտցէ ի նա։

Եւ եհարց զնա ոմն իշխան եւ ասէ· 18
Վարդապետ բարի, զի՞նչ գործեցից, զի
զկեանսն յաւիտենականս ժառանգեցից։
Ասէ ցնա Յիսուս· Զի՞ ասես զիս բարի· 19
չիք ոք բարի՝ բայց մի Աստուած։ Զպա֊ 20
տուիրանս գիտես· մի՛ շնար, մի՛ սպանա֊
ներ, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայեր, պա֊
տուեա զհայր քո եւ զմայր։ Եւ նա ասէ· 21
զայդ ամենայն պահեցի ի մանկութենէ

22 իմմէ։ Իբրեւ լուաւ զայն Յիսուս՝ ասէ
ցնա· միւս եւս պակաս է քեզ· զամենայն
ինչ զոր ունիս՝ վաճառեա եւ տուր աղ֊
քատաց, եւ ունիցիս գանձս յերկինս· եւ
23 եկ զկնի իմ։ Նա իբրեւ լուաւ զայս՝
տրտմեցաւ· քանզի էր մեծատուն յոյժ։
24 Իբրեւ ետես զնա Յիսուս տրտմեալ, ա֊
սէ· Ո՛րպէս դժուարաւ որ ինչս ունիցին՝
մտանիցեն յարքայութիւն Աստուծոյ։
25 Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ ծակ ասղան
անցանել, քան մեծատան յարքայու֊
26 թիւն Աստուծոյ մտանել։ Եւ որ լուանն՝
27 ասէին· եւ ո՞ կարիցէ ապրել։ Եւ նա ա֊
սէ· Անհնարինք առ ի մարդկանէ, հնա֊
28 րաւորք են յԱստուծոյ։ Եւ ասէ Պե֊
տրոս· Ահաւասիկ մեք թողաք զամենայն
29 ինչ զմեր, եւ եկաք զկնի քո։ Եւ նա ասէ
ցնոսա· Ամէն ասեմ ձեզ· եթէ ոչ ոք է՝
որ եթող զտունս կամ զծնօղս կամ զեղ֊
բարս կամ զկին կամ զորդիս՝ վասն ար֊
30 քայութեան Աստուծոյ, եթէ ոչ առնու֊
ցու բազմապատիկ ի ժամանակի յայս֊
միկ· եւ յաշխարհին որ գալոցն է՝ ըզ֊
կեանսն յաւիտենականս ժառանգեսցէ։
31 Եւ առեալ զերկոտասանսն առան֊
ձինն՝ ասէ ցնոսա· Ահաւասիկ ելանեմք
յԵրուսաղէմ, եւ կատարեսցին ամենայն
գրեալքն մարգարէիւք վասն որդւոյ մար֊
32 դոյ։ Զի մատնեսցի հեթանոսաց եւ կա֊

տակեսցի. եւ հարկանիցեն եւ սպանա- 33
նիցեն զնա, եւ յերիր աւուր յարիցէ:
Եւ նոքա ոչինչ իմացան յայնցանէ, այլ 34
էր բանն ծածկեալ ի նոցանէ, եւ ոչ գի-
տէին զասացեալսն:

Ջե. Եւ եղեւ ի մօտելն նորա յԵրի- 35
քով, կոյր մի նստէր առ ճանապարհաւն
մուրացիկ: Իբրեւ լուաւ զանցանել ժո- 36
ղովրդեանն, հարցանէր՝ թէ զի՞նչ իցէ
այն: Եւ պատմեցին նմա, թէ Յիսուս Նա- 37
զովրեցի անցանէ: Աղաղակեաց եւ ասէ. 38
Յիսուս որդի Դաւթի, ողորմեաց ինձ: Եւ 39
որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռ-
եսցէ. եւ նա եւս առաւել աղաղակէր,
Որդի Դաւթի, ողորմեաց ինձ: Զտեղի առ 40
Յիսուս, եւ հրամայեաց ածել զնա առ
ինք. եւ իբրեւ մերձ եղեւ առ նա, եհարց
զնա եւ ասէ. Զի՞նչ կամիս դու՝ զի արարից 41
քեզ. եւ նա ասէ. Տէր, զի բացցին աչք
իմ եւ տեսից: Եւ Յիսուս ասէ ցնա. Հայ- 42
եաց, հաւատք քո կեցուցին զքեզ: Եւ 43
առժամայն ետես. երթայր զհետ նորա՝
եւ փառաւոր առնէր զԱստուած. եւ ա-
մենայն ժողովրդեանն տեսեալ, տայր օրհ-
նութիւն Աստուծոյ:

ԳԼՈՒԽ ԺԹ

1 Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով: Եւ ա-
2 հա այր մի անուն կոչեցեալ Զակքէոս, եւ
նա էր մաքսապետ, եւ ինքն մեծատուն.
3 եւ խնդրէր տեսանել՝ եթէ ո՞վ իցէ Յի-
սուս. եւ ոչ կարէր ի բազմութենէն, զի
4 կարճ էր հասակաւ: Եւ ընթացեալ յա-
ռաջս, ել ի ժանտաթզենին՝ զի տեսա-
նիցէ զնա. քանզի ընդ այն իսկ անցանե-
5 լոց էր: Իբրեւ եկն ի տեղին, հայեցաւ ի
վեր Յիսուս՝ եւ ասէ ցնա. Զակքէ, փութա
էջ այտի, զի այսօր ի տան քում արժան
6 է ինձ ագանել: Փութացաւ եւ էջ, եւ
7 ընկալաւ զնա ուրախութեամբ: Իբրեւ
տեսին ամենեքին, տրտնջէին եւ ասէին՝
թէ առ առն մեղաւորի եմուտ լուծա-
8 նել: Եկն եկաց Զակքէոս՝ եւ ասէ ցՏէր.
Տէր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքա-
տաց. եւ եթէ զոք զրկեցի, հատուցից
9 չորեքկին: Եւ ասէ ցնա Յիսուս. Այսօր
եղեւ փրկութիւն տանս այսմիկ. քանզի
10 եւ սա որդի Աբրահամու է: Զի եկն որ-
դի մարդոյ խնդրել եւ կեցուցանել զկո-
րուսեալն:

11 Եւ մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել
առակ մի եւ ասէ, վասն մերձենալոյ նո-
րա յԵրուսաղէմ, եւ համարելոյ նոցա

եթէ առժամայն յայտնելոց է արքայու-
թիւն Աստուծոյ: Ասէ. Այր ոմն ազ- 12
նուական գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ
իւր թագաւորութիւն եւ դառնալ: Եւ 13
կոչեցեալ զծառայս իւր՝ ետ նոցա տասն
մնաս, եւ ասէ ցնոսա. յարդեցէք զայդ
մինչեւ եկից: Եւ քաղաքացիքն նորա ա- 14
տէին զնա. առաքեցին հրեշտակս զհետ
նորա եւ ասեն, թէ ոչ կամիմք թագաւո-
րել դմա ի վերայ մեր: Եւ եղեւ դառնալ 15
նմա՝ առեալ զթագաւորութիւնն. եւ կո-
չեաց զծառայսն՝ որոց տուեալ էր զար-
ծաթն, զի գիտասցէ թէ ո՞ զինչ շահե-
ցաւ: Եկն առաջինն եւ ասէ. Տէր մնասն 16
քո՝ տասն մնաս արար: Եւ ասէ ցնա. 17
Ազնիւ ծառայ եւ բարի, զի ի փոքուդ հա-
ւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ու-
նել ի վերայ տասն քաղաքի: Եկն երկրոր- 18
դն եւ ասէ. Մնասն քո արար հինգ մնաս:
Ասէ եւ ցնա. Եւ դու լիջիր ի վերայ հինգ 19
քաղաքաց: Եկն միւսն եւ ասէ. Տէր, ա- 20
հա մնասն քո՝ զոր ունէի ծրարեալ ի վար-
շամակի. երկնչէի ի քէն, զի այր ստամ- 21
բակ ես. բառնաս՝ զոր ոչ եդիր, եւ հնձես՝
զոր ոչ սերմանեցեր: Եւ ասէ ցնա. ի բե- 22
րանոյ քումմէ դատեցայց զքեզ, ծառայ
անհաւատ. գիտէիր թէ ես այր մի ստամ-
բակ եմ, բառնամ՝ զոր ոչ եդի, եւ հնձեմ՝
ուր ոչ սերմանեցի, եւ ընդէ՞ր ոչ ետուր 23

զարծաթն իմ ի սեղանաւորս, եւ եկեալ
24 ես տոկոսեօք պահանջէի: Եւ ասէ ցապա-
սաւորսն. Առէք ի դմանէ զմնասն, եւ տա-
րայք տուք այնմ՝ որ ունիցի զտասն մնա-
25 սըն: Եւ ասեն ցնա. Տէր, ունի տասն
26 մնաս: Ասեմ ձեզ, եթէ ամենայնի որ ու-
նիցի, տացի. եւ յայնմանէ որ ոչն ունի-
ցի, եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ:
27 Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն
կամէին զիս թագաւորել ի վերայ նոցա,
ածէք այսր եւ սպանէք առաջի իմ:
28 Եւ իբրեւ զայս ասաց, գնաց յառաջ՝
ելանել յԵրուսաղէմ:
29 ԻԿ. Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ ի Բեթ-
փագէ եւ ի Բեթանիա, մօտ ի լեառն՝ որ
կոչի Ձիթենեաց, առաքեաց երկուս յա-
30 շակերտացն իւրոց՝ եւ ասէ. Երթայք
դուք ի գեօղն՝ որ հանդէպ մեր կայ. յոր
իբրեւ մտանէք՝ գտանիցէք յաւանակ
կապեալ, յորում ոք ի մարդկանէ երբէք
31 ոչ նստաւ. լուծէք զնա եւ ածէք: Եւ ե-
թէ ոք հարցանիցէ զձեզ՝ թէ ընդէ՞ր լու-
ծանէք, այսպէս ասասջիք ցնա, թէ Տեառն
32 իւրում պիտոյ է: Իբրեւ չոգան որ առա-
քեցանն, գտին որպէս ասացն ցնոսա,
33 կայր յաւանակն: Եւ մինչդեռ լուծա-
նէին զյաւանակն, ասեն տեարքն նորա
34 ցնոսա. Զի՞ լուծանէք զյաւանակդ: Եւ
նոքա ասեն. Տեառն իւրում պիտոյ է:

Եւ ածին զնա առ Յիսուս. եւ արկին զնո- 35
վաւ հանդերձս, եւ հեծուցին զՅիսուս։
Եւ մինչդեռ երթայր, զհանդերձս ի- 36
րեանց տարածանէին զճանապարհաւն։
Եւ իբրեւ այն ինչ մերձ եղեւ ի զառ ի 37
վայր լերինն Ձիթենեաց, սկսաւ ամենայն
բազմութիւն աշակերտացն ուրախու-
թեամբ օրհնել զԱստուած ի ձայն մեծ,
վասն ամենայն եղելոց զօրութեանցն՝ զոր
տեսին. եւ ասէին. Օրհնեալ որ գայ թա- 38
գաւորդ՝ յանուն Տեառն. խաղաղութիւն
յերկինս, եւ փառք ի բարձունս։ Եւ ո- 39
մանք ի փարիսեցւոցն յամբոխէ անտի՝
ասեն ցնա. Վարդապետ, սաստեա աշա-
կերտացդ քոց։ Պատասխանի ետ եւ ասէ. 40
ասեմ ձեզ՝ զի եթէ դոքա լռեսցեն, քա-
րինքդ աղաղակեսցեն։

Եւ իբրեւ մերձեցաւ, տեսեալ զքա- 41
ղաքն՝ ելաց ի վերայ նորա, եւ ասէ. Եթէ 42
գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ ըզ-
խաղաղութիւնն քո, բայց այժմ ծածկե-
ցաւ յերեսաց քոց։ Զի եկեսցեն աւուրք 43
ի վերայ քո, եւ պատեսցեն զքեւ թշնա-
միք քո պատնէշ, եւ պաշարեսցեն զքեզ,
եւ նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց.
եւ յատակեսցեն զքեզ, եւ զորդիս քո ի 44
քեզ. եւ ոչ թողուցուն քար ի քարի վե-
րայ յամենայնի՝ ի քեզ. փոխանակ զի ոչ
ծանեար զժամանակ այցելութեան քո։

45 Եւ մտեալ ի տաճարն՝ սկսաւ հանել
զաղաւնեվաճառսն, եւ զգնօղս. եւ զսե-
46 ղանս հատավաճառացն ցրուեաց. եւ ա-
սէ ցնոսա. Գրեալ է՝ եւ եղիցի տուն իմ
տուն աղօթից, եւ դուք արարէք զդա
այրս աւազակաց։

47 Եւ ուսուցանէր զնոսա հանապազ ի
տաճարին. իսկ քահանայապետքն եւ
դպիրք եւ գլխաւորք ժողովրդեանն խըն-
48 դրէին զնա կորուսանել, եւ ոչ գտանէին՝
թէ զինչ արասցեն. զի ժողովուրդն ա-
մենայն կախեալ կային զնմանէ ի լսել։

ԳԼՈՒԽ Ի

1 ԻԲ. Եւ եղեւ ի միում աւուրցն յայն-
ցանէ, մինչդեռ ուսուցանէր զժողովուր-
դըն ի տաճարի անդ՝ եւ աւետարանէր,
հասին ի վերայ քահանայապետքն եւ
2 դպիրք ծերովքն հանդերձ, եւ ասեն ցնա.
Ասա մեզ, որո՞վ իշխանութեամբ գործես
դու զայդ, կամ ո՞վ է՝ որ ետ քեզ զայդ
3 իշխանութիւն։ Պատասխանի ետ եւ ասէ
ցնոսա. Հարցից եւ ես զձեզ բան մի, եւ
4 ասացէք ինձ. Մկրտութիւնն Յովհաննու
5 յերկնից էր՝ եթէ ի մարդկանէ։ Եւ նո-
քա խորհեցան ի միտս իւրեանց եւ ա-
6 սեն. Եթէ ասեմք յերկնից, ասէ, իսկ ըն-
դէ՞ր ոչ հաւատացէք նմա. եւ եթէ ա-

սեմք ի մարդկանէ, ամենայն ժողովուր-
դըն քարկոծ առնեն զմեզ. զի հաստա-
տեալ է ի միտս զՅովհաննէ, թէ մարգա-
րէ է։ Եւ պատասխանի ետուն չգիտել 7
թէ ուստի իցէ։ Եւ Յիսուս ասէ ցնոսա. 8
Եւ ոչ ես ասեմ ձեզ որով իշխանութեամբ
առնեմ զայս։

ԻԴ. Սկսաւ ասել առ ժողովուրդն՝ զա- 9
ռակս զայս. այր մի տնկեաց այգի, եւ
ետ զնա մշակաց. եւ ինքն գնաց ի ճանա-
պարհ ժամանակս բազումս։ Եւ ի ժա- 10
մու առաքեաց առ մշակսն ծառայ, զի ի
պտղոյ այգւոյն տացեն նմա. եւ մշակքն
գան հարին զնա, եւ արձակեցին ունայն։
Եւ յաւել միւս եւս ծառայ յղել. նոքա 11
եւ զնա եւս գան հարին՝ անարգեցին, եւ
առաքեցին ունայն։ Եւ յաւել զերրորդն 12
առաքել. նոքա եւ զնա վիրաւորեցին, եւ
հանին արտաքս։ Ասէ տէր այգւոյն. զի՞նչ 13
արարից. առաքեցից զորդի իմ սիրելի,
թերեւս ի սմանէ պատկառեսցեն։ Իբրեւ 14
տեսին զնա մշակքն, խորհեցան ընդ մի-
մեանս եւ ասեն. սա է ժառանգն. սպան-
ցուք զսա, զի մեր լինիցի ժառանգութիւն։
Եւ հանին զնա արտաքս քան զայգին եւ 15
սպանին։ Արդ զի՞նչ արասցէ ընդ նոսա
տէր այգւոյն. ո՞չ ապաքէն գայցէ եւ կո- 16
րուսանիցէ զմշակսն զայնոսիկ, եւ տացէ
զայգին այլոց։ Իբրեւ լուան՝ ասեն. քաւ,

17 մի լիցի։ Եւ նա հայեցեալ ընդ նոսա՝ ա-
սէ. իսկ զի՞նչ իցէ այն որ գրեալն է. եթէ
վէմն զոր անարգեցին շինողքն, նա եղեւ
18 գլուխ անկեան։ Ամենայն՝ որ ընդհարցի
ընդ վէմս ընդ այս՝ խորտակեսցի, եւ յո-
19 րոյ վերայ անկցի՝ հոսեսցէ զնա։ Եւ
խնդրէին դպիրքն եւ քահանայապետք
արկանել ի նա ձեռս ի նմին ժամու, եւ
երկեան ի ժողովրդենէն. զի գիտացին՝
թէ առ նոսա ասաց զառակն զայն։

20 ԻԵ. Եւ ապա սպասեցին, եւ առաքե-
ցին դաւաճանս կեղծաւորեալս՝ զանձինս
առ արդարս ունել, զի ըմբռնեսցեն զնա
բանիւք, առ ի մատնել զնա պետու-
թեանն եւ իշխանութեանն դատաւորի։
21 Հարցին զնա եւ ասեն. Վարդապետ, գի-
տեմք եթէ ուղիղ խօսիս եւ ուսուցանես,
եւ ոչ առնուս ակն, այլ ճշմարտութեամբ
զճանապարհն Աստուծոյ ուսուցանես։
22 Արժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ՝ թէ
23 ոչ։ Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն
24 նոցա ասէ ցնոսա. Ցուցէք ինձ զդահե-
կանն։ Եւ նոքա ցուցին։ Եւ ասէ. Զո՞յր
պատկեր եւ գիր ունի. պատասխանի
25 ետուն եւ ասեն. Զկայսեր։ Եւ նա ասէ
ցնոսա. Արդ երթայք տուք զկայսերն
26 կայսեր, եւ զԱստուծոյն Աստուծոյ։ Եւ
ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք առա-
ջի ժողովրդեանն. եւ զարմացեալ ընդ
պատասխանին նորա՝ լռեցին։

ԻԵ· Մատուցեալ ոմանք ի սադուկե- 27
ցւոցն որք հակառակէին չլինել յարու-
թեան, հարցին ցնա եւ ասեն· Վարդա- 28
պետ, Մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք
եղբայր մեռանիցի, որոյ իցէ կին եւ ա-
նորդի իցէ, զի առնուցու եղբայր նորա
զկինն, եւ յարուսցէ զաւակ եղբօր իւ-
րում։ Արդ եօթն եղբարք էին· եւ առա- 29
ջինն առեալ կին՝ մեռաւ անորդի· առ զնա 30
եւ երկրորդն, մեռաւ եւ նա անորդի· առ 31
զնա եւ երրորդն, նոյնպէս եւ եօթանե-
քին, եւ ոչ թողին որդիս· մեռաւ եւ 32
կինն· արդ ի յարութեան ո՞ւմ ի նոցանէ 33
լինիցի կին· զի եօթանեքին կալան զնա
կին։ Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ 34
եւ ասէ· Որդիք աշխարհիս այսորիկ կա-
նայս առնեն՝ եւ արանց լինին· իսկ որ 35
արժանի լինիցին այնմ աշխարհի հասա-
նել՝ եւ յարութեանն որ ի մեռելոց, ոչ
կանայս առնեն, եւ ոչ արանց լինին։ Քան- 36
զի եւ ոչ մեռանել եւս կարեն, զի հաւա-
սար հրեշտակաց են եւ որդիք Աստուծոյ·
քանզի յարութեան որդիք են։ Այլ զի 37
յառնեն մեռեալք, եւ Մովսէս գուշա-
կեաց ի մորենւոջն, որպէս ասէ զտեառնէ
Աստուծոյ Աբրահամու, եւ զԱստուծոյ Իսա-
հակայ, եւ զԱստուծոյ Յակոբայ։ Եւ Աս- 38
տուած չէ մեռելոց՝ այլ կենդանեաց, զի
ամենեքին նմա կենդանի են։ Պատասխա- 39

նի ետուն ոմանք ի դպրացն եւ ասեն· Վար-
40 դապետ, բարւոք ասացեր։ Եւ ոչ եւս ոք
իշխէր հարցանել զնա՝ եւ ոչինչ։
41 ԻԶ· Ասէ եւ առ նոսա· Զիա՞րդ ասեն
42 զՔրիստոսէ՝ թէ որդի է Դաւթի. զի ինքն
Դաւիթ ասէ ի գիրս սաղմոսաց· Ասաց
43 Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մին-
չեւ եդից զթշնամիս քո պատուանդան
44 ոտից քոց։ Իսկ արդ եթէ Դաւիթ զնա
45 Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ։ Եւ
լուր ի լուր ամենայն ժողովրդեանն ասէ ցա-
46 շակերտսն· Զգոյշ լերուք ի դպրացն, որ
կամին պատմուճանօք շրջել, եւ սիրեն
ողջոյնս ի հրապարակս եւ զնախաթոռս
ի ժողովուրդս եւ զբարձերեցս յընթրիս։
47 Որ ուտեն զտունս այրեաց, եւ պատճա-
ռանօք յերկարեն զաղօթս· նոքա ընկալ-
ցին աւելի դատաստանս։

ԳԼՈՒԽ ԻԱ

1 Եւ հայեցեալ ետես զմեծատունսն՝ որ
արկանէին զտուրս իւրեանց ի գանձա-
2 նակն։ Ետես եւ զկին ոմն այրի աղքատ,
3 որ արկ անդր երկուս լումայս։ Եւ ասէ·
Արդարեւ ասեմ ձեզ, զի այրին այն աղ-
4 քատ՝ աւելի արկ քան զամենեսին։ Ամե-
նեքին նոքա ի մթերից իւրեանց արկին
յընծայսն Աստուծոյ· բայց նա ի կարօ-

տութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր
զոր ունէր՝ արկ։
ԻԷ. Եւ յասել ոմանց զտաճարէն, թէ 5
գեղեցիկ վիմօք եւ աշտարակօք զարդա-
րեալ է, ասէ. Զայդ ամենայն զոր տեսա- 6
նէք, եկեսցեն աւուրք յորս ոչ թողցի
այդր քար ի քարի վերայ, որ ոչ քակտես-
ցի։ Հարցին ցնա եւ ասեն. Վարդապետ, 7
Ե՞րբ լինիցի այդ, եւ զի՞նչ նշան իցէ՝ յոր-
ժամ այդ լինելոց իցէ։ Եւ նա ասէ. Զգոյշ 8
կացէք, մի՛ խաբիցիք. զի բազումք գայցեն
յանուն իմ եւ ասիցեն՝ թէ ես եմ, եւ
մերձեցաւ ժամանակ. մի՛ երթայցէք ըզ-
կնի նոցա։ Եւ յորժամ լսիցէք պատե- 9
րազմունս եւ խռովութիւնս՝ մի՛ զարհու-
րիցիք, զի պարտ է նախ այնմ լինել. այլ
ոչ առժամայն կատարած։
Յայնժամ ասէ ցնոսա. Յարիցէ ազգ 10
յազգի վերայ, եւ թագաւորութիւն ի
թագաւորութեան վերայ. եւ շարժմունք 11
մեծամեծք, եւ ի տեղիս տեղիս սովք եւ
սրածութիւնք եղիցին, արհաւիրք եւ նը-
շանք մեծամեծք յերկնից։ Բայց յառաջ 12
քան զայս ամենայն, մխեսցեն զձեռս իւ-
րեանց ի ձեզ՝ եւ հալածեսցեն. մատնես-
ցեն ի ժողովուրդս եւ ի բանտս, եւ տա-
նիցին առաջի դատաւորաց եւ թագաւո-
րաց վասն անուան իմոյ. եւ լինիցի ձեզ 13
այն ի վկայութիւն։ Արդ դիք ի սիրտս 14

ձեր՝ մի՛ յառաջագոյն կրթել տալոյ պա-
15 տասխանի. զի ես տաց ձեզ բերան եւ
իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ
հակառակ՝ կամ տալ պատասխանի ամե-
նայն հակառակորդքն ձեր։
16 Մատնեսջիք եւ ի ծնողաց եւ յեղբարց
եւ յազգականաց եւ ի բարեկամաց, եւ
17 սպանանիցեն ի ձէնջ. եւ եղիջիք ատե-
ցեալք յամենեցունց վասն անուան իմոյ.
18 եւ մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ. եւ
19 համբերութեամբ ձերով ստասջիք զո-
գիս ձեր։
20 Այլ յորժամ տեսանիցէք շուրջ պա-
տեալ զօրօք զԵրուսաղէմ, յայնժամ գի-
21 տասջիք թէ մերձ է աւեր նորա։ Յայն-
ժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի
լերինս, եւ որ ի միջի նորա իցեն՝ խու-
սեսցեն. եւ որ ի գաւառսն իցեն՝ մի՛
22 մտցեն ի նա. զի աւուրք վրէժխնդրու-
թեան են այնոքիկ, առ ի կատարելոյ ա-
23 մենայն գրելոց։ Բայց վայ իցէ յղեաց եւ
ստնտուաց յաւուրսն յայնոսիկ. զի ե-
ղիցի տագնապ մեծ ի վերայ երկրի, եւ
24 բարկութիւն ժողովրդեանն այնմիկ։ Եւ
անկցին ի սուր սուսերի, եւ գերեսցին
յամենայն հեթանոսս. եւ Երուսաղէմ
եղիցի կոխան յազգաց. մինչեւ կատա-
25 րեսցին ժամանակք հեթանոսաց։ Եւ ե-
ղիցին նշանք յարեգակն եւ ի լուսին եւ

յաստեղս․ եւ յերկրի տագնապ հեթա-
նոսաց, յահեղ բարբառոյ իբրեւ ծովու
եւ խռովութեան, յելանելոյ ոգւոց մարդ- 26
կան յերկիւղէ եւ ի կարծեաց եկելոց ի
վերայ տիեզերաց․ զի զօրութիւնք երկ-
նից շարժեսցին։ Եւ յայնժամ տեսցեն 27
զորդի մարդոյ եկեալ՝ ամպովք զօրու-
թեամբ եւ փառօք բազմօք։ Եւ յորժամ 28
սկսանիցի այս լինել, ամբարձջիք եւ բարձ-
րացուսջիք զգլուխս ձեր․ զի մերձ է փըր-
կութիւն ձեր։

Եւ ասաց առակ մի նոցա․ Տեսէք զթզե- 29
նին եւ զամենայն ծառ․ յորժամ ցուցա- 30
նիցեն զպտուղ իւրեանց, տեսանէք եւ
ի նոցանէ ճանաչէք եթէ մերձ է ամառն։
Նոյնպէս եւ դուք՝ յորժամ տեսանիցէք 31
զայս ամենայն եղեալ՝ գիտասջիք թէ մերձ
է արքայութիւնն Աստուծոյ։ Ամէն ասեմ 32
ձեզ, թէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս
ամենայն լինիցի։ Երկինք եւ երկիր անց- 33
ցեն՝ եւ բանք իմ ոչ անցանիցեն։

Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրա- 34
նայցեն սիրտք ձեր շուայտութեամբ եւ
արբեցութեամբ եւ հոգովք աշխարհա-
հականօք, եւ յանկարծակի հասանիցէ
ի վերայ ձեր օրն այն․ զի իբրեւ որոգայթ 35
հասանիցէ ի վերայ ամենեցուն, որ բնա-
կեալ են ընդ ամենայն երեսս երկրի։ Ար- 36
թուն կացէք այսուհետեւ, յամենայն

ժամ աղօթս արարէք, զի արժանի լինի-
ջիք զերծանել յայնմ ամենայնէ որ լի-
նելոց է, եւ կալ առաջի որդւոյ մարդոյ։
37 Եւ ի տուէ ի տաճարին ուսուցանէր,
եւ զգիշերս ելեալ ագանէր ի լերինն՝ որ
38 կոչէր Ձիթենեաց։ Եւ ամենայն ժողո-
վուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա
կՁ․) ի տաճարն՝ լսել ի նմանէ։

ԳԼՈՒԽ ԻԲ

1 Մերձեցաւ տօն բաղարջակերացն՝ որ
2 կոչէր պասքա․ եւ խնդրէին քահանայա-
պետքն եւ դպիրք՝ թէ որպէս սպանանի-
ցեն զնա․ բայց երկնչէին ի ժողովրդենէ
անտի։
3 Ապա եմուտ սատանայ ի Յուդա՝ ի կո-
չեցեալն Իսկարիովտացի, որ էր ի թուոյ
4 երկոտասանիցն։ Չոգաւ եդ բանս ընդ
քահանայապետսն եւ ընդ դպիրս եւ ընդ
իշխանս ժողովրդեանն, զի մատնեսցէ զնա
5 նոցա։ Եւ խնդացին, եւ խոստացան տալ
6 նմա արծաթ։ Եւ յանձն առ, եւ խըն-
դրէր պարապ մատնել զնա նոցա՝ մեկու-
սի յամբոխէն։
7 Եկն օր բաղարջակերացն, յորում օ-
8 րէն էր զենուլ զպասեքն։ Եւ առաքեաց
զՊետրոս եւ զՅովհաննէս, եւ ասէ․ Եր-

թայք, պատրաստեցէք մեզ զպասեքն՝ զի
կերիցուք: Եւ նոքա ասեն. Ո՞ւր կամիս 9
զի պատրաստեսցուք: Եւ ասէ ցնոսա. 10
Ահա իբրեւ մտանիցէք ի քաղաքն, պա-
տահեսցէ ձեզ այր մի բարձեալ սափոր
ջրոյ. երթիջիք զհետ նորա ի տունն յոր
մտանիցէ, եւ ասասջիք ցտանուտէր 11
տանն. Վարդապետ ասէ քեզ, ո՞ւր են
վանքն իմ, յորում զպասեքն ուտիցեմ
աշակերտօքս հանդերձ: Եւ նա ցուցցէ 12
ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ. եւ
անդ պատրաստեսջիք: Եւ գնացեալ գը- 13
տին որպէս եւ ասացն նոցա, եւ պատրաս-
տեցին զպասեքն:

Եւ իբրեւ ժամ եղեւ՝ բազմեցաւ, եւ 14
երկոտասան առաքեալքն ընդ նմա: Եւ 15
ասէ ցնոսա. Ցանկանալով ցանկացայ զայս
պասեք ուտել ընդ ձեզ՝ մինչեւ չարչա-
րեալ իցեմ: Բայց ասեմ ձեզ, թէ ոչ եւս 16
կերայց ի սմանէ, մինչեւ լցցի յարքայու-
թեան Աստուծոյ: Եւ ընկալեալ բաժակ՝ 17
գոհացաւ եւ ասէ. Առէք զայդ՝ եւ բա-
ժանեցէք ի ձեզ: Ասեմ ձեզ, թէ յայսմ 18
հետէ ոչ արբից ի բերոյ որթոյ՝ մինչեւ
եկեսցէ արքայութիւն Աստուծոյ: Եւ 19
առեալ հաց գոհացաւ եբեկ եւ ետ նոցա
եւ ասէ. Այս է մարմին իմ, որ վասն բազ-
մաց տուեալ. զայս արասջիք առ իմոյ յի-
շատակի: Նոյնպէս եւ զբաժակն յետ 20

ընթրեացն առ եւ ասէ. Այս բաժակ է
նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղլոյ:
21 Բայց ահաւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ
22 իս ի սեղանս. եւ որդի մարդոյ ըստ սահ-
մանելոյն երթայ. բայց վա՜յ մարդոյն այն-
23 միկ՝ յոյր ձեռն մատնիցի: Եւ նոքա սկը-
սան խնդրել ընդ միմեանս, թէ ո՞վ է ի
նոցանէ՝ որ զայն գործելոց իցէ:
24 Եւ եղեւ հակառակութիւն ի մէջ նո-
25 ցա, թէ ո՛ ի նոցանէ համարիցի մեծ: Եւ
նա ասէ ցնոսա. Թագաւորք ազգաց տի-
րեն նոցա, եւ որ իշխենն նոցա՝ բարե-
26 րարք կոչին. այլ դուք ոչ այնպէս. այլ
որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրեւ զկրտսերն,
եւ առաջնորդն՝ իբրեւ զսպասաւորն:
27 Ո՞վ է մեծ, բազմեալն՝ եթէ սպասաւորն.
ո՞չ ապաքէն բազմեալն. բայց ես եմ ի
միջի ձերում իբրեւ սպասաւոր:
28 Եւ դուք էք՝ որ ցանգ կայիք ընդ իս
29 ի փորձութիւնս իմ. եւ ես ուխտեմ ձեզ՝
որպէս եւ հայր իմ ուխտեաց ինձ զար-
30 քայութիւն. զի ուտիցէք եւ ըմպիցէք ի
սեղան իմ յարքայութեանն իմում, եւ
նստիցիք յերկոտասան աթոռ՝ դատել
զերկոտասան ազգ Իսրայելի:
31 Եւ ասէ Տէր. Սիմոն, Սիմոն, ահա սա-
տանայ խնդրեաց զձեզ խարբալել իբրեւ
32 զցորեան. այլ ես աղաչեցի վասն քո՝ զի
մի պակասեսցեն հաւատք քո. եւ դու

երբեմն դարձցիս՝ եւ հաստատեսցես զեղ-
բարս քո: Եւ նա ասէ ցնա. Տէր, ընդ քեզ 33
պատրաստ եմ եւ ի բանտ եւ ի մահ եր-
թալ: Եւ նա ասէ ցնա. Ասեմ քեզ, Պե- 34
տրէ, չիցէ այսօր հաւու խօսեալ՝ մինչեւ
երիցս ուրասցիս զիս չգիտել:

Եւ ասէ ցնոսա. Յորժամ առաքեցի 35
զձեզ առանց քսակի եւ մախաղի եւ կօշ-
կաց, միթէ կարօտացայ՞ք իմիք: Եւ նոքա 36
ասեն. եւ ոչ իմիք. ապա ասէ. Այլ այժմ
որ ունիցի քսակ՝ բարձցէ, նոյնպէս եւ մա-
խաղ. եւ որ ոչն ունիցի, վաճառեսցէ զ-
ձորձս իւր՝ եւ գնեսցէ իւր սուսեր: Բայց 37
ասեմ ձեզ, զի այս եւս որ գրեալ է՝ պարտ
է զի կատարեսցի յիս, թէ ընդ անօրէնս
համարեցաւ. զի որ վասն իմ ինչ է՝ վախճա-
նեալ է: Եւ նոքա ասեն. Տէր, ահաւասիկ 38
են աստ երկու սուրք. եւ նա ասէ ցնո-
սա. Բաւական են:

Եւ ելեալ գնաց ըստ սովորութեանն ի 39
լեառն Ձիթենեաց. գնացին զհետ նորա
եւ աշակերտքն: Իբրեւ եհաս ի տեղին՝ 40
ասէ ցնոսա. Յաղօթս կացէք չմտանել ի
փորձութիւն:

Եւ ինքն մեկնեցաւ ի նոցանէ իբրեւ 41
քարընկէց մի. եդ ծունր, կայր յաղօթս,
եւ ասէր. Հայր, եթէ կամիս՝ անցո զբա- 42
ժակս զայս յինէն. բայց ոչ իմ կամք՝ այլ
քոյդ լիցին: Եւ երեւեցաւ նմա հրեշտակ 43

յերկնից՝ եւ զօրացուցանէր զնա. եւ էր
ի տագնապի, եւ մտադիւրութեամբ եւս
44 կայր յաղօթս: Եւ հոսէին ի նմանէ քրտ-
ունք իբրեւ զկայլակս արեան՝ ոլոռն ո-
45 լոռն հեղեալ յերկիր: Եւ յարուցեալ յա-
ղօթիցն՝ եկն առ աշակերտսն, եգիտ զնո-
46 սա ի քուն ի տրտմութենէն. եւ ասէ ցնո-
սա. Զի՞ ննջէք, արի՛ք կացէք յաղօթս՝ զի
մի՛ մտանիցէք ի փորձութիւն:

47 Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամ-
բոխ. եւ որ կոչէրն Յուդա՝ մի յերկոտա-
սանիցն՝ առաջնորդէր նոցա: Իբրեւ մեր-
ձեցաւ առ Յիսուս՝ համբուրեաց զնա.
քանզի զայն նշան տուեալ էր նոցա, թէ
ընդ որում ես համբուրեցից՝ նա է, զնա
48 ունիցիք: Ասէ ցնա Յիսուս. Յուդա, համ-
49 բուրելո՞վ մատնես զորդի մարդոյ: Իբրեւ
տեսին որ զնովաւն էին՝ որ ինչ եղեւն,
ասեն ցնա. Տէր, հարցուք զնոսա սրով:
50 Եւ եհար մի ոմն ի նոցանէ զքահանայա-
պետին ծառայ, եւ ի բաց եհան զաջոյ
51 ունկն նորա: Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ. Թոյլ տուք մինչեւ ցայդ վայր. եւ
52 մատուցեալ յունկն՝ բժշկեաց զնա: Եւ
ասէ ցեկեալսն ի վերայ նորա՝ ցքահա-
նայապետսն եւ ցիշխանս տաճարին եւ
ցծերս. Իբրեւ ի վերայ աւազակի ելէք
53 սուսերօք եւ բրօք: Հանապազ ընդ ձեզ
էի ի տաճարին, եւ ոչ ձգեցիք ձեռս յիս.

այլ այս է ձեր ժամ, եւ իշխանութիւն
խաւարի:
Եւ կալեալ զնա՝ ածին եւ մուծին ի 54
տուն քահանայապետին. եւ Պետրոս եր-
թայր զհետ նորա հեռագոյն: Իբրեւ լու- 55
ցին կրակ ի մէջ գաւթին՝ եւ նստան շուրջ,
նստաւ եւ Պետրոս ի մէջ նոցա: Ետես 56
զնա աղախին մի՝ զի նստէր առ լոյսն.
հայեցաւ ընդ նա եւ ասէ. Եւ սա ընդ
նմա էր՝ որ ընդ նմին էին: Իսկ Պե- 57
տրոս ուրացաւ եւ ասէ. Ոչ գիտեմ զնա
կին դու: Եւ յետ սակաւ միոյ այլ ոմն 58
ետես զնա, եւ ասէ. Եւ դու ի նոցանէ ես.
եւ Պետրոս ասէ. Այր դու, չեմ ի նոցա-
նէ: Եւ իբրեւ ժամ մի անց ի վերայ, այլ 59
ոմն վիճէր եւ ասէր. Ստոյգ եւ սա ընդ
նմա էր, քանզի Գալիլեացի է: Ասէ Պե- 60
տրոս. այր դու, չգիտեմ զինչ խօսիդ: Եւ
առ ժամայն մինչդեռ նա զայն ասէր՝ խօ-
սեցաւ հաւ:
Դարձաւ Տէր՝ եւ հայեցաւ ի Պետրոս. 61
եւ յիշեաց Պետրոս զբանն Տեառն՝ զոր ա-
սաց ցնա, մինչչեւ հաւու խօսեալ իցէ,
երիցս ուրասցիս՝ չգիտել զիս. եւ ելեալ 62
արտաքս՝ ելաց դառնապէս:
Եւ արքն, որ պահէին զնա, այպն առ- 63
նէին զնովաւ, եւ հարկանէին. ծածկէին 64
զերեսս նորա եւ տանջէին. եւ հարցա-
նէին ցնա եւ ասէին. Մարգարեաց, ո՞վ է

65 որ եհարն զքեզ: Եւ այլ բազում ինչ
հայհոյութեամբ խօսէին ի նա:
66 Եւ իբրեւ այգ եղեւ, ժողովեցաւ ծե-
րակոյտ ժողովրդեանն՝ քահանայապետքն
եւ դպիրք, եւ հանին ածին զնա յա-
տեանն իւրեանց՝ եւ ասեն. Եթէ դու ես
67 Քրիստոսն, ասա մեզ: Ասէ ցնոսա. Եթէ
ասացից ձեզ, սակայն ոչ հաւատայք.
68 եւ եթէ հարցից ինչ զձեզ, չտայք ինձ
69 պատասխանի, կամ արձակիցէք: Բայց
յայսմ հետէ նստցի որդի մարդոյ ընդ
70 աջմէ զօրութեան Աստուծոյ: Եւ ասեն
ամենեքեան. Ուրեմն դու ես որդին Ա-
ստուծոյ. եւ նա ասէ ցնոսա. Դուք ա-
71 սէք, թէ ես եմ: Եւ նոքա ասեն. Զինչ
եւս պիտոյ է մեզ վկայութիւն, զի մեզէն
իսկ լուաք ի բերանոյ դորա:

ԳԼՈՒԽ ԻԳ

1 Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն
2 նոցա, ածին զնա առ Պիղատոս: Եւ սկը-
սան չարախօս լինել զնմանէ եւ ասել.
Գտաք զսա՝ զի թիւրէր զազգս մեր, եւ
արգելոյր ի տալոյ հարկս կայսեր. եւ ա-
սէր զանձնէ՝ եթէ Քրիստոսն իցէ թագա-
3 ւոր: Իսկ Պիղատոս եհարց զնա եւ ասէ.
Դո՞ւ ես թագաւորն Հրէից: Նա պատաս-
խանի ետ նմա եւ ասէ. Դու ասացեր:

Ասէ Պիղատոս ցքահանայապետսն եւ 4
ցժողովուրդսն. Զգտանեմ ինչ վնաս յառա_
նըս յայսմիկ: Եւ նոքա սաստկէին եւ ասէին, 5
թէ խռովէ զժողովուրդս. ուսուցանէ
ընդ ամենայն Հրէաստան՝ սկսեալ ի Գա_
լիլեէ մինչեւ ցայսր: Իսկ Պիղատոս իբրեւ 6
լուաւ զԳալիլեէ, եհարց եթէ Գալիլեացի
իցէ այրն: Եւ իբրեւ գիտաց թէ յիշխա_ 7
նութենէ Հերովդի է, ետ տանել զնա առ
Հերովդէս. քանզի եւ նա յԵրուսաղէմ էր
յաւուրսն յայնոսիկ:

Եւ Հերովդէս իբրեւ ետես զՅիսուս, 8
ուրախ եղեւ յոյժ. զի ցանկայր ի բա_
զում ժամանակաց տեսանել զնա. քանզի
լսէր բազում անգամ զնմանէ, եւ ակն
ունէր նշան ինչ լեալ՝ տեսանել ի նմանէ:
Հարցանէր զնա բանիւք բազմօք. եւ նա 9
ոչինչ ետ նմա պատասխանի: Կային քա_ 10
հանայապետքն եւ դպիրք՝ եւ սաստկագոյնս
չարախօսէին զնմանէ: Արհամարհեաց զնա 11
եւ Հերովդէս հանդերձ իւրովք զօրակա_
նօքն. եւ այպն արարեալ, արկ զնովաւ
հանդերձս սպիտակս, եւ ետ տանել ան_
դրէն առ Պիղատոս:

Եւ եղեն բարեկամք Պիղատոս եւ Հե_ 12
րովդէս յաւուր յայնմիկ. քանզի յառաջ
թշնամիք էին միմեանց:

Կոչեաց Պիղատոս զքահանայապետսն 13
եւ զիշխանս եւ զժողովուրդն, եւ ասէ.

14 ցնոսա. Ածէք մատուցէք ինձ զայրս զայս
իբրեւ զխոտորեցուցիչ ժողովրդեանն.
եւ ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, եւ
վնաս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ՝ զորոյ
15 դուք չարախօսէքդ զդմանէ: Այլ եւ ոչ
Հերովդէս, քանզի ետու տանել զդա առ
նա. եւ արդ ոչինչ մահու արժանի՝ է գոր_
16 ծեալ դորա. խրատեցից զդա, եւ արձա_
17 կեցից: Զի հարկ էր մի մի ըստ տօնի ար_
18 ձակել նոցա: Եւ նոքա աղաղակէին ամե_
նայն բազմութեամբն՝ եւ ասէին. Բարձ
19 զդա, եւ արձակեա մեզ զԲարաբբա, որ
էր վասն խռովութեան իրիք եղելոյ ի քա_
ղաքին եւ սպանութեան մտեալ ի բանտ:
20 Դարձեալ Պիղատոս սկսաւ խօսել, քան_
21 զի կամէր արձակել զՅիսուս: Եւ նոքա
անդրէն աղաղակէին եւ ասէին. Ի խաչ
22 հան զդա: Եւ նա երիցս ասէ ցնոսա.
Զի՞նչ չար արար սա. ոչինչ վնաս մահու
գտի ի սմա. խրատեցից զսա եւ արձա_
23 կեցից: Եւ նոքա ստիպէին մեծաձայն,
եւ խնդրէին զնա ի խաչ հանել. եւ զօրա_
նային բարբառք նոցա եւ քահանայա_
24 պետացն: Եւ Պիղատոս հաւանեցաւ առ_
25 նել զհայցուածս նոցա: Արձակեաց նո_
ցա զԲարաբբայն՝ զոր վասն խռովութեան
եւ սպանութեան արկեալ էր ի բանդ,
զոր եւ խնդրէինն իսկ, եւ զՅիսուս մատ_
նեաց կամաց նոցա:

Իբրեւ տարան զնա, ըմբռնեցին 26
զոմն Սիմոն կիւրենացի՝ որ գայր յանդէ,
եդին ի վերայ նորա զխաչն, բերել զհետ
Յիսուսի։

Եւ երթայր զհետ նորա բազմութիւն 27
ժողովրդեանն, եւ կանանց՝ որ կոծէին եւ
աշխարէին զնա։ Դարձաւ Յիսուս եւ ա- 28
սէ ցնոսա. Դստերք Երուսաղէմի, մի՛ լայք
ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց
եւ ի վերայ որդւոց ձերոց։ Զի եկեսցեն 29
աւուրք, յորս ասիցեն՝ թէ երանի՜ ամլոց
եւ որովայնից՝ որ ոչ ծնան, եւ ստեանց՝
որ ոչ դիեցուցին։ Յայնժամ սկսանիցին 30
ասել լերանց՝ թէ անկերուք ի վերայ մեր,
եւ բլրոց՝ թէ ծածկեցէք զմեզ։ Զի եթէ 31
ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն
զի՞նչ լինիցի։

Ածին եւ այլ երկուս չարագործս՝ սպա- 32
նանել ընդ նմա։ Իբրեւ չոգան ի տեղին 33
կոչեցեալ Գագաթն, անդ հանին զնա ի
խաչ. եւ զչարագործսն՝ զոմն ընդ աջմէ
եւ զոմն ընդ ձախմէ խաչեցին։

Եւ Յիսուս ասէ. Հայր, թող դոցա, զի 34
ոչ գիտեն՝ զինչ գործեն։

Եւ ի բաժանել զհանդերձս նորա, ար-
կին վիճակս. եւ կայր ժողովուրդն հայե- 35
ցեալ։

Անգոսնէին զնա իշխանքն հանդերձ նո-
քօք՝ եւ ասէին. Զայլս ապրեցոյց, ապրե-

ցուսցէ եւ զանձն՝ եթէ դա է Քրիստոս
36 որդի Աստուծոյ ընտրեալն։ Այպն առ-
նէին զնա եւ զինուորքն. եկեալ առաջի՝
37 մատուցանէին նմա քացախ, եւ ասէին.
Եթէ դու ես թագաւորն հրէից՝ փրկեա
զանձն քո։

38 Եւ էր գիր գրեալ ի վերայ նորա յու-
նարէն եւ դաղմատերէն եւ եբրայեցե-
րէն գրով, թէ սա է արքայն հրէից։

39 Իսկ մի ոմն ի կախելոց չարագործացն
հայհոյէր զնա, եւ ասէր. Ո՞չ դու ես
Քրիստոսն՝ փրկեա զանձն քո եւ զմեզ։
40 Պատասխանի ետ ընկերն սաստելով նմա
եւ ասէ. Չերկնչիս դու յԱստուծոյ՝ զի ի
41 նմին պատժի կաս. եւ մեք յիրաւի, զի
արժանի որոց գործեցաքն՝ առնումք ըզ-
հատուցումն, եւ սա ապիրատ ինչ ոչ գոր-
42 ծեաց։ Եւ ասէ ցՅիսուս. Յիշեա զիս տէր,
43 յորժամ գայցես արքայութեամբ քով։ Եւ
ասէ ցնա Յիսուս. Ամէն ասեմ քեզ, այս-
օր ընդ իս լիցես ի դրախտին։

44 Եւ էր իբրեւ վեցերորդ ժամ. եւ խա-
ւար եղեւ ի վերայ ամենայն երկրի մինչեւ
ցիններորդ ժամ. խաւարեցաւ արեգակն։
45 Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ
46 մէջ։ Եւ կարդաց Յիսուս ի ձայն մեծ՝ եւ
ասէ. Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի
իմ։ Զայս իբրեւ ասաց, եհան զոգի։

47 Եւ տեսեալ հարիւրապետին զոր ինչ

եղեւն, փառաւոր արար զԱստուած՝ եւ
ասէ. Արդարեւ այրս այս արդար էր։ Եւ 48
ամենայն ժողովուրդքն որ եկեալ էին, եւ
տեսանէին զտեսիլն զայն եւ զգործ, բա-
խէին զկուրծս՝ եւ դառնային։ Կային եւ 49
ամենայն ծանօթքն նորա ի հեռաստանէ.
եւ կանայք որ եկեալ էին զհետ նորա ի
Գալիլեէ՝ տեսանէին զայն։

Եւ ահա այր մի անուն Յովսէփ, որ էր 50
Նախարար, այր բարեգործ եւ արդար,
սա չէր միաբանեալ ընդ խորհուրդս եւ 51
ընդ գործս նոցա, յԱրիմաթեայ քաղաքէ
Հրէից, որ եւ ինքն իսկ ակն ունէր արքա-
յութեան Աստուծոյ։ Սա մատուցեալ առ 52
Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի.
եւ իջուցեալ զնա՝ պատեաց պատանա- 53
կալաւ, եւ եդ ի կռածոյ գերեզմանին՝ ուր
չէր բնաւ զոք եդեալ։ Եւ օրն էր ուր- 54
բաթ, եւ շաբաթ լուսանայր։ Եւ եր- 55
թային զհետ նորա կանայքն՝ որ եկեալ
էին ընդ նմա ի Գալիլեէ. տեսին զգերեզ-
մանն, եւ որպէս եդաւ մարմին նորա։
Դարձան, եւ պատրաստեցին խունկս եւ 56
իւղս. եւ ի շաբաթուն հանգարտեցին
վասն պատուիրանին։

ԳԼՈՒԽ ԻԴ

1 Բայց ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ
առաւօտն եկին ի գերեզմանն, բերին ըզ-
խունկսն զոր պատրաստեցին. եւ այլ
2 կանայք ընդ նոսա։ Եւ գտին զվէմն թա-
3 ւալեցուցեալ ի գերեզմանէ անտի։ Եւ
մտեալ ի ներքս՝ ոչ գտին զմարմինն Տեա-
4 ռըն Յիսուսի։ Եւ եղեւ ընդ հիանալն նո-
ցա վասն այնորիկ, եւ ահա արք երկու
հասին առ նոսա ի հանդերձս լուսաւորս։
5 Եւ իբրեւ զահի հարան, եւ խոնարհե-
ցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն
ցնոսա. Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մե-
6 ռեալս, չէ աստ, այլ յարեաւ։ Յիշեցէք՝
որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն ի Գա-
7 լիլեայ, եւ ասէր՝ թէ պարտ է որդւոյ
մարդոյ մատնիլ ի ձեռս մարդոց մեղա-
ւորաց, եւ ի խաչ ելանել, եւ յերրորդ
8 աւուր յառնել։ Եւ յիշեցին զբանսն
նորա։

9 Եւ դարձան պատմեցին զայս ամենայն
10 մետասանիցն, եւ այլոցն ամենեցուն։ Եւ
էին Մարիամ Մագդաղենացի եւ Յովհան-
նա եւ Մարիամ Յակովբայ, եւ այլք ընդ
ընդ նոսա, որ պատմէին զայս առաքե-
11 լոցն։ Եւ երեւեցան առաջի նոցա շաղ-
փաղփութիւն բանքն նոցա՝ եւ չհաւա-

տային նոցա: Բայց Պետրոս յարուցեալ 12
ընթացաւ ի գերեզմանն, եւ հայեցեալ
տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային. եւ գը-
նաց ընդ միտս զարմացեալ, թէ զինչ եղեւ:
Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի 13
նմին աւուր ի գեօղ մի, որ հեռի էր յԵ-
րուսաղեմէ հարիւր եւ վաթսուն ասպա-
րիսաւ, եւ էր անուն նորա Էմմաւուս:
Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վասն ա- 14
մենայն անցիցն անցելոց: Եւ եղեւ ընդ 15
խօսելն նոցա եւ ընդ վիճելն՝ եւ ինքն իսկ
Յիսուս մերձեցաւ՝ եւ երթայր ընդ նոսա.
եւ նոցա աչք կալեալ էին առ ի չծանա- 16
չելոյ զնա: Եւ ասէ ցնոսա. Զի՞նչ են 17
բանքդ՝ վասն որոց վիճիքդ ընդ միմեանս՝
մինչդեռ գնայքդ, եւ տրտմեալ էք: Պա- 18
տասխանի ետ մի ոմն ի նոցանէ որում ա-
նուն էր Կղէովպաս, եւ ասէ ցնա. Դո՞ւ
միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտացեր
զինչ գործեցաւ ի նմա յաւուրսս յայսո-
սիկ: Եւ ասէ ցնոսա. Զի՞նչ: Եւ նոքա ա- 19
սեն զՅիսուսէ Նազովրեցւոյ, որ եղեւ այր
մարգարէ, հզօր արդեամբք եւ բանիւք
առաջի Աստուծոյ, եւ ամենայն ժողովր-
դեանն: Որպէս մատնեցին զնա քահանա- 20
յապետքն եւ իշխանքն մեր ի դատաստան
մահու, եւ հանին զնա խաչ: Մեք ակն 21
ունէաք՝ թէ նա է որ փրկելոցն իցէ զԻս-
րայէլ. այլ եւ հանդերձ այսու ամենայ-

նիւ, այս երրորդ օր է՝ յորմէ հետէ այն
22 գործեցաւ: Այլ եւ կանայք ոմանք ի
մէնջ զարմացուցին զմեզ, որք կանխեալ
23 ընդ առաւօտս չոգան ի գերեզմանն, եւ
ոչ գտին զմարմինն նորա. եկին եւ ասեն,
թէ եւ տեսիլ եւս հրեշտակաց տեսին,
24 որք ասէին զնմանէ՝ թէ կենդանի է: Եւ
գնացին ոմանք ի մէնջ ի գերեզմանն, եւ
գտին նոյնպէս որպէս եւ կանայքն ասա-
25 ցին. բայց զնա ոչ տեսին: Եւ նա ասէ
ցնոսա. Ո՛վ անմիտք եւ հեղգամիտք ի
հաւատալ յամենայնի՝ զոր խօսեցան
26 մարգարէքն. ո՞չ զնոյն պարտ էր չարչա-
րիլ Քրիստոսի, եւ մտանել ի փառս իւր:
27 Եւ սկսեալ ի Մովսիսէ եւ յամենայն
մարգարէից՝ մեկնէր նոցա որ ինչ յամե-
նայն գիրս գրեալ է զնմանէ:
28 Իբրեւ մերձեցան ի գեօղն յոր երթա-
յին, եւ նա պատճառէր հեռագոյն եւս
29 ուրեք երթալ: Եւ բռնադատեցին զնա՝
եւ ասեն. Առ մեզ ագիր, զի ընդ երեկս
է, եւ տարաժամեալ է օրս. եւ եմուտ ա-
30 գանել անդ ընդ նոսա: Եւ եղեւ ի բազ-
մելն նորա ընդ նոսա, առեալ զհացն՝ օրհ-
31 նեաց, եբեկ եւ ետ նոցա. եւ նոցա բա-
ցան աչք՝ եւ ծանեան զնա. եւ նա եղեւ
ի նոցանէ աներեւոյթ:
32 Եւ ասեն ցմիմեանս. Ո՞չ իսկ եւ սիրտք
մեր ջերմէին ի մեզ՝ մինչ խօսէրն ընդ մեզ

զճանապարհայն. եւ որպէս բանայր մեզ
զգիրս: Եւ յարուցեալ նոյնժամայն՝ դար- 33
ձան յԵրուսաղէմ. եւ գտին ժողովեալ զմե-
տասանսն՝ եւ զորս ընդ նոսայն էին: Եւ ա- 34
սէին, թէ արդարեւ յարեաւ Տէր՝ եւ ե-
րեւեցաւ Սիմոնի: Եւ նոքա պատմէին 35
զայն որ զճանապարհայնն, եւ թէ զիարդ
ետ ծանօթս նոցա ի բեկանել հացին:
Մինչդեռ զայն խօսէին, ինքն Յի- 36
սուս եկաց ի մէջ նոցա՝ եւ ասէ ցնոսա.
Խաղաղութիւն ընդ ձեզ. ես եմ, մի եր-
կնչիք: Եւ զահի հարեալ երկնչէին. եւ 37
համարէին ոգի ինչ տեսանել: Եւ ասէ 38
ցնոսա. Զի՞ խռովեալ էք, եւ ընդէ՞ր խոր-
հուրդք ելանեն ի սիրտս ձեր: Տեսէք ըզ- 39
ձեռս իմ եւ զոտս, զի ես նոյն եմ. շօշա-
փեցէք զիս եւ տեսէք. զի ոգի՝ մարմին եւ
ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք զի
ունիմ: Եւ զայս ասացեալ՝ եցոյց նոցա 40
զձեռսն եւ զոտսն:
Եւ մինչդեռ տակաւին չհաւատային ի 41
խնդութենէն՝ եւ զարմացեալ էին, ասէ
ցնոսա. Ունի՞ք ինչ կերակուր աստ: Եւ 42
նոքա ետուն նմա ձկան խորովելոյ մասն,
եւ խորիսխ մեղու: Եւ առ եկեր առաջի 43
նոցա, եւ զմնացորդսն ետ նոցա: Եւ ասէ 44
ցնոսա. Այս բանք են զոր խօսեցայ ընդ
ձեզ, մինչ առ ձեզն էի, թէ պարտ է լնուլ
ամենայն գրելոցն յօրէնսն Մովսիսի եւ ի

45 մարգարէս եւ ի սաղմոսսն վասն իմ: Յայն-
ժամ եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս:
46 Եւ ասէ ցնոսա, թէ այսպէս պարտ էր
չարչարել Քրիստոսի, եւ յառնել ի մե-
47 ռելոց յաւուր երրորդի, եւ քարոզել
յանուն նորա ապաշխարութիւն եւ թո-
ղութիւն մեղաց յամենայն ազգս; սկսեալ
48 յԵրուսաղեմէ. եւ դուք էք վկայք այսո-
49 ցիկ: Եւ ահա ես առաքեմ զաւետիս Հօր
իմոյ ի ձեզ. եւ դուք նստարուք ի քաղա-
քիս յԵրուսաղէմ, մինչեւ զգենուցուք
զօրութիւն ի բարձանց:
50 Եհան զնոսա մինչեւ ի Բեթանիա. եւ
ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնո-
51 սա: Եւ եղեւ յօրհնելն նորա զնոսա՝ մեկ-
նեցաւ ի նոցանէ, եւ վերանայր յերկինս:
52 Եւ նոքա երկիր պագեալ նմա՝ դարձան
յԵրուսաղէմ ուրախութեամբ մեծաւ:
53 Եւ էին հանապազ ի տաճարին. գովէին
եւ օրհնէին զԱստուած:

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 ԲԿ · ԻՍԿԶԲԱՆԷ էր Բանն, եւ Բանն էր
առ Աստուած · եւ Աստուած էր Բանն ·
2 Նա էր ի սկզբանէ առ Աստուած : Ամենայն
3 ինչ նովաւ եղեւ · եւ առանց նորա եղեւ
4 եւ ոչինչ որ ինչ եղեւն : Նովաւ կեանք էր ·
5 եւ կեանքն էր լոյս մարդկան · եւ լոյսն ի
խաւարի անդ լուսաւորէ · եւ խաւար նը-
մա ոչ եղեւ հասու :
6 Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ,
7 անուն նմա Յովհաննէս : Սա եկն ի վկա-
յութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն · զի
8 ամենեքին հաւատասցեն նովաւ : Ոչ էր
նա լոյսն · այլ զի վկայեսցէ վասն լուսոյն :
9 Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ
զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ :
10 Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ ·
11 եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ : Յիւրսն եկն,
12 եւ իւրքն զնա ոչ ընկալան · իսկ որք ըն-

կալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որ-
դիս Աստուծոյ լինել, որոց հաւատայցեն
յանուն նորա. Որք ոչ յարենէ, եւ ոչ ի 13
կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց առն,
այլ յԱստուծոյ ծնան: Եւ բանն մարմին 14
եղեւ, եւ բնակեաց ի մեզ. եւ տեսաք ըզ-
փառս նորա զփառս իբրեւ զմիածնի առ
ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ:
Յովհաննէս վկայէ վասն նորա. աղաղա- 15
կեաց եւ ասէ. Սա է՝ զորմէ ասէի, որ զկնի
իմ գալոց էր՝ առաջի իմ եղեւ, զի նախ
քան զիս էր: Զի ի լրութենէ անտի նորա՝ 16
մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ
շնորհաց: Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի 17
տուան, շնորհքն եւ ճշմարտութիւնն՝ ի
ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն:
ԲԲ. ԶԱստուած ոչ ոք ետես երբեք. 18
բայց միածինն Որդի որ է ի ծոց Հօր, նա
պատմեաց: Եւ այս է վկայութիւնն Յով- 19
հաննու, յորժամ առաքեցին առ նա
Հրեայքն յԵրուսաղեմէ քահանայս եւ
ղեւտացիս, զի հարցցեն ցնա՝ թէ դու ո՞
ես: Եւ խոստովան եղեւ, եւ ոչ ուրա- 20
ցաւ. խոստովան եղեւ, եթէ ես ոչ եմ
Քրիստոսն: Եւ հարցին ցնա. Իսկ ո՞վ ես 21
դու, Եղիա՞ ես: Եւ ասէ. Ոչ եմ: Իսկ
մարգարէ՞ն ես դու: Պատասխանի ետ,
թէ ոչ: Իսկ ասա մեզ, դու ո՞վ ես, զի պա- 22
տասխանի տարցուք՝ որոց առաքեցին

23 զմեզ. զի՞ ասես վասն քո: Ասէ. Ես ձայն
բարբառոյ յանապատի. ուղիղ արարէք
զճանապարհս Տեառն, որպէս ասաց Ե-
24 սայի մարգարէ: Եւ որք առաքեցանն՝ ի
25 փարիսեցւոց անտի էին: Հարցին ցնա՝ եւ
ասեն. Իսկ զի՞ մկրտես՝ եթէ դու չես
Քրիստոսն, եւ ոչ Եղիա, եւ ոչ մարգա-
26 րէն: Պատասխանի ետ նոցա Յովհաննէս՝
եւ ասէ. Ես մկրտեմ զձեզ ջրով. ի միջի
27 ձերում կայ, զոր դուքն ոչ գիտէք, որ
զկնի իմ գալոցն է, որում չեմ արժանի՝
28 եթէ լուծից զխրացս կօշկաց նորա: Այս
ի Բեթաբրայ եղեւ յայնկոյս Յորդանա-
նու, ուր էրն Յովհաննէս՝ եւ մկրտէր:
29 ԲԳ. Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս՝
զի գայր առ նա, եւ ասէ. Ահաւասիկ
գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշ-
30 խարհի: Սա է՝ վասն որոյ եսն ասէի, ըզ-
կնի իմ գայ այր՝ որ առաջի իմ եղեւ, զի
31 յառաջ իսկ էր քան զիս: Եւ ես ոչ գի-
տէի զնա. այլ զի յայտնի լինիցի Իսրայէ-
լի, վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել:
32 Վկայեաց Յովհաննէս եւ ասէ, թէ տե-
սանէի զՀոգին՝ զի իջանէր իբրեւ զաղաւ-
նի յերկնից, եւ հանգչէր ի վերայ նորա:
33 Եւ ես ոչ գիտէի զնա. այլ որ առաքեացն
զիս մկրտել ջրով՝ նա ասաց ցիս. յոյր
վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ
եւ հանգչիցի ի վերայ նորա, նա է՝ որ

մկրտէ հոգւովն սրբով: Եւ ես տեսի, եւ 34
վկայեցի եթէ սա է որդին Աստուծոյ:
ԲԴ. Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, 35
եւ յաշակերտաց անտի նորա երկու: Եւ 36
նայեցեալ ընդ Յիսուս՝ զի գնայր, ասէ.
Ահաւասիկ Քրիստոս գառն Աստուծոյ:
Լուան ի նմանէ երկու աշակերտքն՝ զի 37
խօսէր, եւ գնացին զհետ Յիսուսի: Իբրեւ 38
դարձաւ Յիսուս եւ ետես զնոսա՝ զի եր-
թային զհետ նորա, ասէ ցնոսա. Զի՞նչ
խնդրէք: Նոքա ասեն ցնա. Ռաբբի, —
որ թարգմանեալ կոչի. վարդապետ, —
ո՞ւր են օթեվանք քո: Ասէ ցնոսա. Եկայք 39
եւ տեսէք: Եկին եւ տեսին՝ ուր էին օթե-
վանք նորա. եւ առ նմա ագան այն օր,
զի ժամ էր իբրեւ տասներորդ:
Էր Անդրէաս եղբայր Սիմոնի վիմի, մի 40
յերկուց անտի, որ լուանն՝ ի Յովհաննէ՝
եւ գնացին զկնի նորա: Գտանէ սա նախ 41
զեղբայր իւր զՍիմոն, եւ ասէ ցնա. Գտաք
զՄեսիա՝ որ թարգմանի Քրիստոս. սա 42
ած զնա առ Յիսուս: Հայեցեալ ընդ նա
Յիսուսի՝ ասէ. Դու ես Սիմոն որդի Յով-
նանու, դու կոչեսցիս Կեփաս, որ թարգ-
մանի Պետրոս:
ԲԵ. Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել ի 43
Գալիլեա. գտանէ զՓիլիպպոս, եւ ասէ ցնա
Յիսուս. Եկ զկնի իմ: Եւ էր Փիլիպպոս ի 44
Բեթսայիդայ, ի քաղաքէ Անդրեայ եւ Պե-

45 տրոսի: Գտանէ Փիլիպպոս զՆաթանայէլ.
եւ ասէ ցնա. Զորմէ գրեաց Մովսէս յօ-
րէնսն եւ մարգարէքն՝ գտաք զՅիսուս
46 զորդի Յովսեփայ ի Նազարեթէ. Ասէ ցնա
Նաթանայէլ. Իսկ ի Նազարեթէ մա՞րթ ինչ
իցէ բարւոյ իմիք լինել: Ասէ ցնա Փիլիպ-
47 պոս. Եկ եւ տես: Իբրեւ ետես Յիսուս զՆա-
թանայէլ զի գայր առ նա, ասէ վասն նո-
րա. Ահա արդարեւ իսրայելացի՝ յորում
48 նենգութիւն ոչ գոյ: Ասէ ցնա Նաթա-
նայէլ. Ուստի՞ ճանաչես զիս: Պատասխա-
նի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Մինչչեւ էր
Փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր ի ներ-
49 քոյ թզենւոյ, տեսի զքեզ: Պատասխանի
ետ նմա Նաթանայէլ եւ ասէ. Ռաբբի,
դու ես որդի Աստուծոյ, դու ես թագա-
50 ւորն իսրայելի: Պատասխանի ետ նմա
Յիսուս եւ ասէ. Փոխանակ զի ասացի
քեզ՝ թէ տեսի ի ներքոյ թզենւոյն՝ հա-
ւատաս, մեծամեծս եւս քան զայս տես-
51 ցես: Եւ ասէ ցնա. Ամէն ամէն ասեմ
ձեզ, տեսանիցէք զերկինս բացեալ՝ եւ
զհրեշտակս Աստուծոյ՝ զի ելանիցեն եւ
իջանիցեն ի վերայ որդւոյ մարդոյ:

ԳԼՈՒԽ Բ

Բջ. Եւ յաւուրն երրորդի հարսանիք 1
էին ի Կանա Գալիլեացւոց, եւ անդ էր
մայրն Յիսուսի: Կոչեցաւ եւ Յիսուս եւ 2
աշակերտքն նորա ի հարսանիսն: Եւ ի 3
պակասել գինւոյն, ասէ մայրն ցՅիսուս.
Գինի ոչ ունին: Եւ ասէ ցնա Յիսուս. Զի՞ 4
կայ իմ եւ քո, կին դու, չեւ է հասեալ
ժամանակ իմ: Ասէ մայրն նորա ցպաշտա- 5
ւորսն. Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջիք: Անդ 6
էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ սրբու-
թեան Հրէից. տանէին մի մի ի նոցանէ
մարս երկուս կամ երիս: Ասէ ցնոսա Յի- 7
սուս. Լցէք զթակոյկսդ ջրով. եւ լցին
զնոսա մինչեւ ի վեր: Եւ ասէ ցնոսա. 8
Արդ առէք եւ բերէք ճարտարապետին.
եւ նոքա բերին: Եւ իբրեւ ճաշակեաց 9
ճարտարապետն զջուրն գինի եղեալ, եւ
ոչ գիտէր ուստի իցէ, բայց սպասաւորքն
գիտէին որք արկին զջուրն: Խօսի ընդ փե-
սային ճարտարապետն, եւ ասէ. Ամենայն 10
մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշ-
տէ, եւ յորժամ արբենան՝ յայնժամ
զյոռին. դու պահեցեր զանոյշ գինիդ մին-
չեւ ցայժմ: Զայս արար սկիզբն նշանաց 11
Յիսուս ի Կանա Գալիլեացւոց, եւ յայտ-

նեաց զփառս իւր. եւ հաւատացին ի նա
աշակերտքն նորա:

12 Բէ. Յետ այսորիկ էջ Յիսուս ի Կա-
փառնաում, ինքն եւ մայր իւր եւ եղ-
բարք իւր. եւ անդ լինէր ոչ բազում ինչ
13 աւուրս: Եւ էր մերձ զատիկն Հրէից. եւ
14 ել Յիսուս յԵրուսաղէմ. եւ եգիտ ի տա-
ճարին զի վաճառէին զարջառս եւ զոչ-
խարս եւ զաղաւնիս, եւ զլումափոխսն՝
15 որ նստէին: Եւ արար խարազան չուա-
նեայ, եւ եհան զամենեսին ի տաճարէն,
զոչխարսն եւ զարջառս. եւ զպղինձս հա-
տավաճառացն ցրուեաց, եւ զսեղանսն
16 կործանեաց. եւ որ զաղաւնիսն վաճա-
ռէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ աստի.
եւ մի՛ առնէք զտուն Հօր իմոյ՝ տուն վա-
17 ճառի: Ապա յիշեցին աշակերտքն նորա,
թէ գրեալ է, Նախանձ տան քո կերիցէ
18 զիս: Պատասխանի ետուն Հրեայքն եւ
ասեն ցնա. Զի՞նչ նշան ցուցանես դու
19 մեզ՝ զի զայդ առնես: Պատասխանի ետ
Յիսուս եւ ասէ ցնոսա. Քակեցէք զտա-
ճարդ զայդ, եւ զերիս աւուրս կանգնե-
20 ցից զդա: Ասեն ցնա Հրեայքն. Զքառա-
սուն եւ զվեց ամ շինեցաւ տաճարս, եւ
դու զերիս աւուրս կանգնես զդա:
21 Բայց նա ասէր վասն տաճարի մար-
22 մնոյն իւրոյ: Իսկ յորժամ յարեաւ ի
մեռելոց, յիշեցին աշակերտքն նորա, թէ

յս է՝ զոր ասացն. եւ հաւատացին գը-
րոյն, եւ բանին՝ զոր ասաց Յիսուս:
ԳԿ. Եւ իբրեւ էր յԵրուսաղէմ ի զատ- 23
կին ի տօնի, բազումք հաւատացին յա-
նուն նորա. զի տեսանէին զնշանսն՝ զոր
առնէր: Բայց ինքն Յիսուս ոչ հաւատայր 24
զանձն նոցա, քանզի ինքն գիտէր զամե-
նայն. եւ զի ոչ էր պիտոյ, եթէ ոք վը- 25
կայեսցէ վասն մարդոյ՝ զի ինքն իսկ գի-
տէր զինչ կրէր ի մարդն:

ԳԼՈՒԽ Գ.

Եւ էր այր մի ի փարիսեցւոց անուն՝ 1
Նիկոդեմոս անուն նորա, իշխան Հրէից:
Սա եկն առ նա գիշերի՝ եւ ասէ ցնա. 2
Ռաբբի, գիտեմք եթէ յԱստուծոյ եկեալ
ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նը-
շանսդ առնել՝ զոր դուդ առնես, եթէ
ոչ Աստուած իցէ ընդ նմա: Պատասխանի 3
ետ Յիսուս եւ ասէ ցնա. Ամէն ամէն ա-
սեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերստին՝ ոչ
կարէ տեսանել զարքայութիւն Աստու-
ծոյ: Ասէ ցնա Նիկոդեմոս. Զիա՞րդ կարէ 4
մարդ ծնանել՝ որ ծերն իցէ. միթէ մա՞րթ
ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կըր-
կին մտանել՝ եւ ծնանել: Պատասխանի 5
ետ Յիսուս եւ ասէ. Ամէն ամէն ասեմ
քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ,

ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աս-
6 տուծոյ: Զի ծնեալն ի մարմնոյ՝ մարմին
7 է, եւ ծնեալն ի Հոգւոյ՝ հոգի է: Դու մի՛
զարմանար, թէ ասացի քեզ՝ պարտ է
8 ձեզ ծնանել վերստին. զի հողմ ուր կա-
մի շնչէ, եւ զձայն նորա լսես. այլ ոչ գի-
տես՝ ուստի գայ, կամ յո՛ երթայ. սոյն-
9 պէս եւ ամենայն ծնեալն ի Հոգւոյն: Պա-
տասխանի ետ Նիկոդեմոս եւ ասէ ցնա.
10 Զիա՞րդ մարթի այդմ լինել: Պատասխանի
ետ Յիսուս եւ ասէ ցնա. Դու ես վարդա-
11 պետ Իսրայէլի, եւ զայդ ո՞չ գիտես: Ա-
մէն ամէն ասեմ քեզ, զի զոր ինչ գիտեմք՝
խօսիմք, եւ զոր տեսաք՝ վկայեմք, եւ
12 զվկայութիւն մեր ոչ ընդունիք: Իսկ արդ
եթէ զերկրաւորս ասացի ձեզ՝ եւ ոչ հա-
ւատայք. զիա՞րդ եթէ զերկնաւորսն ա-
սացից՝ հաւատայցէք:
13 ԳԲ. Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ
էջն յերկնից՝ որդին մարդոյ՝ որ էն յեր-
14 կինս: Եւ որպէս Մովսէս բարձրացոյց
զօձն յանապատին, նոյնպէս բարձրա-
15 նալ պարտ է որդւոյ մարդոյ. զի ամե-
նայն որ հաւատայ ի նա՝ մի կորիցէ, այլ
16 ընկալցի զկեանսն յաւիտենականս: Զի
այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ,
մինչեւ զՈրդին իւր միածին ետ. զի ամե-
նայն որ հաւատայ ի նա, մի կորիցէ, այլ
17 ընկալցի զկեանսն յաւիտենականս: Զի

ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշ-
խարհ, թէ դատեսցի զաշխարհ, այլ զի
փրկեսցի աշխարհ նովաւ: Որ հաւատայ 18
ի նա, ոչ դատապարտեսցի. եւ որ ոչ հա-
ւատայ ի նա, արդէն իսկ դատապարտեալ
է, զի ոչ հաւատաց յանուն միածնի Որ-
դւոյն Աստուծոյ: Եւ այս իսկ է դատաս- 19
տան. զի լոյս եկն յաշխարհ, եւ սիրեցին
մարդիկ զխաւար՝ առաւել քան զլոյս.
զի էին գործք իւրեանց չարութեան: Զի 20
ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս,
եւ ոչ գայ առ լոյսն՝ զի մի՛ յանդիմանես-
ցին գործք նորա. իսկ որ առնէ զճշմար- 21
տութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լի-
ցին գործք նորա, թէ Աստուծով գոր-
ծեցան:

ԳԳ. Յետ այսորիկ եկն Յիսուս եւ աշա- 22
կերտքն նորա յերկիրն Հրէաստանի. եւ
անդ շրջէր նոքօք հանդերձ եւ մկրտէր:

Մկրտէր եւ Յովհաննէս ի Յայենովն, 23
մերձ առ Սաղիմ, զի ջուրք բազում էին
անդ, եւ գային եւ մկրտէին: Զի չեւ եւս 24
էր արկեալ Յովհաննէս ի բանտ:

Եւ եղեւ խնդիր յաշակերտացն Յով- 25
հաննու ընդ Հրէի՝ վասն սրբութեան: Ե- 26
կին առ Յովհաննէս եւ ասեն ցնա. Ռաբբի,
որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու,
որում դուն վկայեցեր, ահաւասիկ նա
մկրտէ, եւ ամենեքին գան առ նա: Պա- 27

տասխանի ետ Յովհաննէս՝ եւ ասէ. ոչ
կարէ մարդ առնուլ յանձնէ եւ ոչինչ,
եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից ի վե-
28 րուստ: Դուք ձեզէն վկայէք ինձ, զի ա-
սացի ձեզ՝ թէ չեմ ես Քրիստոսն, այլ
29 թէ առաքեալ եմ առաջի նորա: Որ ունի
հարսն՝ նա է փեսայ. իսկ բարեկամ փե-
սային՝ որ կայ եւ լսէ նմա, ուրախու-
թեամբ ուրախ լինի վասն ձայնի փե-
սային. արդ այս ուրախութիւն որ իմս
30 է, լցեալ է: Նմա պարտ է աճել, եւ ինձ
31 մեղմանալ: Որ ի վերուստ գայ՝ ի վերոյ
է քան զամենայն. որ յերկրէ աստի է,
32 յերկրէ է՝ եւ յերկրէ խօսի: Որ յերկ-
նից գայ, զոր ինչ ետես եւ զոր լուաւ՝
վկայէ. եւ զվկայութիւն նորա ոչ ոք ըն-
33 դունի: Որ ընդունի զվկայութիւն նորա՝
34 կնքեաց, թէ Աստուած ճշմարիտ է. զի
զոր Աստուածն առաքեաց՝ զբանս Աս-
տուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ
35 Աստուած զՀոգին: Հայր սիրէ զՈրդի,
36 եւ զամենայն ինչ ետ ի ձեռս նորա: Որ
հաւատայ յՈրդի, ընդունի զկեանսն յա-
ւիտենականս. եւ որ ոչ հնազանդի Որ-
դւոյ, ոչ տեսցէ զկեանս. այլ բարկու-
թիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա:

ԳԼՈՒԽ Դ

Գ.Դ. Իբրեւ գիտաց Յիսուս՝ եթէ լուան 1
փարիսեցիքն եթէ Յիսուս բազում աշա-
կերտս առնէ, եւ մկրտէ քան զՅովհան-
նէս, — քանզի ոչ եթէ Յիսուս ինքնին 2
մկրտէր՝ այլ աշակերտքն նորա —, ե- 3
թող զՀրէաստան երկիր, եւ եկն միւսան-
գամ ի Գալիլեա: Եւ էր նմա անցանել 4
ընդ Սամարիա: Գայ նա ի քաղաք մի Սա- 5
մարացւոց, որում անուն էր Սիւքար,
մերձ ի գեօղն զոր ետ Յակոբ որդւոյ իւ-
րում Յովսեփայ. եւ անդ էր աղբիւր մի 6
Յակոբայ: Եւ Յիսուս վաստակեալ ի ճա-
նապարհէն, նստէր ի վերայ աղբերն. եւ
էր ժամ իբրեւ վեցերորդ: Գայ կին մի 7
ի Սամարեայ հանել ջուր. ասէ ցնա Յի-
սուս. Տուր ինձ ըմպել: Զի աշակերտքն 8
նորա երթեալ էին ի քաղաք անդր՝ զի կե-
րակուրս գնեսցեն: Ասէ ցնա կինն Սամա- 9
րացի. Դու՝ որ Հրեայդ ես, զիա՞րդ յինէն
ըմպել խնդրես ի կնոջէ Սամարացւոյ. զի
ոչ երբէք խառնակին Հրեայք ընդ Սամա-
րացիս: Պատասխանի ետ նմա Յիսուս 10
եւ ասէ. Եթէ գիտէիր դու զպարգեւսն
Աստուծոյ, եւ ո՞վ է որ ասէդ ցքեզ՝ թէ
տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր
ի նմանէ՝ եւ տայր քեզ ջուր կենդանի:

11 Ասէ ցնա կինն. Տէր, դու քանզի եւ դոյլ
իսկ ոչ ունիս, եւ ջրհորս խոր է, իսկ արդ՝
12 ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի: Միթէ
դու մե՞ծ ինչ ոք իցես քան զհայրն մեր
Յակոբ՝ որ զայս ջրհոր ետ մեզ. եւ ինքն
աստի արբ, եւ որդիք նորա, եւ խաշինք
13 նորա: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ
ասէ. Ամենայն որ ըմպէ ի ջրոյ յայդմա-
նէ՝ միւսանգամ ծարաւէ. բայց որ ըմ-
պէ ի ջրոյն՝ զոր ես տաց նմա, մի՛ ծա-
14 րաւեսցէ յաւիտեան. այլ ջուրն զոր ես
տաց նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղ-
15 խելոյ ի կեանս յաւիտենականս: Ասէ
ցնա կինն. Տէր, տուր ինձ զջուրն զայն,
զի մի՛ ծարաւեցից, եւ մի՛ եկից այսր՝ հա-
16 նել ջուր: Ասէ ցնա Յիսուս. Երթ կոչեա
17 զայր քո՝ եւ եկ այսր: Պատասխանի ետ
նմա կինն եւ ասէ. Չիք իմ այր: Ասէ ցնա
Յիսուս. Բարւոք ասացեր՝ թէ չիք իմ
18 այր. զի հինգ այր փոխեալ է քո, եւ զոր
այժմ ունիս՝ չէ քո այր. զայդ արդար
19 ասացեր: Ասէ ցնա կինն. Տէր, թուի
20 ինձ, թէ մարգարէ իցես դու: Հարքն մեր
ի լերինս յայսմիկ երկիր պագին, եւ դուք
ասէք՝ եթէ յԵրուսաղէմ եւեթ է տեղի,
21 ուր արժան իցէ երկիր պագանել: Ասէ
ցնա Յիսուս. Կին դու, հաւատա ինձ, զի
եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ի լերինս
յայսմիկ եւ ոչ յԵրուսաղէմ երկիր պա-

գանիցեն Հօր։ Դուք երկիր պագանէք՝ ո- 22
րում ոչն գիտէք, մեք երկիր պագանեմք
որում գիտեմքն. զի փրկութիւն ի Հրէից
է։ Այլ եկեսցէ ժամանակ, եւ այժմ իսկ 23
է, յորժամ ճշմարիտքն երկրպագուք եր-
կիր պագանիցեն Հօր՝ հոգւով եւ ճշմար-
տութեամբ. քանզի եւ Հայր այնպիսի
երկրպագուս իւր խնդրէ։

ԳԵ. Հոգի է Աստուած, եւ երկրպա- 24
գուաց նորա՝ հոգւով եւ ճշմարտու-
թեամբ պարտ է երկիր պագանել. Ասէ 25
ցնա կինն. Գիտեմք զի Մեսիա գայ՝ ա-
նուանեալն Քրիստոս. յորժամ եկեսցէ
նա՝ պատմեսցէ մեզ զամենայն։ Ասէ ցնա 26
Յիսուս. Ես եմ՝ որ խօսիմս ընդ քեզ։

Եւ յայն բան եկին աշակերտքն նորա, 27
եւ զարմանային՝ զի ընդ կնոջն խօսէր՝ բայց
ոչ ոք ասաց ի նոցանէ, թէ զի՞նչ խնդրես,
կամ զի՞նչ խօսիս ընդ դմա։ Եթող կինն 28
զսափորն իւր, եւ չոգաւ ի քաղաքն, եւ
ասէ ցմարդիկն. Եկայք տեսէք զայր մի, որ 29
ասաց ինձ զամենայն՝ որ ինչ իմ գործեալ
է. միթէ նա իցէ Քրիստոսն։ Ելին ի քա- 30
ղաքէն՝ եւ գային առ նա։ Եւ մինչ չեւ 31
եկեալ էին նոքա, աղաչէին զնա աշա-
կերտքն եւ ասէին. Ռաբբի, հաց կեր։ Նա 32
ասէ ցնոսա. Ես կերակուր ունիմ ուտել,
զոր դուքն ոչ գիտէք։ Ասէին աշակերտքն 33
ընդ միմեանս. Միթէ եբեր ինչ ոք դմա

34 ուտել։ Ասէ ցնոսա Յիսուս. Իմ կերա-
կուր այն է՝ զի արարից զկամս այնորիկ՝
որ առաքեացն զիս, եւ կատարեցից ըզ-
35 գործն նորա։ Ո՞չ դուք ասէք՝ եթէ այլ
եւս չորք ամիսք են, եւ հունձք գան. ա-
հաւասիկ ես ասեմ ձեզ. ամբարձէք զաչս
ձեր, եւ տեսէք զարտորայսն, զի սպի-
36 տակացեալ են եւ ի հունձս հասեալ։ Եւ
որ հնձէն՝ վարձս առնու, եւ ժողովէ ըզ-
պտուղ ի կեանսն յաւիտենականս. զի որ
սերմանէն եւ որ հնձէ՝ հասարակ ցնծաս-
37 ցեն։ Յայսմ իսկ է բանն ճշմարիտ. զի
38 այլ է որ սերմանէ, եւ այլ է որ հնձէ։ Ես
առաքեցի զձեզ հնձել՝ զոր ոչ դուք վաս-
տակեցէք. այլք վաստակեցին, եւ դուք ի
վաստակս նոցա մտէք։

39 Եւ ի քաղաքէն յայնմանէ Սամարա-
ցւոց՝ բազումք հաւատացին ի նա, վասն
բանի կնոջն վկայելոյ՝ եթէ ասաց ինձ զա-
40 մենայն՝ որ ինչ իմ գործեալ էր։ Իսկ
իբրեւ եկին առ նա Սամարացիքն՝ աղա-
չէին զնա լինել առ նոսա. եւ եղեւ անդ
41 աւուրս երկուս։ Եւ եւս բազումք հա-
42 ւատացին ի նա վասն բանին նորա. եւ ա-
սէին ցկինն, թէ ոչ այսուհետեւ վասն քո
խօսիցդ հաւատամք. զի մեզէն իսկ լուաք
ի դմանէ, եւ գիտեմք եթէ դա է ճշմար-
տիւ փրկիչ աշխարհաց։

43 ԳԶ. Եւ յետ երկուց աւուրց ել անտի

եւ գնաց ի Գալիլեա։ Զի ինքն իսկ Յի- 44
սուս վկայեաց, եթէ մարգարէ յիւրում
գաւառի պատիւ ոչ ունի։ Այլ յորժամ 45
եկն նա ի Գալիլեա, ընկալան զնա Գալի-
լեացիքն. զի տեսեալ եւս էր զամենայն
նշանսն, զոր արար յԵրուսաղէմ ի տօ-
նին. քանզի եւ նոքա եկեալ էին ի տօնն։
Եկն դարձեալ ի Կանա Գալիլեացւոց՝ 46
ուր արար զջուրն գինի. եւ անդ էր թա-
գաւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ
կայր ի Կափառնաում։ Նա իբրեւ լուաւ 47
եթէ Յիսուս եկեալ է ի Հրէաստանէ ի Գա-
լիլեա, եկն առ նա՝ եւ աղաչէր, զի իջցէ
եւ բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ
էր ի մեռանել։ Ասէ ցնա Յիսուս. Եթէ ոչ 48
նշանս ինչ եւ արուեստս տեսանէք՝ ոչ հա-
ւատայք։ Ասէ ցնա թագաւորազնն. Տէր, 49
էջ մինչ չեւ մեռեալ իցէ մանուկն իմ։
Ասէ ցնա Յիսուս. Երթ, որդին քո կեն- 50
դանի է։ Եւ հաւատաց այրն բանին՝ զոր
ասաց նմա Յիսուս. եւ գնաց։ Եւ մինչ- 51
դեռ իջանէր, ընդ առաջ եղեն նմա ծա-
ռայքն նորա, աւետիս ետուն եւ ասեն,
թէ մանուկն նորա կենդանի է։ Հարցա- 52
նէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապա-
քինեցաւ. եւ ասեն ցնա. Երէկ յեօթնե-
րորդ ժամու եթող զնա ջերմն։ Գիտաց 53
հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում
ասացն ցնա Յիսուս՝ թէ որդին քո կեն-

դանի է. եւ հաւատաց ինքն եւ ամենայն
54 տունն իւր։ Զայս դարձեալ երկրորդ նը-
շանս արար Յիսուս եկեալ ի Հրէաստանէ
ի Գալիլեա։

ԳԼՈՒԽ Ե

1 Գւ. Յետ այսորիկ տօն էր Հրէից, եւ
2 ել Յիսուս յԵրուսաղէմ։ Եւ էր յԵրու-
սաղէմ ի Պրոբատիկէ աւազանին, որ կո-
չէր եբրայեցերէն Բեթհեզդա, հինգ սը-
3 րահ. յորս անկեալ դնէր բազմութիւն
յոյժ հիւանդաց՝ կուրաց, կաղաց, գօ-
սացելոց, որ ակն ունէին ջրոյն յուզե-
4 լոյ։ Եւ հրեշտակ Տեառն իջանէր ըստ
ժամանակի յաւազանն՝ եւ յուզէր ըզ-
ջուրսն. եւ որ նախ ի շարժումն ջուրցն
իջանէր, բժշկէր՝ ոչ ունելով նշան հի-
ւանդութեան։
5 Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն եւ
ութ ամ էր ի հիւանդութեան իւրում.
6 զնա իբրեւ ետես Յիսուս՝ զի անկեալ
դնէր, եւ գիտաց եթէ բազում ժամա-
նակք են այնուհետեւ, ասէ ցնա. Կամիս
7 ողջ լինել։ Պատասխանի ետ նմա հիւան-
դըն. Տէր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ
ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն.
եւ մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս
8 յառաջագոյն իջանէ։ Ասէ ցնա Յիսուս.

Արի՛, ա՛ռ զմահիճս քո եւ գնա։ Եւ ող- 9
ջացաւ այրն. եւ յարեաւ, ա՛ռ զմահիճս
իւր՝ եւ շրջէր. եւ էր շաբաթ յաւուրն
յայնմիկ։ Ասեն Հրեայքն ցբժշկեալն. Շա- 10
բաթ է, եւ ոչ է արժան քեզ առնուլ զմա-
հիճս քո։ Պատասխանի ետ նոցա եւ ա- 11
սէ. Որ բժշկեացն զիս, նա ասաց ցիս՝ ա՛ռ
զմահիճս քո եւ գնա։ Հարցին ցնա եւ 12
ասեն. Ո՞վ է այրն՝ որ ասաց ցքեզ, ա՛ռ
զմահիճս քո՝ եւ շրջեաց։ Եւ բժշկեալն 13
ոչ գիտէր թէ ով իցէ. քանզի Յիսուս
խոյս ետ՝ վասն ամբոխին ի տեղւոջէ ան-
տի։ Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս ի 14
տաճարին, եւ ասէ ցնա. Ահաւադիկ ող-
ջացար, մի՛ եւս մեղանչէր, զի մի՛ չար եւս
ինչ լինիցի քեզ։ Գնաց այրն եւ պատ- 15
մեաց Հրէիցն, եթէ Յիսուս էր՝ որ բժըշ-
կեացն զիս։

Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս 16
Հրեայքն, զի զայն առնէր ի շաբաթու։
Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա. Հայր 17
իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ։
Վասն այնորիկ առաւել խնդրէին Հրեայ- 18
քըն սպանանել զնա. զի ոչ միայն լուծա-
նէր զշաբաթս, այլ եւ հայր իւր կոչէր
զԱստուած, եւ հաւասար առնէր զանձն
Աստուծոյ։

Դկ. Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ 19
ցնոսա. Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ

որդի մարդոյ առնել յանձնէ եւ ոչինչ,
եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ. զի
զոր նայն առնէ, զնոյն եւ որդին նմին
20 նման գործէ։ Զի Հայր սիրէ զՈրդի, եւ
զամենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն
առնէ. եւ մեծամեծս եւս քան զայնս
ցուցանէ նմա զգործս, ընդ որ դուք
21 զարմանայք։ Զի որպէս Հայր յարուցա-
նէ զմեռեալս եւ կենդանի առնէ, նոյն-
պէս եւ Որդի՝ զորս կամի կենդանի առ-
22 նէ։ Եւ ոչ եթէ Հայր դատի զոք՝ այլ զա-
մենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ.
23 զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի, որ-
պէս պատուեն զՀայր։ Որ ոչ պատուէ
զՈրդին, ոչ պատուէ զՀայր զառաքիչն
24 նորա։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ ըզ-
բանն իմ լսէ, եւ հաւատայ այնմ որ ա-
ռաքեացն զիս, ընդունի զկեանսն յաւի-
տենականս. եւ ի դատաստան ոչ մտանէ,
այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս։
25 Ամէն ամէն ասեմ ձեզ, զի գայ ժամանակ,
եւ արդէն իսկ է, յորժամ մեռեալք լը-
սիցեն ձայնի որդւոյն Աստուծոյ. եւ որք
26 լուիցեն՝ կեցցեն։ Զի որպէս Հայր ունի
կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ եւ
Որդւոյ ունել կեանս յանձին իւրում։
27 Եւ իշխանութիւն ետ նմա դատաստան
28 առնել. եւ զի որդի մարդոյ է՝ ընդ այն մի՛
զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յո-

րում ամենեքին որ ի գերեզմանս կայցեն,
լուիցեն ձայնի նորա, եւ եկեսցեն ար- 29
տաքս․ որոց բարիս գործեալ իցէ՝ ի յա-
րութիւն կենաց, եւ որոց չար արա-
րեալ՝ ի յարութիւն դատաստանաց։ Ոչ 30
կարեմ ես յանձնէ առնել եւ ոչինչ․ այլ
որպէս լսեմ՝ դատիմ, եւ դատաստանն
իմ արդար է․ զի ոչ խնդրեմ զկամս իմ,
այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս։
ԴԲ․ Եթէ ես վկայեմ վասն իմ, վկայու- 31
թիւնն իմ չէ ճշմարիտ․ այլ է՝ որ վկայէ 32
վասն իմ, եւ դուք գիտէք, եթէ ճշմարիտ
է վկայութիւնն զոր վկայեաց վասն իմ։
Դուք առաքեցիք առ Յովհաննէս՝ եւ վը- 33
կայեաց ճշմարտութեանն․ այլ ես ոչ ե- 34
թէ ի մարդկանէ առնում վկայութիւն․
այլ զայս ասեմ՝ զի դուք ապրեսջիք։ Նա 35
էր ճրագն՝ որ լուցեալ էր եւ ծագէր, եւ
դուք կամեցարուք ցնծալ առ ժամանակ
մի ի լոյս նորա։ Այլ ես ունիմ վկայու- 36
թիւն մեծ եւս քան զՅովհաննու․ զգոր-
ծըս՝ զորս ետ ցիս Հայր՝ զի կատարեցից
զնոսա, նոքին իսկ գործքն՝ զոր գործեմ,
վկայեն վասն իմ, եթէ Հայր առաքեաց
զիս․ եւ որ առաքեացն զիս Հայր, նա վը- 37
կայեաց վասն իմ։ Դուք ոչ զձայն նորա
երբեք լուարուք, եւ ոչ զտեսիլ նորա
տեսէք։ Եւ ոչ զբան նորա ունիք ի ձեզ 38
բնակեալ․ զի զոր նա առաքեաց՝ դուք

39 նմա ոչ հաւատայք։ Քննեցէք զգիրս․ զի
դուք համարիք նոքօք ունել զկեանսն
յաւիտենականս․ եւ նոքին իսկ են՝ որ
վկայեն վասն իմ, որովք համարիքն ու-
40 նել կեանս․ եւ դուք ոչ կամիք գալ առ
41 իս, զի զկեանսն ունիցիք։ Ես փառս ի
42 մարդկանէ ոչ առնում․ այլ գիտեմ ըզ-
ձեզ՝ թէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք յան-
43 ձինս։ Ես եկի յանուն Հօր իմոյ՝ եւ ոչ
ընդունիք զիս․ եթէ այլ ոք եկեսցէ յիւր
44 անուն, զնա ընդունիցիք։ Զիա՞րդ կարէք
դուք հաւատալ, զի փառս ի միմեանց
առնուք, եւ զփառս զառ ի միոյն Աս-
45 տուծոյ ոչ խնդրէք։ Մի՛ համարիք՝ եթէ
ես չարախօս ինչ իցեմ զձէնջ առ Հօր․
գոյ որ չարախօս կայ զձէնջ, Մովսէս, յոր
46 դուքն յուսացեալ էք։ Զի եթէ հաւա-
տայք դուք Մովսիսի, հաւատայիք ար-
դեօք եւ ինձ․ զի նա վասն իմ իսկ գը-
47 րեաց։ Զի եթէ նորա գրոցն ոչ հաւա-
տայք, զիա՞րդ իմոց բանիցս հաւա-
տայցէք։

ԳԼՈՒԽ Զ

Դ.Գ. Յետ այսորիկ գնաց Յիսուս յայն- 1
կոյս ծովուն Գալիլեացւոց Տիբերեայ. եւ 2
զհետ երթայր նորա ժողովուրդ բազում.
զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր ի վե-
րայ հիւանդաց։

Ել ի լեառն Յիսուս, եւ անդ նստէր 3
աշակերտօքն հանդերձ։ Եւ էր մերձ զա- 4
տիկ տօնն Հրէից։ Բարձ ի վեր զաչս իւր 5
Յիսուս եւ ետես, զի ժողովուրդ բազում
դայր առ նա. ասէ ցՓիլիպպոս. ուստի՞
գնեսցուք հաց՝ զի կերիցեն դոքա։ Զայս 6
ասէր փորձելով զնա. այլ ինքն գիտէր
զինչ առնելոցն էր։ Պատասխանի ետ նմա 7
Փիլիպպոս. Երկերիւր դահեկանի հաց չէ
դոցա բաւական, թէպէտ եւ իւրաքան-
չիւր ոք սակաւ ինչ առնուցու։ Ասէ ցնա 8
մի յաշակերտացն նորա, Անդրէաս՝ եղ-
բայր Սիմոնի Պետրի. Է աստ պատանեակ 9
մի, որ ունի հինգ նկանակ գարեղէն եւ
երկուս ձկունս. այլ այն զի՞նչ է առ այդ-
չափ մարդիկ։ Ասէ Յիսուս. Բազմեցու- 10
ցէք զմարդիկդ։ Եւ էր խոտ յոյժ ի տե-
ղւոջն. եւ բազմեցան մարդիկն թուով
իբրեւ հինգ հազար։ Եւ առ զհացն Յի- 11
սուս եւ գոհացաւ, եւ բաշխեաց բազմա-
կանացն, նոյնպէս եւ ի ձկանցն որչափ

12 եւ կամեցան։ Եւ իբրեւ յագեցան, ասէ
ցաշակերտսն. Ժողովեցէք զնշխարեալ
13 կոտորսդ, զի մի՛ ինչ կորիցէ։ Ժողովեցին
եւ լցին երկոտասան սակառի զկոտո-
րոցն՝ ի հինգ գարեղէն նկանակէ անտի,
14 որ յաւելաւ ի կերողացն։ Իսկ մարդիկն
իբրեւ տեսին զնշանսն զոր արար՝ ասէին,
թէ սա է ճշմարիտ մարգարէն որ գալոց
էր յաշխարհ։

15 Դ.Գ. Յիսուս իբրեւ գիտաց եթէ գալոց
են՝ յափշտակել զնա, զի արասցեն զնա
թագաւոր, գնաց դարձեալ ի լեառն
16 միայն։ Եւ իբրեւ երեկոյ եղեւ, իջին ա-
17 շակերտքն նորա ի ծովեզրն։ Եւ մտեալ
ի նաւ՝ գային յայնկոյս ծովուն ի Կա-
փառնաում. եւ իբրեւ նսեմացաւ, եւ չեւ
18 եւս եկեալ էր առ նոսա Յիսուս, եւ ծովն
19 ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէր։ Եւ վա-
րեալ իբրեւ ասպարէզս քսան եւ հինգ
կամ երեսուն, տեսանէին զՅիսուս՝ զի
գնայր ի վերայ ծովուն, եւ մերձ էր ի
20 նաւն, զարհուրեցան յոյժ. եւ նա ասէ
21 ցնոսա. Ես եմ, մի՛ երկնչիք։ Եւ կամէին
ընդունել զնա ի նաւն, եւ վաղվաղակի
եհաս նաւն յերկիրն՝ յոր երթային։

22 Դ.Ե. Ի վաղիւ անդր ժողովուրդն՝ որ
կայր յայնկոյս ծովուն, տեսանէր թէ
այլ նաւ ոչ գոյր անդ՝ բայց միայն ի միոյն,
յոր մտին աշակերտքն Յիսուսի. եւ զի

չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր
ի նաւն, բայց միայն աշակերտքն նորա
գնացին. իբրեւ այլ նաւք գային ի Տիբե- 23
րեայ՝ մօտ յայն տեղին՝ ուր զհացն կերան:
Իսկ իբրեւ ետես ժողովուրդն եթէ Յի- 24
սուս ոչ է անդ, եւ ոչ աշակերտքն նորա,
ելին նոքա զնաւսն, եւ եկին ի Կափառ-
նաում խնդրել զՅիսուս: Եւ իբրեւ գը- 25
տին զնա յայնկոյս ծովուն, ասեն ցնա.
Ռաբբի, ե՞րբ եկիր այսր: Պատասխանի 26
ետ նոցա Յիսուս եւ ասէ. Ամէն ամէն
ասեմ ձեզ. խնդրէք զիս, ոչ եթէ զի
նշանս ինչ տեսէք, այլ զի կերայք ի հացէ
անտի եւ յագեցարուք: Երթայք գոր- 27
ծեցէք մի՛ զկորստական կերակուրն, այլ
զկերակուրն՝ որ մնայ ի կեանսն յաւի-
տենականս, զոր Որդին մարդոյ տացէ
ձեզ. քանզի զնա Հայր կնքեաց Աստուած:
Ասեն ցնա. Զի՞նչ առնիցեմք՝ զի զգործսն 28
Աստուծոյ գործեսցուք: Պատասխանի 29
ետ Յիսուս, եւ ասէ ցնոսա. Այս է գործն
Աստուծոյ, զի հաւատասջիք յայն՝ որ ա-
ռաքեացն զիս: Ասեն ցնա. Զի՞նչ նշան 30
առնիցես՝ զի տեսցուք եւ հաւատասցուք,
զի՞նչ գործիցես: Հարքն մեր կերան զմա- 31
նանայն յանապատի անդ, որպէս եւ գը-
րեալ է. Հաց յերկնից ետ նոցա ուտել:
Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ 32
ձեզ. եթէ ոչ Մովսէս ետ ձեզ զհացն յեր-

կնից, այլ Հայրն իմ տայ ձեզ զհացն յեր-
33 կնից զճշմարիտ: Զի հաց յԱստուծոյ է,
որ իջանէ յերկնից՝ եւ կեանս տայ աշ-
34 խարհի: Ասեն ցնա. Տէր, յամենայն ժամ
35 տուր մեզ զհացն զայն: Ասէ ցնոսա Յի-
սուս. Ես եմ հացն կենաց. որ գայ առ
իս՝ ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս՝
36 ոչ երբէք ծարաւեսցի: Այլ ասացի ձեզ՝
37 թէ տեսէք զիս, եւ ոչ հաւատայք: Զա-
մենայն՝ զոր տայ ինձ Հայր, առ իս եկես-
ցէ. եւ որ գայ առ իս՝ ոչ հանից ար-
38 տաքս: Զի իջի ես յերկնից ոչ զի զկամս
իմ արարից, այլ զկամս այնորիկ՝ որ ա-
ռաքեացն զիս:
39 ԴՁ. Այս են կամք Հօր իմոյ, որ առա-
քեացն զիս, զի զամենայն զոր ետ ցիս
Հայր՝ ոչ կորուսից ի նմանէ, այլ յարու-
40 ցից զնա յաւուրն յետնում: Այս են
կամք Հօր իմոյ, զի ամենայն որ տեսանիցէ
եւ հաւատայցէ ի նա, ընկալցի զկեանսն
յաւիտենականս. եւ ես յարուցից զնա
41 յաւուրն յետնում: Տրտնջէին զնմանէ Հր-
եայքն, զի ասաց թէ ես եմ հացն իջեալ
42 յերկնից, եւ ասէին. Ո՞չ սա է Յիսուս՝ որ-
դին Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զհայրն
եւ զմայր. իսկ արդ՝ զիա՞րդ ասէ՝ թէ ես
43 յերկնից իջի: Պատասխանի ետ Յիսուս
եւ ասէ ցնոսա. Մի՛ քրթմնջէք ընդ մի-
44 մեանս. ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ

Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա.
եւ ես յարուցից զնա յաւուրն յետ-
նում։ Գրեալ է ի մարգարէս. Եւ եղիցին 45
ամենեքեան ուսեալք յԱստուծոյ։ Ամե-
նայն որ լուէ ի Հօրէ՝ եւ ուսանի, գայ առ
իս. իբրեւ ոչ եթէ զՀայր ուրուք տեսեալ 46
իցէ. եթէ ոչ՝ որ էն յԱստուծոյ, նա ե-
տես զՀայր։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի 47
որ հաւատայ յիս՝ ընդունի զկեանսն յա-
ւիտենականս։ Ես եմ հացն կենաց։ 48
Հարքն ձեր կերան զմանանայն յանապա- 49
տին եւ մեռան։ Այս է հացն, որ յերկ- 50
նից իջեալ է. զի որ ուտիցէ ոք ի սմանէ՝
մի՛ մեռանիցի։ Ես եմ հացն կենդանի, որ 51
յերկնից իջեալ։ Եթէ ոք ուտիցէ ի հա- 52
ցէ յայսմանէ՝ կեցցէ յաւիտեան։ Եւ
հացն զոր ես տաց՝ մարմին իմ է. զոր ես
տաց վասն կենաց աշխարհի։ Մարտնչէին 53
ընդ միմեանս Հրեայքն եւ ասէին. Զիա՞րդ
կարէ սա տալ մեզ զմարմինն իւր յու-
տել։ Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ա- 54
սեմ ձեզ. եթէ ոչ կերիջիք զմարմին Որ-
դւոյ մարդոյ՝ եւ արբջիք զարիւն նորա,
ոչ ունիք կեանս յանձինս։ Որ ուտէ ըզ- 55
մարմին իմ՝ եւ ըմպէ զարիւն իմ, ունի
զկեանսն յաւիտենականս, եւ ես յարու-
ցից զնա յաւուրն յետնում։ Զի մարմին 56
իմ ճշմարիտ կերակուր է, եւ արիւն իմ
ճշմարիտ ըմպելի է։ Որ ուտէ զմարմին 57

իմ եւ ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ եւ
58 ես ի նմա։ Որպէս առաքեաց զիս կենդանին
Հայր, եւ ես կենդանի եմ վասն Հօր. եւ որ
59 ուտէն զիս, եւ նա կեցցէ վասն իմ։ Այս է
հացն՝ որ յերկնից իջեալ. ոչ որպէս կերան
հարքն ձեր զմանանայն՝ եւ մեռան. որ ու-
տէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան։
60 Զայս ասաց ի ժողովրդեանն՝ յուսուցա-
61 նելն ի Կափառնաում։ Եւ բազումք յաշա-
կերտացն իբրեւ լուան՝ ասեն. Խիստ է
62 բանդ այդ. ո՞ կարէ լսել դմա։ Իբրեւ գիտաց
Յիսուս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն
այնորիկ աշակերտքն, ասէ ցնոսա. Ա՞յդ
63 գայթագղեցուցանէ զձեզ։ Իսկ արդ եթէ
տեսանիցէք զՈրդի մարդոյ՝ զի ելանիցէ
64 ուր էր զառաջինն։ Հոգին է կենդանա-
րար, մարմին ինչ ոչ օգնէ. զբանն զոր ես
խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է եւ կեանք։
65 Այլ են ոմանք ի ձէնջ՝ որ ոչ հաւատան։
Քանզի գիտէր Յիսուս ի սկզբանէ, ով
են այնոքիկ՝ որ ոչն հաւատան, եւ ով է
66 այն՝ որ մատնելոցն է զնա։ Եւ ասէր.
Վասն այնորիկ ասացի ձեզ՝ թէ ոչ ոք կա-
րէ գալ առ իս, եթէ ոչ իցէ տուեալ նմա
ի Հօրէ իմմէ։
67 Յայսմանէ բազումք յաշակերտացն նո-
րա չոգան յետս, եւ ոչ եւս շրջէին ընդ
68 նմա։ Ասէ Յիսուս ցերկոտասան աշա-
կերտսն. Մի՞թէ եւ դո՞ւք կամիք երթալ։

Պատասխանի ետ նմա Սիմոն Պետրոս. 69
Տէր, առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յա-
ւիտենականից ունիս: Եւ մեք հաւատա- 70
ցաք եւ ծանեաք՝ եթէ դու ես Քրիստոսն
որդի Աստուծոյ: Պատասխանի ետ նոցա 71
Յիսուս. Ո՞չ ես զձեզ զերկոտասանսդ
ընտրեցի, եւ մի ի ձէնջ սատանայ է:
Եւ ասէր զՍիմոնէ Յուդայէ Սկարիով- 72
տացւոյ. զի նա իսկ մատնելոց էր զնա.
եւ մի էր յերկոտասանիցն:

ԳԼՈՒԽ Է

Դէ. Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս ի 1
Գալիլեա. քանզի ոչ կամէր ի Հրէաստա-
նի շրջել. զի խնդրէին զնա Հրեայքն սպա-
նանել: Եւ էր մերձ տօնն Հրէից տաղա- 2
ւարահարաց: Ասեն ցնա եղբարքն նորա. 3
Գնա աստի եւ երթ ի Հրէաստան, զի ա-
շակերտքն քո տեսցեն զգործսդ քո զոր
գործես: Զի ոչ ոք է՝ որ ի ծածուկ ինչ 4
գործէ՝ եւ խնդրէ ինքն համարձակ լինել.
եթէ զայդ գործես, յայտնեա զանձն քո
աշխարհի: Քանզի եւ եղբարքն իսկ չէին 5
հաւատացեալ ի նա: Ասէ ցնոսա Յիսուս. 6
Ժամանակ իմ չեւ է հասեալ. բայց ձեր
ժամանակ յամենայն ժամու պատրաստ
է: Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ. բայց 7
զիս ատեայ, զի ես վկայեմ վասն նորա՝ ե-

8 թէ գործքն իւր չարութեան են: Դուք
երթայք ի տօնն յայն, ես ոչ երթամ ի
տօնն յայն. զի իմ ժամանակ չեւ է լը-
9 ցեալ: Զայս իբրեւ ասաց՝ ինքն մնաց
10 անդէն ի Գալիլեա: Իբրեւ ելին եղբարքն
նորա, ապա եւ ինքն ել ի տօնն. ոչ
11 յայտնի, այլ իբրեւ ի ծածուկ: Եւ
Հրեայքն խնդրէին զնա ի տօնի անդ, եւ
12 ասէին. Ո՞ւր իցէ նա: Եւ քրթմնջիւն էր
զնմանէ ի ժողովուրդսն. կէսքն ասէին՝
թէ բարւոք է. այլքն ասէին՝ ոչ, այլ
13 մոլորեցուցանէ զժողովուրդն: Եւ ոչ ոք
համարձակ խօսէր զնմանէ՝ վասն երկիւ-
ղին Հրէից:
14 Եկ. Իբրեւ տօնն ընդմիջեցաւ, ել Յի-
15 սուս ի տաճարն՝ եւ ուսուցանէր: Զար-
մանային Հրեայքն եւ ասէին. Զիա՞րդ ըզ-
գիրս գիտէ սա, զի ուսեալ բնաւ չէր:
16 Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ.
Իմ վարդապետութիւնս չէ իմ, այլ այ-
17 նորիկ՝ որ առաքեացն զիս: Եթէ ոք կամի
զկամս նորա առնել՝ գիտասցէ վասն վար-
դապետութեանս, յԱստուծո՞յ իցէ ար-
դեօք՝ եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ:
18 Որ յանձնէ իւրմէ խօսի, փառս անձին
իւրում խնդրէ. իսկ որ խնդրէ զփառս
այնորիկ որ առաքեացն զնա՝ նա ճշմա-
րիտ է, եւ անիրաւութիւն ոչ գոյ ի նմա:
19 Ո՞չ Մովսէս ետ ձեզ զօրէնսն, եւ ոչ ոք

ի ձէնջ առնէ զօրէնսն։ Զի՞ խնդրէք զիս 20
սպանանել։ Պատասխանի ետ ժողովուրդն
եւ ասէ. Դեւ գոյ ի քեզ. ո՞վ խնդրէ ըզ-
քեզ սպանանել։ Պատասխանի ետ նոցա 21
Յիսուս եւ ասէ. Գործ մի գործեցի, եւ
ամենեքին զարմացեալ էք։ Վասն այսո- 22
րիկ Մովսէս ետ ձեզ թլփատութիւն. զի
ոչ եթէ ի Մովսիսէ էր, այլ ի հարց ան-
տի. եւ ի շաբաթու թլփատէք զմարդ։
Իսկ արդ՝ եթէ թլփատութիւն առնու 23
մարդ ի շաբաթու, զի մի՛ օրէնքն Մովսի-
սի լուծցին. ընդ իս ցասուցեա՞լ էք՝ զի
ողջոյն իսկ մարդ բժշկեցի ի շաբաթու։
ԵԲ. Մի ըստ աչս դատիք, այլ ուղիղ 24
դատաստան արարէք։ Ասէին ոմանք յԵ- 25
րուսաղեմացւոց անտի. Ո՞չ նա է սա՝ զոր
խնդրէին սպանանել. եւ աւասիկ յայտ- 26
նապէս խօսի, եւ չասեն ինչ ընդ դմա.
գուցէ արդեօք եւ իշխանքն գիտացին՝ թէ
սա իցէ Քրիստոսն։ Այլ զսա գիտեմք ուս- 27
տի է, իսկ Քրիստոսն յորժամ գայցէ, ոչ
ոք գիտէ ուստի է։ Աղաղակեաց Յիսուս 28
ի տաճարին, ուսուցանէր եւ ասէր. Եւ
զիս գիտէք, եւ ուստի եմ գիտէք. եւ
յանձնէ իմմէ ոչ եմ եկեալ, այլ է ճշմա-
րիտ որ առաքեացն զիս՝ զոր դուքն ոչ գի-
տէք։ Ես գիտեմ զնա, զի ի նմանէ իսկ 29
եմ, եւ նա առաքեաց զիս։
Խնդրէին զնա ունել, եւ ել ի ձեռաց 30

նոցա. եւ ոչ ոք արկ ի նա ձեռն, զի չեւ
31 էր հասեալ ժամ նորա։ Եւ բազումք ի
ժողովրդենէն հաւատացին ի նա, եւ ա-
սէին. Քրիստոսն յորժամ գայցէ՝ միթէ
աւելի՞ ինչ նշանս առնիցէ, քան զոր սա
32 առնէ։ Եւ լուան փարիսեցիքն զտրտունջ
ժողովրդեանն զնմանէ. եւ առաքեցին
քահանայապետքն եւ փարիսեցիք սպա-
33 սաւորս՝ զի կալցին զնա։ Ասէ Յիսուս.
Փոքր մի եւս ժամանակ ընդ ձեզ եմ. եւ
34 երթամ առ այն՝ որ առաքեացն զիս։ Խնդ-
րիցէք զիս, եւ ոչ գտանիցէք. եւ ուր
35 եսն երթամ, դուք ոչ կարէք գալ։ Ասեն
հրեայքն ընդ միմեանս. Իսկ յո՞ երթայցէ
դա, զի մեք ոչ գտանիցեմք զդա. միթէ ի
սփիւռս հեթանոսա՞ց երթայցէ՝ եւ ու-
36 սուցանիցէ զհեթանոսս։ Զի՞նչ է բանն
այն՝ զոր ասաց. խնդրիցէք զիս՝ եւ ոչ
գտանիցէք. եւ ուր եսն երթամ, դուք
ոչ կարէք գալ։
37 ԵԳ. Ի վերջնում աւուր մեծի տօնին
կայր Յիսուս, աղաղակէր եւ ասէր. Եթէ
ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առ իս, եւ
38 արբցէ։ Որ հաւատայ յիս՝ որպէս եւ ա-
սեն գիրք, գետք յորովայնէ նորա բղխես-
39 ցեն ջրոց կենդանութեան։ Զայս ասէր
վասն հոգւոյն զոր ընդունելոց էին որ
հաւատային ի նա. զի չեւ էր հոգի, քան-
40 զի Յիսուս չեւ էր փառաւորեալ։ Ոմանք

ի ժողովրդենէն իբրեւ լուէին զբանս զայս,
ասէին․ Սա է ճշմարիտ մարգարէն։ Այլքն 41
ասէին․ սա է Քրիստոսն․ իսկ կէսքն ա-
սէին․ միթէ ի Գալիլեէ՞ գալոց իցէ Քրիս-
տոսն․ ո՞չ գիրք ասեն, եթէ ի զաւակէ 42
Դաւթի, եւ ի Բեթղեհեմ գեղջէ՝ ուր Դա-
ւիթն էր, գալոց է Քրիստոս։
Եւ եղեւ հերձուած ի մէջ ժողովրդեանն 43
վասն նորա։ Եւ ոմանք ի նոցանէ կամէ- 44
ցան ունել զնա․ այլ ոչ ոք մխեաց ի նա
ձեռս։ Եւ եկին անդրէն սպասաւորքն առ 45
քահանայապետսն եւ փարիսեցիս․ եւ ա-
սեն նոքա ցնոսա․ ընդէ՞ր ոչ ածէք զնա
այսր։ Պատասխանի ետուն սպասաւորքն 46
եւ ասեն․ Ոչ երբէք այնպէս խօսեցաւ
մարդ՝ որպէս այրն այն։ Պատասխանի ե- 47
տուն փարիսեցիքն՝ եւ ասեն․ Միթէ եւ
դո՞ւք մոլորեցարուք․ Միթէ ոք յիշխա- 48
նացն հաւատա՞ց ի նա՝ կամ ի փարիսե-
ցւոց․ այլ այն խաժամուժ ամբոխ, որ ոչ 49
գիտէ զօրէնս, եւ նզովեալք են։ Ասէ Նի- 50
կոդեմոս ցնոսա, որ եկեալն էր առ նա ի գի-
շերին յառաջագոյն, եւ մի էր ի նոցանէ։
Միթէ օրէնքն մեր դատի՞ն զմարդ՝ եթէ 51
ոչ լսեն ինչ նախ ի նմանէ, կամ գիտեն
զինչ գործէ։ Պատասխանի ետուն նմա եւ 52
ասեն․ Միթէ եւ դո՞ւ եւս ի Գալիլեէ իցես․
քննեա եւ տես, զի մարգարէ ի Գալիլեէ
ոչ յառնէ։ Եւ գնացին իւրաքանչիւր ոք 53
ի տեղի իւր։

ԳԼՈՒԽ Ը

1 Իսկ Յիսուս գնաց ի լեառն Ձիթենեաց․
եւ ընդ առաւօտն դարձեալ եկն ի տա-
2 ճարն։ Եւ գայր առ նա ամենայն ժողո-
վուրդն․ եւ նստեալ ուսուցանէր զնոսա։
3 Ածին առ նա դպիրքն եւ քահանայա-
պետքն եւ փարիսեցիք՝ կին մի ըմբռնեալ
ի շնութեան․ եւ կացուցեալ զնա առա-
4 ջի, ասեն ցնա․ Վարդապետ, կինս այս
ըմբռնեալ՝ ինքն յայտնապէս շնացեալ է։
5 Եւ յօրէնսն Մովսէս մեզ պատուիրեաց
զայսպիսիս քարկոծել․ արդ դու զի՞նչ ա-
6 սես վասն դորա։ Զայս ասէին փորձե-
լով զնա՝ զի ունիցին ամբաստանութիւն
զնմանէ։ Իսկ Յիսուս ի խոնարհ նայելով
7 գրէր մատամբն յերկրի։ Իսկ իբրեւ ստե-
պեցին հարցանելով ցնա, հայեցեալ ի
վեր՝ ասէ ցնոսա․ Անմեղն ի ձէնջ՝ նախ
8 նա ընկեսցէ քար ի վերայ դորա։ Եւ դար-
ձեալ ի խոնարհ նայելով գրէր յերկրի։
9 Եւ լուեալ՝ ելանէին մի ըստ միոջէ, սկը-
սեալ յառաջնոցն մինչեւ ի վերջինս․ եւ
մնաց միայն Յիսուս․ եւ կինն կայր առա-
10 ջի նորա։ Պատասխանի ետ Յիսուս։ Եւ
ասէ ցնա․ Կին դու, ո՞ւր են, ոչ ոք զքեզ
11 դատապարտեաց։ Եւ ասէ․ Ոչ, տէր։ Եւ

ասէ Յիսուս. Ես ոչ ես դատապարտեմ
զքեզ. երթ, յայսմհետէ մի՛ մեղանչեր:
ԵԴ. Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա Յի- 12
սուս, եւ ասէ. Ես եմ լոյս աշխարհի. որ
գայ զկնի իմ, ընդ խաւար մի՛ գնասցէ. այլ
ընկալցի զլոյսն կենաց: Ասեն ցնա փարի- 13
սեցիքն. Դու վասն անձին քո վկայես, եւ
վկայութիւն քո չէ ճշմարիտ: Պատասխա- 14
նի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Թէպէտ
եւ ես վկայեմ վասն անձին իմոյ՝ վկայու-
թիւն իմ ճշմարիտ է. զի գիտեմ ուստի
եկի եւ յո երթամ. բայց դուք ոչ գի-
տէք ուստի գամ՝ կամ յո երթամ: Դուք 15
ըստ մարմնոյ դատիք. ես ոչ դատիմ եւ
ոչ զոք. Թէպէտ եւ դատիմ եւս զոք՝ 16
դատաստանն իմ ճշմարիտ է. զի չեմ
միայն, այլ ես՝ եւ որ առաքեացն զիս Հայր:
Եւ յօրէնսն իսկ ձեր գրեալ է՝ թէ եր- 17
կուց մարդոց վկայութիւն ճշմարիտ է:
Ես եմ որ վկայեմ վասն իմ, եւ վկայէ 18
վասն իմ՝ որ առաքեացն զիս Հայր: Ասէին 19
ցնա. Ո՞ւր է Հայր քո: Պատասխանի ետ
Յիսուս եւ ասէ ցնոսա. Ոչ զիս գիտէք,
եւ ոչ զՀայրն իմ. եթէ զիս գիտէիք, եւ
զՀայրն իմ թերեւս գիտէիք: Զայս բան 20
խօսեցաւ ի տան գանձին՝ յորժամ ուսու-
ցանէր ի տաճարի անդ. եւ ոչ ոք կալաւ
զնա. զի չեւ եւս հասեալ էր ժամ նորա:
ԵԵ. Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս. Ես 21

երթամ, եւ խնդրիցէք զիս, եւ ի մեղս
ձեր մեռանիցիք. զի ուր ես երթամ, դուք
22 ոչ կարէք գալ: Ասէին Հրեայքն. Մի՛թէ
զիւրովի՞ն երթայցէ, զի ասէ՝ թէ ուր
23 ես երթամ՝ դուք ոչ կարէք գալ: Եւ
ասէ ցնոսա. Դուք ի ներքուստ աստի էք,
եւ ես ի վերուստ անտի եմ. դուք յաշ-
խարհէ աստի էք, ես չեմ յայսմ աշ-
24 խարհէ: Բայց ասացի ձեզ՝ թէ ի մեղս
ձեր մեռանիցիք. զի թէ ոչ հաւատայցէք
25 թէ ես եմ, մեռանիցիք ի մեղս ձեր: Ասեն
ցնա. Դու ո՞վ ես: Ասէ ցնոսա Յիսուս.
26 Նախ՝ զի եւ խօսիմս իսկ ընդ ձեզ. բազում
ինչ ունիմ վասն ձեր խօսել եւ դատել,
այլ որ առաքեացն զիս՝ ճշմարիտ է. եւ
ես զոր լուայն ի նմանէ, զայն խօսիմ յաշ-
27 խարհի: Եւ ոչ գիտացին՝ թէ զՀօրէ ասէր
28 ցնոսա: Ասէ ցնոսա Յիսուս. Յորժամ
բարձրացուցանիցէք զՈրդի մարդոյ, յայն-
ժամ գիտասջիք՝ թէ ես եմ. եւ յանձնէ
իմմէ ինչ ոչ առնեմ, այլ որպէս ուսոյց զիս
29 Հայրն իմ, զայն խօսիմ: Եւ որ առա-
քեացն զիս՝ ընդ իս է. ոչ եթող զիս մի-
այն, զի ես զհաճոյս նորա առնեմ հանա-
30 պազ: Իբրեւ զայս խօսեցաւ, բազումք
հաւատացին ի նա:
31 ԵԶ. Եւ ասէր Յիսուս առ Հրեայսն հա-
ւատացեալս. Եթէ դուք կացջիք ի բանի
32 իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք. եւ

ծանիջիք զճշմարտութիւնն, եւ ճշմար-
տութիւնն ազատեսցէ զձեզ: Պատասխա- 33
նի ետուն նմա եւ ասեն. Զաւակ Աբրա-
համու եմք, եւ ոչ ումեք երբէք ծառայե-
ցաք. զիա՞րդ ասես թէ ազատք լինիջիք:
Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ամէն ա- 34
մէն ասեմ ձեզ, եթէ ամենայն որ առնէ
զմեղս, ծառայ է մեղաց: Եւ ծառայն ոչ 35
յաւիտեան կայ ի տան, իսկ որդին յա-
ւիտեան կայ: Իսկ արդ եթէ որդին զձեզ 36
ազատեսցուսցէ, ճշմարիտ ազատք լինիջիք:
Գիտեմ զի զաւակ Աբրահամու էք. այլ 37
խնդրէք սպանանել զիս. զի բանին իմոյ
չիք տեղի ի ձեզ: Ես զոր տեսի առ Հօր ի 38
մում, խօսիմ. եւ դուք՝ զոր լուարուք ի
հօրէն ձերմէ՝ առնէք: Պատասխանի ե- 39
տուն նմա եւ ասեն. Հայր մեր Աբրահամ
է: Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ որդիք Աբ-
րահամու էիք՝ զգործսն Աբրահամու գոր-
ծէիք: Այլ այժմիկ խնդրէք սպանանել 40
զիս, զայր մի՝ որ ձեզ զճշմարտութիւն
խօսեցայ, զոր լուայ ի Հօրէ իմմէ. զայդ
Աբրահամ ոչ արար: Դուք առնէք զգործս 41
հօրն ձերոյ: Ասեն ցնա. Մեք ի պոռնկու-
թենէ չեմք ծնեալ. մի է հայր մեր Ա-
ստուած: Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ Ա- 42
ստուած էր հայր ձեր, սիրէիք արդեօք
զիս. զի ես յԱստուծոյ ելի եւ եկի. եւ ոչ
եթէ յանձնէ ինչ եկի, այլ նա առաքեաց

43 զիս: Ընդէ՞ր զխօսս իմ ոչ գիտէք դուք.
44 վասն զի ոչ կարէք լսել զբանն իմ: Դուք
ի հօրէ ի սատանայէ էք, եւ զցանկու-
թիւնս հօրն ձերոյ կամիք առնել. զի նա
մարդասպան էր ի սկզբանէ, եւ ի ճշ-
մարտութեան ոչ եկաց. զի ոչ գոյ ճշ-
մարտութիւն ի նմա. յորժամ խօսիցի
սուտ՝ յիւրոց անտի խօսի. զի սուտ է եւ
45 հայր նորա: Իսկ ես զի զճշմարտութիւն
46 խօսիմ, ոչ հաւատայք ինձ: Ո՞ ի ձէնջ
յանդիմանէ զիս վասն մեղաց. եթէ զճշ-
մարիտն ասեմ, ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ:
47 Որ էն յԱստուծոյ, զբանս Աստուծոյ
լսէ. եւ դուք վասն այնորիկ ոչ լսէք, զի
48 չէք յԱստուծոյ: Պատասխանի ետուն
Հրէայքն եւ ասեն ցնա. Ո՞չ բարւոք ա-
սեմք մեք՝ եթէ Սամարացի ես դու, եւ
49 դեւ գոյ ի քեզ: Պատասխանի ետ Յիսուս
եւ ասէ. Յիս դեւ ոչ գոյ. այլ պատուեմ
50 զՀայր իմ, եւ դուք անարգէք զիս: Ես ոչ
խնդրեմ զփառս իմ. է որ խնդրէն եւ դա-
51 տի: Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոք
զբանն իմ պահեսցէ, զմահ մի՛ տեսցէ ի
52 յաւիտեան: Ասեն ցնա Հրէայքն. Արդ
գիտացաք թէ դեւ գոյ ի քեզ. Աբրահամ
մեռաւ եւ մարգարէքն. եւ դու ասես,
եթէ ոք զբանն իմ պահեսցէ՝ մի՛ ճաշա-
53 կեսցէ զմահ ի յաւիտեան: Միթէ դու
մե՞ծ ինչ ոք իցես քան զհայրն մեր Աբ-

բահամ որ մեռաւ, եւ մարգարէքն մե֊
ռան. արդ դու զո՞վ առնես զքեզ: Պա֊ 54
տասխանի ետ Յիսուս. Եթէ ես փառա֊
ւորեմ զանձն իմ, փառքն իմ ոչ ինչ են.
է Հայր որ փառաւորէ զիս, զորմէ դուքն
ասէք՝ թէ Աստուած մեր է, եւ ոչ ճանա֊
չէք զնա: Բայց ես գիտեմ զնա. եւ թէ 55
ասեմ, թէ ոչ գիտեմ զնա, ձեզ նման
սուտ լինիմ. այլ գիտեմ զնա. եւ զբան
նորա պահեմ: Աբրահամ հայր ձեր ցան֊ 56
կացաւ տեսանել զօր իմ. ետես եւ ու֊
րախ եղեւ: Ասեն ցնա Հրեայքն. Յիսուն 57
ամ չեւ եւս է քո, եւ զԱբրահա՞մ տեսեր:
Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ 58
ձեզ. յառաջ քան զլինելն Աբրահամու
եմ ես: Վէմս առին՝ զի արկցեն ի վերայ 59
նորա. եւ Յիսուս խոյս ետ, եւ ել գնաց
ի տաճարէ անտի:

ԳԼՈՒԽ Թ

Եւ. Եւ մինչդեռ անցանէր, ետես այր 1
մի կոյր ի ծնէ. եւ հարցին ցնա աշա֊ 2
կերտքն նորա եւ ասեն. Ռաբբի, ո՞յր մեղս
է, սորա՞ թէ հօր եւ մօր իւրոյ՝ զի կոյր
ծնցի: Պատասխանի ետ Յիսուս. Ոչ դո֊ 3
րա մեղս է եւ ոչ հօր եւ մօր իւրոյ, այլ
զի յայտնի լիցին գործքն Աստուծոյ ի դմա:
Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ 4

որ առաքեացն զիս՝ մինչ աւուր կայ. գայ
գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել.
5 մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխար֊
6 հի: Զայս իբրեւ ասաց՝ եթուք ի գետին
եւ արար կաւ ի թքոյն. եւ ծեփեաց ըզ֊
7 կաւն ի վերայ աչաց կուրին, եւ ասէ
ցնա. Երթ լուա յաւազանին Սիլովամայ,
որ թարգմանի առաքեալ: Չոգաւ լուա֊
8 ցաւ, եկն եւ տեսանէր: Իսկ դրացիքն՝
եւ որոց տեսեալն էր զնա յառաջագոյն՝
թէ մուրացիկ էր, ասէին. Ո՞չ սա էր որ
նստէրն եւ մուրանայր: Կէսքն ասէին,
9 նա է. այլքն ասէին, ոչ, այլ նման է նմա.
10 եւ ինքն ասէր, թէ ես եմ: Ասեն ցնա.
11 Իսկ զիա՞րդ բացան աչք քո: Նա ետ պա֊
տասխանի. Այր մի որում Յիսուսն ա֊
սեն, կաւ արար եւ ծեփեաց զաչս իմ,
եւ ասէ ցիս. Երթ ի Սիլովամ եւ լուա.
12 չոգայ լուացայ եւ տեսանեմ: Ասեն ցնա.
13 Ո՞ւր է նա: Ասէ ցնոսա. Ոչ գիտեմ: Ածին
առ փարիսեցիսն զնա՝ որ երբեմն կոյրն
14 էր: Եւ էր շաբաթ՝ յորժամ զկաւն արար
15 Յիսուս եւ եբաց զաչս կուրին: Դար֊
ձեալ հարցանէին զնա եւ փարիսեցիքն,
թէ զիա՞րդ տեսանես. եւ նա ասէ ցնոսա.
Կաւ եդ ի վերայ աչաց իմոց, եւ լուա֊
16 ցայ եւ տեսանեմ: Ասեն ոմանք ի փա֊
րիսեցւոցն. Ոչ է այրն այն յԱստուծոյ,
զի զշաբաթս ոչ պահէ: Կէսքն ասէին.

Իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր այսպի֊
սի նշանս առնել։ Եւ էին հերձուածք ի 17
մէջ նոցա։ Ասեն դարձեալ ցկոյրն. Դու
զի՞ ասես վասն նորա՝ զի եբաց զաչս քո։
Եւ նա ասէ՝ թէ մարգարէ է։ Եւ ոչ հա֊ 18
ւատային Հրեայքն զնմանէ՝ թէ կոյր էր
եւ բացաւ. մինչեւ կոչեցին զծնօղս բա֊
ցելոյն, հարցին ցնոսա եւ ասեն. Սա՞ է 19
որդին ձեր, զորմէ դուքն ասէիք եթէ
կոյր ծնաւ. արդ. զիա՞րդ տեսանէ։ Պա֊ 20
տասխանի ետուն ծնօղքն նորա եւ ա֊
սեն. Գիտեմք զի սա է որդին մեր, եւ
զի կոյր ծնաւ. բայց զիարդ այժմ տե֊ 21
սանէ, ոչ գիտեմք. կամ թէ ո՛վ եբաց
զաչս դորա, մեք ոչ գիտեմք. ցդա իսկ
հարցէք, ինքնին ի չափ հասեալ է, ինքն
իսկ խօսեսցի վասն իւր։ Զայս ասացին 22
ծնօղքն նորա, զի երկնչէին ի Հրէիցն.
քանզի ուխտ եդեալ էր Հրէից, եթէ որ
խոստովանեսցէ զնա Քրիստոս՝ ի բաց կաց֊
ցէ ի ժողովրդենէն. վասն այնորիկ ասա֊ 23
ցին ծնօղքն նորա, թէ ինքնին ի չափ հա֊
սեալ է, ցնա իսկ հարցէք։ Դարձեալ կր֊ 24
կին անգամ կոչեցին զայրն որ կոյրն էր,
եւ ասեն ցնա. Տուր փառս Աստուծոյ,
մեք գիտեմք զի այրն այն մեղաւոր է։ Եւ 25
նա ասէ. Թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ.
բայց զայս գիտեմ, զի կոյր էի եւ արդ
տեսանեմ։ Դարձեալ ասեն ցնա. Զի՞նչ ա֊ 26

27 րար քեզ, զիա՞րդ եբաց զաչս քո։ Պա֊
տասխանի ետ նոցա. Այժմ ասացի ձեզ՝
եւ ոչ լուարուք, զի՞ կամիք միւսանգամ
լսել. միթէ եւ դո՞ւք կամիք աշակերտել
28 նմա։ Նոքա հայհոյէին զնա եւ ասէին.
Դու լիջիր նորա աշակերտ. մեք Մովսիսի
29 աշակերտք եմք. մեք գիտեմք՝ զի ընդ
Մովսիսի խօսեցաւ Աստուած. զսա ոչ
30 գիտեմք ուստի է։ Պատասխանի ետ այրն
եւ ասէ ցնոսա. Այդ իսկ են սքանչելիք,
զի դուք ոչ գիտէք ուստի իցէ, եւ զիմ
31 զաչս եբաց։ Գիտեմք զի Աստուած մե֊
ղաւորաց ոչ լսէ, բայց թէ աստուածա֊
պաշտ ոք իցէ, եւ զկամս նորա առնիցէ,
32 նմա լսէ։ Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ ե֊
թէ եբաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր ծը֊
33 նելոյ։ Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն այն,
34 ոչ կարէր առնել ինչ։ Պատասխանի ե֊
տուն եւ ասեն ցնա. Ի մեղս իսկ ծնեալ
ես ամենեւին, եւ դու վարդապե՞տ լինիս
35 մեզ։ Եւ հանին զնա արտաքս։ Լուաւ
Յիսուս եթէ հանին զնա արտաքս, եւ
իբրեւ եգիտ զնա՝ ասէ ցնա. Դու հա֊
36 ւատա՞ս յՈրդի Աստուծոյ։ Նա պատաս֊
խանի ետ եւ ասէ. Տէր, ո՞վ է՝ զի հաւա֊
37 տացից ի նա։ Ասէ ցնա Յիսուս. Եւ տե֊
սեր զնա, եւ որ խօսիդ ընդ քեզ՝ նա է։
38 Եւ նա ասէ. Հաւատամ Տէր։ Եւ երկիր
եպագ նմա։

ԶԿ. Եւ ասէ Յիսուս. Ի դատաստանս 39
եկի յաշխարհս յայս. զի որ ոչն տեսանեն՝
տեսցեն, եւ որք տեսանենն՝ կուրասցին:
Լուան ոմանք ի փարիսեցւոցն՝ որք ընդ 40
նմա էին, եւ ասեն ցնա. Միթէ եւ մեք
կո՞յրք իցեմք: Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ 41
կոյրք էիք՝ ոչ էր ձեր մեղ, բայց արդ ա-
սէք՝ թէ տեսանեմք, եւ մեղքն ձեր ի
ձեզ հաստատեալ են:

ԳԼՈՒԽ Ժ

Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ոչ մտանէ ընդ 1
դուռն ի գաւիթ ոչխարացն, այլ ընդ այլ
ելանէ, նա գող է եւ աւազակ: Իսկ որ 2
մտանէ ընդ դուռն՝ հովիւ է ոչխարաց.
նմա դռնապանն բանայ, եւ ոչխարքն ձայ- 3
նի նորա լսեն. եւ զիւր ոչխարսն կոչէ
յանուանէ, եւ հանէ զնոսա: Եւ յոր- 4
ժամ զիւրն զամենայն հանիցէ, առաջի
նոցա երթայ, եւ ոչխարքն զհետ նորա
երթան, զի ճանաչեն զձայն նորա: Զօտա- 5
րի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ի
նմանէ, զի ոչ ճանաչեն զձայն օտարաց:
Զայս առակ ասաց նոցա Յիսուս, եւ նո- 6
քա ոչ գիտէին՝ թէ զինչ էր որ խօսէրն
ընդ նոսա: Դարձեալ ասէ ցնոսա Յիսուս. 7
Ամէն ամէն ասեմ ձեզ, զի ես եմ դուռն
ոչխարաց: Ամենեքեան որ յառաջ քան 8

զիս եկին՝ գողք էին եւ աւազակք, այլ
9 ոչ լուան նոցա ոչխարքն: Ես եմ դուռն,
ընդ իս թէ ոք մտանիցէ, կեցցէ. մտցէ եւ
10 ելցէ, եւ ճարակ գտցէ: Գող ոչ գայ՝ ե-
թէ ոչ զի գողասցի եւ սպանցէ եւ կո-
րուսցէ: Ես եկի զի զկեանս ունիցին, եւ
առաւել եւս ունիցին:
11 ԶԲ. Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ
12 զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Իսկ
վարձկանն որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր
են ոչխարքն, իբրեւ տեսանէ զգայլն զի
գայ, թողու զոչխարսն եւ փախչի. եւ
13 գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քան-
զի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն
14 ոչխարացն: Ես եմ հովիւն քաջ. եւ ճա-
15 նաչեմ զիմսն, եւ ճանաչիմ յիմոցն: Որ-
պէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես ըզ-
Հայրն. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչ-
16 խարաց: Նա եւ այլ եւս ոչխարք են իմ,
որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայնս եւս
պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի ի-
մում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի
17 հովիւ: Վասն այնորիկ սիրէ զիս Հայր իմ,
զի ես դնեմ զանձն իմ, զի միւսանգամ
18 առից զնա: Ոչ ոք հանէ զնա յինէն, այլ
ես դնեմ զնա անձամբ իմով. իշխանու-
թիւն ունիմ դնել զնա, եւ իշխանութիւն
ունիմ միւսանգամ առնուլ զնա, զայս
19 պատուէր առի ի Հօրէ իմմէ: Դարձեալ

հերձուած լինէր ի մէջ Հրէիցն վասն բա-
նիցս այսոցիկ։ Եւ ասէին բազումք ի նո- 20
ցանէ. դեւ գոյ ի նմա եւ մոլեգնի, զի՞ ըլ-
նուլ լսէք նմա։ Կէսքն ասէին. Այսպիսի 21
բանք ոչ դիւահարի են. միթէ դեւ կարէ՞
զաչս կուրի բանալ։

ԶԳ. Եղեն յայնժամ նաւակատիքն յե- 22
րուսաղէմ, եւ ձմեռն էր. եւ շրջէր Յի- 22
սուս ի տաճարին՝ ի սրահին Սողոմոնի։
Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն եւ ասեն. 24
Մինչեւ յե՞րբ թափես զոգիս մեր. եթէ
դու ես Քրիստոսն՝ ասա մեզ համարձակ։
Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. 25
Ասացի ձեզ՝ եւ ոչ հաւատայք ինձ. ըզ-
գործսն զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝
նոքին վկայեն վասն իմ։ Այլ դուք ոչ հա- 26
ւատայք, զի չէք յոչխարաց անտի իմոց։
Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, եւ ես 27
ճանաչեմ զնոսա, եւ զկնի իմ գան. եւ 28
ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս.
եւ մի՛ կորիցեն ի յաւիտեան, եւ մի՛ ոք
յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց իմոց։
Հայրն իմ որ ետ ինձ զնոսա՝ մեծ է քան 29
զամենայն, եւ ոչ ոք կարէ յափշտակել ի
ձեռաց Հօր իմոյ։ Ես եւ Հայր իմ մի եմք։ 30
Վէմս առին Հրեայքն՝ զի քարկոծ արաս- 31
ցեն զնա։ Պատասխանի ետ նոցա Յիսուս. 32
Բազում գործս բարիս ցուցի ձեզ ի Հօրէ
իմմէ. վասն որո՞յ գործոյ ի նոցանէ քար-

33 կոծ առնէք զիս։ Պատասխանի ետուն
նմա Հրեայքն. Վասն բարւոյ գործոյ ոչ
առնեմք զքեզ քարկոծ, այլ վասն հայ-
հոյութեան. եւ զի դու մարդ ես, եւ
34 զանձն քո Աստուած առնես։ Պատաս-
խանի ետ նոցա Յիսուս. Ո՞չ յօրէնսն ձեր
գրեալ է. Ես ասացի թէ աստուածք է-
35 ցէք. իսկ եթէ զնոսա աստուածս ասէ՝
առ որս բանն Աստուծոյ եղեւ, եւ չէ
36 մարթ եղծանել գրոյն, իսկ զոր Հայր
սրբեաց եւ առաքեաց յաշխարհ, դուք
ասէք՝ թէ հայհոյես, զի ասացի թէ Որդի
37 Աստուծոյ եմ։ Եթէ ոչ գործեմ զգործս
38 Հօր իմոյ, մի՛ հաւատայք ինձ. ապա թէ
գործեմ, թէ եւ ինձ ոչ հաւատայք, սա-
կայն գործոցն հաւատացէք. զի գիտաս-
ջիք եւ ծանիջիք՝ եթէ Հայր յիս եւ ես ի
39 Հայր։ Դարձեալ խնդրէին զնա ունել.
40 եւ ել ի ձեռաց նոցա։ Եւ գնաց միւս-
անգամ յայն կոյս Յորդանանու, ի տեղին
ուր էր Յովհաննէս զառաջինն եւ մկրտէր,
41 եւ անդ լինէր։ Եկին բազումք առ նա եւ
ասեն. Զի Յովհաննէս նշան ինչ ոչ արար.
42 բայց զամենայն զոր ասաց Յովհաննէս
վասն նորա՝ ճշմարիտ էր։ Եւ բազումք
հաւատացին ի նա անդ։

ԳԼՈՒԽ ԺԱ

ԶԴ. Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բե֊ 1
Թանիայ, ի գեղջէ Մարեմայ եւ Մար֊
Թայի քեռ նորա։ Այս այն Մարիամ էր՝ 2
որ օծ զՏէրն իւղով, եւ ջնջեաց զոտս նո֊
րա հերով իւրով. որոյ եղբայրն Ղազա֊
րոս հիւանդ էր։ Առաքեցին առ նա քորքն 3
նորա եւ ասեն. Տէր, ահաւասիկ զոր դուն
սիրէիր՝ հիւանդացեալ է։ Իբրեւ լուաւ 4
Յիսուս, ասէ. Այն հիւանդութիւն չէ ի
մահ, այլ վասն փառացն Աստուծոյ. զի
փառաւոր լիցի որդի Աստուծոյ այնուիկ։
Եւ սիրէր Յիսուս զՄարիամ եւ զՄարթա 5
զքոյր նորա եւ զՂազար։ Իբրեւ լուաւ 6
թէ հիւանդացեալ է, զաւելի կալաւ ան֊
դէն ուր էրն՝ աւուրս երկուս։ Ապա յետ 7
այնորիկ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք
միւսանգամ ի Հրէաստան։ Ասեն ցնա ա֊ 8
շակերտքն. Ռաբբի, այժմ եւս խնդրէին
զքեզ Հրեայքն քարկոծ առնել, եւ դար֊
ձեալ երթաս անդրէն։ Պատասխանի ետ 9
Յիսուս. Ո՞չ երկոտասան ժամ է յաւուր.
եթէ ոք գնայ ի տուընջեան՝ ոչ գայթագղի,
զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ. ապա 10
թէ ոք գնայ գիշերի՝ գայթագղի, զի լոյս
ոչ գոյ ընդ նմա։ Զայս իբրեւ ասաց, յետ 11
այսորիկ ասէ ցնոսա. Ղազարոս բարեկամ

մեր ննջեաց, այլ երթամ զի զարթուցից
12 զնա։ Ասեն ցնա աշակերտքն. Տէր, եթէ
13 ննջեաց՝ ապա ապրի։ Այլ Յիսուս վասն
մահուն նորա ասէր. Նոցա այսպէս թուե֊
14 ցաւ՝ թէ վասն ննջելոյ քնոյ ասէ։ Յայն֊
ժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս.
15 Ղազարոս մեռաւ. եւ ես ուրախ եմ վասն
ձեր, զի դուք հաւատասջիք ինձ. զի ես
չէի անդ. բայց արդ եկայք երթիցուք առ
16 նա։ Ասէ Թովմաս՝ անուանեալն երկուո֊
րեակ՝ ցաշակերտակիցսն. Օն եկայք, եւ
17 մեք զի ընդ նմա մեռցուք։ Եկն Յիսուս,
18 եգիտ զնա չորեքօրեայ ի գերեզմանի։ Եւ
էր Բեթանիա մերձ յԵրուսաղէմ իբրեւ
19 ասպարիսօք հնգետասան. բազումք ի
Հրէից անտի եկեալ էին առ Մարթա եւ
Մարիամ, զի մխիթարեսցեն զնոսա վասն
20 եղբօրն։ Մարթա իբրեւ լուաւ՝ թէ Յի֊
սուս գայ, ընդ առաջ գնաց նորա. բայց
21 Մարիամ նստէր անդէն ի տան։ Ասէ
Մարթա ցՅիսուս. Տէր, եթէ աստ լինեալ
22 էիր, եղբայրն իմ չէր մեռեալ. այլ եւ
արդ գիտեմ, թէ զոր ինչ խնդրեսցես
23 յԱստուծոյ՝ տացէ քեզ Աստուած։ Ասէ
24 ցնա Յիսուս. Յարիցէ եղբայրն քո։ Ասէ
ցնա Մարթա. Գիտեմ զի յարիցէ ի յարու֊
25 թեան՝ յաւուրն յետնում։ Ասէ ցնա Յի֊
սուս. Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. որ
հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի՝ կեց֊

ցէ. եւ ամենայն որ կենդանի է եւ հաւա- 26
տայ յիս, մի՛ մեռցի ի յաւիտեան. հա-
ւատա՞ս այսմիկ: Ասէ ցնա. Այո, Տէր, 27
ես հաւատացի՝ եթէ դու ես Քրիստոսն
որդի Աստուծոյ, որ յաշխարհ գալոց էիր:
Եւ զայս իբրեւ ասաց՝ գնաց կոչեաց զՄա- 28
րիամ զքոյր իւր լռելեայն, եւ ասէ. Վար-
դապետն եկեալ է՝ եւ կոչէ զքեզ: Նա 29
իբրեւ լուաւ, յարեաւ վաղվաղակի, եւ
եկն առ նա: Չեւ եւս էր եկեալ Յիսուս 30
ի գեօղն, այլ էր անդէն ի տեղւոջն՝ ուր
ընդ առաջ եղեւ նմա Մարթա: Իսկ Հը- 31
րեայքն որ էին ընդ նմա ի տան անդ եւ
մխիթարէին զնա, իբրեւ տեսին զՄա-
րիամ՝ թէ յարեաւ վաղվաղակի եւ գնաց,
գնացին եւ նոքա զհետ նորա. համարէին
թէ ի գերեզմանն երթայ՝ զի լացցէ անդ:
Իսկ Մարիամ իբրեւ եկն ուր էրն Յիսուս՝ 32
եւ ետես զնա, անկաւ առ ոտս նորա եւ
ասէ. Տէր, եթէ աստ էիր դիպեալ՝ ոչ էր
մեռեալ եղբայրն իմ: Յիսուս իբրեւ ետես 33
զնա զի լայր, եւ որ ընդ նմայն էին Հը-
րեայքն՝ լային, խռովեցաւ յոգի իւր իբ-
րեւ զայրացեալ, եւ ասէ. Ո՞ւր եդիք զնա: 34
Ասեն ցնա. Տէր, եկ եւ տես: Եւ արտա- 35
սուեաց Յիսուս: Ասէին Հրեայքն. Տեսէք 36
ո՞րչափ սիրէր զնա: Կէսքն ի նոցանէ ա- 37
սէին. Ո՞չ կարէր սա, որ եբաց զաչս կու-
րին, առնել զի եւ սա մի՛ մեռցի: Յիսուս 38

դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ
ի գերեզմանն: Եւ էր այր մի, եւ վէմ մի
39 եդեալ ի վերայ նորա: Եւ ասէ Յիսուս.
Ի բաց արարէք զվէմդ: Ասէ ցնա Մարթա
քոյր մեռելոյն. Տէր, արդ հոտեալ իցէ,
40 քանզի չորեքօրեայ է: Ասէ ցնա Յիսուս.
Ո՞չ ասացի քեզ, եթէ հաւատասցես՝ տես-
41 ցես զփառսն Աստուծոյ: Եւ իբրեւ ի վեր
առին զվէմն, Յիսուս ամբարձ զաչս իւր
ի վեր, եւ ասէ. Հայր, գոհանամ զքէն
42 զի լուար ինձ. եւ ես գիտէի՝ զի յամե-
նայն ժամ լսես ինձ, այլ վասն ժողովր-
դեանս որ շուրջ կան՝ առնե՛մ, զի հաւա-
43 տասցեն թէ դու առաքեցեր զիս: Զայս
իբրեւ ասաց, ի ձայն մեծ աղաղակեաց
44 եւ ասէ. Ղազարէ, արի եկ արտաքս: Եւ
ել մեռեալն ոտիւք կապելովք, եւ ձե-
ռօքն երիզապնդօք, եւ երեսօքն վարշա-
մակապատօք. եւ ասէ ցնոսա Յիսուս.
45 Լուծէք զդա եւ թողէք երթալ: Բա-
զումք ի Հրէից որ եկեալ էին առ Մա-
րեմանս, իբրեւ տեսին զոր արարն՝ հա-
46 ւատացին ի նա: Եւ ոմանք ի նոցանէ գը-
նացին առ փարիսեցիս, եւ պատմեցին
նոցա զոր արարն Յիսուս:
47 ԶԶ. Ժողովեցին քահանայապետքն եւ
փարիսեցիքն ատեան, եւ ասեն. Զի՞նչ ա-
րասցուք, զի այրն այն բազում նշանս
48 առնէ. Եթէ թողումք զնա այնպէս, ա-

մենեքին հաւատան ի նա. եւ գայցեն Հո-
ռոմք՝ եւ բառնայցեն զտեղիս մեր եւ զազ-
գի: Մի ոմն ի նոցանէ, անուն Կայիափա, 49
որ քահանայապետ էր տարւոյն այնորիկ,
ասէ ցնոսա. Դուք ոչ ինչ գիտէք, եւ ոչ 50
բնաւ խորհիլ իսկ, թէ լաւ է մեզ՝ զի այր
մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս, եւ
մի ամենայն ազգս կորիցէ: Զայս ոչ յանձ 51
նէ ինչ ասաց, այլ քանզի քահանայապետ
էր տարւոյն այնորիկ, մարգարեացաւ՝
եթէ մեռանելոց էր Յիսուս ի վերայ ազ-
գին. եւ ոչ ի վերայ ազգին միայն, այլ զի 52
եւ զորդիսն Աստուծոյ զցրուեալսն ժո-
ղովեսցէ ի մի: Ապա յայնմ օրէ խորհուրդ 53
արարին՝ զի սպանցեն զնա:

Եւ Յիսուս այնուհետեւ ոչ եթէ հա- 54
մարձակ շրջէր ի մէջ Հրէից, այլ գնաց ան-
տի յերկիր մի՝ որ մերձ էր յանապատ.
ի քաղաք մի՝ որում անուն էր Եփրայիմ.
եւ անդ լինէր աշակերտօքն հանդերձ:

Զէ. Եւ էր մերձ զատիկն Հրէից. եւ բա- 55
զումք ելին յԵրուսաղէմ ի գաւառէ ան-
տի յառաջագոյն քան զզատիկն, զի սըր-
բեսցեն զանձինս իւրեանց: Խնդրէին զՅի- 56
սուս, եւ ասէին ընդ միմեանս մինչ կային
ի տաճարին. Զինչ թուի ձեզ, եթէ ոչ
գայցէ ի տօն այսր: Պատուէր տուեալ էր
քահանայապետիցն եւ փարիսեցւոց, զի
թէ ոք գիտասցէ թէ ուր է, գուշակեսցէ
զնմանէ, զի կալցին զնա:

ԳԼՈՒԽ ԺԲ

1 Իսկ Յիսուս վեց աւուրբ յառաջ քան
զզատիկն՝ եկն ի Բեթանիա, ուր էր Ղա-
զար մեռեալն, զոր յարոյց ի մեռելոց:
2 Եւ արարին անդ նմա ընթրիս, եւ ի սպա-
սու կայր Մարթա. եւ Ղազար մի էր ի
3 բազմելոց ընդ նմա: Իսկ Մարեմայ ա-
ռեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի
մեծագնոյ, օծ զոտսն Յիսուսի, եւ հե-
րով իւրով մաքրէր զոտս նորա. եւ
4 տունն լի եղեւ ի հոտոյ իւղոյն: Ասէ մի
ոմն յաշակերտաց անտի՝ Յուդա Իսկա-
5 րիովտացի, որ մատնելոց էր զնա. Ընդէր
ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեքարիւր
6 դենարի, եւ տուաւ աղքատաց: Զայս
ասաց՝ ոչ զի զաղքատաց ինչ փոյթ էր
նմա, այլ զի գող էր, եւ զարկղն ինքն ու-
7 նէր, եւ որ ինչ անկանէրն՝ նա կրէր: Ասէ
Յիսուս. Թոյլ տուք դմա, զի յօրն պատա-
8 նաց իմոց պահեսցէ զայդ: Զաղքատս
յամենայն ժամ ընդ ձեզ ունիք, զիս ոչ
9 հանապազ ընդ ձեզ ունիք: Իբրեւ գիտաց
ժողովուրդ բազում ի Հրէից թէ անդ է՝
եկին, ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի եւ
զՂազար տեսցեն՝ զոր յարոյց ի մեռե-
10 լոց: Խորհուրդ արարին քահանայա-
11 պետքն՝ զի եւ զՂազար սպանցեն. քանզի

բազումք ի Հրէից երթային եւ հաւա-
տային ի Յիսուս:
ԻԱ․ Ի վաղիւ անդր ժողովուրդ բա- 12
զում որ եկեալ էր ի տօնն, իբրեւ լուան
եթէ գայ Յիսուս յԵրուսաղէմ, առին 13
ոստս արմաւենեաց՝ եւ ելին ընդ առաջ
նորա․ աղաղակէին եւ ասէին․ Ովսաննա,
օրհնեալ որ գայ յանուն Տեառն՝ Թա-
գաւորդ Իսրայելի: Եւ գտեալ Յիսուսի 14
էշ մի, նստաւ ի վերայ նորա: Որպէս եւ
գրեալ է․ Մի՛ երկնչիր, դուստր Սիովնի, 15
ահաւասիկ Թագաւոր քո գայ նստեալ ի
վերայ յաւանակի իշոյ: Եւ զայն ինչ ոչ 16
գիտացին աշակերտքն նորա զառաջինն,
այլ յորժամ փառաւորեցաւ Յիսուս,
յայնժամ յիշեցին եթէ այն էր որ գրեալն
էր վասն նորա, եւ զայն արարին նմա:
Եւ ժողովուրդն վկայէր՝ որ էր ընդ նմա, 17
եթէ զՂազար կոչեաց եւեթ ի գերեզմա-
նէն եւ յարոյց զնա ի մեռելոց․ եւ վասն 18
այնորիկ ընդ առաջ եղեւ նմա ժողովուր-
դըն․ զի լուան եթէ զայն նշանս արարեալ
էր նորա: Իսկ փարիսեցիքն ասէին ընդ մի- 19
մեանս․ Տեսանէք, զի ոչ ինչ օգտիք․ ահա-
ւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց:
Էին անդ ոմանք եւ հեթանոսք յելե- 20
լոցն անդր, զի երկիր պագանիցեն ի տօ-
նին: Նոքա մատեան առ Փիլիպպոս՝ որ ի 21
Բեթսայիդայ Գալիլեացւոցն էր, աղաչէին

զնա եւ ասէին․ Տէր, կամիմք զՅիսուս տե-
սանել: Գայ Փիլիպպոս եւ ասէ ցԱն-
22 դրէաս: Անդրէաս եւ Փիլիպպոս ասեն
23 ցՅիսուս: Եւ Յիսուս պատասխանի ետ
նոցա եւ ասէ․ Եհաս ժամ զի փառաւո-
րեսցի որդի մարդոյ:
24 ԻԲ․ Ամէն ամէն ասեմ ձեզ․ եթէ ոչ
հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանի-
ցի, ինքն միայն կայ․ ապա եթէ մեռանի-
25 ցի՝ բազում արդիւնս առնէ: Որ սիրէ
զանձն իւր՝ արձակէ զնա․ եւ որ ատեայ
զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեան-
26 սըն յաւիտենականս պահեսցէ զնա: Եթէ
ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ․ եւ
ուր եմ ես, անդ եւ պաշտօնեայն իմ
եղիցի: Եթէ ոք զիս պաշտիցէ, պատուես-
ցէ զնա Հայրն իմ:
27 ԻԳ․ Բայց այժմ անձն իմ խռովեալ է․
եւ զի՞նչ ասացից, եթէ Հայր ապրեցո զիս
ի ժամանակէ աստի յայսմանէ․ այլ վասն
28 այնորիկ եկի ի ժամս յայս: Հայր, փա-
ռաւորեա զանուն քո: Եկն բարբառ
յերկնից․ Եւ փառաւոր արարի, եւ դար-
29 ձեալ փառաւոր արարից: Եւ ժողո-
վուրդն որ կայր եւ լսէր, ասէին որոտումն
լինել․ կէսքն ասէին, Հրեշտակ խօսեցաւ
30 ընդ նմա: Պատասխանի ետ Յիսուս եւ ա-
սէ․ Ոչ վասն իմ ինչ եկն բարբառս այս,
31 այլ վասն ձեր: Այժմիկ դատաստան է

աշխարհիս այսորիկ. այժմիկ իշխան աշ-
խարհիս այսորիկ ընկեսցի արտաքս։ Եւ ես 32
յորժամ բարձրացայց յերկրէ, զամենե-
սին ձգեցից առ իս։ Զայս ասէր, նշանա- 33
կելով թէ որով մահու մեռանելոց իցէ։
Պատասխանի ետ նմա ժողովուրդն. Մեք 34
լուաք յօրինաց՝ եթէ Քրիստոսն յաւի-
տեան կայ. եւ դու զիարդ ասես՝ թէ պարտ
է բարձրանալ որդւոյ մարդոյ. ո՞վ է այն որ-
դին մարդոյ։ Ասէ ցնոսա Յիսուս. փոքր 35
մւս եւս ժամանակ լոյս ընդ ձեզ է. գնա-
ցէք մինչդեռ զլոյսն ունիք, զի մի խաւար
ձեզ հասցէ. զի որ գնայ ի խաւարի, ոչ գի-
տէ յո՛ երթայ. մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ու- 36
նիք, հաւատացէք ի լոյսն, զի որդիք լուսոյ
եղիջիք։

Զայս խօսեցաւ Յիսուս, եւ չոգաւ թա-
քեաւ ի նոցանէ։ Եւ այնչափ նշանս ա- 37
րարեալ էր առաջի նոցա, եւ նոքա ոչ
հաւատային ի նա. զի լցցի բանն Եսայեայ 38
մարգարէի՝ զոր ասացն. Տէր, ո՞ հաւա-
տաց ի լուր մեր, եւ բազուկ Տեառն ու՞մ
յայտնեցաւ։ Վասն այնորիկ ոչ կարէին 39
հաւատալ, զի միւսանգամ ասէ Եսայի,
թէ կուրացոյց զաչս նոցա, եւ ապշեցոյց 40
զսիրտս նոցա. զի մի տեսցեն աչօք, եւ ի-
մասցին սրտիւք, եւ դարձցին եւ բժշկե-
ցից զնոսա։ Զայս ասաց Եսայի, զի ետես 41
զփառսն նորա, եւ խօսեցաւ վասն նորա։

42 Բայց սակայն եւ յիշխանաց անտի բա-
զումք հաւատացին ի նա. այլ վասն փա-
րիսեցւոցն ոչ յայտնէին. զի մի ի ժողո-
43 վրդենէն ելանիցեն։ Քանզի սիրեցին ըզ-
փառս մարդկան՝ առաւել քան զփառսն
Աստուծոյ։

44 ԽԴ. Եւ Յիսուս աղաղակէր եւ ասէր.
Որ հաւատայ յիս, ոչ հաւատայ յիս,
45 այլ յայն որ առաքեացն զիս. եւ որ տե-
սանէ զիս, զայն տեսանէ որ առաքեացն
46 զիս։ Ես լոյս յաշխարհ եկի, զի ամենայն
որ հաւատայ յիս՝ ի խաւարի մի՛ մնաս-
47 ցէ։ Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց եւ ոչ
պահեսցէ, ես ոչ դատիմ զնա. քանզի ոչ
եկի թէ դատեցայց զաշխարհ, այլ զի
48 փրկեցից զաշխարհ։ Որ անարգէ զիս, եւ
ոչ ընդունի զբանս իմ, գոյ որ դատի զնա.
բանն զոր ես խօսեցայ՝ նա դատի զնա յա-
49 ւուրն յետնում։ Զի ես յանձնէ իմմէ ոչ
խօսեցայ, այլ որ առաքեացն զիս Հայր՝ նա
ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից եւ զինչ
50 խօսեցայց։ Եւ գիտեմ եթէ պատուէրն
այն կեանք են յաւիտենականք։ Արդ զոր
ես խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն՝ այն-
պէս խօսիմ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԿԵ. Յառաջ քան զտօնն զատկի 1
գիտաց Յիսուս՝ թէ հասեալ է ժամ նորա
զի փոխեսցի յաշխարհէ աստի առ Հայր.
սիրեաց զիւրսն՝ որ յաշխարհի աստ էին,
ի սպառ սիրեաց զնոսա։ Եւ ի լինել ընթ- 2
րեացն՝ սատանայի իսկ արկեալ էր ի սիրտ՝
զի մատնեսցէ զնա՝ Յուդա Սիմոնի Իս-
կարիովտացւոյ։ Գիտաց Յիսուս՝ զի զա- 3
մենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա. եւ
թէ յԱստուծոյ ել՝ եւ առ Աստուած եր-
թայ։ Յառնէ յընթրեաց անտի եւ դնէ 4
զհանդերձն, եւ առեալ ղենջակ մի՝ սփա-
ծաւ։ Եւ ապա առեալ ջուր՝ արկ ի կոնք, 5
եւ սկսաւ լուանալ զոտս աշակերտացն.
եւ սրբէր ղենջակաւն զոր սփածեալ էր։
Գայ առ Սիմոն Պետրոս. եւ նա ասէ 6
ցնա. Տէր, դու զիմ զոտս լուանաս։ Պա- 7
տասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Զոր
ինչ ես գործեմ՝ դու այժմ ոչ գիտես,
բայց ապա գիտասջիր։ Ասէ ցնա Պետրոս. 8
Ոչ լուասցես զոտս իմ յաւիտեան։ Պա-
տասխանի ետ Յիսուս. Եթէ ոչ լուացից
զքեզ, ոչ ունիս ընդ իս մասն։ Ասէ ցնա 9
Սիմոն Պետրոս. Տէր, մի՛ միայն զոտս իմ,
այլ եւ զձեռս եւ զգլուխ։ Ասէ ցնա Յի- 10
սուս. Լուացելոյն չէ ինչ պիտոյ, բայց

զի զոտսն լուանայցէ. քանզի ամենեւին
սուրբ է. եւ դուք սուրբ էք, այլ ոչ ա-
11 մենեքեան։ Զի գիտէր զայն որ մատնե-
լոցն էր զնա, վասն այնորիկ ասաց՝ թէ
12 ոչ ամենեքեան սուրբ էք։ Եւ յորժամ
լուաց զոտս նոցա, առ զհանդերձն իւր՝
եւ դարձեալ բազմեցաւ։ Եւ ասէ ցնո-
13 սա. Գիտէք զինչ արարի ձեզ։ Դուք կո-
չէք զիս Վարդապետ եւ Տէր, եւ բարւոք
14 ասէք. քանզի եմ իսկ։ Իսկ արդ եթէ
ես լուացի զոտս ձեր՝ Տէրս եւ Վարդա-
պետս, եւ դուք պարտիք զմիմեանց ոտս
15 լուանալ. զի օրինակ մի ետու ձեզ, զի
որպէս ես ձեզ արարի, եւ դուք առ-
նիջիք։
16 ԿԶ. Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ է ծա-
ռայ մեծ քան զտէր իւր, եւ ոչ առա-
քեալ մեծ քան զայն որ առաքեացն զնա։
17 Եթէ զայս գիտէք, երանելի եւս էք՝ եթէ
18 առնիցէք զայս։ Ոչ վասն ամենեցուն
ձեր ասեմ. զի ես գիտեմ զորս ընտրե-
ցի. այլ զի լցցի գիրն, թէ որ ուտէր
ընդ իս հաց՝ արար ինձ խաբէութիւն։
19 Յայսմ հետէ իսկ ասեմ ձեզ մինչչեւ ե-
ղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք
20 թէ ես եմ։ Ամէն ամէն ասեմ ձեզ. որ
ընդունի զոր ոք ես առաքեցից՝ զիս ընդ-
ունի. եւ որ զիս ընդունի՝ ընդունի զայն
21 որ առաքեացն զիս։ Զայս իբրեւ ասաց

Յիսուս, խռովեցաւ յոգի իւր, վկայեաց
եւ ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ, զի մի
ոմն ի ձէնջ մատնելոց է զիս։ Հայէին ընդ 22
միմեանս աշակերտքն տարակուսեալք թէ
զումէ ասիցէ։ Եւ էր մի ոմն յաշակեր- 23
տացն բազմեալ առ Յիսուսիւ, զոր սի-
րէրն Յիսուս. ակնարկէ նմա Սիմոն Պե- 24
տրոս հարցանել՝ ո՞ իցէ վասն որոյ ասէն։
Եւ նա անկեալ զլանջօքն Յիսուսի, ասէ 25
ցնա. Տէր, ո՞վ է։ Պատասխանի ետ Յիսուս 26
եւ ասէ. Այն է՝ որում ես թացից զպա-
տառն եւ տաց։ Եւ թացեալ զպատառն՝
տայ Յուդայի Իսկարիովտացւոյ։ Եւ յետ 27
պատառոյն՝ ապա եմուտ ի նա սատանայ։
Եւ ասէ ցնա Յիսուս. Արդ որ զինչ առ-
նելոցն ես՝ արա վաղվաղակի։ Եւ զայս 28
ոչ ոք իմացաւ ի բազմականացն անտի՝ թէ
առ ինչ ասաց ցնա. զի ոմանք համարէին 29
թէ զի զարկղն ունէր Յուդա, ասաց նմա
Յիսուս, գնեա ինչ որ պիտոյ իցէ մեզ ի
տօնիս, եւ կամ զի աղքատաց ինչ տացէ։
Իսկ նորա առեալ զպատառն՝ ել արտաքս 30
վաղվաղակի։ Եւ էր գիշեր։
Ել· Եւ իբրեւ ել, ասէ Յիսուս. Այժմ 31
փառաւորեցաւ որդի մարդոյ, եւ Աս-
տուած փառաւորեցաւ ի նմա։ Զի եթէ 32
Աստուած փառաւորեցաւ ի նմա, եւ Աս-
տուած փառաւորեսցէ զնա յանձն իւր.
եւ վաղվաղակի փառաւորեսցէ զնա։

33 Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ
ձեզ եմ. խնդրիցէք զիս. եւ որպէս ա-
սացի ցհրեայսն, եթէ ուր ես երթամ՝
դուք ոչ կարէք գալ, եւ արդ ձեզ ասեմ։
34 Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրի-
ցէք զմիմեանս. որպէս սիրեցի ես զձեզ, զի
35 եւ դուք սիրեսջիք զմիմեանս։ Յայսմ գի-
տասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք
էք, եթէ սիրիցէք զմիմեանս։
36 Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տէր, յո՞վ
երթաս։ Պատասխանի ետ Յիսուս. Ուր
ես երթամ՝ դու ոչ կարես այժմ գալ
37 զկնի իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ։ Ասէ
ցնա Պետրոս. Տէր, ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ
այժմ զկնի քո. զանձն իմ իսկ ե-
38 դից ի վերայ քո։ Պատասխանի ետ Յի-
սուս. Զա՞նձն քո դիցես ի վերայ իմ. ամէն
ամէն ասեմ քեզ, չեւ իցէ հաւու խօ-
սեալ՝ մինչ դու երիցս ուրասցիս զիս։

ԳԼՈՒԽ ԺԴ

1 Մի խռովեսցին սիրտք ձեր, այլ հա-
ւատացէք յԱստուած, եւ յիս հաւա-
2 տացէք։ Ի տան հօր իմոյ օթեվանք բա-
զում են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ
ձեզ, եթէ երթամ եւ պատրաստեմ
3 ձեզ տեղի։ Եւ եթէ երթամ եւ պատ-

պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ եւ
առնում զձեզ առ իս. զի ուր եսն իցեմ,
եւ դուք անդ իցէք. եւ ուր երթամն՝ գի- 4
տիցէք, եւ զճանապարհն գիտիցէք: Ասէ 5
ցնա Թովմաս. Տէր, ոչ գիտեմք յո՛ եր-
թաս, եւ զիա՞րդ զճանապարհն կարաս-
ցուք գիտել: Ասէ ցնա Յիսուս. Ես եմ ճա- 6
նապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք.
ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինեւ: Եթէ 7
զիս գիտէիք, ապա եւ զՀայր իմ գիտէիք.
եւ այսուհետեւ գիտասջիք զնա, եւ տե-
սէք զնա: Ասէ ցնա Փիլիպպոս. Տէր, ցոյց 8
մեզ զՀայր՝ եւ շատ է մեզ: Ասէ ցնա Յի- 9
սուս. Այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ,
եւ ո՞չ ծանեար զիս, Փիլիպպէ. որ ետես
զիս՝ ետես զՀայրն. եւ դու զիա՞րդ ասես՝
եթէ ցոյց մեզ զՀայր: Ո՞չ հաւատաս եթէ 10
ես ի Հայր եւ Հայր յիս է. բանն զոր ես
խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօ-
սիմ, այլ Հայրն որ յիս բնակեալ է՝ նա գոր-
ծէ զգործսն: Հաւատա՞յք ինձ՝ եթէ ես ի 11
Հայր եւ Հայր յիս. ապա թէ ոչ՝ գոնէ 12
վասն գործոցն հաւատացէք ինձ: Ամէն
ամէն ասեմ ձեզ, թէ որ հաւատայն յիս,
զգործս զոր ես գործեմ, եւ նա գործես-
ցէ. եւ մեծամեծս եւս քան զնոյնս գոր-
ծեսցէ. զի ես առ Հայր երթամ: Եւ զոր 13
ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից զայն.
զի փառաւորեսցի Հայր յՈրդի: Վ.Ձ.) 14

15 Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ
16 պահեսջիք. եւ ես աղաչեցից զՀայր,
եւ այլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ
17 ձեզ բնակեսցէ յաւիտեան. զՀոգին
ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ
ընդունել, զի ոչ տեսանէ զնա եւ ոչ ճա-
նաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի
առ ձեզ բնակեսցէ, եւ ընդ ձեզ եղիցի:
18 Ոչ թողից զձեզ որբս, գամ առ ձեզ:
19 Փոքր միւս եւս, եւ աշխարհս ոչ եւս տե-
սանէ զիս. բայց դուք տեսանիցէք զիս.
զի ես կենդանի եմ, եւ դուք կենդանի լի-
20 նելոց էք: Յայնմ աւուր գիտասջիք դուք,
զի ես ի Հօր իմում, եւ դուք յիս, եւ ես
21 ի ձեզ: Որ ունի զպատուիրանս իմ եւ
պահէ զնոսա, նա է որ սիրէ զիս. եւ որ
սիրէն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ. եւ ես
սիրեցից զնա, եւ երեւեցուցից նմա զիս:
22 Ասէ ցնա Յուդա՝ ոչ Սկարիովտացին. Տէր,
զի՞ եղեւ՝ զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ եւ
23 ոչ աշխարհի: Պատասխանի ետ Յիսուս
եւ ասէ ցնա. Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն
իմ պահեսցէ, եւ Հայր իմ սիրեսցէ զնա.
եւ առ նա եկեսցուք, եւ օթեվանս առ
24 նմա արասցուք: Եւ որ ոչն սիրէ զիս՝ ըզ-
բանս իմ ոչ պահէ. եւ բանն իմ զոր լսէք՝
ոչ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն զիս:
25 Զայս խօսեցայ ընդ ձեզ մինչ առ ձեզս
26 եմ. իսկ մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր

առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսու-
ցէ ձեզ զամենայն, եւ յիշեցուսցէ ձեզ
զամենայն՝ որ ինչ ասացի ձեզ: Խաղա- 27
ղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն
զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝
տամ ես ձեզ: Մի՛ խռովեսցին սիրտք ձեր,
եւ մի՛ զանգիտեսցեն: Լուայք զի ասացի 28
ես ձեզ՝ թէ երթամ եւ գամ առ ձեզ.
եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լինեալ էր
ձեր՝ եթէ ես առ Հայր երթամ, զի Հայր
իմ մեծ է քան զիս: Եւ այժմ ասացի 29
ձեզ մինչ չեւ եղեալ, զի յորժամ լինիցի՝
հաւատասջիք: Ոչ եւս այլ շատ խօսե- 30
ցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս այ-
սորիկ, եւ յիս ինչ ոչ գտանէ: Այլ զի ծա- 31
նիցէ աշխարհ՝ եթէ սիրեմ զՀայր, եւ որ-
պէս պատուիրեաց ինձ Հայրն՝ այնպէս
առնեմ: Օն, արիք, գնասցուք աստի:

ԳԼՈՒԽ ԺԵ

Ես եմ որթն ճշմարիտ. եւ Հայր իմ 1
մշակ է: Զամենայն ուռ որ յիս է եւ ոչ 2
բերէ պտուղ, կտրէ զնա. եւ ամենայն որ
բերէ պտուղ՝ սրբէ զնա, զի առաւել եւս
պտղաբեր լիցի: Դուք արդէն իսկ սուրբ 3
էք վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ:
Կացէք յիս՝ եւ ես ի ձեզ: Որպէս ուռն 4
ոչ կարէ պտուղ բերել յանձնէ իւրմէ,

եթէ չիցէ հաստատեալ յորթն, նոյնպէս
եւ դուք՝ եթէ ոչ յիս հաստատեալ ի-
5 ցէք: Ես եմ որթ՝ եւ դուք ուռ. որ հաս-
տատեալ է յիս՝ եւ ես ի նա, նա բերէ
պտուղ յոյժ. զի առանց իմ ոչ ինչ կա-
6 րէք առնել: Եթէ ոք ոչ է հաստատեալ
յիս, ել նա արտաքս իբրեւ զուռն, եւ
ցամաքեցաւ. եւ ժողովեն զնա, եւ ի հուր
7 արկանեն եւ այրի: Եթէ կայցէք յիս,
եւ բանքն իմ ի ձեզ կայցեն. զոր ինչ
կամիցիք խնդրեսջիք, եւ լինիցի ձեզ:
8 Յայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ, զի
պտուղ յոյժ բերիցէք, եւ եղիջիք իմ
աշակերտք:

9 Որպէս սիրեաց զիս Հայրն իմ, եւ ես
սիրեցի զձեզ. հաստատուն կացէք ի սէր
10 իմ. եթէ պահիցէք զպատուիրանս իմ,
կացջիք ի սէր իմ. որպէս ես զպատուի-
րանս Հօր իմոյ պահեցի, եւ կամ ի սէր
11 նորա: Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրա-
խութիւնն իմ ի ձեզ իցէ, եւ ձեր ուրա-
12 խութիւնն լցեալ եղիցի: Այս է պա-
տուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որ-
13 պէս եւ ես սիրեցի զձեզ: Մեծ եւս քան
զայս սէր՝ ոչ ոք ունի, եթէ զանձն իւր
14 դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց: Դուք
բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր ես
15 պատուիրեմ ձեզ. ոչ եւս կոչեմ զձեզ
ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գոր-

ծէ տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարե-
կամս, զի զամենայն զոր լուայ ի Հօրէ
իմմէ՝ ծանուցի ձեզ:

Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես 16
ընտրեցի զձեզ. եւ եդի զձեզ՝ զի դուք
երթայցէք եւ պտղաբերք լինիցիք, եւ
պտուղն ձեր կայցէ: Եւ զոր ինչ խնդրի-
ցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ:
Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմի- 17
մեանս:

Եթէ աշխարհ զձեզ ատեայ, գիտաս- 18
ջիք զի նախ զիս ատեաց: Եթէ յաշխար- 19
հէ աստի էիք՝ աշխարհ զիւրն սիրէր ար-
դեօք. բայց զի չէք յաշխարհէ, այլ ես
ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն այնո-
րիկ ատեայ զձեզ աշխարհ: Յիշեցէք ըզ- 20
բանն՝ զոր ասացի ձեզ, թէ ոչ է ծառայ
մեծ քան զտէր իւր. եթէ զիս հալածե-
ցին, ապա եւ զձեզ հալածեսցեն. եթէ
զբանն իմ պահեցին, ապա եւ զձերն պա-
հեսցեն: Այլ զնոյնս արասցեն ընդ ձեզ 21
վասն անուան իմոյ, զի ոչ գիտեն զայն՝ որ
առաքեացն զիս: Իմ՛ եթէ չէր եկեալ եւ 22
խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր
նոցա. բայց արդ չիք ինչ պատճառք վասն
մեղաց իւրեանց: Որ զիս ատեայ, եւ ըզ 23
Հայրն իմ ատեայ: Եթէ զգործսն չէր 24
գործեալ ի նոսա՝ զոր ոչ այլ ոք գործեաց,
մեղ ինչ ոչ գոյր նոցա, բայց արդ տեսին

25 եւ ատեցին՝ եւ զիս եւ զՀայր իմ. այլ զի
լցցի բանն, որ յօրէնս նոցա գրեալ է,
26 թէ ատեցին զիս տարապարտուց: Բայց
յորժամ եկեսցէ մխիթարիչն, զոր ես
առաքեցից ձեզ ի Հօրէ՝ զՀոգին ճշմար-
տութեան՝ որ ի Հօրէ ելանէ, նա վկայես-
27 ցէ վասն իմ. եւ դուք վկայէք, զի ի սկըզ-
բանէ ընդ իս էք:

ԳԼՈՒԽ ԺԶ

1 Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայ-
թագղեսջիք. ի ժողովրդոց իւրեանց հա-
2 նիցեն զձեզ: Այլ եկեսցէ ժամանակ, զի
ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ համարի-
3 ցի պաշտօն մատուցանել Աստուծոյ: Եւ
զայն արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծա-
4 նեան զՀայր եւ ոչ զիս: Այլ եւ զայս խօ-
սեցայ ընդ ձեզ, զի յորժամ եկեսցէ ժա-
5 մանակ՝ յիշիցէք թէ ես ասացի ձեզ: Զայս
ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ
ձեզ էի:

Բայց արդ երթամ ես առ առաքիչն
իմ, եւ ոչ ոք ի ձէնջ հարցանէ ցիս թէ
6 յո՞ երթաս. այլ զի զայս խօսեցայ ընդ
ձեզ, տրտմութիւն ելից զսիրտս ձեր:
7 Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է
ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ եր-
թայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ.

տալ ես երթամ, առաքեցից զնա առ
ձեզ։ Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշ֊ 8
խարհ վասն մեղաց, եւ վասն արդարու֊
թեան, եւ վասն դատաստանի։ Վասն մե֊ 9
ղաց, զի ոչ հաւատան յիս· վասն արդա֊ 10
րութեան, զի առ Հայր իմ երթամ, եւ
ոչ եւս տեսանէք զիս· վասն դատաստա֊ 11
նի, զի իշխան աշխարհիս այսորիկ դատա֊
պարտեալ է։

Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ 12
ոչ կարէք հանդարտել այժմիկ· յորժամ 13
եկեսցէ նա՝ Հոգին ճշմարտութեան՝ ա֊
ռաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտու֊
թեամբ· զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի,
այլ զոր լուիցէ խօսեսցի, եւ զգալոցն պատ֊
մեսցէ ձեզ։ Նա զիս փառաւորեսցէ, զի 14
յիմմէ անտի առնուցու եւ պատմեսցէ
ձեզ։ Զամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ 15
է· վասն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ
անտի առնու եւ պատմէ ձեզ։

Փոքր մի՝ եւ ոչ եւս տեսանիցէք զիս, 16
եւ ապա սակաւիկ մի՝ եւ տեսանիցէք
զիս· եւ ես երթամ առ Հայր։ Ասէին ո֊ 17
մանք յաշակերտաց անտի ցմիմեանս·
Զինչ է այս՝ զոր ասէ ցմեզ, թէ փոքր մի՝
եւ ոչ տեսանէք զիս, եւ դարձեալ սակա֊
ւիկ մի՝ եւ տեսանիցէք զիս· եւ եթէ ես
առ Հայր իմ երթամ։ Եւ ասէին· Զինչ 18
իցէ այն փոքր միւս եւսն, չգիտեմք զինչ

19 խօսի։ Գիտաց Յիսուս եթէ կամին ցնա
հարցանել, եւ ասէ ցնոսա· Վասն այդո֊
րիկ խնդրէք ընդ միմեանս զի ասացի՝ թէ
փոքր մի՝ եւ ոչ տեսանէք զիս, եւ դար֊
ձեալ սակաւիկ միւս եւս՝ եւ տեսանի֊
20 ցէք զիս։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լայ֊
ջիք եւ ողբասջիք դուք, եւ աշխարհ խըն֊
դասցէ· դուք տրտմեսջիք, այլ տրտմու֊
21 թիւն ձեր յուրախութիւն եղիցի։ Կին
յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա,
զի հասեալ է ժամ նորա· այլ յորժամ
ծնցի զմանուկն, ոչ եւս յիշէ զնեղու֊
թիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ
22 մարդ յաշխարհ։ Եւ դուք այժմ տրտ֊
մութիւն ունիք, այլ դարձեալ տեսից
զձեզ, եւ ուրախ լիցին սիրտք ձեր· եւ
զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ ի
23 ձէնջ։ Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հար֊
ցանիցէք։

Ամէն ամէն ասեմ ձեզ, զի զոր ինչ
խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ
24 ձեզ։ Մինչեւ ցայժմ ոչ ինչ խնդրեցէք
յանուն իմ· խնդրեցէք՝ եւ առնուցուք·
զի ուրախութիւնն ձեր լցեալ եղիցի։
25 Զայս առակօք խօսեցայ ընդ ձեզ· եկեսցէ
ժամանակ՝ յորժամ ոչ եւս առակօք խօ֊
սեցայց ընդ ձեզ· այլ յայտնապէս զՀօրէ
26 պատմեցից ձեզ։ Յայնմ աւուր խնդրես֊
ջիք յանուն իմ· եւ ոչ ասեմ ձեզ՝ եթէ

ես աղաչեցից զՀայր վասն ձեր. զի ինքն 27
իսկ Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս սիրե-
ցէք, եւ հաւատացէք եթէ ես յԱստու-
ծոյ ելի։ Ելի ի Հօրէ՝ եւ եկի յաշխարհ. 28
դարձեալ թողում զաշխարհ, եւ եր-
թամ առ Հայր։ Ասեն ցնա աշակերտքն. 29
Ահա արդ յայտնութեամբ խօսիս, եւ ա-
ռակ եւ ոչ մի ինչ ասես. այժմիկ գիտեմք՝ 30
եթէ գիտես զամենայն, եւ ոչ ինչ պիտոյ
է՝ եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ
հաւատամք եթէ յԱստուծոյ ելեր։ Պա- 31
տասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ.
Այժմ հաւատայք. ահա եկեսցէ ժամ, 32
եւ եկեալ իսկ է, զի ցրուեսջիք յիւրա-
քանչիւր տեղիս, եւ զիս միայն թողու-
ցուք. եւ չեմ միայն, զի Հայր ընդ իս է։
Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի ընդ իս խա- 33
ղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ
նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցա-
րուք՝ զի ես յաղթեցի աշխարհի։

ԳԼՈՒԽ ԺԷ

Զայս իբրեւ խօսեցաւ Յիսուս, ամ- 1
բարձ զաչս իւր յերկինս եւ ասէ. Հայր,
հասեալ է ժամ, փառաւորեա զորդի քո,
զի եւ որդի քո փառաւորեսցէ զքեզ. որ- 2
պէս ետուր նմա իշխանութիւն ամենայն
մարմնոյ, զի ամենայնի զոր ետուր նմա,

3 տացէ զկեանսն յաւիտենականս։ Այս են
յաւիտենական կեանքն, զի ծանիցեն զքեզ
միայն Ճշմարիտ Աստուած, եւ զոր ա-
4 ռաքեցեր զՅիսուս Քրիստոս։ Ես զքեզ
փառաւորեցի յերկրի. զգործն կատա-
5 րեցի՝ զոր ետուր ցիս զի արարից. եւ
այժմ փառաւորեա զիս, Հայր, առ ի
քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան
6 զլինելն աշխարհի առ ի քէն։ Յայտնեցի
զանուն քո մարդկան, զորս ետուր ինձ
յաշխարհէ. քո էին, եւ ինձ ետուր
7 զնոսա, եւ զբանն քո պահեցին։ Արդ
գիտացին՝ եթէ զամենայն ինչ զոր ե-
8 տուր ինձ, ետու նոցա. եւ նոքա ընկա-
լան, եւ ծանեան Ճշմարտութեամբ՝ թէ
առ ի քէն ելի. եւ հաւատացին՝ եթէ դու
9 առաքեցեր զիս։ Արդ ես վասն նոցա ա-
ղաչեմ, եւ ոչ վասն աշխարհի աղաչեմ.
այլ վասն նոցա զորս ետուրն ինձ, զի քո
10 են. եւ որ ինչ իմ է, ամենայն քո է. եւ
որ ինչ քո է, այն իմ է, եւ փառաւո-
11 րեալ եմ ի նոսա։ Եւ ես ոչ եւս եմ յաշ-
խարհի, եւ նոքա յաշխարհի են. եւ ես
առ քեզ գամ։ Հայր սուրբ, պահեա զնո-
սա յանուն քո՝ որով ետուրն ինձ, զի ե-
12 ղիցին մի՝ որպէս եւ մեք մի եմք։ Մինչ
էի յաշխարհի ընդ նոսա, ես պահէի զնո-
սա յանուն քո՝ որով ետուրն ինձ. եւ
պահեցի, եւ ոչ ոք ի նոցանէ կորեաւ,

բայց որդին կորստեան, զի գիրն լցցի:
Բայց արդ առ քեզ գամ. եւ զայս խօ- 13
սիմ յաշխարհի, զի ունիցին զուրախու-
թիւնն իմ լիով յանձինս իւրեանց: Ես 14
ետու նոցա զբանն քո, եւ աշխարհս ա-
տեաց զնոսա. զի չեն յաշխարհէ, որպէս
եւ ես չեմ յաշխարհէ: Ոչ զայս աղաչեմ 15
զի բարձցես զնոսա յաշխարհէ, այլ զի
պահեսցես զնոսա ի չարէ: Յաշխարհէ 16
աստի չեն, որպէս եւ ես չեմ յաշխարհէ:
Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ 17
քով, զի քո բանդ ճշմարտութիւն է: Որ- 18
պէս զիս առաքեցեր յաշխարհ, եւ ես ա-
ռաքեցի զնոսա յաշխարհ. եւ ի վերայ նո- 19
ցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղի-
ցին եւ նոքա սրբեալք ճշմարտութեամբ:
Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ 20
եւ վասն ամենայն հաւատացելոց բանիւն
նոցա յիս. զի ամենեքին մի լիցին, որպէս 21
դու Հայր յիս՝ եւ ես ի քեզ, զի եւ նոքա
ի մեզ լիցին. զի եւ աշխարհ հաւատասցէ
թէ դու առաքեցեր զիս: Եւ ես զփառսն 22
զոր ետուր ինձ՝ ետու նոցա, զի լիցին մի
որպէս եւ մեք մի եմք: Ես ի նոսա, եւ դու 23
յիս, զի եղիցին կատարեալք ի մի: Եւ գի-
տասցէ աշխարհ՝ թէ դու առաքեցեր զիս,
եւ սիրեցի զնոսա որպէս դու զիս սիրեցեր:
Հայր, զորս ետուր ինձ, կամիմ՝ զի ուր 24
ես եմ, եւ նոքա լիցեն ընդ իս. զի տեսա-

նիցեն զփառսն զիմ, զոր ետուրն ցիս. զի
սիրեցեր զիս յառաջ քան զլինելն աշ-
25 խարհի: Հայր արդար, եւ աշխարհ զքեզ
ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ, եւ
նոքա ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս:
26 Եւ ծանուցի նոցա զանուն քո եւ ծանու-
ցից. զի սէրն զոր սիրեցեր զիս՝ ի նոսա
լիցի, եւ ես ի նոսա:

ԳԼՈՒԽ ԺԸ

1 Զայս իբրեւ ասաց Յիսուս, ել աշա-
կերտօքն հանդերձ յայն կոյս ձորոյն
Կեդրոնի՝ ուր էր պարտէզ, յոր եմուտ
ինքն եւ աշակերտքն իւր:
2 Գիտէր եւ Յուդա՝ որ զնայն մատնէ-
լոց էր՝ զտեղին. զի բազում անգամ ժո-
ղովեալ էր անդր Յիսուսի աշակերտօքն
3 հանդերձ: Եւ Յուդայի առեալ ընդ իւր
զգունդն, եւ ի քահանայապետաց եւ ի
փարիսեցւոց սպասաւորս, գայ անդր
4 ջահիւք եւ լապտերօք եւ զինուք: Իսկ Յի-
սուս իբրեւ ետես զայն ամենայն եկեալ
ի վերայ նորա, ել եւ ասէ ցնոսա. Զո՞
5 խնդրէք: Պատասխանի ետուն նմա. ԶՅի-
սուս Նազովրեցի: Ասէ ցնոսա Յիսուս.
Ես եմ: Կայր ընդ նոսա եւ Յուդա որ
մատնէրն զնա: Իբրեւ ասաց՝ թէ ես եմ,
6 յետս յետս չոգան՝ եւ զարկան զգետ-

նի: Դարձեալ եհարց զնոսա. Զո՞ խնդ- 7
րէք: Եւ նոքա ասեն. զՅիսուս Նազով-
րեցի: Պատասխանի ետ նոցա Յիսուս. 8
Ասացի ձեզ թէ ես եմ. արդ թէ զիս խնդ-
րէք, թոյլ տուք դոցա երթալ: Զի լցցի 9
բանն՝ զոր ասաց, թէ զորս ետուրն ցիս՝
ոչ կորուսի ի նոցանէ եւ ոչ զոք:

Իսկ Սիմոն Պետրոս՝ քանզի ունէր 10
սուր, ձգեաց զնա եւ եհար զքահանայա-
պետին ծառայ, եւ ի բաց առ զունկն նորա
զաջոյ. եւ էր անուն ծառային Մաղքոս:
Ասէ Յիսուս ցՊետրոս. Արկ զսուրդ ան- 11
դրէն ի պատեանս իւր: Զբաժակն զոր
ետ ինձ Հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա:

Իսկ գունդն եւ հազարապետն եւ 12
սպասաւորք Հրէից՝ կալան զՅիսուս եւ
կապեցին: Եւ ածին զնա նախ առ Աննա, 13
որ էր աներ Կայիափայի, որ քահանայա-
պետն էր տարւոյն այնորիկ: Այս այն 14
Կայիափա էր՝ որ խրատն ետ Հրէից, թէ
լաւ է առն միում մեռանել ի վերայ ժո-
ղովրդեանն: Եւ երթայր զհետ Յիսուսի 15
Սիմոն Պետրոս եւ միւս աշակերտն. եւ
աշակերտն այն քանզի ծանօթ էր քահա-
նայապետին՝ եմուտ ընդ Յիսուսի ի գաւիթ
քահանայապետին: Եւ Պետրոս կայր առ 16
դրանն արտաքոյ. ել միւս աշակերտն՝ որ
էր ծանօթ քահանայապետին, եւ ասաց
ցդռնապանն՝ եւ եմոյծ ի ներքս զՊետրոս:

17 Ասէ աղջիկն որ դռնապանն էր՝ ցՊետրոս.
Միթէ եւ դո՞ւ յաշակերտաց առնն այնո-
18 րիկ իցես: Եւ նա ասէ. Ոչ եմ: Կային
անդ ծառայքն եւ սպասաւորք, խարոյկ
արկեալ՝ քանզի ցուրտ էր, եւ ջեռնուին.
կայր ընդ նոսա եւ Պետրոս եւ ջեռնոյր:
19 Եւ քահանայապետն եհարց զՅիսուս
վասն աշակերտացն եւ վասն վարդապե-
20 տութեան նորա: Պատասխանի ետ նմա
Յիսուս. Ես յայտնապէս խօսեցայ յաշ-
խարհի, ես յամենայն ժամ ուսուցի ի
ժողովրդեանն եւ ի տաճարի անդ՝ ուր ա-
մենայն Հրեայք ժողովեալ էին, եւ ի ծա-
21 ծուկ ինչ ոչ խօսեցայ: Զի՞ հարցանես
զիս. հարց զայնոսիկ՝ որ լուանն, թէ զինչ
խօսեցայ ընդ նոսա. ահաւանիկ նոքա գի-
22 տեն զինչ ասացի ես: Իբրեւ նա զայն
ասաց, մի ոմն ի սպասաւորացն որ անդ
կայր, ած ապտակ Յիսուսի եւ ասէ. Ա՞յդ-
պէս պատասխանի տաս քահանայապե-
23 տին: Եւ Յիսուս ասէ ցնա. Եթէ չար ինչ
խօսեցայ, վկայեա վասն չարին. իսկ եթէ
24 բարի՝ ընդէ՞ր հարկանես զիս: Եւ առա-
քեաց զնա Աննա կապեալ առ Կայիափա
քահանայապետ:
25 Եւ Սիմոն Պետրոս կայր անդ եւ ջեռ-
նոյր. ասեն ցնա. Միթէ եւ դո՞ւ յաշակեր-
տաց նորա իցես: Նա ուրացաւ եւ
26 ասէ, թէ չեմ: Եւ ասէ մի ոմն ի ծառայից

քահանայապետին՝ ազգական այնորիկ զո-
րոյ զունկն եհատ Պետրոս. Ո՞չ ես իսկ տեսի
զքեզ ի պարտիզի անդ ընդ նմա: Դար- 27
ձեալ ուրացաւ Պետրոս, եւ վաղվաղակի
հաւ խօսեցաւ:

Եւ ածեն զՅիսուս ի վանացն Կայիա- 28
փայ յապարանս դատաւորին. եւ էր
այգուց: Եւ նոքա ոչ մտին յապարանսն,
զի մի պղծիցին, այլ զի ուտիցեն զզատիկն:
Ել առ նոսա Պիղատոս արտաքս եւ ասէ. 29
Զի՞նչ չարախօսութիւն մատուցանէք զառ-
նէն զայնմանէ: Պատասխանի ետուն եւ ա- 30
սեն ցնա. Եթէ չէր չարագործ այրն այն,
ապա ոչ մատնէաք զնա քեզ: Ասէ ցնոսա 31
Պիղատոս. Առէք զնա դուք, եւ ըստ ձերոց
օրինացն դատեցարուք: Ասեն ցնա Հրեայ-
քըն. Մեզ ոչ է արժան սպանանել զոք:
Զի լցցի բանն Յիսուսի զոր ասաց, նշանա- 32
կեալ թէ որով մահու մեռանելոց իցէ:
Եմուտ միւսանգամ յապարանսն Պիղա- 33
տոս, կոչեաց զՅիսուս, եւ ասէ ցնա.
Դո՞ւ ես Թագաւորն Հրէից: Պատասխա- 34
նի ետ Յիսուս. Ի քէ՞ն ասես զայդ, եթէ
այլք ասացին քեզ զինէն: Պատասխանի 35
ետ Պիղատոս. Միթէ եւ ես Հրեա՞յ իցեմ.
ազգն քո եւ քահանայապետք մատնե-
ցին զքեզ ինձ. զի՞նչ գործ գործեալ է
քո: Պատասխանի ետ Յիսուս. Իմ ար- 36
քայութիւն չէ յայսմ աշխարհէ. եթէ

յաշխարհէ աստի էր արքայութիւնն իմ,
սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք՝ զի
մի մատնեցայց Հրէից. բայց արդ՝ Թագա-
37 ւորութիւն իմ չէ աստի: Ասէ ցնա Պի-
ղատոս. Ապա թէ այդպէս իցէ, Թագա-
ւոր ո՞ն ես դու: Պատասխանի ետ Յի-
սուս. Դու ասես՝ թէ Թագաւոր իցեմ.
բայց ես յայդ իսկ ծնեալ եմ, եւ ի դոյն
իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից
ճշմարտութեանն. ամենայն որ ի ճշմար-
38 տութենէ է, լսէ բարբառոյ իմոյ: Ասէ
ցնա Պիղատոս. Զի՞նչ է ճշմարտութիւն:
Զայս իբրեւ ասաց, դարձեալ ել առ
Հրեայսն եւ ասէ ցնոսա. Ես եւ ոչ մի
39 ինչ պատճառս գտանեմ ի նմա: Բայց է
ձեր սովորութիւն՝ զի զմի ոք արձակեցից
ձեզ ի զատկիս. արդ կամի՞ք զի արձակե-
40 ցից ձեզ զԹագաւորն Հրէից: Աղաղակե-
ցին ամենեքեան եւ ասէին. Մի զդա, այլ
զԲարաբբա. եւ էր Բարաբբայն այն աւա-
զակ:

ԳԼՈՒԽ ԺԹ

1 Յայնժամ առ Պիղատոս զՅիսուս, եւ
2 գան եհար: Եւ զինուորացն արարեալ
պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա. եւ
3 զգեցուցին նմա հանդերձ ծիրանի. եւ
գային առ նա եւ ասէին. Ողջ եր, արքայ

հրէից: Եւ հանէին նմա ապտակս: Ել 4
դարձեալ Պիղատոս արտաքս եւ ասէ
ցնոսա. Ահա ածեմ զնա արտաքս առ
ձեզ, զի գիտասջիք թէ ես վնաս ինչ ի
նմա ոչ գտանեմ: Ել Յիսուս արտաքս, եւ 5
ունէր պսակ ի փշոց եւ հանդերձ ծիրա-
նի: Եւ ասէ ցնոսա. Ահա այրդ ցձեզ:
Իբրեւ տեսին զնա քահանայապետքն եւ 6
սպասաւորքն, զաղաղակ բարձին եւ ասեն.
Ի խաչ հան, ի խաչ հան զդա: Ասէ ցնոսա
Պիղատոս. Առէք զդա ի ձեզ, եւ ձեզէն
հանէք ի խաչ. զի ես ի դմա վնաս ինչ ոչ
գտանեմ: Պատասխանի ետուն նմա հր- 7
րէայքն. Մեք օրէնս ունիմք, եւ ըստ օրի-
նաց մերոց պարտի մեռանել. զի զանձն
իւր որդի Աստուծոյ արար: Իբրեւ լուաւ 8
զբանս զայսոսիկ Պիղատոս, առաւել եւս
երկեաւ. եմուտ դարձեալ անդրէն յա- 9
պարանն, եւ ասէ ցՅիսուս. Ուստի՞ ես
դու: Եւ Յիսուս ոչ ետ նմա պատասխա-
նի: Ասէ ցնա Պիղատոս. ընդ իս ո՞չ խօ- 10
սիս. ո՞չ գիտես եթէ իշխանութիւն ունիմ
հանել զքեզ ի խաչ, եւ իշխանութիւն
ունիմ արձակել զքեզ: Պատասխանի ետ 11
Յիսուս. Ոչ ունէիր դու իշխանութիւն
ի վերայ իմ եւ ոչ մի, եթէ ոչ էր տը-
ւեալ քեզ ի վերուստ. վասն այնորիկ
որ մատնեաց զիս քեզ՝ նորա մեծ մեղք
են: Եւ յայնմհետէ Պիղատոս խնդրէր ար- 12

ձակել զնա: Եւ հրեայքն աղաղակէին
եւ ասէին. Եթէ զդա արձակես, չես
բարեկամ կայսեր. ամենայն ոք որ թա-
գաւոր կոչէ զանձն իւր՝ հակառակ է
13 կայսեր: Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ ըզ-
բանս զայսոսիկ, ած զՅիսուս արտաքս՝
եւ նստաւ ի վերայ բեմին, ի տեղւոջն
որ կոչէր քարայատակ, եւ եբրայեցերէն
14 կապպաթա: Էր ուրբաթն զատկի, եւ էր
ժամ իբրեւ վեցերորդ. եւ ասէ ցհրեայսն.
15 Ահա թագաւորդ ձեր ցձեզ: Եւ նոքա ա-
ղաղակէին. Բարձ ի մէնջ, բարձ ի մէնջ,
եւ հան զդա ի խաչ: Ասէ ցնոսա Պիղա-
տոս. Ես զթագաւորդ ձեր ի խա՞չ հանի-
ցեմ: Պատասխանի ետուն քահանայա-
պետքն. Չիք մեր թագաւոր՝ բայց ի կայ-
16 սերէ: Յայնժամ ետ զնա ի ձեռս նոցա,
զի ի խաչ ելանիցէ:
17 Եւ նոքա առեալ տանէին զնա. եւ
բարձեալ էր ինքնին զխաչափայտն, եւ
ելանէր ի տեղին՝ որ անուանէր Գագա-
թան, եւ կոչէր եբրայեցերէն Գողգոթա.
18 ուր եւ ի խաչն իսկ հանին զնա, եւ ընդ
նմա երկուս եւս այլս աստի եւ անտի,
19 եւ ի միջի զՅիսուս: Գրեաց եւ տախտակ
մի Պիղատոս, եւ եդ ի վերայ խաչին. եւ
էր գրեալ. Յիսուս Նազովրեցի թագաւոր
20 հրէից: Զայն տախտակ ընթերցան բա-
զումք ի հրէից, զի մօտ էր ի քաղաք անդր

տեղլին՝ ուր խաչեցաւն Յիսուս. եւ էր
գրեալ եբրայեցերէն՝ դաղմատարէն եւ
յունարէն: Ասեն ցՊիղատոս քահանայա- 21
պետքն Հրէից. Մի՛ գրեր Թագաւոր Հը-
րէից, այլ թէ նա ասաց՝ Թագաւոր եմ
Հրէից: Պատասխանի ետ Պիղատոս. Զոր 22
ինչ գրեցի՝ գրեցի:

Իսկ զինուորքն իբրեւ հանին ի խաչ 23
զՅիսուս, առին զհանդերձս նորա եւ ա-
րարին չորս մասունս, իւրաքանչիւր զի-
նուորի մասն. իսկ զպատմուճանն քանզի
էր առանց կարանի ի վերուստ փոր ան-
կեալ ամենեւին, ասեն ցմիմեանս. Մի՛ 24
պատառեսցուք զայդ, այլ արկցուք վի-
ճակս ի վերայ դորա՝ ում եւ ելցէ: Զի
լցցի գիրն որ ասէ. Բաժանեցան զհան-
դերձս իմ յիւրեանս, եւ ի վերայ պատ-
մուճանի իմոյ վիճակ արկին: Զինուորքն
զայս ինչ գործեցին:

Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն 25
նորա, եւ քոյր մօր նորա Մարիամ Կղէով-
պայ, եւ Մարիամ Մագդաղենացի: Յիսուս 26
իբրեւ ետես զմայրն եւ զաշակերտն զոր
սիրէր՝ զի կայր մօտ, ասէ ցմայրն. Կին
դու, ահա որդի քո: Ապա տայ ցաշա- 27
կերտն. Ահա մայր քո: Եւ յայնմ ժամա-
նակէ առ աշակերտն զնա առ իւր:

Յետ այսորիկ իբրեւ գիտաց Յիսուս, 28
եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է,

զի կատարեսցի գիրն՝ ասէ. Ծարաւի եմ:
29 Եւ անդ կայր աման լի քացախով.
եւ նոքա սպունգ լցեալ քացախով ընդ
լեղւոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի,
30 մատուցին ի բերան նորա: Իբրեւ առ Յի-
սուս զքացախն հանդերձ լեղւովն՝ ասէ.
Ամենայն ինչ կատարեալ է: Եւ խոնար-
հեցուցեալ զգլուխ՝ աւանդեաց զոգին:
31 Իսկ Հրեայքն՝ քանզի ուրբաթ էր, զի
մի՛ անդէն ի խաչին ագանիցին մարմինքն
մինչեւ ցշաբաթն, զի էր օր մեծ շաբա-
թուն այնորիկ, աղաչեցին զՊիղատոս զի
խորտակեսցեն զբարձս նոցա, եւ բարձ-
32 ցին: Եկին զինուորքն, եւ զառաջնոյն խոր-
տակեցին զբարձս,նոյնպէս եւ զմիւսոյն որ
33 ընդ նմա ի խաչն ելեալ էր: Բայց իբրեւ
եկին առ Յիսուս, եւ տեսին զի այն ինչ
մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս
34 նորա. այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ
խոցեաց զկողս նորա, եւ վաղվաղակի ել
35 արիւն եւ ջուր: Եւ որ ետեսն՝ վկայեաց,
եւ ճշմարիտ է վկայութիւն նորա. եւ
նա գիտէ՝ թէ ճշմարիտ ասէ, զի եւ դուք
36 հաւատասջիք: Այս եղեւ զի լցցի գիրն,
37 եթէ Ոսկր նորա մի՛ փշրեսցի. եւ դար-
ձեալ միւս գիր ասէ, եթէ Հայեսցին ի նա՝
յոր խոցեցինն:
38 Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յով-
սէփ՝ որ յԱրիմաթեայ էր, աշակերտ Յի-

սուսի ի ծածուկ, վասն ահին Հրէից, զի
բարձցէ զմարմինն Յիսուսի: Եւ հրա-
մայեաց Պիղատոս. եկին եւ բարձին զնա:
Եկն եւ Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ 39
Յիսուս՝ ի գիշերի զառաջինն, եւ եբեր
զմուռս խառն ընդ հալուէս՝ իբրեւ լտերս
հարիւր: Առին զմարմինն Յիսուսի, եւ պա- 40
տեցին կտաւովք, խնկովքն հանդերձ, որ-
պէս օրէն էր Հրէից պատել: Եւ էր ի տե- 41
ղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ, եւ ի
պարտիզի անդ գերեզման նոր, յորում ոչ
ոք երբէք էր եդեալ: Անդ վասն ուրբա- 42
թուն Հրէից, զի մօտ էր գերեզմանն, եդին
զՅիսուս:

ԳԼՈՒԽ Ի

Եւ ի միաշաբաթւոջն Մարիամ մագ- 1
դաղենացի գայ առաւօտուն ընդ աշա-
լուսն՝ ի գերեզման անդր. եւ տեսանէ
զվէմն բարձեալ ի դրաց գերեզմանին:
Ապա ընթանայ եւ գայ առ Սիմոնի Պե- 2
տրոս եւ առ միւս աշակերտն զոր սիրէր
Յիսուս, եւ ասէ ցնոսա. Բարձին զՏէր ի
գերեզմանէ անտի. եւ ոչ գիտեմք ուր
եդին զնա: Ել Պետրոս եւ միւս աշա- 3
կերտն՝ եւ գային ի գերեզմանն. ընթա-
նային երկոքեան ի միասին: Եւ միւս աշա- 4
կերտն յառաջեաց ընթացաւ վաղագոյն
քան զՊետրոս՝ եւ եկն նախ ի գերեզ-

5 մանն. եւ խոնարհեալ տեսանէ՝ զի կային
անդ կտաւքն, բայց ի ներքս ոչ եմուտ:
6 Եկն եւ Սիմոն Պետրոս՝ որ գայրն զկնի
նորա, եւ եմուտ ի գերեզմանն, եւ տե-
7 սանէ զկտաւսն զի կային անդ. եւ վարշա-
մակն որ էր ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ
կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ ի մի
8 կողմն. Յայնժամ եմուտ եւ միւս ա-
շակերտն, որ եկեալ էր յառաջագոյն ՚ի
9 գերեզմանն, ետես եւ հաւատաց. զի չեւ
եւս գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա ի
10 մեռելոց յառնել: Չոգան դարձեալ առ
միմեանս աշակերտքն:
11 Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզ-
մանին եւ լայր. եւ մինչդեռ լայր՝ խո-
12 նարհեցաւ ի գերեզմանն, եւ տեսանէ
երկուս հրեշտակս ի սպիտակս, զի նըս-
տէին՝ մի ի սնարից եւ մի յանոտից՝ ուր
13 կայր մարմինն Յիսուսի: Եւ նոքա ասեն
ցնա. Կին դու, զի՞ լաս: Ասէ ցնոսա. Զի
բարձին զՏէրն իմ ի գերեզմանէ աստի՝
14 եւ ոչ գիտեմ ուր եդին զնա: Զայս իբրեւ
ասաց, դարձաւ ի թիկունս կոյս, եւ
տեսանէ զՅիսուս զի կայր. եւ ոչ գիտէր
15 թէ Յիսուս իցէ: Ասէ ցնա Յիսուս. Կին
դու, զի՞ լաս, զո՞ խնդրես: Նմա այսպէս
թուեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ. ասէ
ցնա. Տէր, եթէ դու բարձեր զնա, ասա
ինձ ո՞ւր եդիր զնա, զի ես առից զնա:

Ասէ ցնա Յիսուս. Մարիամ: Եւ նա դար- 16
ձաւ եւ ասէ ցնա եբրայեցերէն. Րաբբու-
նի. — որ թարգմանի՝ վարդապետ — : Ասէ 17
ցնա Յիսուս. Մի մերձենար յիս, զի չեւ եւս
ելեալ եմ առ Հայր իմ. այլ երթ դու առ
եղբարսն իմ, եւ ասա ցնոսա. ելանեմ ես
առ Հայրն իմ եւ առ Հայր ձեր, եւ Աս-
տուածն իմ եւ Աստուած ձեր: Գայ Մա- 18
րիամ մագդաղենացին՝ եւ պատմէ աշակեր-
տացն, եթէ եսես նա զՏէր, եւ զայս ինչ
ասաց ցնա:

Եւ էր երեկոյ ի միաշաբաթւոջ աւուրն, 19
եւ դրունք փակելոց՝ ուր էին աշակերտքն
ժողովեալ վասն ահին Հրէից, եկն Յիսուս
եւ եկաց ի մէջ նոցա, եւ ասէ ցնոսա.
Ողջոյն ընդ ձեզ: Իբրեւ զայս ասաց, ե- 20
ցոյց նոցա զձեռս եւ զկողն իւր: Եւ խնդա-
ցային աշակերտքն իբրեւ տեսին զՏէր:
Ասէ ցնոսա դարձեալ. Ողջոյն ընդ ձեզ. 21
որպէս առաքեաց զիս Հայր իմ, եւ ես ա-
ռաքեմ զձեզ: Եւ զայս իբրեւ ասաց, 22
փչեաց ի նոսա եւ ասէ. Առէք Հոգի սուրբ.
եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ 23
լիցի նոցա. եթէ զուրուք ունիցիք, կա-
լեալ լիցի:

Իսկ Թովմաս մի յերկոտասանիցն՝ ա- 24
նուանեալն Երկուորեակ, ոչ էր ընդ նոսա
յորժամ եկն Յիսուս: Ասէին ցնա այլ ա- 25
շակերտքն, եթէ տեսաք զՏէր. եւ նա

ասէ ցնոսա. Եթէ ոչ տեսից ի ձեռս նորա
զնշան բեւեռացն, եւ արկից զմատունս
իմ ի տեղիս բեւեռացն, եւ մխեցից զձեռս
26 իմ ի կողս նորա, ոչ հաւատամ: Եւ յետ
ութ աւուր դարձեալ էին ի ներքս աշա-
կերտքն, եւ Թովմաս ընդ նոսա. գայ Յի-
սուս դրունքն փակելովք. եկաց ի մէջ եւ
27 ասէ. Ողջոյն ընդ ձեզ: Ապա ասէ ցԹով-
մաս. Բեր զմատունս քո եւ արկ այսր,
եւ տես զձեռս իմ. եւ բեր զձեռն քո,
եւ մխեա ի կողս իմ. եւ մի լինիր անհա-
28 ւատ այլ հաւատացեալ: Պատասխանի
ետ Թովմաս եւ ասէ ցնա. Տէր իմ եւ Աս-
29 տուած իմ: Ասէ ցնա Յիսուս. Այդ զի
տեսեր զիս եւ հաւատացեր, երանի
որոց ոչ իցէ տեսեալ՝ եւ հաւատասցեն:
30 Բազում եւ այլ նշանս արար Յիսուս ա-
ռաջի աշակերտացն իւրոց՝ որ ոչ է գրեալ
31 ի գիրս յայսմիկ. այլ այս այնչափ ինչ
գրեցաւ, զի հաւատայցէք եթէ Յիսուս
Քրիստոս է որդի Աստուծոյ. եւ զի հա-
ւատայցէք, եւ զկեանսն յաւիտենականս
ընդունիցիք յանուն նորա:

ԳԼՈՒԽ ԻԱ

1 Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց
զանձն իւր Յիսուս աշակերտացն իւրոց՝
առ ծովեզերբն Տիբերիայ, եւ յայտ-

նոցա այսպէս։ Էին ի միասին Սիմովն 2
Պետրոս, եւ Թովմաս՝ անուանեալն Եր-
կուորեակ, եւ Նաթանայէլ որ ի Կանայ
Գալիլեացւոց. եւ որդիքն Զեբեդեայ, եւ
այլք յաշակերտաց անտի երկու։ Ասէ 3
ցնոսա Սիմովն Պետրոս. Երթամ ձուկն
որսալ։ Ասեն ցնա. Գամք եւ մեք ընդ քեզ։
Գնացին եւ մտին ի նաւ, եւ յայնմ գիշե-
րի կալան եւ ոչ ինչ։ Իբրեւ այգ եղեւ 4
կայր Յիսուս յեզր ծովուն, բայց ոչ ծա-
նեան աշակերտքն թէ Յիսուս իցէ։ Ասէ 5
ցնոսա Յիսուս. Մանկունք, միթէ ունի՞ք
ինչ ուտելոյ։ Պատասխանի ետուն եւ ա-
սեն ցնա. Ոչ։ Ասէ ցնոսա. Արկէք յաջա- 6
կողմն նաւին զուռկանդ, եւ գտանիցէք։
Արկին, եւ ոչ կարէին ձգել ի բազմութե-
նէ անտի ձկանցն։ Ասէ աշակերտն այն 7
զոր սիրէրն Յիսուս՝ ցՊետրոս. Տէր է այն։
Սիմովն Պետրոս իբրեւ լուաւ թէ Տէր
է, արկաւ զիւրեւ զսփածանելին, քան-
զի մերկ էր, եւ ընկէց զինքն ի ծով։ Եւ 8
այլ աշակերտքն նաւաւն իսկ գային. քան-
զի չէին հեռի ի ցամաքէն, այլ իբրեւ եր-
կերիւր կանգնաւ. քարշէին զգործին հան-
դերձ ձկամբն։ Իբրեւ ելին ի ցամաք, տե- 9
սանեն կրակետղ կայծականց, եւ ձուկն
մի ի վերայ, եւ հաց։ Ասէ ցնոսա Յիսուս. 10
Բերէք ի ձկանց այտի՝ զոր դուքդ կալա-
րուք այժմիկ։ Եմուտ Սիմովն Պետրոս, 11

եւ ձգէր զգործին ի ցամաք՝ լի մեծամեծ
ձկամբք, հարիւր յիսուն եւ երիւք. եւ
այնչափ ինչ կայր, եւ ոչ պատառեցաւ
12 գործին։ Ասէ ցնոսա Յիսուս. Եկայք ճա-
շեցէք։ Եւ ոչ ոք յաշակերտացն իշխէր
հարցանել՝ թէ դու ով ես. զի գիտէին
13 թէ Տէրն է։ Գայ Յիսուս եւ առնու զհացն՝
14 եւ տայ նոցա, նոյնպէս եւ զձուկնն։ Զայս
երիցս անգամ երեւեցաւ Յիսուս աշակեր-
տացն՝ յարուցեալ ի մեռելոց։
15 Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմովն Պե-
տրոս՝ Յիսուս. Սիմովն Յովհաննու, սիրե՞ս
զիս առաւել քան զդոսա։ Ասէ ցնա. Այո,
Տէր, եւ դու գիտես զի սիրեմ զքեզ։
16 Ասէ ցնա. Արածեա զգառինս իմ։ Դար-
ձեալ ասէ ցնա. Սիմովն Յովհաննու, սի-
րե՞ս զիս։ Ասէ ցնա. Այո, Տէր, եւ դու գի-
տես զի սիրեմ զքեզ։ Ասէ ցնա. Արածեա
17 զոչխարս իմ։ Ասէ ցնա երիցս անգամ. Սի-
մովն Յովհաննու, սիրե՞ս զիս։ Տրտմե-
ցաւ Պետրոս՝ զի ասաց ցնա երիցս՝ թէ
սիրես զիս. եւ ասէ ցնա. Տէր, դու զա-
մենայն գիտես, եւ դու իսկ զամենայն ճա-
նաչես, եւ եթէ սիրեմ զքեզ։ Ասէ ցնա
18 Յիսուս. Արածեա զոչխարս իմ։ Ամէն ա-
մէն ասեմ քեզ, զի մինչ մանուկն էիր՝
անձամբ անձին գօտի ածէիր, եւ եր-
թայիր յո եւ կամէիր. եւ յորժամ ծե-
րասցիս, ձեռս ի վեր կալցես՝ եւ այլք

ածցեն քեզ գօտի, եւ տարցին ուր ոչ
կամիցիս: Զայս ասաց՝ նշանակեալ թէ 19
որով մահու փառաւոր առնիցէ զԱստուա-
ծ. եւ զայս իբրեւ ասաց՝ ասէ ցնա. Եկ
զկնի իմ:

Դարձաւ Պետրոս՝ եւ տեսանէ զաշա- 20
կերտն զոր սիրէր Յիսուս՝ զի երթայր զկնի
որ եւ անկաւ զլանջօքն նորա եւ ասէ.
Տէր ո՞վ է որ մատնելոյն է զքեզ: Զնա 21
տեսեալ Պետրոսի՝ ասէ ցՅիսուս. Տէր, իսկ
սա զի՞: Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիմ զի 22
կացցէ դա՝ մինչեւ ես գամ. քեզ զի՞ փոյթ
է, դու եկ զկնի իմ: Եւ ել բանս այս յեղ- 23
բարս, եւ համարեցան թէ աշակերտն
այն ոչ մեռանիցի. եւ ոչ ասաց նմա Յի-
սուս, եթէ ոչ մեռանիցի, այլ թէ կամիմ
ես թէ կացցէ դա մինչեւ ես գամ:

Այս աշակերտ է՝ որ վկայէ վասն այսո- 24
ցիկ, որ եւ գրեաց իսկ զայսոսիկ. եւ գի-
տեմք եթէ ճշմարիտ է վկայութիւն նորա:
Բայց է եւ այլ ինչ բազում զոր արար Յի- 25
սուս. զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ,
կարծեմ թէ եւ ոչ աշխարհս բաւական էր
տանել զգիրսն՝ որ թէ գրեալ էին:

ՎԱԽՃԱՆ ՍՐԲՈՑ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Մատթէոսի գրեալ է. զի ինքն Մատթէոս աշակերտ Տեառն գրեաց զաւետարանս զայս: Եւ պատմէ մեզ ի սկզբանն զըստ մարմնոյ ծնունդ Փրկչին ի զաւակէ Դաւթի. վասն որոյ եւ զազգահամարն ժողովէ մինչեւ ի Քրիստոս՝ ազգս քառասուն եւ երկու: Բերէ ըստ կարգի եւ զմկրտութիւնն Յովհաննու, եւ ի լերինն ի դիւաց զփորձութիւն, եւ նշանս եւ արուեստս մեծամեծս ի Փրկչէն եղեալ. եւ զընտրութիւն աշակերտացն, եւ վասն խորհրդոյ մատնութեանն. եւ զկատարածն, զի մատնեցաւ Պիղատոսի, եւ խաչեցաւ մարմնով, եւ մարմինն եդաւ ի գերեզմանի, եւ զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. նոյն եւ զերկու աւուր յարութիւնն. եւ զպատուէր աշակերտացն՝ աշակերտել զամենայն հեթանոսս եւ մկրտել զնոսա. պատուիրեաց լինել ընդ նոսա զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի:

Մատթէոս գրեաց զԱւետարանս իւր յԵրուսաղէմ քաղաքի ի լեզու եբրայեցի, զկնի ութ ամի համբառնալոյ Փրկչին, ի խնդրոյ եկեղեցւոյն Երուսաղեմի:

ԳԼՈՒԽՔ

ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Հմր
Վասն մոգուցն	Բ	1
Վասն կոտորածի մանկանցն	Բ	16
Վասն յառաջընթաց քարոզութե՛ն Յովհաննու Մկրտչին	Գ	1
Վասն վարդապետութեան փրկչին	Դ	25
Վասն երանութեանն	Ե	2
Վասն բորոտին	Ը	1
Վասն հարիւրապետին	Ը	5
Վասն զոքանչին Պետրոսի	Ը	14
Վասն բժշկութեան ամենայն ցաւոց	Ը	16
Վասն որ ոչ ետ հրաման երթալ զկնի	Ը	19
Վասն սաստելոյն ի վերայ ջրոցն	Ը	25
Վասն դիւահարացն	Ը	28
Վասն անդամալուծին	Թ	1
Վասն Մատթէի	Թ	9
Վասն դստեր ժողովրդապետին	Թ	18
Վասն տեռատեսին	Թ	20
Վասն երկուց կուրացն	Թ	27
Վասն խլին և համր դիւահարին	Թ	32
Վասն Առաքելոցն իշխանութեան	Ժ	1
Վասն առաքելոցն ի Յովհաննէ	ԺԱ	2
Վասն որոյ ձեռն գօսացեալ էր	ԺԲ	10
Վասն կոյր եւ խուլ դիւահարին	ԺԲ	22
Վասն որ խնդրէին նշանս	ԺԲ	38
Վասն առակացն	ԺԳ	1
Վասն Յովհաննու եւ Հերովդէի	ԺԴ	1
Վասն հինգ հացիցն	ԺԴ	15
Վասն երթալոյն ի վերայ ծովուն	ԺԴ	22
Վասն անցելոցն զպատուիրանաւն Աստուծոյ	ԺԵ	1
Վասն կնոջն քանանացւոյ	ԺԵ	21
Վասն բժշկելոյ զժողովուրդն	ԺԵ	29
Վասն եօթն հացիցն	ԺԵ	32
Վասն խմորոյ փարիսեցւոցն	ԺԶ	6
Վասն որ ի Կեսարիա հարցմանն	ԺԶ	13
Վասն այլակերպութեանն Տեառն	ԺԷ	1
Վասն լուսնահարին	ԺԷ	14
Վասն խնդրելոյ զերկդրամեանն	ԺԷ	25
Վասն հարցանելոյ՝ թէ ո՞ է ի մէնջ մեծ	ԺԸ	1
Վասն առակի հարիւր ոչխարին	ԺԸ	12
Վասն թողլոյն զբիւր տաղանդն	ԺԸ	23
Վասն հարցանելոյն թէ արժա՞ն է արձակել առն զկին	ԺԹ	1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս	ԺԹ	16
Վասն վարձկանութեան մշակացն	Ի	1
Վասն որդւոցն Զեբեդեայ	Ի	20
Վասն երկուց կուրացն	Ի	29
Վասն իշուն և յովանակին	ԻԱ	1
Վասն կուրացն եւ կաղացն	ԻԱ	14
Վասն չորանալոյ թզենւոյն	ԻԱ	18

վասն հարցանելոյ զՏէրն քահանայապետիցն եւ ծերոց	ԻԱ	23
վասն երկուց որդւոցն առակաց	ԻԱ	28
վասն այգւոյն առակին	ԻԱ	33
վասն կոչեցելոց ի հարսանիսն	ԻԲ	1
վասն դահեկանին, որով փորձեցին զՏէրն	ԻԲ	15
վասն սադուկեցւոցն	ԻԲ	23
վասն օրինականացն	ԻԲ	34
վասն Տեառն հարցանելոյն զփարիսեցիսն	ԻԲ	41
վասն վայ տալոյ դպրացն, եւ փարիսեցւոցն	ԻԳ	13
վասն կատարածի	ԻԴ	3
վասն աւուրն եւ ժամուն	ԻԴ	36
վասն տասն կուսանացն	ԻԵ	1
վասն զտաղանդսն տալոյ	ԻԵ	14
վասն գալստեանն Տեառն	ԻԵ	31
վասն օծանելոյ զՏէրն իւղով	ԻԶ	6
վասն պատրաստելոյ զպասեքն	ԻԶ	17
վասն օրինաւոր խորհրդոյն	ԻԶ	26
վասն մատնութեանն Տեառն	ԻԶ	47
վասն ուրացութեանն Պետրոսի	ԻԶ	69
վասն Յուդայի զղջմանն	ԻԷ	3
վասն խնդրելոյ զտէրունական մարմինն	ԻԷ	57
վասն իւղաբեր կանանցն	ԻԸ	1

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Մարկոսի՝ գրեալ է. սոյն Մարկոս աշակերտ Պետրոսի եւ ընթացակից Պաւղոսի։ Գրեաց զաւետարանս զայս, եւ դնէ սկիզբն եւ ասէ. Սկիզբն աւետարանի, ի Յովհաննու քարոզութենէն. եւ զմկրտութիւնն Յովհաննու. եւ առնու վկայութիւն յԻսայայ մարգարէէ. նշանակէ եւ զփորձութիւնն ի լերինն, եւ ոչ ասէ զփորձանքն. պատմէ եւ վասն ընտրութեան աշակերտացն, եւ նշանս եւ արուեստս զոր արար. եւ զխորհուրդ մատնութեանն, եւ զկատարածն. եւ որ մատնեցաւ Պիղատոսի, եւ խաչեցաւ մարմնով, եւ զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա, եւ զի մարմինն եդաւ ի գերեզմանի եւ յարեաւ երեքօրեայ, եւ զիջանել Հրեշտակին եւ երեւել կանանցն, և զնոյնն պատմել աշակերտացն։

Մարկոս հրամանաւ Պետրոսի Վ իմի գրեաց զԱւետարանս իւր յԱղեքսանդր քաղաքի ի լեզու եգիպտացի, զկնի հնգետասան ամի համբառնալոյ Փրկչին։

ԳԼՈՒԽՔ

ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Համ.
Վասն դիւահարին	Ա	23
Վասն Պետրոսի զոքանչին	Ա	29
Վասն բժշկութեան պէսպէս հիւանդութեանց	Ա	32
Վասն բորոտին	Ա	40
Վասն անդամալուծին	Բ	3
Վասն Ղեւեայ մաքսաւորի	Բ	14
Վասն գօսացեալ ձեռինն	Գ	1
Վասն Առաքելոցն ընտրութեան	Գ	13
Վասն սերմանեացն առակի	Դ	2
Վասն սաստելոյ ջուրցն	Դ	35
Վասն լեգէովնացն	Ե	1
Վասն դստեր ժողովրդապետին	Ե	21
Վասն տեռատեսին	Ե	25
Վասն համարոյ Առաքելոցն	Զ	7
Վասն Յովհաննու, եւ Հերովդէի	Զ	14
Վասն հինգ հացին եւ երկուց ձկանցն	Զ	35
Վասն ի վերայ ծովուն գնալոյ	Զ	47
Վասն անցանելոյն զպատուիրանաւն	Է	5
Վասն ասորւոյ կնոջն փիւնիկեցւոյ	Է	24
Վասն համրին եւ խլին	Է	31
Վասն եօթն հացին	Ը	1
Վասն խմորոյ փարիսեցւոցն	Ը	16
Վասն կուրին	Ը	22
Վասն հարցանելոյն ի Կեսարիա	Ը	27
Վասն այլակերպութեանն Տեառն	Թ	1
Վասն լուսնահարին	Թ	16
Վասն խորհելոյն՝ թէ ո՞վ իցէ մեծ	Թ	32
Վասն հարցանելոյն՝ թէ պա՞րտ է արձակել զկին	Ժ	1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս	Ժ	17
Վասն որդւոցն Զեբեդեայ	Ժ	35
Վասն Բարտիմէոսի	Ժ	46
Վասն յաւանակին	ԺԱ	1
Վասն չորանալոյ թզենւոյն	ԺԱ	12
Վասն անյիշաչարութեան	ԺԱ	25
Վասն հարցանելոյ քահանայապետիցն զՏէրն	ԺԱ	27
Վասն այգւոյն	ԺԲ	1
Վասն հարցանելոյ զդահեկանէն	ԺԲ	13
Վասն սադուկեցւոցն	ԺԲ	18
Վասն դպրացն	ԺԲ	28
Վասն Տեառն հարցանելոյ զփարիսեցիսն	ԺԲ	35
Վասն երկու լումայիցն	ԺԲ	41
Վասն կատարածին	ԺԳ	3
Վասն աւուրն եւ ժամուն	ԺԳ	32
Վասն օծանելոյ կնոջն զՏէրն իւղով	ԺԴ	3
Վասն զատկին	ԺԴ	12

Վասն մատնութեանն մարգարէանալոյ	ԺԴ	18
Վասն Պետրոսի ուրացութեանն	ԺԴ	66
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն	ԺԵ	42
Վասն իւղաբեր կանանցն	ԺԶ	1

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՂՈՒԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Ղուկայ գրեալ է։ Նոյն ինքն Ղուկաս՝ աշակերտ էր Պետրոսի, եւ ձեռնադրեցաւ ընթացակից Պաւղոսի, եւ վկայեցաւ ի նմանէ. սա գրեաց զաւետարանս զայս։ Սկիզբն առնէ ի ծննդենէն Յովհաննու, եւ զոր ըստ նմին. պատմէ եւ զմարմնանալ Փրկչին. ազգաթիւ առնէ եւ ելանէ ի Յովսեփայ ի Դաւիթ, եւ ի Դաւթայ մինչեւ յԱդամ։ Պատմէ սա եւ զմկրտութիւնն Յովհաննու. եւ լինելով ի լեառնն զփորձելն ի սատանայէ, և զընտրութիւն աշակերտացն, եւ այլ եօթանասունս. եցոյց նշանս եւ արուեստս բազումս եղեալս. եւ զխորհուրդ մատնութեան, եւ զկատարածն, որ մատնեցաւ Պիղատոսի պոնտացւոյ, եւ խաչեցաւ մարմնով. զի զինուորքն բաժանեցին ըզհանդերձս նորա. եւ որք խաչեցան յերկուց աւազակացն՝ մին ապաշխարեաց խոստովանութեամբ։ Եւ զի մարմին նորա եդաւ ի գերեզման, եւ յարեաւ յերրորդ աւուրն. եւ յետ այսորիկ համբարձաւ յերկինս՝ տեսանելով Հրեշտակացն։

Ղուկաս՝ արուեստիւ բժիշկ գոլով, սա աշակերտեցաւ Փրկչին. եւ համարեալ կոչեցաւ ի թիւս Եօթանասնիցն ։ Իսկ յետոյ աշակերտեցաւ Պաւղոսի. վասն որոյ ասի գովութիւն սորա յԱւետարանին ։ Սա հրամանաւ Պաւղոսի գըրեաց զաւետարանս իւր յԱնտիոք քաղաքի ի լեզու ասորի՝ զկնի եօթնուտասն ամի համբառնալոյ Փրկչին ։

ԳԼՈՒԽՔ

ՂՈՒԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Համ.
Վասն աշխարհագրին	Բ	1
Վասն բացօթեայ հովուացն	Բ	8
Վասն Սիմէովնի	Բ	25
Վասն մարգարէին Աննայի	Բ	36
Վասն լինելոյ բանին Աստուծոյ առ Յովհաննէս	Գ	2
Վասն որոց հարցանէինն զՅովհաննէս	Գ	10
Վասն փորձութեանց Փրկչին	Դ	2
Վասն որ ունէր զհոգին դիւական	Դ	33
Վասն զոքանչին Պետրոսի	Դ	38
Վասն որոց բժշկէին ի պէսպէս հիւանդութեանց	Դ	40
Վասն որսոյ ձկանցն	Ե	4
Վասն բորոտին	Ե	12
Վասն անդամալուծին	Ե	15
Վասն Ղեւեայ մաքսաւորին	Ե	27
Վասն գօսացեալ ձեռինն	Զ	6
Վասն Առաքելոցն համարոյ	Զ	13
Վասն երանութեանցն	Զ	26
Վասն հարիւրապետին	Է	2
Վասն որդւոյ այրւոյն	Է	12
Վասն որոց առաքեցանն ի Յովհաննէ	Է	19

Վասն օծանելոյ զՏէրն մեռոնաւն	Է	38
Վասն առակի սերմնացանին	Ը	5
Վասն սաստելոյ ջուրցն	Ը	24
Վասն որ ունէր զլեգէոնն	Ը	27
Վասն դստեր ժողովրդապետին	Ը	41
Վասն տեռատես կնոջն	Ը	43
Վասն առաքելոյ զերկոտասանսն	Թ	2
Վասն հինգ հացիցն եւ երկու ձը-կանցն	Թ	13
Վասն ցաշակերտսն հարցանելոյ	Թ	18
Վասն այլակերպութեանն Յիսուսի	Թ	29
Վասն լուսնահարին	Թ	39
Վասն խորհելոյն՝ թէ ո՞վ մեծ իցէ	Թ	46
Վասն չտալոյն հրաման զկնի երթալ	Թ	57
Վասն երեւեցուցանելոյ զեօթանա-սունսն	Ժ	1
Վասն հարցանելոյ օրինականին	Ժ	25
Վասն անկելոյն ի ձեռս աւազակաց	Ժ	30
Վասն Մարիամու եւ Մարթայի	Ժ	38
Վասն յաղօթս կալոյն	ԺԱ	1
Վասն խուլ դիւին	ԺԱ	14
Վասն որ կինն ձայն եբարձ ի ժողո-վրդեանն	ԺԱ	27
Վասն նշան խնդրելոյն	ԺԱ	29
Վասն որ փարիսեցին կոչեաց զՏէրն	ԺԱ	37
Վասն վայ տալոյ օրինականացն	ԺԱ	46
Վասն խմորոյ փարիսեցւոցն	ԺԲ	1
Վասն բաժանելոյ զինչսն ընդ եղբօրն	ԺԲ	13
Վասն պտղաբերելոյ անդոյ մեծա-տանն	ԺԲ	16
Վասն գալիլեացւոցն՝ եւ որոց ի Սե-լովամ եւ վասն թզենւոյն	ԺԳ	1

Վասն կարկամեալ կնոջն այսահարի	ԺԳ	11
Վասն առակացն	ԺԳ	19
Վասն թէ սակաւք իցեն որ ապրե-լոց իցեն	ԺԳ	23
Վասն որք ասացին ցՅիսուս զՀե-րովդէէ	ԺԳ	31
Վասն որ ջրգողեալ էր	ԺԴ	2
Վասն որք սիրեն զնախագահս	ԺԴ	7
Վասն կոչելոյն յընթրիսն	ԺԴ	12
Վասն շինելոյ աշտարակին	ԺԴ	28
Վասն հարիւր ոչխարացն	ԺԴ	4
Վասն գնացելոյն յաշխարհ հեռի անառակին	ԺԵ	11
Վասն անիրաւ տնտեսին	ԺԶ	1
Վասն մեծատանն, եւ Ղազարու	ԺԶ	19
Վասն տասն բորոտացն	ԺԷ	12
Վասն անիրաւ դատաւորին	ԺԸ	2
Վասն փարիսեցւոյն և մաքսաւորին	ԺԸ	10
Վասն հարցանելոյ մեծատանն զՅի-սուս	ԺԸ	18
Վասն կուրին	ԺԸ	35
Վասն Զակքէոսի	ԺԹ	2
Վասն գնալոյ առնուլ իւր թագա-ւորութիւն և դառնալ	ԺԹ	12
Վասն առնելոյ զտասն մնասն	ԺԹ	13
Վասն յաւանակին	ԺԹ	30
Վասն հարցանելոյ քահանայիցն զՏէր	Ի	1
Վասն առակի այգւոյն	Ի	9
Վասն դահեկանին	Ի	25

Վասն սադուկեցւոցն	Ի	27
Վասն թէ զիա՞րդ է որդի Դաւթի Քրիստոս	Ի	41
Վասն երկու լումայի այրւոյն	ԻԱ	2
Վասն հարցման կատարածին	ԻԱ	7
Վասն զատկին	ԻԲ	2
Վասն վիճելոյն՝ թէ ո՛վ մեծ իցէ	ԻԲ	24
Վասն խնդրելոյն սատանայի	ԻԲ	31
Վասն Նախատանաց Հերովդի զՏէրն	ԻԳ	11
Վասն կոծելոյ կանանցն	ԻԳ	27
Վասն ապաշխարելոյ աւազակին	ԻԳ	40
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն	ԻԳ	52
Վասն կղէովպեանցն	ԻԴ	13
Վասն համբառնալոյն Տեառն	ԻԴ	51

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Յովհաննու Աւետարանն գրեալ է Յովհաննու, որ եղբայր է Յակովբայ Զեբեդեայ. որ անկաւ ի վերայ լանջացն Տեառն. նոյն սա գրեաց զաւետարանս զայս: Եւ սկիզբն առնէ յաստուածական բանէն. և զըստ մարմնոյ ծնունդն յիշատակէ յասելն, եւ Բանն մարմին եղեւ: Եւ յիշատակէ զմկրտութիւնն Յովհաննու, եւ զընտրութիւն աշակերտացն. այլ եւ զնշանս եւ զարուեստս զոր եղեն. եւ զկատարածն՝ որ մատնեցաւ պոնտացւոյ Պիղատոսի, եւ խաչեցաւ. յորում եւ զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա, և ի վերայ պատմուճանի նորա վիճակ արկին. և մարմին նորա եդաւ 'ի գերեզմանի. եւ յարեաւ յերրորդ աւուր, երեւեցաւ աշակերտացն ինքն:

Յովհաննէս՝ որ եւ որդի որոտման՝ զվերջինն որոտալով պատմեաց մեզ: Սա զկնի քսան եւ երեք ամի համբառնալոյ Փրկչին գրեաց զԱւետարանս իւր յԵփեսոս քաղաքի, ի խնդրելոյ եկեղեցւոյն Ասիայ՝ ի լեզու յոյն:

ԳԼՈՒԽՔ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Համր
Վասն զի անսկիզբն է Բանն Աստուած	Ա	1
Վասն Յովհաննու վկայելոյն Բանին Աստուծոյ	Ա	15
Վասն գալոյ առ նա գառինն Աստուծոյ	Ա	29
Վասն աշակերտացն առ Յիսուս ագանելոյն	Ա	39
Վասն գտանելոյն զՄեսիա	Ա	41
Վասն ի Կանա հարսանեացն	Բ	1
Վասն արտաքս հանելոյն ի տաճարէն	Բ	15
Վասն Նիկոդիմոսի	Գ	1
Վասն ի Յայենոն մկրտելոյն	Գ	23
Վասն խնդիր լինելոյ վասն սրբութեան	Գ	25
Վասն կնոջն սամարացւոյ	Դ	7
Վասն թագաւորազնին	Դ	46
Վասն երեսուն եւ ութամեայ հիւանդին	Ե	5
Վասն զի Հայր սիրէ զՈրդի	Ե	20
Վասն հինգ հացին, եւ երկու ձկանն	Զ	9
Վասն գնալոյն ի վերայ ծովուն	Զ	19
Վասն մարտնչելոյն ընդ միմեանս Հրէից	Զ	41
Վասն շրջելոյն Յիսուսի ի Գալիլէ, եւ խրատու եղբարցն	Է	1
Վասն խնդրելոյն Հրէից ունել զՅիսուս	Է	30
Վասն ի ծնէ կուրին	Թ	1
Վասն դնելոյն Յիսուսի զանձն ի վերայ ոչխարացն	Ժ	15
Վասն նաւակատեացն Երուսաղէմ	Ժ	22
Վասն Ղազարու յարութեանն	ԺԱ	1
Վասն օծանելոյն զՏէրն	ԺԲ	3
Վասն որ ասաց Յուդա զիւղոյն	ԺԲ	5
Վասն յովանակին	ԺԲ	14
Վասն մատչելոյ հեթանոսացն առ Տէր	ԺԲ	21
Վասն հատին ցորենոյ	ԺԲ	24
Վասն Յիսուսի լոյս գալոյն յաշխարհ	ԺԲ	46
Վասն ընթրեացն, եւ լուանալոյ զոտս աշակերտացն	ԺԳ	11
Վասն չարչարանացն Յիսուսի, եւ սփոփելոյ զաշակերտսն	ԺԴ	13
Վասն գալոյ Հոգւոյն եւ մխիթարելոյ զաշակերտսն	ԺԴ	26
Վասն մատնութեանն Յիսուսի	ԺԸ	5
Վասն ուրացութեանն Պետրոսի, եւ հաւուն խօսելոյ	ԺԸ	25
Վասն ածելոյն զՅիսուս ի վանացն Կայիափայ	ԺԸ	28

Վասն տանելոյն զՅիսուս ի Գողգոթա	ԺԹ	17
Վասն աւանդելոյ զհոգին	ԺԹ	30
Վասն խնդրելոյն զտէրունական մարմինն	ԺԹ	38
Վասն բերելոյն Նիկոդիմոսի զըմուռս	ԺԹ	39
Վասն գալոյ կանանցն ի գերեզմանն	Ի	1
Վասն դրօքն փակելովք մտանելոյն Յիսուսի առ աշակերտսն	Ի	19
Վասն զԹովմ. հաստատելոյ Տեառն	Ի	27
Վասն ուտելոյն ընդ նոսա, եւ հարցմանն զՊետրոս	ԻԱ	15
Վասն սիրելւոյ աշակերտին, եւ գրելոյ զաւետարանն	ԻԱ	24

ՑՈՒՑԱԿ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ

Հանգստեան, Տաճարի, Իւղաբերից, Բժշկութեան և Անդաստանի. որ ընթերցեալ լինին ի կարգաւորութեան հասարակաց աղօթից՝ ըստ ձայնին։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գւ. Հնր.

ԺԱ. 25. Յայնմ ժամանակի։ Հ. 30

ԺԳ. 36. Յայնժամ թողեալ։ Հ. 52

ԻԱ. 18. Եւ այգուցն իբր։ Հ. 32.

ԻԵ. 31. Եւ յորժամ եկես։ Հ. 46.

Ի ՄԱՐԿՈՍ

Գ. 1. Դարձեալ սկսաւ։ Հ. 9.

Գ. 26. Եւ ասէր՝ այսպէս։ Հ. 34.

ԺԳ. 24. Այլ յաւուրսն յայ։ Հ. 31.

ԺԳ. 32. Այլ վասն աւուրն։ Հ. 37.

Ի ՂՈՒԿԱՍ

Թ. 10. Դարձան առաքեալքն: Հ. 17.
ԺԲ. 32. Մի՛ երկն: Հ. 48.
ԺԷ. 3. Զգո՛յշ կացէք: Հ. 10.
ԻԱ. 27. Եւ յայնժամ տեսց: Հ. 38.

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Բ. 13. Եւ էր մերձ զատիկն: Հ. 22.
Ե. 19. Պատասխանի ետ: Հ. 23.
Ե. 24. Ամէն ամէն ասեմ: Հ. 30.
ԺԲ. 24. Ամէն ամէն ասեմ ձեզ: Հ. 26.

ԱՒԵՏԱՐԱՆՔ ՏԱՃԱՐԻ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. Հմր.
ԻԴ. 1. Եւ ելեալ ար: Հ. 51.

Ի ՄԱՐԿՈՍ

ԺԴ. 1. Եւ յելանելն նորա: Հ. 37.

Ի ՂՈՒԿԱՍ

ԻԱ. 5. Եւ յասել ոմանց: Հ. 38.

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԺԳ. 16. Ամէն ամէն: Հ. ԺԴ. 13.

Կամ

Ժ. 22. Եղեն յայնժամ նաւ: Հ. 42.

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԻՒՂԱԲԵՐԻՑ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. Հմր.
ԻԸ. 1. Եւ յերեկոյի շա: Հ. 20.

Ի ՄԱՐԿՈՍ

ԺԵ. 42. Եւ իբրեւ երեկ: Հ. ԺԶ. 8.

Ի ՂՈՒԿԱՍ

ԻԳ. 50. Եւ ահա այր մի: Հ. ԻԴ. 12.

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԺԹ. 38. Յետ այսորիկ: Հ. Ի. 18.

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. Համ.

Դ. 23. Եւ շրջէր Յիսուս: Հ. 25.
Ը. 1. Այլ իբրեւ էջ ի լեռն: Հ. 17.
Ը. 28. Եւ իբրեւ անց: Հ. 34.
Թ. 1. Եւ մտեալ ի նաւ: Հ. 8.
Թ. 18. Մինչդեռ նա: Հ. 26.
Թ. 27. Եւ մինչդեռ: Հ. 34.
Թ. 35. Եւ շրջէր Յիսուս: Հ. Ժ. 1.
ԺԲ. 9. Եւ գնացեալ անտի: Հ. 14.
ԺԲ. 22. Յայնժամ մա: Հ. 37.
ԺԴ. 22. Եւ ստիպեաց վաղվաղ. Հ. 36.
ԺԵ. 21. Եւ ելեալ անտի: Հ. 31
ԺԷ. 14. Եւ իբրեւ: Հ. 20.
Ի. 29. Եւ յելանելն նոցա: Հ. 34.

Ի ՄԱՐԿՈՍ

Ա. 21. Եւ մտանեն ի Կափ: Հ. 34.
Ա. 35. Եւ ընդ այգն: Հ. 45.
Բ. 1. Եւ մտեալ դար: Հ. 12:
Գ. 1. Եւ եմուտ միւսանգամ: Հ. 5.
Գ. 7. Իսկ Յիսուս աշակեր: Հ. 12.
Ե. 1. Եւ եկն յայնկոյս: Հ. 20.

Ե. 21. Եւ իբրեւ անց Յիսուս: Հ. 43.
Զ. 53. Եւ իբրեւ անցին: Հ. 56.
Է. 24. Եւ անտի յարուցեալ: Հ. 30.
Է. 31. Եւ ելեալ միւս: Հ. 37.
Ը. 22. Գան ի Բեթսայիդա: Հ. 26.
Թ. 13. Եւ եկեալ առ: Հ. 28.
Ժ. 46. Եւ գան յԵրիքով: Հ. 52.

Ի ՂՈՒԿԱՍ

Դ. 31. Եւ էջ ի Կափառնա: Հ. 42.
Ե. 12. Եւ եղեւ ի հա: Հ. 16.
Ե. 17. Եւ եղեւ ի միում: Հ. 26.
Զ. 1. Եւ եղեւ ի շա: Հ. 11.
Է. 1. Եւ իբրեւ կա: Հ. 10.
Է. 11. Եւ եղեւ ի: Հ. 23.
Ը. 22. Եւ եղեւ ի միում: Հ. 39.
Ը. 40. Եւ իբրեւ դար: Հ. 57.
Թ. 37. Եւ եղեւ ի վա: Հ. 44.
ԺԱ. 14. Եւ հանէր դեւ մի: Հ. 23.
ԺԳ. 10. Եւ ուսուցանէր: Հ. 17.
ԺԴ. 1. Եւ եղեւ ի մտա: Հ. 6.
ԺԷ. 11. Եւ եղեւ մինչ: Հ. 19.
ԺԸ. 35. Եւ եղեւ ի մօտելն: Հ. 43.

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Դ. 46. Եկն դարձեալ ի Կա: Հ. 54.
Ե. 1. Յետ այսորիկ: Հ. 18.

Թ. 1. Եւ մինչդեռ ան: Հ. 38.
ԺԱ. 1. Եւ էր ոմն հիւանդ: Հ. 46.

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԱՆԴԱՍՏԱՆԻ

Ի ՄԱՏԹԷՈՍ

ԿԸ. Հմր.
ԻԳ. 27. Զի որպէս փայ: Հ. 35.
ԻԷ. 35. Եւ հանեալ: Հ. 50.
ԻԷ. 50. Եւ Յիսուս դարձեալ: Հ. 61.

Ի ՄԱՐԿՈՍ

ԺԵ. 22. Եւ ածեն զնա: Հ. 37.

Ի ՂՈՒԿԱՍ

ԻԳ. 32. Ածին եւ այլ երկ: Հ. 46.

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գ. 13. Եւ ոչ ոք ել յերկ: Հ. 21.
ԺԹ. 16. Յայնժամ ետ: Հ. 22.
ԺԹ. 25. Եւ կային: Հ. 30.

0015427

2013

2001

ՀՀ Ազգային գրադարան

NL0015427